6320

ФБ
Ф-23

241
2011
2002

ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԳՈՆՍԹԱՆՑԱ
„ARAX“
Uniunea Cult. Armeană
CONSTANȚA
............................192..
№ ....

ՊԱՐՏԻԶՊԱՆՈՒԹԻՒՆ

2002

63.5
Ք-23

ՊԱՐՏԻԶՊԱՆՈՒԹԻՒՆ

Soc. Culturală ... Armeană
ARAX
CONSTANȚA

ԳՐԵԱՑ

Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՔԱՋՈՒՆԻ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1899

16817
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм.ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3964
47
Soc. Culturală a Tinerimei Armeane
ARAX
CONSTANȚA

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թէպէտ 1889ին հրատարակած Երկրագործութեան գրքին մէջ խօսած եմք ընդեղինաց և կանաչեղինաց վրայ, որք յետ արմտեաց կարևորք են ի սնունդ մարդկան, բայց ըստ խնդրանաց ոմանց ուզեցինք նաև առանձինն խօսել, աւելի ընդարձակ և մանրամասն տեղեկութեամբք, և կը հրատարակեմք Պարտիզպանութիւն անուամբ։

Եւ ինչպէս ընդեղէնք և կանաչեղէնք օգտակար են և հարկաւոր մարդկան, այսպէս և զանազան պտուղներն զորս երկիրս կը բուսցնէ աստուածադիր օրինօք, մարդոյս քմացն ախորժելի և դիւրամարս ընելու համար կերած մսեղէն և ընդեղէն կերակուրները։ Անոր համար կը փափաքիմք այս գրքուկէն ետքը հրատարակել առանձին գրքոյկ մը, Մշակութիւն պտղատու ծառոց կամ Պտղաբանութիւն անուամբ։ Եւ յուսամք թէ այս երկու գրքուկներն ալ հաճելի և ընդունելի կ'ըլլան ազգին, որում վիճակեալ է Արևելքի բարեբեր և ջրարբի երկիրը,

յարմար ի մշակութիւն ընդեղինաց և պտղատու ծառոց։ Այլ աւա՜ղ որ հիմայ Հայաստանի մէջ երեսի վրայ թողուած է ասոնց մշակութիւնն՝ այլևայլ պատճառաց համար, որոց վրայ խօսելն աւելորդ կը համարիմք։

Եւ որպէս զի մեր աշխատութիւնը դիւրամատոյց ընեմք մեր ազգին և առանձինն Թրքահայոց, ուզեցինք դնել գործոյս մէջ գաղղիական և իտալական անուանց հետ նաև Թրքերէն անունները դժուարին անուանց և ամէն բուսոց և ծառոց առջև՝ որոց վրայ պիտի խօսիմք առանձինն Պարտիզպանութեան և Պտղաբանութեան մէջ։

Առաջնորդ գործոյս առած եմք եւրոպացի ընտիր մատենագիրները, որք այս նիւթոց վրայ խօսած են, և առանձինն Տամարոյ իտալացւոյն և Բրեւանս գաղղիացւոյն գրուածները։

ՊԱՐՏԻԶՊԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՏԻԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

ԴԻՐՔ, ՀՈՂ ԵՒ ՋՈՒՐ

1. Դիրք. — Բանջարեղինաց պարտէզը պէտք չէ ըլլալ տան մօտ, վասն զի աղբին հոտը կրնայ վնասակար ըլլալ։ Զգուշանալու է պարտիզին դիրքը հիւսիսային, հիւսիսային արևելեան կամ հիւսիսային արևմտեան կողմ ընելէն։ Հարաւային կողմն աղէկ է կանխահաս բանջարեղինաց համար, կամ այն բանջարեղինաց զորս բանի կ'ուզեմք հասցնել. իսկ առհասարակ ուրիշ բանջարեղինաց համար հարաւային կողմն շատ յարմար չերևիր, ոնաց համար հարաւային կողմն շատ յարմար չերևիր, որովհետև չարաչար տաքութեամբ գետնին թացութիւնը կ'երթայ, որ կարևոր է կանաչեղինաց համար։

2. Հող. — Պարտիզի հողը պիտի ըլլայ պարարտ և քիչ մը զառ ի վայր, և ջրոյ մօտ, որով կարենայ ոռոգիլ. անոր համար պիտի ունենայ կորիներ՝ անձրևային և ոռոգիչ ջրերը վազցնելու համար։

3. Անյարմար է պարտիզի այն հողն՝ որոյ մշակելի երեսը խոր չէ, այն հողն՝ որ կարծր է և չոր, կազմեալ ըստ մեծի մասին կաւէ և կրէ։ Յարմարագոյն հողն է կա-

կուղ և զով հողը, որ խոնաւութիւնը կը պահէ իր մէջ, առանց չափազանց թացութեան։ Պէտք չէ երբէք անձրևէ ետքը երկիրը փորել, վասն զի կը կարծրանայ հողը։

4. Ջուր. — Ջուրը կենսական կարևորութիւն ունի պարտիզի համար, առանց ջրոյ անկարելի է մշակել կանաչեղէնները կամ բանջարեղէնները։ Անոր համար պէտք է նայիլ որ պարտէզը ջրոյ հոսանքի մը մօտ ըլլայ, կամ գետնին տակ առատ ջուր ըլլայ, որ ջրհորի մը ձեռքով կարենայ դիւրաւ մատակարարել։

Այն վազուկ ջրերը յարմար են ոռոգելու, որ քիչ հանային նիւթեր բովանդակեն։ Բայց կրնամք ջուրը լաւցնել, դնելով քանի մը օր արևու տակ մեծամեծ ընդունարաններու մէջ, կամ արուեստիւ լաւցնել՝ խառնելով հետը աղբաջուր։

5. Պարտէզը պէտք է ոռոգել առաւօտը՝ գարնան և աշնան ժամանակ, իսկ ամառն արևուն մտնելու ժամանակ կամ ետքը։ Եւ ոռոգել առատապէս երբ օդը չոր է։

Կրնամք զանց առնել ոռոգելը՝ երբ վախ կայ որ փոթորիկ պիտի ելնէ, կամ երբ երկինքն ամպամած է։ Գարնան և աշնան ժամանակ աւելի ուշադրութիւն պէտք է ընել օդոյ փոփոխութեանց՝ պարտէզն ոռոգելու համար, քան թէ ամառը, վասն զի ամառուան ժամանակ հողն աւելի չոր կ'ըլլայ։

Ցանած հունտերը՝ որ սովորաբար թեթև և հարաւային կողմ պատսպարեալ հողերու մէջ կ'ըլլան, ամէն օր կարօտ են ոռոգելու, որպէս զի աճին և չվատուժնան։

Ոռոգելու լաւ կերպն այն է, որ անձրևի նման մանր կաթիլներով իյնայ հողին երեսը, որպէս զի հողը կարենայ ծծել։ Կորիներով ոռոգելը կ'ըլլայ այն պարտէզներուն մէջ՝ ուր ջրոյ առատութիւն կայ։

ԳԼՈՒԽ Բ

ՁԵՒ ԵՒ ՉԱՓ ՊԱՐՏԻԶԻ

6. Ձեւ եւ չափ պարտիզի. — Պարտիզի մը լաւագոյն ձևն է ուղղանկիւնի ըլլալը. իսկ չափը կրնայ բաւական համարուիլ 15 կամ 20 կալ * մէկ ընտանեաց համար, որ բաղկանայ վեց հոգիէ, և ուզէ կերակրիլ բովանդակ տարւոյն մէջ նոյն պարտիզին բերքով։ Պարտէզն այնպէս կարգադրած պիտի ըլլայ, որ մարդ կարենայ ամէն կողմ համարձակ երթալ, և հող կարենայ վայելել լաւագոյն կերպով բարեբերութեան երկու ամենակարևոր ազդակները, որք են ջերմութիւն և ջուր։

7. Պարտէզն ուղղանկիւնի ըլլալով, ճանապարհ մը պէտք է ընել ճիշդ մէջ տեղէն դէպ յերկայնութիւն, և ուրիշ մը ճիշդ մէջ տեղէն դէպ ի լայնութիւն, որով պարտէզը չորս հաւասար մասն բաժնուած կ'ըլլայ։ Այս երկու գլխաւոր ճանապարհներուն լայնութիւնը գէթ պիտի ըլլայ 1,50 մետր, որպէս զի սայլակով կարենայ մարդ համարձակ երթալ գալ, և փոխադրել աղբ և բերք։ Երկու ճանապարհներուն մէջ տեղ ամենէն յարմարն է ջրոյ ընդունարան մի ընել, որպէս զի չորս մասերէն ալ հաւասարապէս հեռի գտնուի։ Այս երկու մեծ ճանապարհներն ընելէն ետև բաժնել պարտէզն այլևայլ ածուներ՝ որոց լայնութիւնը 1,50 մետրէն աւելի պիտի չըլլայ, որպէս զի պարտիզպանը կարենայ լաւ աշխատիլ. և իբրև բաժնուած պիտի ըլլան նեղ շաւիղներով՝ որք կ'ըսուին Կածան, որոց վրայէն կ'անցնի պարտիզպանն՝ ածուներուն վրայ աշխատելու համար։

Գլխաւոր ճանապարհները և կածանները ածուներէն ցած պիտի ըլլան, որոց հողը չոկելու ժամանակ ածուներուն վրայ պէտք է թափել. և այսպէս ջրերուն անցքը կը դիւրանայ, և չմնար ջուր ածուներուն վրայ։

* Մի Կուռ (are) է 100 մետր քառակուսի երկիր։ Եւ մի Հարէ-րոկուռ (hectare) որ է հարիւր կալ, է չափ տարածութեան 10,000 մետր քառակուսւոյ։

8. Ճանապարհներուն ցածութիւնը համեմատ է հողին բնութեան: Թէ որ հողը կակուղ է, ճանապարհները քիչ ցածութիւն կ'ունենան ածուներէն. իսկ եթէ կրային և կաւեղէն, ճանապարհները 20 հարիւրորդամետրէն աւելի ցած կ'ըլլան, և երբեմն ճանապարհին երկու կողմէն փոսեր կը բացուին, որպէս զի ջրերը համարձակ վազեն:

Ոմանք կարծեն թէ ճանապարհներուն և կածաններուն պատճառաւ հողին մէկ մասը պակսելով, կը պակսի բերքին քանակը: Բան զայս աւելի վրիպակ կարծիք չկրնար ըլլալ. կորուստը լիովին կը փոխարինի մնացած հողին լաւ մշակութեամբ, և պարտիզպանին աշխատութիւնը դիւրանալով:

9. Ածուներն արեգդէմ ըլլալու համար, պէտք է հիւսիսէն դէպ ի հարաւ զառ ի վայր ընել, որպէս զի կարենան երկար ժամանակ արև տեսնել և ազատ ըլլալ հիւսիսային հովերէ: Երբեմն ածուներուն ասոր հակառակ դիրք կու տան այն բերքերուն համար՝ որ շատ տաքութիւն չեն ուզեր:

10. Պարտէզը պէտք է չորս կողմէն պատսպարեալ ըլլայ պատով կամ ցանկով, որպէս զի գողերը և անասունները ներս չկարենան մտնել, հովերը չկարենան համարձակ փչել, և պատերուն ներքև կարենամք կանխահաս բերք հասցնել: Լաւագոյն է քարուկիր պատը, թէպէտ սուղ կ'ըլլայ, բայց իր ծախքը կը հանէ իր օգտակարութեամբ:

ԳԼՈՒԽ Գ

ԳՈՐԾԻՔ ՊԱՐՏԻԶՊԱՆԻ

11. Կարեւոր գործիք պարտիզպանի. — Պարտիզպանի մը ամենէն հարկաւոր գործին է բահ (տճ. Պէլ, Քիւրէք. գղ. Bèche. իտ. Vanga, Badile) որ կրնայ զանազան ձևերով ըլլալ (Ձև 1–5), և ըստ պատշաճի



Ձև. 1. 2. 3. 4. 5.

Զանազան տեսակ բահեր.

գործածուիլ այս կամ այն: Բայց ամենէն աւելի գործածականն է կլորաձև ծայր ունեցողը (Ձև 4), որ հողը փորելու և քրքրելու յարմար է. իսկ սրածայրը (Ձև 5) կը գործածուի կարծր հողերու: Մնացած երեք ձև բա-

հերը (Ձև 1, 2, 3) կը գործածուին ակօսները մաքրելու, ճանապարհները շտկելու, հող փոխադրելու, և այլն։

Երկրորդ կարևոր գործին է Բրքրիչ կամ Բշտոց (տճ. Չափա. գղ. Binette. իտ. Zappa) ըսուածը (Ձև 6), որով երեսանց կը քրքրեմք պարտիզին հողը, ճանապարհներուն վրայ բուսած խոտը քերելով կը հանեմք և կը մաքրեմք, բուսոց արմատին հող կու տամք, և այլն։

Ձև 6. Բրքրիչ.

Ձև 7. Փոցխ.

Երրորդ կարևոր գործին է փոցխ (տճ. Թարագ. գղ. Rateau. իտ. Rastrello) (Ձև 7), որ կը գործածուի խոտը ժողվելու, հողին մէջէն քարի մանրուքը զատելու, գետինը շտկելու, ցանած հունտերը ծածկելու, և ուրիշ ասոնց նման գործերու։

Չորրորդ կարևոր գործին է Քերիչ (գղ. Grattoir. իտ. Rastiatojo, Grametto) որ է 1,50 մետր երկայնութեամբ փայտէ ձողակի մը ծայր հաստատուած ուղղանկիւնի երկաթէ թիթեղ, 3 կամ 4 մատ լայնքով և իբր 20 հարիւրորդամետր երկայնութեամբ, որով ճանապարհները քերելով կը մաքրեն, և ածուներուն միջի մանր խոտերը կը հանեն։

12. Ուրիշ կարևոր գործիներն են Գայլիկոն (տճ. Ջիվի. գղ. Plantoir. իտ. Piuolo, Foraterra), որ սրածայր փոքրիկ փայտի կտոր մի է, որով ծակ մը կը բանան հողին մէջ, և այն ծակին մէջ կը տնկեն մատաղատունկ բոյս մը։

Տնկագործի (գղ. Manette. իտ. Traspiantatojo), որ է տարգալաձև գործի մը սրածայր, որ հողին մէջ կը մտնէ, և կը հանէ տեղէն բոյս մը հողով մէկտեղ, ուրիշ տեղ տնկելու համար։

Յատոց (տճ. Պուտայրձը պուչաղը. գղ. Serpette. իտ. Potatojo), որ է տեսակ մը կտրոց, յարմար յօտելու (Ձև 8)։

Ձև 8. Յատոց.

Գերանդի կամ Մանգաղ (տճ. Պըչգը. գղ. Faux. իտ. Falce), որ խոտ կտրելու կը գործածուի։ Ցնցուղ (գղ. Arrosoir. իտ. Inaffiatojo), բոյսերուն ջուր տալու համար, որոյ քիմիտի բերնին վրայ հաստատուած պիտի ըլլայ ծակոտկէն ընդունարան մը, ուսկից ջուրը վազէ մանր կաթիլներով անձրևանման։

Պարտիզպանի հարկաւոր են նաև Սապատ, կողով, մեծ և փոքր, երկրին բերքը ժողվելու և տանելու համար։

ԳԼՈՒԽ Դ

ՊԱՐԱՐՏՈՒԹԻՒՆ

13. Պարարտութիւն. — Որովհետև պարտէզը տարուան մէջ այլևայլ բերք պիտի բուսցնէ, և այն առատապէս, ուստի կարօտ է պարարտութեան, որ կրնայ ըլլալ աղբ անասնոց կամ արուեստական պարարտութիւն: Բայց պարարտութիւնը պիտի ըլլայ ըստ բնութեան տնկոյն որ տնկուի պարտիզին մէջ, և այդ դիւրին բան չէ որոշելը:

Թեթև և կակուղ հողը քիչ կարօտ է լուսածնական թթուուտի, և կը պահանջէ առաւելապէս կալի և բորակածին. մինչդեռ թաց և կաւային հողը կը պահանջէ թթուուտ լուսածնական, նմանապէս և այն հողը որ կրային է և խառն բուսահողով:

14. Սահմանելու համար՝ թէ որչափ և ինչ տեսակ պարարտութիւն գնելու է, պէտք է գիտնալ երկրին բարեբերութեան աստիճանը, մշակութեան կերպը, և թէ անցեալ տարի ինչ տեսակ պարարտութիւն դրուեր է: Թէ որ անցեալ տարւոյն դրուած պարարտութիւնը հարուստ է բորակածնով, հարկաւ յաջորդ տարւոյն մէջ պէտք է գործածել այնպիսի պարարտութիւն՝ որ հարուստ ըլլայ լուսածնական թթուուտով և կալւով: Լուսածնական թթուուտի համար կը գործածուի լուսածնատ կամ վերալուսածնատ կրոյ, իսկ բորակածնի և կալւոյ համար կը գործածուի բորակատ նատրոնի կամ կալւոյ և կամ քլոռուկ կալւոյ:

15. Դասաւորութիւն կանաչեղինաց՝ նկատմամբ պարարտութեանց. — Կանաչեղէններն որք և կ'ըսուին Բանջարեղէնք, Խաւարտք, կրնամք բաժնել երեք դաս ըստ իրենց պահանջելուն գայս կամ զայն պարարտութիւն, զոր պէտք չէ կարծել իբրև անհրաժեշտ և անփոփոխելի:

Ա. Խաւարտք որոց տերևները կամ խոտեղէն մասը կ'ուտուի, ինչպէս են կաղամբ, կարոս, հազար, պրաս, սամիթ, կոտիմն, եղերդ, անմեռուկ, շոմին, թրթնջուկ, և այլն, որք կ'ուզեն առատապէս դալար աղբ կենդանական, յորում տիրող պտղաբերիչ մասն է բորակածին:

Բ. Խաւարտք որոց արմատները կ'ուտուին, ինչպէս են ճակնդեղ, շաղգամ, ստեպղին, բողկ, գազի կամ քօշմորուք, բատատ, գետնախնձոր, սոխ, սխտոր, և այլն, որք կը սիրեն այն հողը որ նախընթաց տարւոյն մէջ պարարտացած ըլլայ աղբով, և սերման ժամանակ՝ լուսածնական թթուուտի և կալւոյ պարարտութեամբ:

Գ. Խաւարտք որոց սերմը կամ պտուղը կ'ուտուի, ինչպէս են լուբիա, բակլայ, ոլոռն, ոսպ, սիսեռն, և այլն, որք և կ'ըսուին Ընդեղէնք, կ'ընդունին բորակածինն օդէն և հողէն, և չեն այնչափ պահանջող պարարտութեան, ինչպէս են միւս երկու դասերը. և սակայն սոցա ալ հարկ է քիչ մը պարարտութիւն տալ, որ խառն ըլլայ կալւով և լուսածնական թթուուտով:

Ուստի, բովանդակ պարտիզին անասնոց աղբ տալ ամէն տեսակ բանջարեղինաց համար, շատ սխալ կարծիք է և դրամոյ կորուստ: Անասնոց աղբով խոտեղէնները միայն կը սնանին, իսկ միւսերը կը սնուցանեն աղբով իրենց օդոյ մէջ եղած մասերն՝ ի վնաս արմատոց և ընդոց:

16. Շրջան պարարտութեան պարտիզի. — Վերն ըսածնէս կը հետևի, թէ անհրաժեշտ հարկ է շրջան մը տալ պարտէզը պարարտացնելու համար, ինչպէս կ'ընեն արտօրէից: Եւ լաւագոյն շրջանն է չորեքամեայ:

Առաջին տարի. Սփռել պարտիզին վրայ առատ աղբ կենդանական, իբր 25 հարիւրորդամետր բարձրութեամբ, և մշակել տերևային խաւարտներ: Եւ կամ սեխ, ձմերուկ, դդում, վարունգ, ոսկեխնձոր և այլն:

Երկրորդ տարի. Գնել բուսահող, կրային հող, շէնքի աւերակ, և մշակել չաղգամ, ստեպղին, սխտոր և այլն:

Երրորդ տարի. Գնել կալւոյ և լուսածնական թթուուտի հարուստ պարարտութիւն: Լաւագոյնն է մոխիր, և մշակել լուբիա, բակլայ, ոլոռն և այլն:

Չորրորդ տարի. Չգնել ամենևին պարարտութիւն. և ցանել այնպիսի կանաչեղէններ որոց սերմը կ'ուզեմք

պահել սերմանելու համար, և կամ ցանել համեմային բոյսեր։

17․ Այս բանիս համար լաւ կ'ըլլայ որ պարտիզպանը չորս մաս բաժնէ իր պարտէզը, որպէս զի ծախքին և բերքին մէջ կարենայ հաւասարակշռութիւն պահել․ այնպէս որ ամէն տարի չորսին մէկ մասն աղբել, մէկ մասն աւերակային հողով պարարտացնել, և մէկ մասը մոխրով կամ վերլուսածնասով կրոյ, որ խառն ըլլայ քլօռուկով կալւոյ։

Այսպէս ընելով կ'ունենամք հետագայ օգուտները․

Ա․ Կարօտ չեմք ըլլար ամէն տարի աղբելու բովանդակ պարտէզը, ուստի և խնայութիւն կ'ըլլայ աղբի։

Բ․ Չորս տարուան մէջ պարտէզը կատարեալ բարեբեր վիճակի վերածուած կ'ըլլայ։

Գ․ Երկիրը պարարտացնելու և մշակելու ծախքը միօրինակ կ'ըլլայ ամէն տարի, որով և պարտիզպանը կը ստիպի բերոց շրջանը կատարել, զոր շատ անգամ անհոգ կ'ըլլայ կատարելու։

Դ․ Մի և նոյն երկրի վրայ չորս տարուան շրջանի մէջ այս կամ այն մշակութիւնը կատարելով, կ'աւելնայ երկրին բարեբերութիւնը, փոփոխելով բերոց տեսակը։

Ե․ Պահելով մշակութեան վերոյիշեալ քառամեայ կարգը, կ'արգելուին բուսնելու կամ քիչ կը բուսնին իւրաքանչիւր տեսակ խաւարտին պատուաբոյծ բոյսերը։

18․ Բանջարեղէնները գրեթէ առհասարակ կը սիրեն բորակածնային պարարտութիւն, անոր համար պարտիզի մէջ բաց ի անասնոց աղբէ՝ կը գործածուի ևս հաւի և աղաւնոյ աղբ, բուսահող և ծծմբատ ամոնիակի։ Ընտիր պարարտութիւն են փողոցներու և տան աւելուքը, որք բաց ի բորակածնէ կը բովանդակեն նաև շատ հանային նիւթեր։

19․ Կարեւորութիւն աղբի եւ զանազան տեսակք նորա․ — Ամէն տեսակ պարարտութեանց մէջ առաջին տեղը կը բռնէ անասնոց կամ թէ ընել արջառոց աղբը՝ որ խառն ըլլայ իրենց չեռով։ Աղբն ամէն տեղ կը գտնուի, և հին ժամանակէ ի վեր այն համարուած է պարարտացուցիչ նիւթ հողոյ։ Նորահնար են տարրաբանական պարարտութիւնները։

Աղբով կակուղ հողերը կը պնդանան, և պինդ հողերը կը կակղնան։ Առաջիններուն համար լաւ է գործածել աղբ՝ որ աւելի փտեալ և տարրաբաշխեալ ըլլայ, քան թէ երկրորդներուն համար։

Իսկ աղբին տեսակներուն մէջ ձիոց թարմ աղբն օգտակար է պինդ և կաւեղէն հողի, և կէս տարրաբաշխեալը՝ թաց գետիններու․ և եթէ բոլորովին տարրաբաշխեալ և փտեալ է, օգտակար չէ բանջարեղինաց, որովհետև կորուսած է իր սննդարար նիւթոց մեծագոյն մասը։

Ոչխարներու աղբը քանի մը տեսակ բանջարեղինաց միայն օգտակար է․ և ունի այս անդիպութիւնը՝ որ որդանց և միջատաց բոյն կ'ըլլայ։

Խոզերու աղբը կը գործածուի նոյնպէս քանի մը տեսակ բանջարեղինաց, կամ կը խառնուի բուսահողոյ հետ։

Մարդոյս քակորը կրնայ գործածուիլ թէ առանձինն և թէ խառն ուրիշ աղբերու հետ։ Շատ մեծ զօրութիւն ունի բանջարեղինաց համար։

20․ Դիտողութիւն աղբի տեսակաց վրայ․ — Փորձով իմացուած է որ բանջարեղէններէն ոմանք այս քան թէ ուրիշ տեսակ աղբ կը սիրեն, և կ'առնուն չոկրած աղբով անախորժ համ։

Պարտիզպանն այս բանիս ուշադիր պիտի ըլլայ, և ըստ այնմ գործէ։ Օրինակ իմն, կաղամբ կը սիրէ ոչխարներու աղբը, և յետոյ եզներու։ Այս աղբերով համեղ և փափուկ կ'ըլլայ և շուտով կ'աճի։ Եւ ընդ հակառակն ձիոյ աղբով չափաւոր համեղ կ'ըլլայ, և խոզի աղբով և մարդոյ քակորով կ'ըլլայ բոլորովին անհամ։

Վայրի բողկ, սոխպղին, ճակնդեղ, ոչխարի աղբով դառնահամ կ'ըլլան։

Սխտոր և պրաս լաւ կը յաջողին մարդոյ քակորով և ձիոյ աղբով, և կ'ըլլան փափուկ, հիւթեղ և հաճոյական։ Ընդ հակառակն, կովու աղբով կ'ըլլան կորդ և դառնահամ, և խոզի աղբով՝ գաժան, և ոչխարի աղբով կ'առնուն աղբին հոտը և համը։

Մանր ուտելի բողկը կ'ըլլայ համեղ և հիւթեղ կովու աղբով և մարդոյ քակորով․ խոզի աղբով կ'ըլլայ չափաւոր, իսկ ձիոյ աղբով՝ անհաճոյ։

3964 42
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм.ССР

Սոխը ձիոյ և եզին աղբով և մարդոյ քակորով կ'ըլլայ ի սկզբան քաղցր, այլ յետոյ անախորժ և կծու. ոչխարի աղբով կ'ըլլայ չափաւոր, և խոզի աղբով ի սկըզբան կ'ըլլայ քաղցր, հիւթեղ և համեղ:

Ճերմակ շաղգամը խոզի աղբով կ'ըլլայ համեղ և հիւթեղ, մարդոյ քակորով մեծ աճումն կ'առնու, բայց կ'ըլլայ կարծր և կծուահամ: Ձիոյ և ոչխարի աղբով կ'ըլլայ կակուղ, հիւթեղ, բայց ոչ այնչափ ախորժահամ:

Կարմիր շաղգամն ոչխարի աղբով կ'ըլլայ անոյշ և համեղ, բայց կարծր, ձիոյ աղբով աւելի ընտիր կ'ըլլայ. իսկ մարդոյ քակորով կ'ըլլայ դառնահամ, բայց ոչ այնչափ անհաճոյ:

Ընտանի կարոսը (մաղտանոս) ձիոյ աղբով այնչափ համեմային չըլլար, կովու աղբով՝ աղբին հոտը կ'առնու, խոզի աղբով անհամ և կարծր կ'ըլլայ, ոչխարի աղբով անուշահոտ կ'ըլլայ, իսկ մարդոյ քակորով կ'ըլլայ անախորժ և անհամ:

Կարոսը (քէրէվիզ) կը սիրէ ձիոյ աղբ, անով շուտով կ'աճի և կ'ըլլայ համեղ. մարդոյ քակորով այնչափ չաճիր, և կ'ըլլայ կարծր և ոչ այնչափ համեղ. խոզի և կովու աղբով կ'ըլլայ անհամ:

Ծաղկաբեր կաղամբը (գառնապիթ) մարդոյ քակորով կ'ըլլայ հիւթեղ բայց դառնահամ, եզի, ձիոյ և ոչխարի աղբով ոչ այնչափ հիւթեղ:

Կանաչ կաղամբը (լաստաւխա) կ'ըլլայ անոյշ՝ խոզի աղբով, բայց վերջը տտիպ համ կ'առնու: Մարդոյ քակորով և ձիոյ աղբով կ'ըլլայ դառնահամ: Սովորաբար կանաչ կաղամբը գործածուած աղբին հոտը կ'առնու:

21. Ծիրտ հաւու, աղաւնոյ, թռչնոց. — Կենդանական աղբի կարգ կը համարուին ծիրտ հաւու և աղաւնոյ, և Գուանոյ (Guano), որ է ծովային թռչնոց ծիրտը՝ որ կը գտնուի ամբաւ տարածութեամբ Պերուի ծովեզերքն Ամերիկայի մէջ: Այս հաւեղէն պարարտութիւնները խիստ յարմար են բանջարեղինաց համար:

Հաւու և աղաւնոյ ծիրտը կը դրուի պարտիզի մէջ 4 հազարագրամ առ մի կալ տարածութիւն, և գուանոյէն կը դրուի 2 հազարագրամ առ մի կալ: Պէտք է տարածել այս պարարտութիւը երբ գետինըն թաց է, կամ

գետնոյն մէջ բաւական թացութիւն կայ, և կամ երբ օդն անձրևային է, ապա թէ ոչ՝ կը գոլորշանայ մէջի աւշակը:

22. Կաճ եւ բուսահող. — Կաճը կ'աւելցնէ երկրին բուսականութիւնը, նմանցնելով իր բնութեան հողին մէջ գտնուած զանազան նիւթերը, և ձգելով առ ինքն հողին և օդոյ մէջ գտնուած բորակածինը: Մասնաւորապէս օգտակար է կաղամբի, որուն սաստիկ աճումն կու տայ: Կաճը պէտք է մանրամաղ փոշիացեալ ըլլայ, և դնել 2 հազարագրամ առ մի կալ:

Օգտակար են պարտիզի մշակութեան համար աւերակաց մանրուք և զինչ և է աւելուք և բուսահող, որոց զօրութիւնն առժամանակեայ է:

23. Ալիւր եղջեր եւ ոսկեր. — Կենդանեաց եղջիւրներու, կճղակներու և ոսկրներու մանրուքն՝ ալիւր դարձած, օգտակար են պարտիզի մշակութեան համար, ունելով շատ բորակածին. բայց իրենց ազդեցութիւնը երագ չէ, և յարմար են չոր հողի: Դնելու է 2 հազարագրամ առ մի կալ, և խառնել երեսի հողին հետ:

24. Տիղմ եւ փոսերու նիւթ. — Ճանապարհներու տիղմը և փոսերու մէջէն փորուած և հանուած հողը շատ օգտակար պարարտութիւն կրնայ ըլլալ: Բայց որպէս զի անով չփոխադրի պարտիզի մէջ միջատներու թրթուրներ և ձուեր, պէտք է թողուլ այդպիսի հողերը որ չորնան և հիննան, և յետոյ փոխադրել:

25. Հեղուկ պարարտութիւններ. — Անասնոց շեռը և աղբաջուրը շատ օգտակար պարարտութիւն են: Ասոնցմով կրնամք դարմանել ուրիշ պարարտութեանց պակասութիւնը կամ անկատարութիւնը, ջրելով բոյսերն ասոնցմով և տալով միանգամայն ջուր: Կակուղ և թափանցիկ հողն աւելի օգուտ կը տեսնէ ասոնցմէ, ոչ այնչափ կաւեղէն, կորդ և թաց երկիր: Գիտնալով որ բանջարեղինաց արմատն 30 հարիւրորդամետրէ աւելի խոր չերթար, պարտիզի համար շատ օգտակար կը համարուին հեղուկ պարարտութիւններ: Բայց այս ալ պէտք

է գիտնալ որ 10 լիտր աղբաջուր տալով մի մետր քառակուսի հողոյ վրայ, կը թափանցէ հողին մէջ մի հարիւրորդամետր ի խոր. ուստի 29–30 հարիւրորդամետր խոր թափանցելու համար՝ պէտք է տալ 25 լիտր առ մի քառակուսի մետր։

Բայց սատ պէտք չէ համկանալ որ հեղուկ պարարտութիւնները պէտք է թափանցեն հողին մէջ մինչև 30 հարիւրորդամետր, ապա թէ ոչ շատ ծախքի պատճառ կ'ըլլան։ Բաւական է քանի մի հարիւրորդամետր հողի մէջ թափանցելը, վերի արմատները սնուցանելու համար, վասն զի հեղուկ պարարտութիւնները Լրացուցիչ կը համարուին։

26. Հեղուկ պարարտութիւնները պէտք է տալ՝ երբ հարկաւոր տեսնուի, և միշտ պէտք է տալ երեկոյի դէմ, նախ հողը քրքրելով, որպէս զի բոյսերը չայրին։

Հեղուկ պարարտութեան համար կրնամք գործածել անասնոց չեռը, խառնելով 1 մասը 25 մաս ջրով. եզի աղբը 1 մաս 30 ջրով, ոչխարի աղբը 1 մաս 40 ջրով, մոխիր 1 մաս 30 ջրով, կալի 1 մաս 800 ջրով, ալիւր ոսկեր 1 մաս 400 ջրով, ալիւր արեան 1 մաս 400 ջրով, ծիրտ հաւու և աղաւնոյ 1 մաս 100 ջրով։

27. Զանազան բանջարեղինաց մէջ ընդեղէնք այնչափ չեն ախորժիր հեղուկ պարարտութիւններ, նմանապէս սոխ, բողկ, ստեպղին. և ընդ հակառակն ձմերուկ, սեխ, դդում, և պղպեղ՝ որ և կ'ըսուի ոսկեխնձոր (տոմաթէս), կ'ախորժին. բայց ամենէն աւելի կ'ախորժի կաղամբ։

ԳԼՈՒԽ Ե

ՓՈԽԱՑԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՈՒԳԱՑԱՆՈՒԹԻՒՆ

28. Փոխացանութիւն (գղ. Assolement. իտ. Avvicendamento). — Երևելի պարտիզպան մը պիտի ջանայ որ պարտիզին մէջ չկորսնցնէ տեղ մը բովանդակ տարւոյն մէջ, այլ ամէն կողմ պտղաբեր ընէ, և այս կ'ըլլայ փոխացանութեամբ։

Այս բանիս համար պէտք է գիտնալ իւրաքանչիւր խաւարտի սերմանելու, բուսնելու և ժողվելու ժամանակը, և ըստ այնմ եւեէ եւե ցանել և բուսցնել։

Կան ցուցակներ որոց մէջ նշանակուած են՝ թէ ամսէ ամիս պարտիզպանն ինչ պիտի ընէ և ինչ պիտի սերմանէ։ Բայց այս ցուցակներն հարևանցի կերպով կըրնան ծառայել, և չեն կրնար օգտակար ըլլալ ամէն տեղւոյ. վասն զի իւրաքանչիւր տեղւոյ օդը, կլիմայն և հողը կը տարբերի։ Ուստի, երևելի պարտիզպան մը ինքնին իսկ փորձով պիտի ուսանի իր պարտիզին համեմատ ցանելու կանաչեղէնները բովանդակ տարւոյն մէջ։

Պարտիզպանութիւնը չնմանիր ուրիշ հողային մշակութեանց։ Պարտիզպանը պիտի ջանայ քիչ տեղւոյ մէջ շատ բան բուսցնել, ամէն խնամքով և փութով։ Այս բանիս համար պէտք չէ որ երկիրը վայրկեան մը պարապ թողու կամ ի հանգիստ, այլ հողը պարարտացնելով և ուրիշ ամէն միջոցներով աճեցնել եւեէ եւե կանաչեղինաց տեսակները։ Կրնայ երևելի պարտիզպան մը տարւոյն մէջ չորս, հինգ և մինչև վեց տեսակ բերք ունենալ նոյն հողին վրայէն։ Եւ կ'ունենայ պարարտութեամբ, ջրոյ առատութեամբ և իր անխոնջ ջանքով, և գիտնալով կանաչեղինաց փոխացանութեան կարգը, այս ինքն իւրաքանչիւրին ցանելու և բուսցնելու ժամանակը։

29. Զուգացանութիւն (գղ. Association. իտ. Associazione). — Հիները շատ տեսակ կանաչեղէն միասին տնկել կը պատուիրէին, շատ շահ ունենալու հա-

մար։ Բայց այս օգուտն առերևոյթ է քան թէ իսկական. որովհետև շատ տեսակ բոյսեր միասին տնկելով, և իրենց պահանջն իրարմէ տարբեր ըլլալով, չեն յաջողիր. միոյն սաստիկ ոյժը և կորովը կը վնասէ միւսոյն, միոյն այս ինչ խնամքը՝ օգտակար չըլլար միւսոյն։ Թող զի կարծեցեալ տեղւոյ խնայութիւնն առերևոյթ է. որովհետև, եթէ օրինակ իմն կարոսին հետ սերմանեմք ուրիշ կանաչեղէն ալ, հարկաւ կարոսին գրաւած տեղը փոքր կ'ըլլայ, քան թէ առանձին սերմանած ըլլայինք, որով և կարոսին բերքն համեմատաբար կ'ըլլայ քիչ։ Պէտք է նաև աւելցնել և զայս, թէ հողը մեծապէս կը վնասի զուգացանութեամբ, գէշ խոտերուն բուսնելով, և չկարենալով հողին յատկացնել պարարտութեան տեսակը։

Ուստի, կը հետևցնեմք թէ ի բաց թողլու է պարտիզի մէջ զուգացանութիւնը, այլ մաս մաս բաժնել պարտէզը, և իւրաքանչիւր մասին մէջ առանձին տեսակ խաւարտ ցանել իրեն յատկացեալ պարարտութեամբ, և փոխանակել ցանածն ուրիշ տեսակ կանաչեղինով, որով և երկրին ոյժը չերթար, ստէպ նոյն բանը ցանելով նոյն հողին մէջ։

30. Բաժնել պարտէզը մաս մաս. — Բաւական չէ գիտնալ միայն թէ ինչ շրջան պէտք է տալ կանաչեղինաց, և ինչպէս մշակել զիրենք, այլ և պէտք է գիտնալ թէ ինչ կը պահանջեն իրենք նկատմամբ հողին և նկատմամբ զանազան տեսակ պարարտութեանց։ Ուստի, ինչպէս վերն ըսինք (17), պարտէզը չորս մաս բաժնելէն ետքը, և իւրաքանչիւր մասը զանազան ածուներ, տընկել զանազան կանաչեղէններ իրենց յատկացեալ պարարտութեանց համեմատ։ Եւ հետևաբար, այն ածուները որոց վրայ դրուած են կենդանական աղբ, ցանել առաջին կարգի կանաչեղէնները (15). ուր որ դրուած են բուսահող և աւերակային հող, հոն ցանել երկրորդ կարգի կանաչեղէնները, և այսպէս հետագայք։

Եւ որովհետև կանաչեղինաց շատերուն բուսականութիւնը տարի մը ամբողջ չտևեր, ուստի պարտիզպանին ճարտարութիւնն յայնմ պիտի ըլլայ, որ կարենայ նոյն տարւոյն մէջ ցանել ուրիշ կանաչեղէններ ալ նոյն հո-

ղին պատշաճեալ, նոյն կարգի կանաչեղէններէն, որով չարունակ կը փորուի հողը և կը սերմանուի։

31. Օրինակ իմն, պարտիզին առաջին բաժնին մէջ որ աղբով պարարտացած է, պէտք է տնկել աշնան հազար (մառուլ), և գարնան սկիզբը բողկ, որ հազարին հետ կը քաղուի։ Ապրիլի մէջ տնկել ակօսներուն մէջ նորաբոյս կարոսներ, որոց ծղօտը ծածկելու է հողով յունիսի մէջ, և ասով կը ճերմկի ծղօտը, և քաղել ամսէ մը ետքը։ Յետոյ փորել երկիրը և սերմանել սպանախ, և քաղել աշնան ետքերը, և յետոյ տնկել գլխանի կաղամբ։

Գնեմք ուրիշ օրինակ նոյն առաջին բաժնին համար։ Սերմանել փետրուարի մէջ եղերդ, և ժողվել ամսէ մը ետքը. յետոյ ցանել վաղահաս հազար, և ուտել ամսէ մը ետքը. մայիսի մէջ ցանել ծաղկաբեր կաղամբ, և ժողվել սեպտեմբերի մէջ, յետոյ ցանել սպանախ։

Պարտիզին երկրորդ բաժնին մէջ որ բուսահողով պարարտացած է, տնկել յունուարի մէջ ճերմակ սոխ, և անոր ետևէն պրաս։ Փետրուարի մէջ վաղահաս ստեպղին, և անոր ետևէն հազար կամ եղերդ. և ասոնց ետևէն սպանախ։ Կամ, մարտի մէջ սերմանել հազար և բողկ վաղահաս, և ասոնք ժողվելէն ետքը ցանել ոսկեխնձոր կամ ստեպղին, և ժողվել սեպտեմբերի մէջ։

Պարտիզին երրորդ բաժնին վրայ պէտք է ցանել մարտի մէջ ոլոռն կամ ոսպ, յետոյ լուբիա, և անկէ ետքը բողկ։

Կամ սերմանել փետրուարի մէջ բակլայ, և անկէ ետքը լուբիա, և յետոյ հաւաղցան։

Պարտիզին չորրորդ բաժնին մէջ որ պարարտացած չէ, կրնամք սերմանել այնպիսի կանաչեղէններ, որ երկու կամ երեք տարի կը մնան նոյն տեղ, ինչպէս են կանկար, ելակ, ծնեբեկ, և այլն։

ԳԼՈՒԽ Զ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՐՏԻԶԻ

32. **Մշակութիւն հողոյ.** — Երկիրը բարւոքելու համար պէտք է լաւ մշակել։ Մշակութեամբ հողը կը կակըղնայ, որով թացութիւնը և օդը կը թափանցեն ի խոր, որք են կարևոր տարերք բարեբերութեան։ Մշակութեամբ երեսին հողը տակը երթալով, կը հաղորդէ բուսոց արմատներուն իր տաքութիւնը և միանգամայն ուրիշ կարևոր սննդական տարրներ։ Եւ ընդ հակառակն՝ այն տարրները որ հողին տակ անազդակ մնացած էին, ելնելով հողին երեսը, արևու և օդոյ ազդեցութեամբ կը դառնան բնանման, կամ թէ ըսել, բնութենակից նիւթեր բուսոյ։ Ի վախճանի, մշակութեամբ գէշ խոտերն անհետ կ'ըլլան։

33. Ամէն հող նոյն եղանակին մէջ պէտք չէ մշակել։ Կակուղ հողը պէտք է մշակել աշնան, որպէս զի կարենայ ամբարել իր մէջ անձրևոյ և ձեան ջուրը։ Այս երկիրները եթէ ամառը բանիմք, պէտք է շուտով մանկեռել և սերմանել, որպէս զի թացութիւնը չերթայ գոլորշացմամբ։ Կարծր հողը պէտք է աշնան հարևանցի փորել, գէշ խոտերը ջնջելու համար. և գարնան փորել կատարեալ կերպով, մէջի թացութիւնը հալածելու համար։

34. Պարտէզ մը լաւ մշակելու համար կարևոր են հետագայ գործողութիւնք. *Հողաշրջումն*, *Պեղումն բահով*, *Քրքրումն հողոյ* և *Քաղհանումն*։

35. **Հողաշրջումն** (գղ. Défoncement. իտ. Dissodamento). — Երկիրը հողաշրջելու համար պէտք է փորել գէթ կէս մետր խորութեամբ, և երեսին հողը տակը դնել, և միանգամայն մաքրել հողը, հանելով մէջը գտնուած արմատները և քարերը, և ընել թափանցիկ թացութեան։ Այս աշխատութիւնը կ'ըլլուի բահով, երբ նոր պարտէզ մը կազմեմք. և բաւական կը համարուի

կրկնել 12 կամ 15 տարին անգամ մը։ Այս գործողութիւնը պէտք է յարմար ժամանակի մէջ ընել, դիտելով որ հողը ոչ սաստիկ չոր և ոչ սաստիկ թաց ըլլայ, և միանգամայն հարթել և կոկել երկրին երեսը և մանրել կոշտ հողերը։

36. **Պեղումն բահով** (իտ. Vangatura). — Իւրաքանչիւր բուսոյ մշակութեան ժամանակ պէտք է բահով փորել պարտիզին հողը. ուստի և այս գործը կը կրկնուի տարւոյն մէջ երկու երեք անգամ։ Բահին տեսակը գետնոյն համեմատ է. որչափ գետինը կարծր և քարուտ ըլլայ, այնչափ և սրածայր բահ պէտք է գործածել. մինչդեռ կակուղ հողի համար կրնամք գործածել ուղղանկիւնի բահ։

Բահը պէտք չէ պարտիզի համար շատ մեծ ըլլալ, և սովորաբար 20 հարիւրորդամետրէ աւելի խոր երթալ հարկաւոր չէ։ Պարտիզպանը բահով փորելու ժամանակ պէտք է մանրել հողը և մաքրել գէշ խոտերէ և արմատներէ. և եթէ նոյն գործողութեամբ ուզէ նաև աղբել, պէտք չէ աղբը շատ խոր դնել։

37. **Քրքրումն հողոյ** (գղ. Binage. իտ. Zappatura). — Քրքրիչ կամ Քշտոց ըսուած գործին կրնայ բահին տեղ բռնել, հողը փորելու համար, բայց իր աշխատութիւնը միշտ անկատար է բահէն։ Քրքրիչը կը գործածուի հասարակօրէն հողին երեսը շտկելու և մաքրելու համար, կամ երեսանց փորելու համար։

Հողին և բուսոց տեսակին համեմատ կը գործածուին քրքրիչները։ Սերմը ծածկելու և բուսոց չորս կողմ աշխատելու համար որպէս զի արմատները չվնասուին, պէտք է գործածել թեթև քշտոցներ։ Հողին երեսը շտկելու համար լաւագոյն է գործածել փոցխ, որ իր ակռայներով ոչ միայն կը ժողվէ գէշ խոտերը և քարի մանրուքը, այլ և կը մանրէ հողը և կը տափարակէ, և մանրելու ու տափարակելու համար շատ անգամ կը գործածուի փոցխին տափարակ կողմը։ Հողը մանրելու և տափարակելու համար կրնայ գործածուիլ նաև Լողքար (գղ. Cylindre. իտ. Cilindro).

38. Քաղհանումն (գղ. Sarclage. իտ. Sarchiatura). — Քաղհանումն կ'ըսուի պարտիզին երեսին վրայէն անօգուտ խոտերը ժողվելը, որով հողին երեսը կը կակղնայ, և օդ ու ջուր դիւրաւ կրնան թափանցել։ Երբեմն սաստիկ անձրևէ ետքը հողին երեսը կեղև մը կը կապէ, մանաւանդ թէ որ կրային ըլլայ հողը, և յայնժամ քաղհան գործւով պէտք է այս կեղևը մանրել։ Վրիպակ կարծիք է ոմանց՝ թէ չորութեան ժամանակ պէտք չէ քաղհանել, որպէս զի գետնին թացութիւնը գոլորշանալով վնաս մը չբերէ բուսոց։ Նա մանաւանդ անոր հակառակ որչափ հողին երեսը քրքրի ու մանրի, թէպէտ երեսանց արևու ժամանակ կը տաքնայ և կը չորնայ, բայց գիշերը շուտով կը պաղի և դիւրաւ կը ծծէ գիշերային ցօղը։

Քաղհանե գործիները (գղ. Sarcloir. իտ. Sarchiello) զանազան տեսակ են. ոմանք նման են քերչի, և ոմանց մէկ կողմը բրիչ և միւս կողմը երկմատնի կ'ըլլայ, խոտերը արմատաքի խլելու հանելու համար։

39. Տաքութիւն բուսոց համար. — Տաքութիւնը խիստ կարևոր է պարտիզի բանջարեղինաց աճման համար։ Անոր համար պարտիզպանը պէտք է արուեստական տաքութիւն տայ բանջարեղինաց, որպէս զի փաղահաս ըլլան, որով և իրենց գինն աւելի կ'ըլլայ՝ ժամանակէ դուրս բուսնելուն համար։

Պարտիզպանն այս բանիս համար կը ջանայ հողին կամ օդին տաքութիւնն աւելցնել, կամ երկուքին ալ միանգամայն։ Հողին տաքութիւնն աւելցնելու համար պէտք է ածուները դարձած ըլլան դէպ ի հարաւ և զառ ի վայր, որպէս զի արևուն ճառագայթները շիտակ զարնեն։ Կամ բոյսերն աղբալից գուբերու մէջ տնկել, որ տաք կը պահեն։ Իսկ օդը տաքցնելու համար կը դրուին բուսոց վրայ ապակի զանգակներ, որ կը պահեն միանգամայն գիշերային ցրտէն և շաղէն։ Պարտիզպանը կրնայ նաև ծածկել բոյսերը յարդով կամ փսիաթով, դնելով փսիաթը քիչ մը բարձրկեկ, որ ցերեկը կրնայ բացուիլ՝ գլանի մը վրայ ոլորելով, և գիշերը գոցուիլ։

Պարտիզպանը կրնայ գործածել նաև ջերոցներ, այսինքն ապակիով ծածկած սնդուկներ, որոց հողն աղբախառն ըլլայ. և ասոնց մէջ կրնան հասնիլ բանջարեղէնք ժամանակէ դուրս։

40. Ըստ տեսակի բուսոց պէտք է կազմել տաք գուբերը։ Ուստի այն գուբերը որոց տաքութիւնը քանի մը ամիս անփոփոխ պիտի պահուի, հոն պէտք է դնել ձիոյ աղբ 70–80 հարիւրորդամետր բարձրութեամբ։ Իսկ այն բոյսերը որ դժուարաւ կը բուսնին, և որոց այնչափ տաքութիւն հարկաւոր չէ, բաւական է դնել աղբ 50 հարիւրորդամետր բարձրութեամբ։ Կան բոյսեր որոց համար բաւական է դնել գուբին մէջ 30–40 հարիւրորդամետր բարձրութեամբ աղբ տերևախառն։

41. Ձիոյ թարմ աղբն աւելի տաքցուցիչ է քան ուրիշ անասնոց. անկէ ետքը կու գայ իշոյ աղբը։ Կըրնամք գործածել նաև ծառոց տերևներ, բուրդի խեչերանք, թաց խոտ և յարդ։ Թաց յարդը և խոտը սաստիկ տաքութիւն կը ծնանին, բայց երկար չտևեր։ Իսկ բուրդի խեչերանքը զգուշութեամբ պէտք է գործածել, որովհետև սաստիկ տաքութիւն կը ծնանին և երկար ատեն ալ կը պահեն տաքութիւնը։ Ծառոց մանր ճիւղերը վրայէ վրայ դրած և աղբով լցած, թէպէտ շատ չեն տաքցներ, բայց երկար ժամանակ կը պահեն տաքութիւնը։

42. Տաք գուբ կամ հոր կազմելու համար պէտք է ընտրել հարաւային դիրք, և պատսպարեալ հիւսիսային կողմէն պատով կամ տնով, և նայիլ որ գետնին տակէն չանցնի ջուր, կամ ենթահողը չըլլայ թաց։ Փորել գետինն ըստ արժանւոյն 30 հարիւրորդամետրէ մինչև 60 հարիւրորդամետր խորութեամբ, և 40–50 հարիւրորդամետր լայնութեամբ, և լնուլ տերևով և աղբով և կոխել վրան, և վերջը դնել գուբին վրայ փայտեայ սընդուկ մը, վրան ապակի պատուհանով ծածկած։ Այսպէս քովէ քով կրնամք այլևայլ սնդուկներ դնել իրարու կից կամ բաժանեալ։ Պատուհանները այնպէս շինուած պիտի ըլլան, որ քամի և անձրև ներս չկարենան մտնել։ Գէշ օդի ժամանակ պատուհաններուն վրայ կը ծածկեն երբեմն փսիաթով։

43. Այսպէս գուբերը պատրաստելէն ու վրանին գոցելէն ետքը, երեք չորս օրէն երթալ նայիլ թէ սկսեր է տաքութիւնը. և այս բանս իմանալու համար լաւ է աղ-

բին մէջ փայտէ դաւազան մը խոթել, և քանի մը ժամէ ետքը հանել. և երբ տեսնեմք որ ծայրը տաքցած է, ժամանակը հասած կը համարուի աղբին վրայ հողով ծածկելու, որոյ բարձրութիւնը կրնայ ըլլալ 25–30 հարիւրորդամետր։ Հողը ոչ սաստիկ թաց և ոչ սաստիկ չոր, ոչ շատ պարարտ և ոչ վտիտ պիտի ըլլայ։ Լաւագոյն հողն է բուսահող, խառնած հաւասարաչափ անտառի հողով։ Մի անգամ գործածելէն ետքը կրնամք նոյնը գործածել շատ տարիներ, միայն թէ ամէն տարի պէտք է նորոգել աղբին վրայի կարգը։

Հողը դնելէն երեք չորս օր ետքը պէտք է ջերմաչափով դիտել հողին տաքութեան աստիճանը։ Թէ որ ըլլայ տաքութիւնը 38° հարիւրամասն ջերմաչափի, կըրնամք սերմանել, ընտրելով հանդարտ և պարզ օր մը։ Բայց սերմանելէն առաջ պէտք է հողին երեսը չտկել, որ ամէն կողմ հաւասարապէս թաց և տաք ըլլայ. և յետոյ բաժնել մաս մաս, և իւրաքանչիւրին մէջ սերմանել զանազան կանաչեղէններ։ Իրարու քով սերմանելու է այն սերմերը որ գրեթէ ի նմին ժամանակի կը ծլին։ Ցանելէն ետև պէտք է ճմլել հողին երեսը թեթև կերպով և դնել բարակ խաւ մը բուսահողոյ 1/2 հարիւրորդամետր թանձրութեամբ։ Թէ որ թաց է գետինը, հարկ չէ ջրել։ Երբ սերմերը սկսին ծլիլ, պէտք է ապակի պատուհաններուն վրայի ծածկոյթը վերցնել, որպէս զի աւելի լոյս տեսնեն. և միանգամայն քիչ մը հովահրել։ Անոր համար առաջին օրերուն մէջ պէտք է պատուհանները քիչ մը բանալ օրուան տաք ժամերուն մէջ, բարձրացնելով իբր 1 հարիւրորդամետր, և զգուշանալ որ ցուրտ օդը չզարնէ բոյսերուն վրայ։ Բայց օդը պարզ ալ չըլլայ, պէտք է դարձեալ քիչ մը օդ տալ ջերոցին մէջ քանի մը ժամ։ Մարտին մէջ պատուհանները բոլորովին բանալու է. բայց թէ վախ ըլլայ եղեման, գիշերը գոցելու է։

Ջրելու է երբեմն երբեմն պարզ օդով երբ գետինը չոր է, և ջրելը պէտք է ընել արևու ժամանակ, որպէս զի չորնայ տերևներուն թացութիւնը։ Ջուրն ալ պաղ պիտի չըլլայ։

ԳԼՈՒԽ Է

ՍԵՐՄՆ, ՍԵՐՄԱՆՈՒՄՆ ԵՒ ՓՈԽԱՏՆԿՈՒԹԻՒՆ

44. Սերմն. — Բանջարեղէններէն ոմանք ուր ցանուին հոն կը մնան մինչև քաղոցի ժամանակ, և ոմանք ցանուած տեղէն կը փոխադրուին ուրիշ տեղ քիչ մը մեծնալէն ետքը։ Առաջին տեսակին կարգէն են ստեպղին, գազար, կարոս Մակեդոնի, եղերդ, գազի սև կամ քօշմօրուք, ճակնդեղ, բազուկ, սոխ, ճարճրուկ, բողկ, ըսպանախ, վարունգ, սլոռն, լուբիա, բակլայ, սոպ, և այլն։ Երկրորդ տեսակին կարգէն են ամէն տեսակ կաղամբները, դառնիճ որ և կ'ըսուի եղէգ (հինտիպա), հազար, ոսկեխնձոր կամ պոլտիկ, պատինճան, և այլն։

45. Ընտրութիւն սերման. — Սերման ընտրութիւնը խիստ կարևոր բաներէն մէկն է, վասն զի անկէ կախումն ունի մեծապէս բանջարեղինաց յաջողութիւնը։ Պէտք է սերմը ժողվել այն բոյսերէն որ իր տեսակին մէջ աւելի ընտիր, առողջ և լաւ հանգամանք ունին։ Պէտք չէ ժողվել սերմ այն կանաչեղէններէն՝ որ շատ ոռոգած են և շատ պարարտ հողի մէջ բուսած. վասն զի ասոնց սերմը թէպէտ ի սկզբան առատ կ'երևի, բայց ջրալից ըլլալով, երբ չորնայ կը վտիտնայ, և շատ անգամ մնաս կը հասնի նաև իր սաղմին։

Բոյսերն ընտրելէն վերջ պէտք է թողուլ որ սերմը լաւ հասուննայ։ Սերմը ժողվելէն ետքը զատել իր վրայի փաթոյթէն և հատագործել, չորցնել արևու մէջ, և դնել թղթէ կամ լաթէ փոքրիկ քսակներու մէջ, և պահել չոր տեղ։

Թէ որ պարտիզպան մը ուզէ սերմն գնել, պէտք է նայիլ որ լաւ պահուած ըլլան, հատիկները միօրինակ մեծութեամբ, համագոյն, ամբողջ և ոչ կոտրտած, մէջը լեցուն և ոչ կիսկատար։

46. Սերմերը կը պահեն իրենց ծլելու կարողութիւնն առաւել կամ նուազ երկար ժամանակ. Եւ եթէ ժա-

մանակն անցած ըԱյ ծլելու կարողութեան, չեն կրնար ծլիլ։ Ուստի, հարկ կը համարիմ դնել հոս գլխաւոր բանջարեղինաց ցուցակ մը, նշանակելով հունտերին սերման բեղնաւորիչ կարողութեան ժամանակը, և թէ հունտերը քանի օրուան մէջ կրնայ ծլիլ։ Հունտերի անուան հետ կը յարեմ տաճկական, գաղղիական և իտալական անուններն ի գիւրութիւն և ի գիտութիւն։

Անուանք գլխաւոր բանջարեղինաց։	Ամք տևականութեան բեղնաւորիչ կարողութեան նոցա։	Աւուրք զոր անցանեն վասն ծլելոյ։
Ախրիզան. տես Կոտիմն հնդիկ։		
Անմեռուկ, Փրփրեմ. տճ. սէմիզ օթու. գղ. Pourpier. իտ. Porcellana.	2–3	15
Ասորեակ. տճ. ռօքքա սալաթա. գղ. Roquette. իտ. Ruchetta.	1–2	6
Բազուկ. տճ. բազը. գղ. Bette. իտ. Bietola.	3–4	10
Բակլայ. տճ. պակլա. գղ. Fève. իտ. Fava.	5–6	10
Բաղրջուկ, Մոլոշ. տճ. էպէմկիւմէճի. գղ. Mauve. իտ. Malva.	3–4	12
Բանջար. տես Ճակնդեղ։		
Բոխնի. տես Խմի։		
Բողկ ընտանի. տճ. թուրփ. գղ. Radis. իտ. Ravanello.	4–5	8
Բողկ վայրի. տճ. պայըր թուրփու. գղ. Raifort. իտ. Rafano, Ramolaccio.	5–6	6
Գարծիլ, Խաւարծիլ. տճ. ռավէնտ. գղ. Rhubarbe. իտ. Rabarbaro.	1–2	15
Գազար. տճ. ճէզէր, փասթինա. գղ. Panais. իտ. Pastinaca.	1–2	24
Գաղտիկուր, Եգնալեզու. տճ. լիսանի սէլվի. գղ. Bourrache. իտ. Borrana.	3–4	12
Գաւնականջ. տես Թրթնջուկ։		
Գոնգեղ. տճ. պայըր շալկամ. գղ. Rave. իտ. Rapa.	2–4	5
Գաղի, Քօշմօրուք. գղ. Salsifis. իտ. Salsefrica, Barba di becco bianca.	1–2	12
Գաղի սեաւ. տճ. ըսգոռչինա. գղ. Scorzonère. իտ. Scorzonera.	2–3	15
Գաւնիճ. տես Եղէգ։		
Գարապղպեղ. տճ. պած պիպէր. գղ. Piment. իտ. Pimento, Peperone.	3–4	15
Դդում. տճ. գապագ. գղ. Courge. իտ. Zucca.	4–5	8
Դկուղ, Պորտիկ. տճ. պէօյրիւճէ. գղ. Dolic. իտ. Fagiolo dall' occhio.	2–3	8
Եգնալեզու. տես. Գաղտիկուր։		
Ելակենի. տճ. չիլէկ. գղ. Fraise. իտ. Fragola.	2–3	10
Եղէգ, Գաւնիճ. տճ. հինտիպա. գղ. Endive. իտ. Indivia.	5–6	6
Եղերդ, Եղերդակ, Հազար վայրի. տճ. ռատիքեա. գղ. Chicorée. իտ. Cicorea, Radichio.	6–8	8
Թաղթ, Հոռոմ սպանախ. գղ. Arroche. իտ. Atrepice.	2	10
Թրթնջուկ, Գաւնականջ. տճ. գուզու գուլաղը. գղ. Oseille. իտ. Acetosa.	2–4	15
Ժախ. տճ. պուչալագ. գղ. Chervi. իտ. Sesaro.	2–3	8
Լախուր, Նեխուր. տճ. եապան քէրէվիզ. գղ. Ache. իտ. Appio.	3–5	10
Լոբիա, Լոմիա. տճ. ֆասուլիա. գղ. Haricot. իտ. Fagiolo.	2–3	7
Խաւարծիլ. տես Գարծիլ։		
Խմի, Բոխնի. տճ. մէլայիք օթու. գղ. Angélique, Archangélique. իտ. Angelica, Arcangelica.	1–2	8
Խասոր. տես Սխտոր։		

Ծիթրայ. տճ. գաղ այաղը քէօքիւ. գղ. Raiponce. իտ. Raperonzolo.	2–3	10
Ծներեկ. տճ. գուշ գոնմազ. գղ. Asperge. իտ. Asparago.	3–4	20
Ծոթոր, Ծոթրին. տճ. քէքլիկ օթու. գղ. Thym. իտ. Timo.	2	6
Կաղամբ. տճ. լահանա. գղ. Chou. իտ. Cavolo.	6–7	8
Կանկար. տճ. էնկինար. գղ. Artichaut. իտ. Carciofo.	3–6	20
Կանկար վայրի. տճ. եապան էնկինար. գղ. Cardon. իտ. Cardone.	4–5	30
Կարոս. տճ. քէրէվիզ. գղ. Céleri. իտ. Sedano.	3–4	10–15
Կարոս Մակեդոնի. տճ. մաղտանոս. գղ. Persil. իտ. Prezzemolo.	2–3	20
Կոտիմ, Կոտեմ. տճ. թերէ օթու. գղ. Cresson alénois, Nasturtium. իտ. Agretto.	4–5	10
Կոտիմ հնդիկ, Ախրիզան. տճ. հինտ թէրէսի. գղ. Capucine. իտ. Astuzia.	3–4	12
Կորդին. տճ. կէյիք օթու. գղ. Sarriette. իտ. Sartoreggia.	2–3	14
Կռաքանջար. տես Ճարճիր։		
Հազար. տճ. մարուլ. գղ. Laitue. իտ. Lattuga.	3–5	7
Հազար վայրի. տես Եղերդ։		
Հաւաղցան. տճ. գուզու կէվրէյի. գղ. Mâche, Valérianelle, Doûcette. իտ. Valeriana domestica, Dolcetta.	5–6	8
Հոռոմ սպանախ. տես Թաղթ։		
Ձմերուկ. տճ. գարփուզ. գղ. Melon d' eau, Pastèque. իտ. Cocomero.	4–5	8
Ճակնդեղ, Բանջար. տճ. փանճար. գղ. Betterave. իտ. Barbabietola.	5–6	10
Ճարճիր, Ճարճռուկ. տճ. ռատիքիա. գղ. Pissenlit. իտ. Radichiella.	6–9	3
Մանանեխ. տճ. հարտալ. գղ. Moutarde. իտ. Senapa.	3–4	10

Մաշ. տես Ոլոռն։		
Նեխուր. տես Լախուր։		
Շողգամ, Շաղգամ. տճ. շալկամ. գղ. Navet. իտ. Navone.	2–4	5
Շոմին, Սպանախ. տճ. իսփէնախ. գղ. Epinard. իտ. Spinace.	3–4	5
Ոլոռն, Մաշ. տճ. պիզէլիա. գղ. Pois. իտ. Pisello.	4–5	5
Ոսկեխնձոր, Պոլտիկ. տճ. թօմաթէս. գղ. Tomate. իտ. Pomodoro.	3–4	11
Ոսպն. տճ. մէրճիմէք. գղ. Lentille. իտ. Lenticchia.	2–3	10
Պատինճան. տճ. փաթլիճան. գղ. Melongène. իտ. Melanzana, Petronciana.	3–4	12
Պոլտիկ. տես Ոսկեխնձոր։		
Պորտիկ. տես Դկուղ։		
Պրաս. տճ. փրասա. գղ. Poireau. իտ. Porro.	2–3	7
Ջերմատակ. տճ. մէսինէ. գղ. Pimprenelle. իտ. Pempinella.	1–2	10
Ջրկոտիմ, տճ. սու թէրէսի. գղ. Cresson de fontaine. իտ. Nasturzio.	4–5	14
Ռահան. տճ. ֆէսլիյէն. գղ. Basilic. իտ. Basilico.	4–5	12
Սամիթ. տճ. ռէզէնէ. գղ. Fenouil. իտ. Finocchio.	4–5	14
Սեխ. տճ. գավուն. գղ. Melon. իտ. Popone.	7–8	6
Սիսեռն. տճ. նուհուտ. գղ. Pois chiche. իտ. Cece.	3–5	5
Սխտոր, Խստոր. տճ. սարմուսագ. գղ. Ail. իտ. Aglio.	2	10
Սկոլիմ. գղ. Scolyme. իտ. Scolimo.	2–3	14
Սոխ. տճ. սօղան. գղ. Oignon. իտ. Cipolla.	2–3	15
Սպանախ. տես Շոմին։		

Ստեպղին. տճ. հավուճ. գղ. Carotte. *իտ.* Carota.	3–4	16
Վարունգ. տճ. խըյար. գղ. Concombre. *իտ.* Cetriolo.	5–6	6
Փրփրեմ. տես Անմեռուկ։		
Քեղակարոս. տճ. ֆրէնկ մաղտանոսու. գղ. Cerfeuil. *իտ.* Cerfoglio.	3–4	10
Քուռաթ. տես Պրաս։		
Քօշմօրուք. տես Գաղի։		

47. **Սերմանումն.** — *Երեք կերպ կայ սերմանելոյ. Սերմանումն յօդս, Սերմանումն ի տողս և Սերմանումն ի խումբս։ Երեք կերպն ալ ունի իր օգտակարութիւններն ըստ տեսակի բանջարեղինաց։ Եւ յառաջ քան խօսել իւրաքանչիւր տեսակին վրայ, հարկ կը համարիմք յետագայ դիտողութիւններն ընել. այս ինքն*

Ա. Թէ ամէն բոյս ունենայ բաւական տեղ աճելու համար։

Բ. Հողը միշտ կակուղ պահուի և մաքուր վնասակար խոտերէ։

Գ. Բովանդակ երկիրն օգտակար ընել առանց պարապ տեղ թողլու, և չտնկել սաստիկ խիտ։

48. **Սերմանումն յօդս.** (*գղ.* Semaille à la volée. *իտ.* Semina a spaglio). — *Կ'ըլլայ ձեռքով օդոյ մէջ սերմը նետելով։ Այս կերպը հնուց ի վեր գործածական է, թէպէտ ունի իր անյարմարութիւնները։ Վասն զի այս կերպով չեմք կրնար երկիրն ըստ արժանւոյն կակուղ պահել, գէշ խոտերը ձեռքով միայն կրնամք հանել, և թէ շատ տեղ պարապ կը մնայ առանց սերման։ Թող զի անկանոն կերպով կը բուսնին տունկերը, և երբեմն կը կորսուին նաև ոմանք, մանաւանդ անոնք որ ուշ կը ծլին, ինչպէս է ստեպղին, սոխ և այլն։ Բաց աստի, սերմանելոյ համար շատ սերմ կ'երթայ։*

49. **Սերմանումն ի տողս.** (*գղ.* Semaille en ligne. *իտ.* Semina in linea). — *Կ'ըլլայ մէկ գծի վրայ սերմանելով, զոր կրնամք թէ ձեռքով և թէ գործւով ընել։*

Շատերն օգտակար կը համարին տողանի սերմանելը, որովհետև դիւրին կ'ըլլայ գէշ խոտերն հանելը, հողը կակուղ կը պահուի, և բոյսերն ալ կ'ըլլան կանոնաւոր կերպով բուսած, և իրենց յաջողութիւնն ալ աւելի ապահով։ Ջրելու ժամանակ թացութիւնն աւելի երկար կը պահուի հողին մէջ, և բուսոց արմատներն ալ երկու կողմէն միջոց կ'ունենան տարածելու և ուռճանալու։ Եթէ տողի վրայ ցանած տունկերը խիտ ըլլան, կրնամք հանել զոմանս և ուրիշ տեղ տնկել։

Տողանի սերմանելը կրնայ ըլլալ ընդ երկայնութիւն կամ ընդ լայնութիւն ածուներուն։ Ընդ լայնութիւն սերմանելը լաւագոյն է, որովհետև դիւրաւ կրնամք գէշ խոտերը մաքրել, մինչդեռ ընդ երկայնութիւն ցանուած ժամանակ պէտք է խոտերը մաքրելու համար կոխել ոտքով ածուին մէջ։

Տողերուն իրարմէ հեռաւորութիւնը կ'ըլլայ 20–30 *հարիւրորդամետր, որով դիւրաւ կրնամք խլել գէշ խոտերը և կատարել ուրիշ աշխատութիւնները։*

50. **Սերմանումն ի խումբս.** (*իտ.* Semina a cespi). — *Կ'ըլլայ* 2 *կամ* 3 *սերմ միասին խումբ խումբ ցանել, իրարմէ հեռի և մէկ գծի վրայ։ Այս կերպը կը գործածուի ոլոռն, բակլայ, լուբիա, սեխ և այլն ցանելու համար։*

51. **Գործողութիւնք յետ սերմանելոյ.** — *Սերմանելէն ետքը պէտք է սերմը ծածկել հողով* 1 *կամ* 2 *հարիւրորդամետր թանձրութեամբ, կամ թէ ըսել՝ սերման կրկնապատիկ թանձրութեամբ, գործածելով փոցխ՝ զոր պէտք է մեղմով շարժել դէպ յառաջ, և ոչ ետև առաջ, ինչպէս կ'ընեն գետինը շտկելու համար։ Սերմը ծլելու համար հարկաւոր է օդ և թացութիւն. ուստի եթէ սերմը շատ խոր երթայ կամ հողին երեսին վրայ մնայ, չկրնար ծլիլ։*

52. *Սերմը պարզապէս հողով ծածկելու տեղ լաւ կ'ըլլայ ծածկել* 1 *կամ* 2 *հարիւրորդամետր թանձրութեամբ կակուղ նիւթով մը, ինչպէս է բուսահող, աղօցուք փայտի, ծանծ ցորենոյ և այլն. որպէս զի հողին երեսը ջրելով կեղև չկապէ, գէշ խոտերը չկարենան*

բուսնիլ, գետնին թացութիւնն յարատեւ և կանոնաւոր պահուի, երագէ սերմանց ծլելը և գետնին հիւթը ծծելու կարողութիւնը։ Այս բանս հարկաւոր է ընել մանաւանդ այն սերմանց համար, որ բուսնելէն ետքն ուրիշ տեղ պիտի փոխադրին։

53. **Ոռոգումն ջրով.** — Սերմանց ծլելուն համար կարեւոր է ջրել, որ պիտի ըլլայ ըստ պատշաճի, որպէս զի գետնին թացութիւնը պահուի միօրինակ։ Վնասակար է չափազանց ջրելը, որով կը փտին արմատները, և տկար կ'ըլլայ ցօղունն, ու երկայն բարակ։

Այն սերմերն որ ուշ կը ծլին, լաւ կ'ըլլայ զանոնք ածխոյ մանրուքի, աւազոյ և կամ թաց հողոյ մէջ դնել, մինչև որ ծլին և արմատ արձակեն, և յետոյ տնկել կարգաւ հողին մէջ։

54. Կան խաւարտներ, ինչպէս են կաղամբ աւստեան (պրօքօլի), կաղամբ ծաղկաբեր (գառնապիթ), դառնիճ, հազար, որոց արմատը կիսով չափ կը կտրեն, որպէս զի քօնտի մանր արմատներ արձակեն, և անոնցմով կարող ըլլան գետնէն աւելի հիւթ ծծել։ Զայս կ'ընեն երբ բոյսերն առաջին տերևները կ'արձակեն, և յետոյ շուտով նորէն կը տնկեն; բայց աւելի խոր։

55. **Փոխատնկութիւն.** (գղ. Transplantation. իտ. Trapianto). — Շատ անգամ բուսոց սերմերը մասնաւոր տեղ մը կը ցանուին՝ որ կ'ըսուի *Սերմնարան*, ուր բուսնելէն և ըստ բաւականի մեծնալէն ետքը կը փոխադրին ուրիշ տեղ. այդ գործը կ'ըսուի *փոխատնկութիւն*։

Որպէս զի յաջող ելք ունենայ փոխատնկութիւնը, պէտք է ընտրել այն բոյսերն որ առողջ են, արմատնին զօրաւոր, և իրենք ոչ այնչափ ուռճացած։ Մեծ խնամք պէտք է բոյսերը սերմնարանէն փոխադրելու համար։ Պէտք չէ խլելով հանել զիրենք հողին մէջէն, ինչպէս շատերը կ'ընեն, որով արմատները կը փրթին և հողին մէջ կը մնան. այլ տարգալաձև գործւով քրքրել հողը և հանել բոյսն անվնաս. բայց հանելէն առաջ լաւ մը ջրելու է գետինը։

56. Բոյսերն հողէն հանելէն ետքը պէտք է զգուշանալ որ չչորնան. անոր համար լաւ կ'ըլլայ ընկղմել իրենց արմատը ջրոյ մէջ՝ որ խառն ըլլայ կաւով և աղբով, որով հարկ չըլլար ստէպ ոռոգել զիրենք։ Փոխատնկութիւնը լաւ կը յաջողի՝ երբ կատարուի ամպամած օր մը և անձրևէ ետքը։

57. Բոյսը տնկելու համար պէտք է գայլիկոնով (12) հողին մէջ ծակ մը բանալ այնչափ խոր, որ բոյսին արմատը շիտակ կենայ և չծռի, և հողով ծածկել։ Ոմանք գայլիկոնի տեղ մատով կ'ընեն այդ ծակը հողին մէջ, որ դատապարտելի է։ Տունկերը փոխադրելէն վերջ պէտք է լաւ մը ոռոգել գետինը։ Աւելորդ պէտք չէ համարել ոռոգումը, նաև եթէ անձրևէ ետքն ըլլայ փոխատնկութիւնը, որովհետև ջրելուն նպատակն է հողը արմատին չորս կողմ նստեցնել, որ դատարկ տեղ չմնայ։

Եթէ հարկ ըլլայ կատարել փոխատնկութիւնը չոր և պարզ օդով, լաւ է նախ ծակերը բանալ և գետինը ջրել, որպէս զի հողը ծծէ ըստ բաւականին ջուր այս ինչ խորութեամբ։

Հարկաւ փոխատնկութեան ժամանակը կը տարբերի՝ բուսոց տեսակին համեմատ։

ԳԼՈՒԽ Ը

ՁԱԽՈՐԴՈՒԹԻՒՆՔ, ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ԿԵՆԴԱՆԻՔ ԲԱՆՋԱՐԵՂԻՆԱՑ

58. **Ձախորդութիւնք.** — *Ինչպէս ամէն տեսակ մշակութեանց մէջ, նոյնպէս և պարտիզպանութեան մէջ բոյսերն ենթակայ են զանազան ձախորդութեանց, որք յառաջ գան հետագայ չորս պատճառներէն.*

Ա. Գէշ մշակութենէ.

Բ. Օդոյ գէշութենէ.

Գ. Հիւանդութիւններէ.

Դ. Վնասակար կենդանիներէ։

Սակայն պարտիզպանութեան մէջ պատահած ձախորդութիւններն այնչափ մեծ չեն, որ կարող ըլլան վհատեցնել քաջ պարտիզպան մը իր աշխատութեանց մէջ յարատևելու գործունէութեամբ և գիտութեամբ։ Կրնայ ամէն վնասները դարմանել՝ եթէ յօժար կամք և յարատևութիւն ունենայ։

59. **Վնասակարութիւնք գէշ մշակութենէ առաջ եկած.** — *Պարտիզի զանազան գործոց մէջ ամենէն աւելի ուշադրութեան արժանի է սերմը, որոյ համար պէտք է դիտել հողը, ժամանակը և ընտրել տեսակը։*

Չկայ վնասակար բան մը, ինչպէս սերմանել կանխահաս տեսակ մը սերման՝ ուշ հասնող տեսակի մը տեղ, կամ անոր հակառակը։ Սովորաբար անհոգութիւն կ'ըլլուի յուլիսի և օգոստոսի մէջ եղած սերմանց վրայ, որք աւելի կարևորք են. վասն զի ըստ մեծի մասին տարեկան կանաչեղէններն այս ամիսներուն մէջ կը ցանուին։

60. **Վնասակարութիւնք օդին գէշութենէն.** — *Թացութիւն, սառոյց, եղեամն, ձիւն, քամի կրնան մեծամեծ վնասներ հասցնել, բայց մեր հոգողութեամբ կրնամք զասոնք պակսեցնել։*

61. *Թացութիւնը վնասակար է գլխաւորապէս բռնի մշակութեանց, որ կ'ըլլան ջերոցներու և զանգակներու տակ, փտեցնելով բոյսերը։ Երբ արև չտեսնեն բոյսերն երկար ժամանակ, պէտք է կրկնապատկել մեր զգուշութիւնները։ Պէտք է ջերոցին պատուհանները բանալ ամէն օր, որպէս զի դուրս ելնեն ջրեղէն գոլորշիք, և բուսոց տերևներուն թացութիւնն անցնելէն ետքը շուտով գոցել։*

Պատուհաններուն ապակիները և ապակի զանգակները միշտ մաքուր և չոր պահել, որպէս զի լոյսը համարձակ ներս մտնէ։ Պէտք է նոյնպէս օդ տալ բուսոց՝ երբ արևուն տաքութիւնը սաստիկ է, և զգուշանալ որ արևուն ճառագայթները չզարնեն ուղղակի մանր տնկոց վրայ, ապա թէ ոչ կ'այրին տերևներուն ծայրերը։ Թէ որ անձրևներն երկարատև ըլլան, պէտք է ջերոցներուն քով ակօսներ բանալ և ջուրը վազցնել փոսերու մէջ։

62. *Սառոյցը և Եղեամն կը փճացնեն կանաչեղէնները մանաւանդ գարնան սկիզբն, և կը թողուն նշաններ արևու այրածի պէս, բայց աւելի գէշ կերպով, վասն զի բոյսերը դժուարաւ կրնան վրայ գալ։ Անոր համար պէտք է հոկտեմբերի կէսէն սկսեալ պատրաստել պատսպարութեան միջոցները, որպէս զի սառուցէ ազատ մնան տունկերը։ Այս ինքն, պատրաստել ջերոցները, զանգակները որք պիտի ըլլան մաքուր. նմանապէս յարդ և փսիաթ, բոյսերը ծածկելու համար՝ երբ սառուցի նշան մը տեսնուի։*

Աղցան և ուշ հասնող լուբիա կրնան մնալ բացօթեայ, միայն թէ գիշերները ծածկուին փսիաթով։

63. *Ձիւնն այնչափ վնաս չկրնար ընել բուսոց, բայց լաւ կ'ըլլայ ջերոցներուն պատուհանները և ապակի զանգակները ծածկել յարդով ձեան ժամանակ։ Զգուշանալ ըստ կարի որ բուսոց վրայ ձիւն չգայ։ Ձիւնը դադրելուն պէս պէտք է թօթափել յարդին վրայէն. և ընդհակառակն թողուլ հողին վրայ, վասն զի ձիւնը կը ջնջէ միջատները և օգտակար է բուսոց ոմանց պահպանութեան։*

64. *Սաստիկ քամիներն ալ վնասակար են պարտիզին. անոր համար նեցուկով պէտք է հաստատել այն բոյսերն որ տկար են, ինչպէս են ոլոռն, լուբիա, պոլտիկ և այլն։*

Ի վախճանի, փոթորիկն ալ պէտք է զգուշանալ որ

շատ անգամ կարկուտ կը բերէ. ուստի պէտք է փոթորկի ժամանակ ծածկել ջերոցներուն պատուհանները և գետնին վրայ դրուած ապակի զանգակները։

65. Հիւանդութիւնք. — *Կան բուսոց զանազան հիւանդութիւնք վնասակարք, որոց շատերը պարտիզպանին անհոգութենէն յառաջ կու գան. վասն զի շատ անգամ տկար և գէշ դարմանուած բոյսերն են որ ենթակայ կ'ըլլան հիւանդութեանց։ Ո՞րչափ հիւանդութիւնք յառաջ գան անկատար սերմերէ, անկանոն սերմանելէ, չափազանց աղբելէ և ջրելէ։*

Հոս դնեմք կանաչեղինաց քանի մը գլխաւոր հիւանդութիւնները։

66. Դալուկ (*տճ. Սարըլըգ. գղ.* Chlorose. *իտ.* Clorosi). — *Այս հիւանդութիւնն յառաջ գայ բուսոց տըկարութենէն, որով չեն կրնար իրենց սննդեան համար հարկաւոր եղած պաշտօնը կատարել։ Կը դեղնին ըստ մասին կամ բովանդակ իրենց կանաչ մասերը, և շատ անգամ կը մեռնին ևս։*

Դալուկը կը պատահի սովորաբար՝ երբ օդոյ բարեխառնութիւնն անհաստատ է, կամ երբ օդը շարունակ անձրևային է։ Գետնին չափազանց թացութիւնը մեծ պատճառ է դալկան։ Ուստի խելացի պարտիզպան մը օդոյ անբարեխառնութենէ և անձրևներէ ազատ պահելու համար իր տունկերը, պէտք է այնպիսի դրից մէջ դնել՝ որ արև տեսնեն և պատսպարին։

67. Փտութիւն (*գղ.* Pourriture. *իտ.* Marciume). — *Թացութենէ յառաջ կու գայ փտութիւնն՝ որ կը պատահի տերևոց։ Ի սկզբան տերևոց վրայ կ'երևին փոքրիկ կէտեր թխագոյն, որք քանի մը օրուան մէջ կը տարածուին և կը սևնան, և կը փտեցնեն բովանդակ տերևը։ Այս հիւանդութիւնը կը տեսնուի մանաւանդ ջերոցներու և զանգակներու տակ, ուր օդը փակուած կը մնայ։ Դարմանելու համար պէտք է ծածքը բանալ և հովահրել, անօսրացնել բոյսերն, և կտրել հիւանդ տերևները։*

68. Մանրասունկ (*գղ.* Oïdium. *իտ.* Oidio, Crittogama, Nebbia). — *Այս հիւանդութիւնն յայտնի կ'ըլլայ տերևոց վրայ, ի սկզբան տժգոյն և կարմրորակ և երբեմն դեղնագոյն բիծերով, և յետոյ սևագոյն. և երբեմն ճերմակ և յետոյ կարմիր բիծերով։ Այս հիւանդութիւնն ոչ միայն տերևներուն կազմուածքը կը փըճացնէ, այլ և կը վնասէ ցօղունին և պտղոյն. այնպէս որ շատ անգամ պատճառ կ'ըլլայ նաև կորստեան տընկոյն։*

Այս հիւանդութիւնն յառաջ գայ երկար անձրևէ՝ որուն յաջորդէ սաստիկ տաքութիւն, և կը պատահի յունիս և յուլիս ամսոց մէջ. և առաւելապէս կը տեսնուի այն պարտէզներուն մէջ որ հովահարեալ չեն, ուր շատ կ'ոռոգեն կամ սաստիկ կ'աղբեն դալար աղբով։

Կը դարմանեն այս հիւանդութիւնը՝ ցանելով բուսոց վրայ ծծմբոյ փոշի, կամ լաւ ևս՝ հեռացնելով պատճառները, և չմշակելով հողը թաց և միանգամայն տաք ժամանակ կամ անձրևէ ետքը։

69. Քաղցկեղ (*տճ. Աքիլէ. գղ.* Gangrène. *իտ.* Cancrena, Cancro, Moria). — *Այս հիւանդութիւնը կը պատահի առաւելապէս դդումի ցեղին բուսոց պտուղներուն կոթին վրայ, և երբեմն կը տարածուի նաև բովանդակ տնկոյն վրայ. և յառաջ գայ անոնց ճիւղերը կտրելէն և վիրաւորելէն, և կը սկսի փտիլ վիրաւորուած տեղէն։*

70. Չորութիւն (*գղ.* Sécheresse. *իտ.* Seccherecio). — *Կը պատահի ամէն կանաչեղինաց որք ըստ ժամանակին չոռոգանին ջրով, մանաւանդ սաստիկ չորութեան ժամանակ։ Կը վնասին մեծապէս կաղամբի տեսակները և կոճղիզային բոյսերը, թէպէտ և վերջինները աւելի չոր հող կը սիրեն։ Կաղամբներու վրայ դիւրաւ յայտնի կ'ըլլայ, և կրնամք շուտով դարմանել։ Ոչ այսպէս են կոճղիզային բոյսերն, որոց երբ տերևները չորնան, արդէն իրենց կոճղէզը ցամքած է և թոռմած։*

71. Վնասակար անասուններ. — *Պարտիզպանն ունի շատ թշնամի անասնոց մէջ, որոց դէմ պէտք է միշտ պատերազմիլ. թէպէտ և կան նաև ոմանք՝ որք կրնան*

անուղղակի կերպով օգտակար համարուիլ, որովհետև կը ջնջեն շատ միջատներ։ Ինչպէս է

Գօդօշ (*տճ. Գարա գուրպաղը. գղ.* Crapaud. *իտ.* Rospo). *զոր օգտակար անասնոց կարգ պէտք է համարել, և պահել պարտէզներու մէջ, որովհետև կը սընանի ուտելով գետնին ճճիները, խլրդածղրիթները, խըղունջները, շողոտները, և այլն։*

Աքիս (*տճ. Կէլինճիք. գղ.* Belette. *իտ.* Donnola). *զայս ալ պէտք չէ համարել այնչափ վնասակար անասուն, որ թէպէտ կը ջնջէ թռչնոց բոյները, բայց կը ջնջէ միանգամայն մկները։*

Ի վախճանի, թռչուններն՝ որք թէպէտ վնաս ալ կը բերեն, բայց պարտիզպանի մը օգտակար կը համարուին՝ ուտելով շատ ճճիներ։

72. *Իսկ բուն վնասակար անասուններն են.*

Ա. *Նապաստակ* (*տճ. Թավշան. գղ.* Lièvre. *իտ.* Lepre), *որ պարտիզին մէջ ինչ որ գտնէ կը փճացնէ. ուստի պէտք է սպաննել որսալով։*

Բ. *Խլուրդ* (*տճ. Քէօսթէպէք. գղ.* Taupe. *իտ.* Talpa), *զոր ոմանք թէպէտ օգտակար կը համարին՝ գետնին տակի որդերը ուտելուն համար, բայց գետնին տակ բացած փողերով կ'ապականէ բոյսերը, կը բարձրացնէ հողը, կը չորցնէ նորաբողբոջ բոյսերուն արմատները, և կը վնասէ սերմանց։ Թէպէտ զասոնք ջնջելը դժուարին է, սակայն ջանալու է գարնան երկաթի ակնատներով որսալ և ջնջել, և կամ թունաւորել իրենց բունին մէջ։*

Գ. *Մուկն* (*գղ.* Rat. *իտ.* Topo). *որոյ տեսակները շատ են և ամէնքն ալ վնասակար։ Զասոնք ջնջելու համար թոյն գործածելն այնչափ օգտակար չհամարուիր, որովհետև թոյնը կրնայ բոյսերուն ալ վնաս բերել։ Լաւ է գետնին մէջ իբր կէս մետր լայնութեամբ և* 75 *հարիւրորդամետր խորութեամբ փոս մը բանալ, և չորս կողմ ողորկ քար դնել, որպէս զի մկները միանգամ մէջ իյնալէն ետքը չկարենան մագլել և ազատիլ։ Փոսին յատակին վրայ ալ դնել ճարպ, պանիր և ուրիշ ուտելիք, որով յորդորուին մկները փոսին մէջ իջնելու։*

Դ. *Շողոտ կամ Լորտնուկ* (*տճ. Սիւմիւքլիւ պէօճէք. գղ.* Limace. *իտ.* Lambrico). — *Շողոտ է փափկամորթ կենդանին որ խեփոր չունի, և կը վնասէ պարտիզաց իր գետնափոր ճամբաներով՝ զոր կը փորէ կերակուր գտնելու համար. և կը կրծէ նաև երբեմն բուսոց արմատները. և փորած հողը կը դնէ գետնին երեսը, որով խորտաբորտ կ'ըլլայ գետինը, նորաբոյս տունկերը կը փճանան, և կ'արգելուի նաև բուսոց աճումը։ Թէ որ բազմանան պարտիզի մը մէջ, մեծ հարուած կը համարուի պարտիզին։ Զասոնք սպաննելու համար օգտակար կը համարուի ջրել հողը ընկուզի տերևի թրջոցով կամ խողի աղբաջրով։*

Ե. *Խղունջ* (*տճ. Սալյանկօզ. գղ.* Limaçon. *իտ.* Lumaca). *ունի վրան խեցի, անոր համար կ'ըսուի խեցեմորթ, և վնասակար է թէ սերմանց և թէ բուսոց։ Զիրենք ջնջելու համար պէտք է որսալ առաւօտը կանուխ կամ գիշերը ճրագի լուսով, երբ կ'ելնեն իրենց կերակուրը ճարելու համար։ Կամ դնել ցորենի թեփը կոյտ կոյտ զոր շատ կը սիրեն, և անոր տակ ժողվածները առաւօտուն տալ կերակուր հաւեղինաց կամ սպաննել։*

Շողոտներն ու խղունջները սպաննելու համար օգտակար կը համարուին գօգօշները։

73. Վնասակար միջատներ. — *Բուսոց կան շատ տեսակ վնասակար միջատներ, որոց մէջ գլխաւորներն են.*

Ա. *Ալտիկ* (*գղ.* Altique. *իտ.* Altica). — *Է թխագոյն կամ կապտագոյն փոքրիկ միջատ մը, դիւրաշարժ և ոստոստող և փայլուն պատեանով (Ձև* 9), *որ կը վնասէ առաւելապէս խաչակերպ բուսոց։ Կը փճացնէ նախ կաղամբի սերմը, և յետոյ բոյսը՝ կպչելով տերևին, ծաղկին և պտղին վրայ։ Ասոնցմէ ազատելու համար լաւ է ցանել գետնոյն վրայ աւազ կամ գաճ, և կամ հող որ թրջած ըլլայ կպրանաւթով։*

Ձև 9. Ալտիկ (շատ մեծցուցած).

74. Բ. *Ջորեակ* (*տճ. Ճէրատ. գղ.* Bruche. *իտ.* Bruco). — *Երեք գլխաւոր տեսակ կը բաժնուի, և է պատենաթև փոքրիկ միջատ մը, վնասակար ոլոռան, ոսպի և բակլայի։ Էգն իր ձուերը կը ձգէ վերոյիշեալ ընդոց պատեանին վրայ, և անոնցմէ ելած թրթուրները կը մտնեն ընդոց*

կամ սերմանց մէջ, և կը սնանին անոնց ալերային նիւթով, և կը մնան անոնց մէջ մինչև յաջորդ գարուն: Շատ անգամ սերման մէջ բաց ի թրթուրէն կը գտնուի նաև նոյն իսկ կատարեալ միջատը:

Բարեբաղդաբար ոլոռները չեն կորուսաներ իրենց բողբոջելու կարողութիւնը, որովհետև ջորեակին թրթուրը չվնասեր սերման աննկար սաղմին: Բայց պէտք է զգուշանալ ցանելու այն ոլոռան հատերը՝ որ ծակուած են ջորեակի թրթուրէ. և եթէ հարկ ըլլայ սերմանել նաև վնասուած ոլոռները, պէտք է նախ ձգել 50 աստիճան տաք ջրոյ մէջ:

75. Գ. *Խոյեղջիւր* (գղ. Criocère. իտ. Criocera). – Երկայնաձև փոքրիկ միջատ մի է պատենաթև (Ձև 10), կուրծքը կարմրագոյն: Վնասակար են իրեն թրթուրները պրասի, ծնեբեկի, սխտորի: Հողի տակ կը դառնան ի հարսնեակ. և երբ սկսին թևածել բուսոց վրայ, կրնամք զիրենք ջնջել, ցնցելով բոյսերն առաւօտուն և սպաննելով գետին ինկածները:

Ձև 10. Խոյեղջիւր (թրթուր և կատարեալ միջատ):

76. Դ. *Բնդեռն բուսոց* (գղ. Mélolonte, Hanneton. իտ. Melolonta, Maggiolino). – Կարմրորակ և մեծկակ միջատ մի է պատենաթև՝ կարծր պոչով, որթոց շատ վնասակար (Ձև 11): Ասոր թրթուրներն որք են ճերմակ որդեր, կը վնասեն կանաչեղինաց, ուտելով անոնց արմատները և տերևները, և կրնան երեք չորս տարի ապրիլ հողին տակ: Զասոնք ջնջելն աւելի դիւրին կ՚ըլլայ՝ երբ կատարեալ միջատ դարձած են. ցնցելով գետին կ՚իյնան և դիւրաւ կը բռնուին, և են խաղալիկ տղայոց:

77. Ե. *Ականջամուտ* (տճ. Մագգասլը պէօճէք. գղ. Forficule. իտ. Forfecchia). — Է թխագոյն և երկայնաձև տափարակ միջատ, որոյ պոչը կը վերջանայ աքցանաձև: Եւ է շատ վնասակար միջատ պարտիզաց և պտղատու ծառոց, փճացնելով ծաղիկները և ուտելով բողբոջները (Ձև 12):



Ձև 11. Բնդեռն բուսոց. — 1. Կատարեալ միջատ: 2. ձու: 3. միամեայ թրթուր: 4. երկամեայ թրթուր: 5. եռամեայ թրթուր:

Որովհետև ականջամուտները կը խորշին լուսէ, զանոնք ջնջելու համար, պէտք է դնել պարտիզին մէջ աստ անդ քարտէ սնամէջ գլաններ, եղջիւրներ, եղէգներ և այլն, որոց մէջ կը պատսպարին՝ փախչելով լուսէ: Պէտք է երբեմն երբեմն այց ելնել և սպաննել մէջը ժողված ականջամուտներն:

Ձև 12. Ականջամուտ.

78. Զ. *Խլրդաժղրիք* (տճ. Քէօսպէպէք ճըրբըլաղը. գղ. Courtilière. իտ. Grillo talpa). — Է թխագոյն միջատ՝ մատի հասատութեամբ, որոյ առաջակողմեան երկու ոտքերը խլուրդի ոտքերուն կը նմանին, որով

կը փորէ գետինը. սուլելու ձայնն ալ կը նմանի ծղրիթի. ունի երկու եղջիւր գլխին կողմ և երկու եղջիւր պոչին կողմ (Ձև 13)։ Եւ շատ վնասակար միջատ մի է պարտիզաց և արտորէից. կը փորէ գետնին տակ նեղ փողոցներ, և կ'ուտէ բուսոց արմատները և բողբոջները։

Ձև 13. Խլրդածղրիթ.

Զասոնք ջնջելու համար լաւ է իրենց բոյնը գտնել, կամ աստ անդ կովու աղբի թաց կոյտեր դնել, որոց տակ կը ժողվին, և ստէպ այց ելնել և սպաննել։

79. Է. Մնինայ (տճ. Զախրէ գուրտու. գղ. Calandre. իտ. Gorgoglione, Afide). — Է բազմատեսակ միջատ մը ամենափոքրիկ, և գրեթէ ամէն բոյս ունի իրեն յատուկ տեսակ մը, անթև կամ թևաւոր, և զանազան գունով, և շատ անգամ բոյսին կամ անոր մի մասին գունով։ Եւ կ'ապրի բոյսին վրայ բազմութեամբ, ծծելով անոր հիւթը։ Փորին տակէն շաքարային հիւթ մը դուրս կու տայ՝ որ շատ սիրելի է մրջնոց, ուստի և անոր ետևէն կ'երթան։

Մնինայից աճումն խիստ երագ է. էգերն աշնան արուաց հետ միանալէն ետքը կը ձգեն իրենց ձուերը բուսոց բողբոջներուն քով, և գարնան կը ծնանին թրթուրներ, որք ութ տասն օրուան մէջ կը դառնան մայր կենդանածին, և այսպէս հետ զհետէ մինչև քսան ծընունդ. որով և իրենց աճումն անհուն կ'ըլլայ։ Իրենք կ'ապրին միասին ընկերաբար, և են ծոյլ. և շատ անգամ կը մեռնին ուր ծնած են, եթէ կերակուր փնտռելու հարկը չստիպէ զիրենք ուրիշ տեղ գաղթելու։ Իրենց արտաքին կերպարանաց համար կոչին նաև Ոջիլ բուսոց։

Զասոնք ջնջելու համար օգտակար կը համարուի քըթախոտոյ փոշի, զոր պէտք է տալ փքով, և կամ տալ

փոքրիկ ջրհանով ծխախոտոյ հիւթ 2 կամ 3 % խառնած ջրով։

80. Ը. Ցայգամիջատ (գղ. Noctue. իտ. Pieride, Nottola cavolaia, կամ պարզ Cavolaia). — Է թիթեռն գիշերային, որ իր թևերուն բացուածքով 5 հարիւրորդամետր տարածութիւն կ'ունենայ (Ձև 14)։ Իր թրթուրն է թխագոյն կանաչ, կամ կանաչ դեղնորակ։ Կ'ապրի կաղամբի և անոր նման բուսոց վրայ, սոխի, բողկի, և այլն. և տունկին անուամբ կ'ըսուի Ցայգամիջատ կաղամբի, Ցայգամիջատ շաղգամի, Ցայգամիջատ բողկի. և քանի մը տարուան մէջ շատ վնաս կը հասցնէ։ Իր հարսանեակը կերպարանափոխ կ'ըլլայ հողոյ տակ։



Ձև 14. Ցայգամիջատ կաղամբի.

Ասոնց թրթուրները սպաննելու համար, պէտք է ցանել վրանին չմարած կրոյ փոշի, և քանի մը ժամէ ետքը ջուր սրսկել վրանին։ Վառեակներն այս թրթուրները շատ կը սիրեն, ուստի և կը ջնջեն զանոնք քիչ վնասով, եթէ ազատ թողուին պարտիզի մէջ։

81. Թ. Մրջիւն (գղ. Fourmi. իտ. Formica). — Է անօսրաթև միջատ մը, ամենուն ծանօթ, որ շատ անգամ մեծ վնաս կը հասցնէ պարտէզներու իրեն անհուն բազմութեամբ, ուտելով սերմերը. և բուսած տունկերուն ալ վնաս կը հասցնեն իրենց բացած գետնափոր փողոցներով։ Զասոնք սպաննելու համար պէտք է իրենց բոյնին մէջ եռացեալ ջուր թափել, կամ լաւ ևս կպրանաւթ՝ ջրով և օճառով խառնած։

ԳԼՈՒԽ Թ

ՔԱՂՈՑ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ ԲԵՐՈՑ

82. Քաղոց. — Պարտիզպանը գարունէն սկսեալ մինչև աշուն չարունակ կը քաղէ երկրին բերքը. ուստի հարկ կը համարիմք խօսել՝ թէ ինչպէս պէտք է բանջարեղէնները ժողվել և պահել։

83. Գարնան առաջին բերքն է ստեպղին, բատատ, ճակնդեղ, կաղամբ, բողկ, և այլն ըստ կարգին։ Այս բերքերը սովորաբար իրենց կատարեալ հասուննալէն յառաջ պէտք է ժողվել, վասն զի որչափ կանուխ վաճառուին՝ այնչափ աւելի շահաբեր կ'ըլլան։ Գարնան կրնան վաճառուիլ այն ամէն բանջարեղէնները, որ պատըսպարեցան ձմերային ցուրտէն պարտիզպանին խնամքով։ Պէտք է քաղել բանջարեղէններն ըստ կարի չոր օդով. վասն զի թէ որ կուտուին անոնց տերևները, ասոնք շաղախով թաթաղուն ըլլալով՝ շուտով կ'ապականին։

Այն արմատներն որ վիրաւորեալ են, անոնք ձմեռն աւելի կը կրեն. ուստի հարկ է քաղելու ժամանակ աղէկ ընտրութիւն ընել։

84. Ամառան մէջ առատ են ամէն կանաչեղէնք, և ամէն օր կրնայ պարտիզպանը ղրկել ի վաճառ քանի մը բան։ Բայց ուզելով պահել, պէտք է գտնել զով տեղ, ինչպէս է սառնատուն, կամ գետնափոր նկուղներ, որոց տաքութիւնը չըլլայ 4 աստիճանէ վեր և ոչ զրոյէն վար։ Այսպիսի տեղ կրնան պահուիլ աղցան, կաղամբ, բողկ, ծնեբեկ, և այլն։ Եւ պահելու համար պէտք է գիտնալ, թէ որչափ տկար ըլլայ քաղելու ժամանակ տունկին աճումն, այնչափ աւելի երկար կրնայ պահուիլ։ Եւ ամառը պէտք է ժողվել առաւօտեան կանուխ կամ երեկոյի ուշ ատեն. միայն թէ թրջած չըլլան անձրևով կամ ցօղով։ Իսկ աշնան և ձմերան մէջ պէտք է ժողվել կէս օրն։

85. Աշնան չկարենալով պարտիզպանը վաճառել իր կանաչեղէնները, և գիտնալով որ ձմեռն աւելի գին կ'ընեն, պէտք է աւելի խնամք ունենալ անոնց պահպանութեան։ Եթէ գետնափոր նկուղ ունի, պէտք է նկուղին յատակին վրայ դնել աւազ, և կանաչեղէններն արմատով հանած դնել աւազին մէջ քովէ քով, բայց այնպէս որ իրարու չդպչին, և կտրել փտած տերևները։

86. Այսպէս կը պահուին նկուղին մէջ բողկ, ստեպղին, ճակնդեղ և ուրիշ ասոնց նման ելընդային ուտելի արմատներ, կարգ կարգ դնելով վրայէ վրայ աւազի մէջ։ Այսպիսի արմատները պահելու համար պէտք է կտրել բովանդակ իրենց տերևները, անվնաս թողլով իրենց մայրանը։ Սոխը և սխտորը չոր տեղ պահելու է. իսկ սերմի համար եղած սոխն ու սխտորը չոր և տաք տեղ պահելու է, ապա թէ ոչ կը ծլին, և կամ տնկելէն վերջ շատ տերև կ'արձակեն, առանց մեծ սոխ ունենալու։

87. Բայց եթէ պարտիզպանը նկուղ չունենայ, կրնայ պարտիզին մէջ չոր տեղ փոսեր բանալ, լայն իբր 2 մետր և խոր 50 հարիւրորդամետր, և հանած հողը դնել փոսին քովերն, իբր պատուար, և վերջը կաղամբները գլխիվայր դնել անոր մէջ իրարու քով, բայց առանց իրարու դպչելու, և պարապ միջոցները հողով լեցնել, նոյնպէս և իրենց վրայ։ Եւ երբ սառոյց ըլլայ, ծածկել վրան եղէգով և փախաթով. բայց աղէկ օդ եղած ժամանակ վերցնել վրայի ծածկոյթը։

88. Այսպէս կը պահուին փոսերու մէջ կարոս, պրաս, և ուրիշ կանաչեղէններ։ Կարոսը պէտք է շիտակ տընկել հողին մէջ քովէ քով, կտրելով ամէն տերևները և թողլով միայն միջավայրի տերևները. նոյնպէս կտրատել նաև արմատները. և հողով ծածկել բովանդակ իրենց երկայնութիւնը, դուրս թողլով միայն իրենց տերևներուն ծայրերը։ Եւ սառուցի ժամանակ ծածկել վրանին ծածկութով։

Աւելի դժուարին է պահել դառնիճը, վասն զի շուտով կը վնասի թացութենէ։ Լաւ է իրարու հետ կապած ծածկել հողով՝ կարոսի պէս, դուրս թողլով միայն իրեն տերևներուն ծայրը։ Հողին տակ կը ճերմկնայ դառնիճը և կ'ըլլայ քաղցրաճաշակ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԽԱԻԱՐՏՓ ՈՐՈՑ ԱՐՄԱՏՆԵՐՆ ԿԱՄ ԵԼՈՒՆԴՆԵՐՆ Կ'ՈՒՏՈՒԻՆ

ԳԼՈՒԽ Ա

ԲԱՏԱՏ. (*տճ. փարար. գղ.* Patate. *լտ.* Batata).

89. Նկարագիր. — *Բատատ է բոյս չատակեայ, որ եկած է Ամերիկայի հարաւային կողմերէն նախ ի Սպանիա, և հիմայ տարածուած է աշխարհիս ամէն կողմ, Հնդկաստան, Ճենաստան, Աֆրիկէ, Հիւսիսային Ամերիկա և Եւրոպայի հարաւային կողմ։ Այս տնկոյն ճիւղերն են գետնանախանձ, և հանգոյցներէն արմատ կ'արձակեն. տերևներն սրտաձև, մութ կանաչ. ծաղիկներն ճերմակ, զանգակաձև, երեք կամ չորս հատ իրարու հետ միացած. սերմն է սև և եռանկիւնի. արմատներն են բազմաթիւ և բազմաճիւղ, որք կու տան մեծ ելունդներ, ձևով և գունով իրարմէ տարբեր ըստ զանազան տեսակաց, և են սննդարար կերակուր։*

Դնեմք հոս քանի մի գլխաւոր տեսակները։

Կարմիր բատատ. Է երկայն, գլանաձև, ողորկ և կարմիր կեղևով. միսն է փափուկ, անոյշ և ալերային։ Այս տեսակն ամենէն աւելի շաքարային է և կը բովանդակէ 17% *օսլայ և* 4% *շաքար։*

Դեղին բատատ. Կը նմանի վերնոյն ըստ հանգամանաց, բաց ի գունէն, որ է բաց դեղին։

Վարդագոյն բատատ (Ձև 15). *Է ձուաձև և վրան*

խաղեալ ակօսաձև, գոյնը կարմիր չագանակենի. շատ կը մեծնայ և կը բազմանայ, և է համեղ։

Մանուշակագոյն բատատ. Է անկանոն ձևով, կեղևն ի գոյն մանուշակի, և միսը չհասնիր կարմիր բատատին փափկութեան։

Խատորակեան բատատ (*գղ.* Batate igname). — *Է կարճ և լայն ելունդներ, վրան խաղեալ, և կեղևը գորշ կամ ճերմակ։ Այս տեսակը շատ կը մշակուի յիտալիա։*

90. Մշակութիւն. — *Բատատը կը բուսնի տաք երկիրներու մէջ, անոր համար Եւրոպայի մէջ քիչ է իր մշակութիւնը։ Կը սիրէ գայլախազային և կրային պարարտ հող. իսկ կաւային պինդ հողերու մէջ չեն կրնար արմատները մեծնալ։*

Ձև 15. Վարդագոյն բատատ.

Պարարտութեան համար գործածելու է աղբ փտեալ, որոյ մէջ եթէ քիչ գտնուի կալի, պէտք է աւելցնել կալի կամ կալւոյ աղ մը։ Հողը պատրաստելու է գարնան սկիզբը, փորելով կէս մետր խորութեամբ, և ապրիլի մէջ բողբոջել տալ բատատի ելունդները ջերոցի կամ տաք գուբի մէջ։ Եւ երբ բողբոջները զօրանան, բաժնել ելունդէն և տնկել գետինը տողի վրայ, իրարմէ կէս մետր հեռաւորութեամբ, և տողերն իրարմէ մի մետր հեռաւորութեամբ։

Այս գործը կ'ըլլուի սովորաբար մայիսի առաջին կիսոյն, և երկրորդ կիսոյն մէջ պէտք է քրքրել հողը, և զնոյն կրկնել յունիսի մէջ, և յուլիսին մէջ արմատներուն հող տալ: Բողբոջները շատ զգուշութեամբ պէտք է տընկել, և վրան քիչ հող դնել. և առաջին տասնեհինգ օրուան մէջ եթէ օդը չոր երթայ, ջրել:

91. Բողբոջներն երբ սկսին մեծնալ, շուտով կ'արձակեն հողին վրայ իրենց երկայն շառաւիղները, և իրենց ամէն հանգուցին վրայ արմատներ կ'արձակեն, որք կը մտնեն հողին մէջ: Կտրելով այս ճիւղերը, կ'ըլլան այնչափ նոր բոյսեր, և այսպէս կրնան բազմանալ յանհունս: Բայց մեր կլիմային տակ՝ որ այնչափ տաք չէ, պէտք չէ շատ բազմացնել, որպէս զի կարող ըլլան իրենց ոյժն արմատին տալ և ելունդը մեծցնել: Ուստի, թողլով շառաւիղներն ամբողջ, պէտք է խաւիններ դնել իրենց քով, որպէս զի կարող ըլլան մագլել անոնց վրայ:

92. Քաղոց. — Հոկտեմբերի սկիզբը կ'ըլլայ բատատներուն քաղոցը, կտրելով նախ իրենց վրայի ճիւղերը, որք կրնան կերակուր ըլլալ անասնոց, և յետոյ բահով հանել ելունդները, որք դժուարաւ կրնան պահուիլ. վասն զի 15 աստիճանէ վեր և 5 աստիճանէ վար կը սկսին այլայլիլ և փտիլ: Նոյնպէս խոնաւութիւնն ու չորութիւնը վնասակար է իրենց:

Զիրենք պահելու համար պէտք է նախ զատել խնամով այն ելունդներն՝ որ խոցուած կամ կտրած ըլլան. և ընտիրները դնել արևու մէջ և չորցնել, և յետոյ ըզգուշութեամբ և առանց իրարու վրայ դիզելու՝ տանել չոր տեղ մը հարաւային կողմ, որոյ միջին տաքութեան աստիճանն ըլլայ 10, և չանցնի տաքութեան այդ սահմանն: Առանց այսպիսի զգուշութեան անկարելի է պահել:

Բերքը 20էն մինչև 50 տակառաչափ կրնայ ըլլալ առ մի հարիւրակալ ըստ դրից տեղւոյն: Մի տակառաչափն է 1000 հազարագրամ կամ 10 կենդինար:

Բատատը կերակուր է մարդոյ և անասնոց, իրեն համեղ և անոյշ մսին համար, և ունի մասնաւոր հոտ մը, որով աւելի հաճոյական կ'երևի ոմանց քան գետնախնձոր: Բայց պէտք չէ ուտել կամ տալ անասնոց ոչ բատատը և ոչ գետնախնձորն՝ երբ սկսին բողբոջել, վասն զի վնասակար են յայնժամ, մանաւանդ իրենց բողբոջը:

ԳԼՈՒԽ Բ

ԳԵՏՆԱԽՆՁՈՐ (տճ. Եէր էլմասը. գղ. Pomme de terre. իտ. Patata).

93. Նկարագիր. — Գետնախնձորն Ամերիկայի Պերու և Քիլի աշխարհին բնիկ բերքն է, որ Սպանիացւոց և Անգղիացւոց ձեռքով եկաւ Եւրոպա 1585ին, և 1789ին մտաւ Գաղղիա:

Ձև 16. Գետնախնձոր.

Գետնախնձորը կարևոր բոյսերէն մէկն է, իբր կէս մետր բարձրութեամբ. ծղօտն է ուղղորդ և սնամէջ. տերևները փետրաձև և անղոյգ. ծաղիկները ճերմակ, վարդագոյն կամ մանուշակագոյն ըստ զանազան տեսակաց,

և ի փունջս. պտուղն է կակուղ, բազմասերմ, ըստ մեծութեան կեռասի։ Բայց իր ուտելի մասն է իր ելունդներն՝ որ կ'ելնեն իր երկայն արմատներուն ծայրերը (Ձև 16)․ և կան ելունդներուն վրայ պտուկներ կամ աչքեր, ուսկից կ'արձակեն ծիլ կամ բողբոջ։

Գետնախնձորին տեսակները խիստ շատ են, և 200էն աւելի կը համրուին, և տարածուած են հիմա Եւրոպայի ամէն կողմ։ Չկայ խաւարտ մը որ այնպէս շուտով խորթանայ ինչպէս գետնախնձոր. և այս բանիս կ'օգնեն տեղւոյն կլիմայն, հողը և պարարտութիւնը։

94․ Կրնամք գետնախնձորոյ զանազան տեսակները բաժնել երկու ցեղի, այս ինքն, Կանխահաս և Ցանրահաս։ Առաջին ցեղին տակ կ'իյնան պարտէզներու մէջ մշակուած գետնախնձորներուն մեծագոյն մասը, և երկրորդին տակ արտերու մէջ մշակուածները։

Առաջին ցեղը կրնամք բաժնել երեք դաս.

Ա․ Կլոր ելընդով.

Բ․ Ձուաձև ելընդով.

Գ․ Երկայն ելընդով։

95․ Գետնախնձոր կլոր ելընդով. — Կլոր ելընդով եղած գետնախնձորն ունի զանազան տեսակներ, որոց մէջ գլխաւորն է Բլանշար (Bianchard) ըսուածը (Ձև 17), որոյ տերևներն են մեծ, ծաղիկները ճերմակ, ելունդները կլոր, ողորկ, դեղին, ունելով մանուշակագոյն գըծեր. աչքերը ոչ այնչափ խոր, և բողբոջներն են մանուշակագոյն։ Միսն է դեղին, ալերային, ոչ այնչափ փափուկ, բայց ընտիր. և է շատ կանխահաս և բարեբեր։



Ձև 17․ Բլանշար.

Երկրորդն է Յովսէփ Ռիգոյ (Joseph Rigault) ըսուածն, որ է զօրաւոր տունկ, մեծամեծ տերևներով, հաստ և եռանկիւնի ծղօտով, և մեծամեծ եղրևանի ծաղիկներով, որոց ծայրերն են ճերմակ։ Ելունդները մեծ, կլոր, անկանոն. բողբոջները մանուշակագոյն, ծայրերնին

կանաչ։ Ելունդներուն միսն է ճերմակ, փափուկ, համեղ, վաղահաս և բարեբեր։

Երրորդն է Թագաւոր գետնախնձորոյ (Roi de pomme de terre) ըսուածն, որ շատ զօրաւոր տունկ է, մեծամեծ տերևներով, և եղրևանի ծաղիկներով։ Ելունդներն են կլոր, երկայնկեկ և տափկած, բարակ և ողորկ կեղևով՝ ի գոյն դեղին ոսկւոյ։ Միսը դեղին, փափուկ և շատ ազնիւ։ Այս տեսակը շատ բարեբեր է։

Չորրորդն է Մանուշակագոյն կլոր գետնախնձոր (Pomme de terre violette ronde) ըսուածն, որ է կլոր և մանուշակագոյն ելունդներով, ունելով սև գիծեր. միսն է դեղին, բողբոջներն և ծաղիկները մանուշակագոյն։ Եւ է ընտիր տեսակ, կանխահասին և յամրահասին մէջ տեղ։

96․ Գետնախնձոր ձուաձև ելընդով. — Այս դասուն մէջ գլխաւորներն են, նախ Յառաջապահ (Avant-garde) ըսուածն, որոյ տունկը ցած է, ցօղուններն հաստ, կանաչ և քիչ մը խազեալ, տերևները մեծ և ողորկ.



Ձև 18․ Տարափ ձեան.

ելունդներն ստուար, ձուաձև և երկու ծայրերը տափկած, վրան ողորկ և մոխագոյն. բողբոջները ճերմակ. միսն ալերային, ճերմակ, համեղ և փափուկ։ Կանխահաս է շատերէն և բարեբեր։

Երկրորդն է, Տարափ ձեան (Flocon de neige) ըսուածը (Ձև 18), որ է բոյս չափաւոր մեծութեամբ,

մեծ տերևներով և ճերմակ ծաղիկներով։ Ելունդներն են կանոնաւոր ձուաձև, պայծառ դեղին կամ գորշագոյն ճերմակ կեղևով, և խորտաբորտ. բողբոջներն են վարդագոյն։ Բարեբեր է և չափաւոր վաղահաս. միսն է ալերային և համեղ։

97. Գետնախնձոր երկայնաձև ելունդով. — Այս դասուն մէջ գլխաւորներն են, նախ Գաղղիական ըսուածը, որ է փոքրիկ բոյս մը, բարակ ճիւղերով, անկանոն և դեղնագոյն ելունդով, որոյ միսը շատ համով է, և է գլխաւոր կանխահասներէն մին, և շատ բարեբեր։

Երկրորդն է Բարեկլաւ (Magnum Bonum) ըսուածը (Զև 19), որ է զօրաւոր և բարձր տունկ, բացագոյն

Զև 19. Բարեկլաւ.

կանաչ կամ գրեթէ գորշագոյն տերևներով և վարդագոյն ծաղիկներով։ Ելունդներն են մեծ, երկայնաձև, և ծայրերնին քիչ մը տափարակ. դեղին և ողորկ կեղևով, որ երբեմն կ՚ըլլայ նաև խորտաբորտ. բողբոջներն են վարդագոյն։ Շատ բարեբեր է այս տեսակը և շահաւոր. միսն է դեղին, ալերային և համով։

Երրորդն է Մարզանոն (Marjolin) ըսուածն, որ է զօրաւոր բոյս, հաստ կլոր և ողորկ ցօղնով, և մեծամեծ մուգ կանաչ և փայլուն տերևներով, մեծ և ճերմակ ծաղիկներով։ Ելունդներն են մանր, անկանոն, ողորկ, դեղին և մէկ ծայրն աւելի դուրս ցցուած. բողբոջներն են մանուշակագոյն։ Միսն է դեղնագոյն և շատ համով. և արժանի մշակութեան (Զև 20)։

Չորրորդն է Իշխան Գալլեսի (Prince de Galles) ըսուածն, որոյ տերևներն են կարճ և խորշոմեալ, ելունդներն զանազան ձևով, բայց ընդհանրապէս երկայն, մեծ, և ծայրերնին տափակ։ Շատ բարեբեր է այս տեսակը, և բաւական կանխահաս։



Զև 20. Մարզանոն.

Հինգերորդն է Իշխանուհի (Princesse) ըսուածն, որ ցած և զօրաւոր տունկ մի է, տերևները մեծ, ծաղիկները վարդագոյն։ Ելունդները շատ երկայն են, կոր և քիչ մը անկանոն. կեղևը դեղին, ողորկ. բողբոջները վարդագոյն. միսն է դեղին, հոծ, և շատ բարեբեր (Զև 21)։



Զև 21. Իշխանուհի.

Վեցերորդն է Արքունական (Royale) ըսուածն, որ է բարակ, քառակուսի և մանուշակագոյն ցօղնով, մեծ, սրածայր և մուգ կանաչ տերևներով, և եղրևանի մեծ ծաղիկներով։ Ելունդներն են երկայն, ողորկ և դեղին. բողբոջները մանուշակագոյն. միսը դեղին, ալերային և

շատ փափուկ. և է ընտիր տեսակներէն մէկը, վաղահաս և բարեբեր (Ձև 22)։

Եօթներորդն է Վարդ վաղահաս (Rose précoce) ըսուածն, որ է փոքրիկ բոյս մը, քառակուսի և չափաւոր ցօղնով, մեծ և ողորկ տերևներով, մեծ և ճերմակ ծաղիկներով։ Ելունդներն են երկայն կանոնաւոր, ողորկ և տափարակ. կեղևն և բողբոջները վարդագոյն. միսն է ճերմակ որ վարդագունի կը զարնէ, ալերային և փափուկ։ Այս տեսակը շատ բարեբեր է և կանխահաս։

98. Մշակութիւն գետնախնձորոյ. – Գետնախնձորը կրնայ ամէն հողի մէջ բուսնիլ, բայց կը սիրէ աւելի կակուղ և աւազուտ հող, և կրնայ մշակուիլ ընդարձակ արտերու մէջ։ Բայց մեք հոս պիտի խօսիմք պարտէզներու մէջ եղած մշակութեան վրայ, որով կարող ըլլամք ունենալ կանխահաս գետնախնձոր։



Ձև 22. Արքունական.

Գետնախնձորը պարտիզին առաջին պտուղն է. անոր համար չկայ պարտիզպան մը՝ որ խնամ չտանի տնկելու այս տունկը և ունենալու սոր պտուղը, որ և կը վաճառի ի սկզբան շահաւոր կերպով, որչափ աւելի կանխահաս ըլլայ։ Անոր համար ջանալու է աւելի կանխահաս տեսակներէն տնկել, և քանի մը տեսակը միանգամայն։

Պէտք չէ տնկել ցուրտ և խոնաւ հողերու մէջ կանխահաս գետնախնձոր, որ կ'ուզէ կակուղ, խոր, պարարտ և լաւ մշակուած հող։ Նոյնպէս անյարմար են գօց, շուք, հողմոտ և սառուցի ենթակայ եղած տեղը։

99. Պէտք չէ գետնախնձորը դալար աղբով պարարտացնել, որ թէպէտ առատ բերք կու տայ, բայց կ'առնու տեսակ մը անախորժ համ։ Աշնան պատրաստելու է հողն աղբով, և գարնան տնկելու ժամանակ պէտք է տալ տարրաբանական պարարտութիւն, և մանաւանդ վերլուսածնատ կրոյ և մոխիր, որով թէ առատ և թէ համով ելունդներ կ'ունենամք։

Տնկելու համար պէտք է ընտրել արմատներուն ծայրի

ելունդներն՝ որ մանր և կլոր կ'ըլլան, և անոնց մէջ ալ ընտրելու է զանոնք որ ամենևին արատ կամ խոց չունենան, և կրած չըլլան սառոյց։ Ի բաց թողլու է զանոնք որոց բողբոջը վար ինկած է անհոգութեամբ կամ փտելով։ Իսկ անոնք որոց բողբոջն անարատ մնացած է, կրնամք խնամով հողոյ մէջ տնկել։

100. Պարտիզպաններէն շատերը բողբոջումն երագելու համար՝ կը դնեն ելունդները դեկտեմբերի կիսոյն կողովի մէջ կարգ կարգ, թաց աւազով լցուած, և կը տանին խոհանոց կամ ախոռ, և կը թողուն հոն, մինչև որ բողբոջներն առնուն 5 հարիւրորդամետր երկայնութիւն։ Եւ յայնժամ կը հանեն կողովէն ամէն զգուշութեամբ, և կը դնեն հողի մէջ փետրուարի կիսոյն ժամանակ։

Պէտք է տնկել 30 կամ 40 հարիւրորդամետր հեռաւորութեամբ ամէն կողմէն, և ծածկել բողբոջները 4 հարիւրորդամետր բարակ հողով, և հողին վրայ տարածել յարդ կամ սէգ չոր։ Տասնևհինգ օրէն ետքը կը տեսնուին հողին երեսն առաջին տերևները, զորս նոյնպէս պէտք է պատսպարել ուրիշ կարգ մը յարդով։

101. Երբ չկայ այլ ևս վախ եղեման, վերցնել յարդը, քրքրել հողը, զոր պէտք է միւս անգամ քրքրել ծաղկելու ժամանակ։ Ելունդները շուտով հասցնելու համար լաւ է կտրել ծաղիկներն հետ զհետէ՝ երբ սկսին ծաղկիլ, կամ կտրել ամէնքը միասին ապրիլի առաջին կիսոյն մէջ. որոյ վերջին կիսոյն մէջ կրնամք սկսիլ քաղոցը, և շարունակել մինչև մայիսի վերջ. և յայնժամ երկիրը բոլորովին ազատ կը մնայ։

Այն տունկերն՝ որոց ելունդները սերման համար պիտի պահուին, պէտք է թողուլ հողին մէջ՝ մինչև որ ցօղուններն սկսին չորնալ, և յայնժամ հանել հողէն չոր օր մը, և թողուլ արևու մէջ քանի մը ժամ, և յետոյ դնել կողովներու մէջ և տանել չոր և զով տեղ պահել, զգուշանալով սառուցէ։

102. Հիւանդութիւնք գետնախնձորոյ. — Գլխաւոր և շատ վնաս բերող հիւանդութիւնն է Պիսակ (Peronospora), որ կը դարմանի որթոյ պիսակին պէս, դնելով գետնախնձորոյ ելունդներն, որ պիտի գործածուին սեր-

ման համար, ծծըմբատի պղնձոյ և կրոյ լուծման մէջ, խառնելով ջրոյ հետ 2 առ % ծծըմբատ պղնձոյ և 2 % կիր մարած. և յետոյ բոյսը մեծնալէն ետքը թրջել նոյն լուծմամբ իրեն տերևներն որթոյ ջրհանով:

Եւ որովհետև պարտիզին գետնախնձորներն իսկոյն ուտելու կը գործածուին, ուստի այն գետնախնձորի տունկն՝ որ պիսակացեալ է, պէտք չէ պահել սերման համար:

ԳԼՈՒԽ Գ

ԳԵՏՆԱՏԱՆՁ. (*տճ. Եըլտըզ քէօքիւ. գղ.* Topinambour. *իտ.* Tartufo di canna).

103. Նկարագիր. — *Գետնատանձն է բնիկ հարաւային Ամերիկայի, որոյ տունկը կը բարձրանայ մինչև երեք մետր. ցօղունն է մազոտ, տերևները ձուաձև, մեծ, խորտաբորտ, հակադիր և դէպ ի վեր երկնցած. բայց եթէ եղանակը չոր երթայ, կը ծռին դէպ ի վայր. ծաղիկներն են պարզ, դեղին, ճառագայթաձև և ծայրաբոյս:*

Այս տնկոյն գլխաւոր մասն է իր արմատներուն ելունդներն, որ կոչին Գետնատանձ, Աստղատակ (Ձև 23), *և են երկարակեաց, անկանոն ձևով, ալերային, և ունին օսլայակերպ նիւթ մը որ կը լուծուի եռացեալ ջրոյ մէջ: Կ'ուտուին այս ելունդներն եփելով, և են անոյշ, համեղ և փափուկ, և կը տրուին նաև ի սնունդ անասնոց: Ուտելու համար պէտք է հետ զհետէ հանել հողէն և ուտել. երկար պահուելով կ'աւրուին:*

Գետնատանձը կրնայ բուսնիլ նաև անբեր և խոնաւ երկիր: Կը տնկուին ելունդներն գարնան, և կարօտ չեն ամենևին խնամքի մինչև քաղոցի ժամանակ, որ կ'ըլլայ սեպտեմբերի վերջ: Բայց կրնայ մնալ հողի տակ մինչև ձմեռ, և հանել հետ զհետէ և ուտել: Կրնամք ևս քաղելէն ետքը տնկել նոյն հողին մէջ մանր ելունդներն,

իրարմէ քիչ մը հեռի, ձմեռն ամենևին վնաս մը չեն կրեր հողին տակ:

Ձև 23. Գետնատանձ, Աստղատակ.

Գետնատանձն այնպիսի բոյս մի է, որ ուր տնկուի մի անգամ՝ ինքնին կը բուսնի ամէն տարի:

ԳԼՈՒԽ Դ

ԽՍՏՈՐԱԿ ԿԱՄ ԽՍՏՈՐՈՒԿ. (*տճ.* Հինտ եէր էլմասը. *արաբ.* խղեամ. *գղ.* Dioscorée, Igname. *իտ.* Ignamo).

104. Նկարագիր. — *Խստորակն* է բոյս շատակեաց և պատաղիճ, բնիկ Ճենաստանի և հարաւային կողմանց*

Ձև 24. Ծաղկաբեր ճիւղ խստորակի Ճենաստանի.

* Արուեստից և գիտութեանց բառգրքիս մէջ գրած եմ Դիոսքորէ, լատին անուան տառադարձութեամբ. բայց Հայբուսակին մէջ գտնելով Խոտորակ, ուզեցի հոս նոյնը գործածել:

Ասիոյ, և կը մշակուի նաև ի հարաւային Ամերիկա: Տերևներն են հակադիր, սրտաձև և մութ կանաչ, և տերևոց անթին մէջ կը բուսնին երկրորդ տարին ողկուզաձև, մանր և ճերմակ ծաղիկներ (Ձև 24): Ծղօտն

Ձև 25. Ելունդք խստորակի Ճենաստանի.

է բարակ, բազմաճիւղ, և կը բարձրանայ մինչև 3 մետր: Արմատն է երկայն, մսոտ, ալերային, և ունի մասնաւոր համ մը ախորժելի (Ձև 25): Խստորակի ալիւրէն կը շինեն պաքսիմատ:

105. Մշակութիւն. — Այս բոյսը կը սիրէ տաք, պարարտ և խոր երկիր, որոյ մէջ կաւը շատ չըլլայ, և կու տայ ըստ բաւականին առատ բերք։ Կը տնկեն մարտի կամ ապրիլի մէջ ելունդներն՝ ամբողջ կամ մաս մաս բաժնած, լաւ պատրաստած հողի մէջ, որ գէթ 40 հրմ. խորութեամբ փորուած ըլլայ։ Եւ երբ արմատներէն բողբոջները դուրս ելնեն և բարձրանան թզաչափ, տընկել քովերնին ուռւոյ խեչակներ, որպէս զի ծղօտները կարենան պատատիլ վրան։ Պէտք է երբեմն երբեմն քրքրել հողը և մաքրել վնասակար խոտերէ, և նայիլ որ ծղօտները պատատին դիւրաւ խեչակներուն վրայ։

106. Քաղոց. — Քաղոցը կ'ըլլայ նոյեմբերի մէջ, բայց շատ դժուարութեամբ և ծախքով. որովհետև ելընդային արմատները կէս մետրէն մինչև մի մետր երկայնութիւն կ'ունենան։ Եւ պէտք է ընել քաղոցն երկրորդ տարին, և կրնայ տալ 40,000 հազարագրամ առ մի հարիւրակալ։ Լաւ է արմատներն շուտով ուտել, և մանրերն աւազի մէջ պահել տնկելու համար։

Միսն է ճերմակ, փափուկ, դիւրաբեկ և առանց ներդի, կաթնեղէն և հիւթեղէն հիւթով լցուած։ Կրնայ ուտուիլ նաև հում, բայց խաշելով աւելի դիւրամարս կ'ըլլայ։ Մանր կտրելով, չորցնելով և աղալով կը դառնայ ալիւր։ Թէպէտ չունի այնչափ փեկուղ գետնախնձորի պէս, բայց առատ է սննդարար նիւթով, և ունի բորակածնային նիւթ մը որ կը պակսի գետնախնձորոյ մէջ։

ԳԼՈՒԽ Ե

ՃԱԿՆԴԵՂ ԿԱՄ ԲԱՆՋԱՐ. (տճ. փանճար, Չիւքիւնտիւր. գղ. Betterave. իտ. Barbabietola).

107. Նկարագիր. — Բոյս երկտարևոր, իլաձև արմատով (Ձև 26), բազմաճիւղ և խազեալ ցօղուններով, որք կ'ըլլան բարձր իբր մի մետր։ Տերևներն են մեծ, համադիր, երկայն և ամբողջ. ծաղիկները փնջաձև։

Ճակնդեղին տեսակները շատ են, որոց ամենուն ալ արմատներն են թանձր, միսոտ և անոյշ, և կ'ուտուին եփած կամ խաշած իբր աղցան. և կ'ըլլան մինչև 30 հարիւրորդամետր երկայնութեամբ և 15 հարիւրորդամետր թանձրութեամբ, կէս մասն հողէն դուրս ելնելով։ Բանջարին արմատները շատ անգամ կարմիր ըլլալուն համար, մեր մէջ ըսուած է նաև կարմիր տակ, որոյ թէ կեղևը և թէ միսն է կարմիր։ Բայց կ'ըլլայ նաև դեղին (Ձև 27), և ճերմակ (Ձև 28), թէ կեղևը և թէ միսը, որք սովորաբար երկայնաձև են, բայց կ'ըլլան նաև կլոր և ձուաձև, մանաւանդ դեղինը. և

Ձև 26. Կարմիր ճակնդեղ.

Ձև 27. Դեղին ճակնդեղ.

չեն այնչափ մեծ՝ կարմիր բանջարին պէս, բայց աւելի շաքարոտ են անոր. համար ատոնցմէ և մանաւանդ ճեր-

Ձև 28. Ճերմակ ճակնդեղ.

մակ տեսակէն կը հանեն շաքար, որ Գաղղիոյ մեծ խռովութեան ժամանակին գիւտն է, և կ'ելնէ շաքար 10–12 առ 100: Կը հանեն նաև ալքոհլ:

Կայ տեսակ մը վայրի բանջար, որ կը տրուի անասնոց ուտելու համար, և այս տեսակը կ'ըսուի ճակրձնդեղուշ:

108. Մշակութիւն. — Բանջարը թէպէտ ամէն հողի մէջ կը բուսնի, բայց կը սիրէ կակուղ և խոր փորուած հող: Կաւային և թաց հողի մէջ արմատները շատ չեն մեծնար, և այնչափ լաւ չեն ըլլար: Հողը պարարտացնելու համար պէտք չէ գործածել աղբ, որովհետև աղբով արմատները ջրոտ և անհամ կ'ըլլան, և չեն կրնար երկար ժամանակ պահուիլ: Պէտք է պարարտացնել բուսահողով և տարրաբանական պարարտութեամբ. թէպէտ ընդհանրապէս ճակնդեղները շատ պարարտութիւն չեն սիրեր: Կրնայ գործածուիլ օգտակարութեամբ բորակատ նատրոնի:

109. Պէտք է սերմանել բանջարն ապրիլի կէսէն մինչև մայիսի կէսը: Անոնք որ մայիսի վերջերը կը ցանուին, կը գործածուին սերմ առնելու, և կամ աշնան վերջերը քաղելու և ձմերան պահելու համար:

Կը ցանուին սերմերը տողի վրայ, տողերն իրարմէ 25–30 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, արմատներուն մեծութեան համեմատ: Ի սկզբան խիտ կ'ըլլան, բայց երբ ծլած բոյսերը կ'արձակեն իրենց չորրորդ տերևները, յայնժամ պէտք է լայնցնել և փոխադրել ուրիշ տեղ, կտրելով արմատին և տերևներուն ծայրերը. և այս փոխադրութեան ժամանակ լաւ է տալ ջրախառն լուծումն բորակատի նատրոնի:

Եթէ եղեման վախը բոլորովին անցած չէ, լաւ է ծածկել յարդով մանր բոյսերը: Հարկաւոր չէ ջուր տալ բոյսերուն: Երբ մեծնան բոյսերը, պէտք է քրքրել հողն յունիսի մէջ, զոր կրկնելու է նաև յուլիսի մէջ. և եթէ հողը վնասակար խոտերով լցուի, քրքրելու է զայն երրորդ անգամ օգոստոսի մէջ և մաքրել վնասակար խոտերէն:

110. Քաղց. — Սեպտեմբերի առաջին կիսոյն մէջ կը սկսին քաղել ճակնդեղները և ուտել: Արմատները կամ տակերը ծայրագոյն մեծութեան հասած կը համարուին, երբ տերևները կը սկսին պառկիլ հողին վրայ: Ընդհանուր քաղոցը կ'ըլլայ Նոյեմբերի մէջ՝ տերևները կտրելէն ետև, թողլով անարատ մայրանը (գղ. Collet), որ է ելընդին և տերևներուն հետ եղած կապը:

111. Պահելու համար պէտք է ընտրել այն բանջարներն՝ որ անարատ են և լաւ մեծցած, և դնել չոր տեղ, զգուշանալով որ ձմերային սառոյցը չմխաէ: Կրնամք չոր աւազի մէջ կարգ կարգ դնել և ծածկել վրան յարդով:

Այն տակերն որ սերման համար պիտի պահուին, աւելի խնամով պէտք է կարգ կարգ դնել, և մարտին տնկել մի մետր հեռաւորութեամբ: Եւ երբ ցօղունը բարձրանայ ըստ բաւականին, իւրաքանչիւրին քով մէկ մէկ խեչակ դնել: Իսկ սերմն առնելու համար, լաւ է կտրել վերջէն ելած ճիւղերը և ծաղիկներուն ծայրերը: Եւ սերմը հասուննալէն ետև՝ կտրել ճիւղով և դնել արևու մէջ որ չորնայ, և յետոյ ծեծել և ժողվել սերմը:

Մի հարիւրակալ երկրէ, ուր ճակնդեղը պահուած ըլլայ սերման համար, կ'ելնէ 2000 – 3000 հազարագրամ սերմն: Այս սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնն հինգ վեց տարի:

Մի հարիւրակալ գետնէ՝ ուր ցանուած ըլլայ շաքարաբեր բանջար, կ'ելնէ 35–50 հազար հազարագրամ բանջար:

Բանջարն է կերակուր թէ մարդոյ և թէ անասնոց: Պահուած բանջարն աւելի սննդարար կ'ըլլայ, որովհետև կ'աւելնայ շաքարային նիւթը. Կովերուն կաթը կ'աւելցնէ և կ'անուշցնէ: Տերևներն ալ կու տան ի կերակուր անասնոց:

ԳԼՈՒԽ Զ

ԳՈՒԶԻ ԿԱՄ ՔՕՇՄՈՐՈՒՔ. (տճ. Ըսքորչինէա (ազ). արաբ. Քապոշ. գղ. Salsifis. իտ. Barba di becco bianca, Salsefrica).

112. Նկարագիր. — Գոզի, որ և կ'ըսուի քօշմորուք, է երկտարեայ բոյս մը, որոյ արմատն է իլաձև, երկայն, թանձր 1-3 հարիւրորդամետր, և ճերմակ (Ձև 29): Իր ցօղունն է դատարկ, բազմաճիւղ, բարձր 25-30 հարիւրորդամետր: Տերևներն են կանաչ, համագիր, ողորկ, տիգաձև և ամբողջ, և կը չրջապատեն ցօղունը: Ծաղիկներն են ծայրաբոյս, կապտորակ և մենակեաց, և կը բացուին մայիս ամսոյ մէջ առաւօտը կանուխ, և կէս օրէն երկու ժամ յառաջ կը փակուին. ծաղկին բաժակն է պարզ և բազմաթերթ:

Ձև 29. Գոզի.

113. Մշակութիւն. — Կը սիրէ կակուղ և խոր փորուած երկիր, աղէկ մշակուած և պարարտացած փուտ բուսահողով. կամ լաւ ևս, այնպիսի հող մը որ նախընթաց տարիներուն մէջ առատապէս պարարտացած ըլլայ: Եթէ պինդ հողի մէջ մշակուի, կու տայ կարճ և բազմաճիւղ արմատներ:

Կրնամք ցանել օգոստոսի մէջ, որպէս զի յաջորդ տարին կարենամք ուտել իր արմատները՝ ծաղկելէն յառաջ: Բայց լաւագոյն է սերմանել մարտի կամ ապրիլի մէջ:

114. Իր սերմն է գորշագոյն, ծանր, և կը ցանուի տողի վրայ, տողերն իրարմէ 25 հարիւրորդամետր հեռի, և տունկերը 10 հարիւրորդամետր հեռի։ Տասներկու կամ տասնևհինգ օրէն ետքը կը սկսի սերմը ծլիլ, և այս ժամանակիս մէջ եթէ օդը չոր երթայ, պէտք է ոռոգանել գետինը։ Մէկ կալ երկրի համար բաւական է 50 գրամ սերմ։

Վեց շաբաթէն ետքն եթէ տեսնեմք որ տունկերն իրարու քով խիտ բուսած են, պէտք է բաժնել և տնկել 10 հարիւրորդամետր հեռաւորութեամբ. և անկէ ետքը չմնայ այլ ինչ, բայց մաքուր պահել հողը վնասակար բոյսերէ, և ոռոգանել չորութեան ժամանակ։ Սեպտեմբերի մէջ պէտք է արմատները քաղել, որք և կրնան պահուիլ մինչև գարուն։ Ժողվելու ժամանակ պէտք է տերևները կտրել՝ թողլով մայրանը, որպէս զի հիւթը չցամքի, և պահել աւազի մէջ, և ուզած ժամանակ հանել և ուտել։ Եթէ սերմն ուզեմք ունենալ, պէտք է զօրաւոր տունկերէն քանի մը հատն իր տեղը թողուլ։

115. Գարնան արմատներէն վեր կ՚ելնեն բողբոջներ, որք երբ 10 հարիւրորդամետր բարձրանան, պէտք է հանել և տնկել ծնեբեկի պէս։ Արմատներն երկրորդ տարին անպիտան կը սեպուին։ Երբ օդը տաքնայ, կը սկսին արմատները ջլանալ, և իրենց ցօղունը քիչ ժամանակէն կը սկսի ծաղկիլ և տալ սերմն։ Սերմն այլևայլ անգամ պէտք է ժողվել, և միշտ առաւօտուն, որպէս զի հովէն չցրուի։ Պէտք է գիտնալ որ սերմը շուտով կը կորսնցնէ իր բեղնաւորութիւնը, ուստի և յաջորդ տարին անմիջապէս պէտք է ցանել։

Գազրոյ երկրորդ տարւոյն բողբոջները կրնան ուտուիլ ծնեբեկի պէս, և արմատները քաղցրաճաշակ կերակուր կ՚ըլլան ձմեռն, որ կրնան ուտուիլ նաև իբր աղցան։

ԳԼՈՒԽ Է

ՍԵՒ ԳՈՒԶԻ ԿԱՄ ՔՕՇՄՈՐՈՒՔ (տճ. Իսգորչինա (գարա). գղ. Scorsonère. իտ. Scorzonera).

116. Նկարագիր. — Գազրոյ մէկ տեսակն է Սև գըռզին, և այսպէս կոչուած է որովհետև արմատները սև են արտաքուստ (Ձև 30), իսկ ներքուստ ճերմակ, և աւելի մեծ են և թանձր քան զհասարակ գազրոյ, և կ՚ուտուին անոր պէս։ Սպանիական սև գըռզին աւելի ընդունելի է։ Իսկ մշակութեան կերպն և ուրիշ հանգամանքն յար և նման է հասարակ գազրոյ կամ քօշմորուքի։ Միայն թէ սև քօշմորուքի արմատները կրնան մնալ բացօթեայ հողին մէջ, և իր սերմանց բեղնաւորութիւնը կը տևէ երկու կամ երեք տարի։ Արմատներն ուտելու համար կտրատելէն ետքը պէտք է նետել ջրոյ մէջ, ապա թէ ոչ կը սևնան օդոյ մէջ. և կամ խաշել և յետոյ կեղևը հանել։

Ձև 30. Գազր սեւ.

117. Կայ ուրիշ տեսակ մի ալ քօշմորուքի, որ ինքնին կը բուսնի մարգագետիններուն վրայ, դեղին ծաղկովք և գլանաձև արմատովք, և կը գործածուի հասարակ քօշմորուքի պէս, և կոչի Քօշմորուք մարգաց։

118. Սև գազրն, ինչպէս նաև ճերմակը, ենթակայ է տեսակ մը հիւանդութեան, որով իր տերևներուն երեսը կը պատէ բորբոս կամ մշուշ մը, որոյ դարմանը դեռ անծանօթ է։

ԳԼՈՒԽ Ը

ՍԿՈԼԻՄ. (*գղ.* Scolyme. *իտ.* Scardicione).

119. Նկարագիր. — *Հասարակ բոյս մի է որ կը գտնուի ամէն չոր դաշտերու մէջ։ Տերեւներն երկայն, արմատէն վերաբուսեալ. ծաղիկները դեղին. արմատներն ուղղորդ, ճերմակ և միսոտ, որ կ'ուտուին։ Եւ եթէ ուզեմք վայրենի վիճակէն վերածել ընտանի վիճակ, պէտք է մշակել գաղուոյ պէս, որով արմատներն աւելի միսոտ և մեծ կ'ըլլան և համեղաճաշակ։*

ԳԼՈՒԽ Թ

ԾԻԹՐԱՅ. (*տճ. Գուզ այաղը քէօքիւ. գղ.* Raiponce. *իտ.* Raperonzolo).

120. Նկարագիր. — *Հասարակ բոյս մի է, որ յունական անուամբ կ'ըսուի նաև պիւթեւմա, և ինքնին կը բուսնի Եւրոպայի ամէն կողմ, դաշտերու մէջ և արտերուն եզերքը, զանգակաձև ծաղիկներով որ 5 մաս կը բաժնուին, և են ի գոյն կապտորակ։ Արմատն է իլաձև* (*Ձև* 31), *միսոտ և ճերմակ. տերևները մազոտ և ալէձև։ Արմատն ու տերևները կ'ուտուին իբրև աղցան ձմերան և գարնան մէջ. համն է դառն, բայց ախորժակ կը բանայ։ Արմատներուն և տերևներուն դառն համը վերցնելու համար, պէտք է վրան թափել այլևայլ անգամ եղ և քացախ տաքցուցած։*

121. *Ծիթրայն պարտէզներու մէջ մշակելու համար, պէտք է ցանել իր սերմը մայիս կամ յունիս ամսոյ մէջ կակուղ հողոյ վրայ, և վրան չծածկել հողով, այլ բահով*

զարնել միայն և ռռոգել. և ջուր տալ երբ օդը չոր ըլլայ։ Եթէ բոյսերն իրարու շատ մօտ են, բաժնել իրարմէ 15 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և ջանալ մաքուր պահել հողը վնասակար խոտերէ, ապա թէ ոչ արմատները չեն մեծնար։

Ձև 31. *Ծիթրայ.*

Քաղելու ժամանակը կը սկսի հոկտեմբերի մէջ և կը տևէ մինչև մարտ, և վերջը հունտի կ'երթայ։ Իր սերմը կը հասուննայ յուլիս և օգոստոս ամիսներուն մէջ, և կը պահէ իր բեղնաւորութիւնն երկու տարի։

ԳԼՈՒԽ Ժ

ԺԱԽ. (*տճ.* *Պոսրչալաղ.* *գղ.* Chervi. *իտ.* Sisaro).

122. Նկարագիր. — *Ժախը բոյս մի է իբր մի մետր բարձրութեամբ, որոյ արմատներն են երկայնաձև, մսոտ և բազմաթիւ, և մի ցօղունէն այլևայլ արմատ արձակած։ Տերևներն են մանր, նիզակաձև և մթին կանաչ. ծաղիկները ճերմակ, փնջաձև* (Ձև 32)։



Ձև 32. Ժախի տակ, և բոյս ծաղկալից.

Կ'ուտուին արմատներն գազւոյ և ստեպղինի պէս, և են շատ անոյշ. անոր համար ոմանց շատ հաճելի չգար, և այս պատճառաւ մշակութիւնն ալ քիչ է։

123. Մշակելու *համար պէտք է ցանել իր սերմը կակուղ և պարարտ հողի մէջ գարնան ժամանակ, որ փո-*

բուած ըլլայ աշնան. և ցանել տողի վրայ, իրարմէ 10 *հարիւրորդամետր հեռաւորութեամբ։ Կրնամք նաև բազմացնել բողբոջներով որ կը բուսնին մայրանին վրայ։ Ամարան մէջ պէտք է քրքրել հողը, և աշնան սկսիլ քաղոցը՝ որ կը տևէ մինչև գարուն, այս ինքն մինչև որ արմատները դադրին նոր ցօղուն արձակելէ։*

Կը ցանուի 5 *գրամ սերմ առ մի կալ. և սերմը ժողվելու է երկրորդ տարին հասուննալէն ետքը, կտրելով ծաղիկները և չորցնելով արևու մէջ։ Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնն երկու տարի։*

ԳԼՈՒԽ ԺԱ

ՍՏԵՊՂԻՆ. (*տճ.* *Հավուճ.* *գղ.* Carotte. *իտ.* Carota).

124. Նկարագիր. — *Ստեպղինը բոյս մի է որ ամէն տեղ կը բուսնի, և կ'ուտուին իր արմատներն որք են մսոտ, իլաձև, անոյշ, և կը մտնեն չեշտակի հողին խորը* (Ձև 33)։ *Գոյնը կ'ըլլայ կարմիր դրսէն, և ներսէն դեղնագոյն, խառ ի խառ։ Ունի զանազան տեսակներ ընտանի և վայրի։ Արմատէն կը բարձրանան վեր տերևները և կը հրջապատեն ծղօտը, որ մինչև կէս մետր կը բարձրանայ. Ծաղիկներն են ճերմակ՝ հովանոցակերպ, և իւրաքանչիւր ծաղիկ ունի հինգ մանր թերթ ճերմակ՝ սրտաձև։ Սերմերն են ձուաձև, կարծր մազերով պատած, և կը բաժնուին երկու մաս կէս կորնթարդ։*

Կայ տեսակ մը կարմիր ստեպղին կլոր արմատով, որ շատ յարգի է և կանխահաս, քիչ տերևով, և քաղցրաճաշակ։ Կը մշակեն այս տեսակը Գաղղիոյ մէջ (Ձև 34)։

Վայրի տեսակն ինքնին կը բուսնի դաշտերու մէջ, և է կերակուր անասնոց, որ և կ'ըլլայ ճերմակ գունով (Ձև 35)։

125. Մշակութիւն. — *Ստեպղինը կ'ուզէ կակուղ և*

խոր փորուած հող, որպէս զի արմատները կարենան խորը թափանցել՝ թացութիւն և զովութիւն գտնելու համար։ Երկիրն աղբով պարարտացած պիտի ըլլայ տարի մը յառաջ. դալար աղբն ստեպղինի գէշ համ կու տայ, և ենթակայ կ'ընէ հիւանդութեան։



Ձև 33. Ստեպղին.

Ձև 34. Ստեպղին կարմիր, բոլորշի.

126. Կրնամք սերմանել ստեպղինը տարւոյն երեք այլևայլ եղանակաց մէջ։ Նախ, գարնան փետրուարի վերջ կամ մարտի սկիզբը. երկրորդ, յուլիսի կիսոյն. և ի վախճանի, օգոստոսի անձրևներէն ետքը, այս ինքն, սեպտեմբերի կիսոյն։ Այս վերջին ցանածները պէտք է ձմեռ ատեն պատսպարել յարդով, և կը վաճառին գարնան սկիզբը։ Գարնան պէտք է ցանել այն տեսակներն որ վաղահաս են, ամառը՝ միջին տեսակները, և աշնան՝ երկայն արմատ ունեցողները։

Պէտք է ցանել տողի վրայ, իրարմէ 5 հարիւրորդամետր հեռի, և տողերն 30 հարիւրորդամետր հեռի։ Սերման վրայ հազիւ 1 հարիւրորդամետր հող ծածկելու է, և բողբոջները քամիէ պատսպարելու համար յարդով ծածկելու է։ Յուլիսի և սեպտեմբերի սերմերը ցանելէն ետքը, լաւ է բաղով զարնել հողին վրայ և յետոյ ջուր տալ։

Տասնևհինգ կամ քսան օրէն ետքը կը սկսին ծլիլ. և երբ խիստ մօտ ըլլան իրարու, բաժնել և քրքրել հողը, ջրել թէ հարկը պահանջէ. և կրկնել հողին քրքրումն երկու երեք անգամ, մինչև որ կատարեալ աճումն առնուն։

Ձև 35. Ստեպղին ճերմակ.

Այն ստեպղինները զոր կը հանեմք հողէն անօսրացնելով, յարմար են ուտելու։ Եւ անօսրացումը կը կատարուի ամէն անգամ որ հողը քրքրեմք, թողլով տունկերն իրարմէ հեռի 10 հարիւրորդամետր, որով մնացածներն աւելի աճումն կ'առնուն։ Պէտք է գիտնալ պարտիզպանը, որ ստեպղինը կ'ուզէ արև, ազատ օդ և զովութիւն. ցուրտն այնչափ չդպչիր։

127. Աղէկ սերմ ունենալու համար պէտք է ընտրել այն արմատներն՝ որ առողջ, բարեկազմ և ընտիր են. և ձմերան մէջ պահելու համար՝ դնել կարգ կարգ աւազի մէջ, և մարտին վերջ տընկել, և մեծնալէն ետքը դնել քովերնին խեչակ իբրև նեցուկ։ Երբ կեդրոնական և զօրաւոր ծաղիկներուն սերմերը սկսին հասուննալ, կտրել և դնել արևու մէջ որ չորնան. և այս կ'ըլլայ օգոստոսի և սեպտեմբերի մէջ. և ելած սերմը կրնամք շուտ մը ցանել կամ յաջորդ գարնան։

128. Քաղոց. — Ստեպղինը պէտք է հանել հողէն, երբ իր կատարեալ աճումն առած է, մանաւանդ այն որ գարնան ցանուած է. որովհետև թողլով հողին մէջ՝ կը սկսի ճաթռտիլ և կարծրանալ։ Իսկ այն որ յուլիսին

ցանուած է, կրնայ թողուիլ ձմեռն հողին մէջ, վրան յարդով ծածկելով, նոյնպէս և սեպտեմբերի մէջ ցանուածը, որ գարնան վաղահաս կ'ըլլայ։

Հոկտեմբերի մէջ կ'ըլլայ ստեպղինի գլխաւոր քաղոցը, և նոյեմբերի մէջ կ'ըլլայ քաղոց յուլիսի մէջ ցանուածին։ Իրենց տերևները կտրելէն ետև պէտք է թողուլ արմատները որ չորնան, և յետոյ զետեղել չոր նկուղի մը մէջ իրարու վրայ կարգ կարգ աւազով. և եթէ այս կերպով չպահուին, կը թոռմին և կորսուանեն իրենց անոյշ համը։

Ստեպղինի միջին բերքն է առ մի հարիւրակալ 30,000 արմատ, և 10,000 հազարագրամ տերև։ Մի մետր խոնարդ ստեպղինի արմատները կը կշռեն 550-600 հազարագրամ։ Մի հարիւրակալ հողի վրայ ցանելու համար պէտք է 3-5 հազարագրամ սերմ, և 1 հազարագրամ սերմ ունենալու համար պէտք է 12-15 տունկ ստեպղինի։

Ստեպղինը բովանդակ տարին կը գործածուի խոհանոցի մէջ, ուրիշ կանաչեղինաց և մսի հետ ուտելու։ Եւ է մին ախորժահամ և օգտակար խաւարտներէն։

ԳԼՈՒԽ ԺԲ

ԳԱԶԱՐ. (տճ. փառթինա, ձէզր. գղ. Panais. լտ. Pastinaca).

129. Նկարագիր. — Գազարն երկտարևոր բոյս մի է նման ստեպղինի, և կը տարբերի անկէ իր տերևներուն ձևով որ այնչափ հերձեալ չեն, և իր ճերմակ արմատներով որ դեղնի կը դառնեն։

Կրնան ըլլալ արմատներն երկայնաձև, 30-40 հարիւրորդամետր երկայնութեամբ



Ձև 36. Գազար երկայնաձև.



Ձև 37. Գազար բոլորշի.

(Ձև 36), և չափաւոր թանձրութեամբ, ճերմակ և փափուկ մսով և քիչ տերևներով։

կրնան ըլլալ նաեւ կլոր արմատներով (Ձեւ 37), չափաւոր տերեւներով, համեղաճաշակ, կանխահաս եւ բարեբեր։ Այս տեսակը շատ յարգի է։

130. Մշակութիւն. — Գազարը կը մշակուի թէ՛ւ խաւարտ ի կերակուր մարդոյ եւ թէ՛ւ ճարակ անասնոց, եւ կ'ուտուին իր արմատները։ Կը բուսնի ամէն հողոյ մէջ, միայն թէ կակուղ ըլլայ եւ խոր փորուած։ Մշակութիւնը նման է ստեպղինի. կրնայ ցանուիլ աշնան, բայց սովորաբար կը ցանեն գարնան տողի վրայ, տողերն իրարմէ հեռի 30 հարիւրորդամետր, եւ տունկերը 15 հարիւրորդամետր։ Կը ցանուի իբր 20 գրամ առ մի կալ։

Այն գազարներն որոց արմատները դժուարաւ կ'աճին եւ են լաւ մշակուած երկրի մէջ, կ'առնուն այնպիսի զօրաւոր համեմային ճաշակ մը, որ չեն կրնար գործածուիլ կերակրոյ։

131. Քաղոց. — Աշնան ցանուածները կրնամք քաղել յուլիսի մէջ, եւ գարնան ցանուածներն աշնան։ Արմատները կրնամք բացօթեայ թողուլ, կամ դնել կոյտ կոյտ փոսի կամ նկուղի մէջ։

Սերմը պէտք է ժողվել այն արմատներէն որք են ընտիր եւ բացօթեայ թողուած։

ԳԼՈՒԽ ԺԳ

ԲՈՂԿ ՄԵԾ ԿԱՄ ՎԱՅՐԻ. (տճ. Պայըր թուրփու. գղ. Raifort. իտ. Ramolaccio, Rafano).

132. Նկարագիր. — Բոյս խոտեղէն, որոյ տերեւներն են երկայն, ամբողջ կամ ատամնաձեւ. ծաղիկներն դեղին կամ ճերմակ, որք ունին չորս թերթ. արմատներն կամ տակերն իլաձեւ երկայն, մսոտ, որոց գոյնն է ճերմակ, մայրանը կապտորակ. միսն է ճերմակ, փափուկ եւ քիչ մը կծու։ Այս տեսակն աւելի տարածուած է։

Կայ երկրորդ տեսակ մը կլոր արմատով, որոյ կեղեւն է սեւ, միսը ճերմակ, շատ կծու, բայց ախորժահամ. եւ է ընտիր տեսակներէն մին, որ կ'ըսուի Ամառային բողկ վայրի։

Ունի ուրիշ տեսակ մ'ալ մեծ կլոր եւ սեւ արմատով, որ կ'ըսուի Ձմեռային բողկ վայրի (Ձեւ 38), որոյ միսը պինդ է եւ շատ աւելի կծու, եւ կրնայ երկայն ժամանակ պահուիլ։

Կայ չորրորդ տեսակ մ'ալ, որոյ արմատներն են կանոնաւոր, երկայն 20–25 հարիւրորդամետր, գեղեցիկ կարմիր՝ արեան գունով, ծայրը ճերմակ։ Միսն է ընտիր, փափուկ եւ զօրացուցիչ ստամոքի։

Ձեւ 38. Բողկ վայրի, սեւ, կլոր եւ ձմեռային։

133. Մշակութիւն. — Վայրի բողկը կը սիրէ կակուղ, զով եւ խոր փորուած հող, որ տարի մը առաջ աղբով պարարտացած ըլլայ. կրնայ գործածուիլ բուսահող փտեալ. եւ ոռոգելու ժամանակ դնել ջրոյ մէջ բորակատ նատրոնի 1 առ 1000։

թէ որ հողը պարարտ չըլլայ, դիւրաւ կը ճեղքին արմատներն և կ'երկննան։

Պէտք չէ գործածել դալար աղբ, վասն զի արմատները կ'ըլլան թոյլ, և անախորժ համ մը կ'առնուն։

134. Ամարային և աշնանային վայրի բողկը պէտք է սերմանել մարտի և ապրիլի մէջ, ձմերայինը սեպտեմբերի և հոկտեմբերի մէջ։ Կանխելով սերմանել այս վերջին տեսակը, կը ծաղկի ձմեռէն առաջ։

Ամարային և աշնանային վայրի բողկը սերմանելու համար պէտք է հողին մէջ գուբեր բանալ, 20–25 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և ձմերային տեսակին համար 30–50 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և իւրաքանչիւր գուբին մէջ սերմանել երեք սերմ. և երբ քիչ մը մեծնան, թողուլ մի հատ միայն, այն որ զօրաւոր է, և միւսներն ուրիշ տեղ փոխադրել թէ որ աղէկ են, կտրելով տերևներուն ծայրերը։

Սերմերը կը ծլին վեց օրուան մէջ, և իրենց բեղնաւորիչ կարողութիւնը կը պահեն 3–5 տարի։ Պէտք է ցանել 30 գրամ սերմ առ մի կալ, և ձմերային տեսակէն 15 գրամ։ Սերմանելէն ետքը լաւ է մի անգամ ջրել թէ որ օդը չոր է։

Եւ երբ բոյսերը բաւական մեծնան և զօրանան, քըրքրել հողն արմատներուն չորս կողմ, և տասնևհինգ օրէն ետքը հող տալ արմատներուն։

135. Քաղոց. — Ամարային բողկը կը քաղուի յունիսի մէջ, և ձմերայինը յաջորդ տարւոյն հոկտեմբերի սկիզբը։ Պէտք է կտրել մայրանի վրայ եղած տերևները, և արմատները պահել աւազի մէջ կարգ կարգ, դնելով փոսի կամ նկուղի մէջ։ Կան տեսակներ որ կրնամք ձմեռը բացօթեայ թողուլ՝ ծածկելով վրան յարդով։

Վայրի բողկը կ'ուտուի քացախի մէջ դրուած, կամ մսի հետ իբր համեմ։ Դժուարամարս է և փքարեր, ուստի պէտք չէ շատ ուտել. անոնք որ տկար են և փափուկ կազմուած ունին՝ զգուշանալու են ուտելէ։

136. Պատրաստութիւն սերման. — Սերմը ժողվելու համար պէտք է ընտրել այն արմատներն որ զօրաւոր են և բարեկազմ։ Կրնամք զանոնք ձմեռը բացօթեայ

թողուլ, վրան յարդով ծածկած, և գարնան փոխադրել պատրաստած ածուներուն մէջ, տնկելով իրարմէ 50 հարիւրորդամետր հեռաւորութեամբ։ Հողը քրքրել երկու երեք անգամ, քաղելով մնասակար խոտերը. և երբ տունկերը բարձրանան, քովերնին խեչակ դնել և կապել որ չիտակ մեծնան։

Երբ պատիճները սկսին ճերմկնալ և մէջի սերմերը կարմիր դեղնորակ գոյն մը առնուլ, որ կ'ըլլայ սովորաբար յուլիսի կիսոյն, պէտք է ծղօտները հողին հաւասար կտրել, դնել ոտքի վրայ արևու մէջ որ չորնան, և վերջը ծեծելով կամ գործւով հանել սերմերը, և պահել թղթեայ քսակներու մէջ։

Եթէ ուզեմք ժողվել ամարային բողկի սերմը, պէտք է սերմանել օգոստոսի մէջ։

ԳԼՈՒԽ ԺԴ

ԲՈՂԿ ՄԱՆՐ ԿԱՄ ԸՆՏԱՆԻ (տճ. Ֆրէնկ թուրփու. գղ. Radis. իտ. Ravanello).

137. Նկարագիր. — Ընտանի բողկն է բոյս խոտեղէն, տարեւոր կամ երկտարեւոր, որ թուի Ճենաստանէ կամ Հնդկաստանէ Եւրոպա եկած Քրիստոսի թուականէն առաջ. որոյ մշակութիւնը շատ է պարտէզներու մէջ, որովհետև բողկին ամենէն ընտիր տեսակն է և անուշահամ, ուստի և շատ աւելի գործածական քան զվայրենին, և կ'ուտուի նաև հում։ Միայն թէ ամարան մէջ այնչափ համով չըլլար, և երեմն ալ կը խորշոմի։ Կրնամք դարմանել թրջելով աղոտ ջրով։

Ձև 39. Բողկ ընտանի, կանխահաս և կլոր։

138. Ընտանի բողկին տերևներն են մանր, ծաղիկները ճերմակ կամ կարմիր, արմատները կամ տակերը մանր, կլոր, երեսը կարմիր, միսը ճերմակ (Ձև 39)․ կամ երեսն է ճերմակ, միսը կանաչորակ, և երկուքն ալ ընտիր և վաղահաս։

Կայ տեսակ մի ընտանի բողկ երկայնաձև և վաղահաս, որ նոյնպէս յարգի է, և միսը քիչ մը կծու․ որոյ երեսն է կարմիր, միսը ճերմակ։

139. Մշակութիւն. — Ընտանի բողկն ամբողջ տարին կրնայ մշակուիլ, սերմանելով ամէն 15 օրն անգամ մը, ըստ հարկի և ըստ տեսակի, որպէս զի խոհանոցին մէջ անպակաս ըլլայ։

Կը սիրէ թեթև և կակուղ հող, որ ըլլայ աւազային, պարարտացած փտեալ բուսահողով, և ոռոգել սաէպ։ Ձմեռն որ խիստ չըլլայ, կրնայ մշակուիլ բացօթեայ՝ արեգդէմ դրից մէջ, և կամ սնդուկներու մէջ (39)։

Իսկ ուրիշ ամիսներուն մէջ որ և իցէ դիրք իրեն համար լաւ է, և ամառան մէջ աւելի շուք տեղ կը սիրէ։

140. Կը սերմանի առ մի կալ 150 գրամ սերմն, և սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը 4–5 տարի։ Կը ծլին ցանած սերմերն 8 օրէն ետքը։ Եթէ տունկերը քիչ մը մեծնալէն ետև իրարու շատ մօտ ըլլան, պէտք է անօսրացնել և թողուլ իրարմէ 8 հմ. հեռաւորութեամբ, և հանած տունկերն ուրիշ տեղ տնկել։

Ամառն ընտանի բողկերուն վրայ ոջիլ կը գոյանայ, որ շատ վնաս կը բերէ․ և եթէ շատ ըլլայ ոջիլը, պէտք է զանց ընել ցանելու յունիսի կիսէն մինչև օգոստոսի վերջ։

141. Պատրաստութիւն սերման. — Սերման համար պահելու է այն տեսակ արմատներն՝ որ հողի տակ չեն դատարկիր։ Կլոր բողկերը շուտով կը փոխեն իրենց տեսակը և կը դառնան ձուաձև և երկայնաձև. ուստի պէտք է ժողվել սերմն այն արմատներէն որ իրենց նախկին տիպարը պահած են։

Այն տունկերն որ են սերման համար, պէտք է փոխադրել սերմնարանէն՝ երբ 4 տերև կ'ունենան, և տնկել պարտիզի մէջ իրարմէ 50 հմ. հեռաւորութեամբ։ Լաւ է սերմը պահել իր պատճին մէջ մինչև սերմանելու ժամանակ։

ԳԼՈՒԽ ԺԵ

ԺԱԽՈՒԿ ԿԱՄ ՏԱՐԳԱԼԱԽՈՏ. (*տճ.* Քաշըգ օթու, *Քրեն. գղ.* Raifort sauvage, Cochlearia, Amoracie, Cran. *իտ.* Barbaforte, Armoracio, Rafano selvatico.

142. Նկարագիր. — Է բոյս շատակեաց, որոյ տերևներն են մեծ, կարծր և երկայն՝ տարգալի նման. անոր համար ըսուած է մեր մէջ Տարգալախոտ, որ կ'ըսուի նաև Ժախուռկ, Շեպ և Քրան։ Արմատներն են երկայն, գլանաձև, խորտաբորտ (Ձև 40), դրսէն դեղին, ներսէն ճերմակ և նեարդային, կծու և սուր համով։ Ծաղիկներն են ճերմակ և ողկուզաձև, որոց սերմերն ամփոփած են ձուաձև, ուռուցիկ և խորտաբորտ պատճի մէջ։



Ձև 40. Ժախուկ. Շեպ.

143. Մշակութիւն. — Ժախուկը կը սիրէ կակուղ, խոր և արեգդէմ երկիր, մշակեալ աշնան, և անասնոց աղբով պարարտացած։ Պինդ հողոյ մէջ արմատները չեն ստանար կծու համ։

Գարնան ժամանակ պէտք է տնկել երկու մետր լայնութեամբ պատրաստած ածուներուն մէջ այն արմատներն որ պահուած են ձմեռն աւազով նկուղի մէջ. և տնկել 30 հարիւրորդամետր հեռի իրարմէ։

Բազմացնելու համար կը գործածուին ոչ միայն արմատներն՝ որ ունենան պտուկներ, այլ և մայրանէն վեր բուսած ճիւղերը։ Պէտք է երբեմն քրքրել հողը և մաքրել վնասակար խոտերէն։

Արմատները կրնան հողի մէջ մնալ երկու երեք տարի․ բայց լաւ է ամէն տարի քաղել, ապա թէ ոչ կը կար-

ծրանայ միսը և կ'ըլլայ փայտային, և ոչ այնչափ կծու։ Կրնամք նաև մասնական քաղոց ընել, այս ինքն հանել արմատները և թողուլ քանի մը արմատային ճիւղեր՝ որ պտուկներ ունենան։ Բայց այս վերջին կերպը շատ ընդունելի չէ, որովհետև հողին վրայ շատ վնասակար խոտեր կը բուսնին։ Լաւագոյն է ամէն տարի շրջանով կարգ մը հանել և փոխանակել ուրիշ մանր արմատներ։

144. *Կալ մը հողին վրայէն կրնայ ելնել տարգալախոտոյ* 300 *արմատներ, որք կշռեն* 3–3 ½ *կենդինար։ Կը գործածուին այս արմատները հում, քերելով և քացախի մէջ դնելով կամ առանց քացախի իբրև համեմ կերակրոյ։ Իսկ տերևները կը տրուին անասնոց ուտելու։*

ԳԼՈՒԽ ԺԶ

ԳՈՆԳԵՂ ԿԱՄ ՇՈՂԳԱՄ, ՇԱՂԳԱՄ. (*տճ.* Շալկամ. *գղ.* Rave, Navet. *իտ.* Rapa, Navone).

145. Նկարագիր. — *Է տեսակ մը վայրի բողկի, երկամեայ, բոլորաձև, երկայնաձև կամ իլաձև թանձր արմատով. տերևներն են մեծ և ըլթակաւոր, ծաղիկները մանր, դեղնագոյն և փնջաձև։ Արմատները կ'ուտուին եփելով. որոց երեսը կրնայ ըլլալ ճերմակ, կարմիր, մանուշակագոյն և դեղին. իսկ միսն է ճերմակ։*

Գոնգեղի կամ շողգամի կան զանազան տեսակներ։ Պարտիզի մէջ մշակածներն են կանխահաս, իսկ միւս տեսակները կը մշակուին արտերու մէջ։*

146. *Պարտիզի մէջ մշակուածներուն երևելիներն են,*

Ա. *Այն որոյ արմատն է փոքր, երկայնաձև, ճերմակ դեղնորակ. և միսն է փափուկ և անոյշ, որոյ տերևներն ալ կ'ուտուին* (Ձև 41)։ *Ասոր մէկ տեսակն է իլաձև, կարմրագոյն կամ վարդագոյն արմատով, որ է քաղցրահամ։*

Բ. *Այն որոյ արմատն է դեղին, մայրանը կարմիր, և ինքն բոլորաձև և տափարակ, միսը փափուկ և ախորժահամ* (Ձև 42). *տերևներն են չափաւոր մեծութեամբ և ծոցաւոր։*

Գ. *Հոլանդական շողգամն, որոյ տերևներն են չափաւոր մեծութեամբ, գեղեցիկ կանաչ, արմատը բոլորաձև, չափաւոր մեծութեամբ և քիչ մը տափարակ, ողորկ և դեղնագոյն, փափուկ և շաքարային։ Սա ընտիր տեսակներէն մէկն է։*

Դ. *Միլանու շողգամ, որոյ տերևներն են ամբողջ, քիչ և կարճ. արմատն է փոքրիկ և տափարակ, ողորկ և ճերմակ, և մայրանը մանուշակագոյն. միսը ճերմակ, ջրոտ և համեղ, և շատ վաղահաս։*

* *Ինչպէս գաղղիարենի մէջ իրարու հետ կը շփոթին* Rave *և* Navet *և նոյն կը համարուին, այսպէս և մեր լեզուին մէջ Գոնգեղ և Շողգամ։*

Ե. Մոնակոյի շողգամ, որոյ արմատն է բոլորաձև տափարակ և կարմիր, մայրանը մանուշակագոյն, միսը փափուկ և քաղցրահամ, և շատ վաղահաս:



Ձև 41. Շողգամ երկայնաձև և իլաձև.

147. Մշակութիւն. — Շողգամը կը սիրէ զով և թաց տեղ, հողը պիտի ըլլայ կակուղ և խոր փորուած. տաք

տեղ կը ծաղկի աշնան, և արմատները կ'ըլլան մանր և ոչ այնչափ սննդարար: Ծլելու համար կ'ուզէ 7 աստիճան տաքութեան, ծաղկելու համար 17, հասնելու համար 20:

Շողգամն աւելի յարմար է արտերու մէջ. և պարտէզներու մէջ պէտք է մշակել կանխահաս տեսակները:

Արտերու մէջ կը սերմանեն սովորաբար յուլիսի և

Ձև 42. Շողգամ դեղին բոլորաձև.

օգոստոսի մէջ, իսկ պարտէզի մէջ մարտի և ապրիլի. և պէտք է ցանել տողի վրայ, տողերն իրարմէ 15 հրմ. հեռի, գործածելով 30 գրամ սերմ առ մի կալ: Եւ երբ սերմանեմք յուլիսի և օգոստոսի մէջ, պէտք է ոռոգել, որպէս զի չորութենէ չվնասուին բոյսերը:

Երբ սերմերը ծլին և արձակեն հինգ տերև, պէտք է քրքրել հողը, և աւելորդ տունկերը հանել, և ամէն 15 կամ 20 օր նոյն գործը կրկնել, և հող տալ արմատներուն:

Օգոստոսի մէջ կրնամք հանել առաջին արմատներն որ ցանուած են մարտի մէջ, և վերջը հետ զհետէ հանել ըստ պիտոյից։

Կրնամք թողուլ ձմեռը բացօթեայ հողոյ մէջ կամ ծածկել վրան փախաթով։ Բայց ոմանք լաւ կը համարին հողէն հանել և դնել աւազով նկուղներու մէջ կարգ կարգ։

ԳԼՈՒԽ ԺԷ

ԿԱՐՈՍ. (*տճ.* *քէրէվիզ*. *գղ*. Céleri. *իտ*. Sedano).

148. Նկարագիր. — Է բոյս երկտարեւոր, որոյ արմատներն են ուղղորդ, նեարդային, մուգ կամ վարդագոյն դրսէն, և ներսէն ճերմակ։ Տերեւները փետրաձև, ծաղիկները ճերմակ, որ ըստ մեծի մասին կը բուսնին տերևոց անթին մէջ։ Կարոսը բոյս մի է՝ որ ամէն տեղ մշակուած է հին ժամանակէ ի վեր. և կը բուսնի նաև ինքնին դաշտերու մէջ։

Կարոսն երկու տեսակ է. մին Բուն կարոս ըսուածը. երկրորդն է կարոս գունգեղային ըսուածն, որոյ արմատը մայրանի մօտ բոլորաձև շողգամի ձև կ'առնու, և տերևները կը պառկին հողին վրայ։ Երկու տեսակին վրայ ալ խօսիմք առանձինն։

149. Բուն կարոս. — Է տունկ մը կարճարուն, և գետնէն կը բարձրանան վեր այլևայլ ծղօտներ, խազեալ դրսէն դէպ երկայնութիւն և ներսէն ակօսաձև, և ծայրերնին տերևազարդ (Ձև 43)։ Երկրորդ տարին տերևոց մէջ տեղէն կը բարձրանայ վեր նոր ծղօտ մը զօրաւոր, որոյ ծայրը կը բուսնին ճերմակ կամ դեղին կանաչ ծաղիկներ՝ հովանոցակերպ, ուսկից ելած սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը երեք չորս տարի. բայց լաւ է նախընթաց տարւոյն սերմը գործածել։

150. Բուն կարոսն ունի այլևայլ տեսակներ. ոմանց

ծղօտները կ'ըլլան թանձր և մսոտ, ոմանց տերևներն են անձեցուն. և կը տարբերին իրարմէ առաւել կամ նուազ բարձրութեամբ, և պէսպէս գունով ծաղկանց և տերևոց։

151. Մշակութիւն. — Բուն կարոսին սերմը կը ցանուի մարտին սերմնարանի մէջ՝ պարարտ հողոյ վրայ. երբ

Ձև 43. Կարոս սովորական.

ծլին սերմերն և երեք չորս մանր տերևներ ունենան, փոխադրել ի պարտէզ՝ կտրելով տերևներուն ծայրերը, և պարարտ ածուներու վրայ կարգաւ տնկել, իրարմէ 25 հրմ. հեռաւորութեամբ, և ջրել, և ոռոգումը կրկնել

յաճախ: Մարտի մէջ ցանած կարոսը կրնամք ունել սեպտեմբերի մէջ. և որպէս զի կարենամք ձմերան մէջ ալ ունել, պէտք է ցանել նաև ապրիլի մէջ. և ասկէ ելած արմատները փոխադրել ակօսաձև փորուած հողի մէջ քովէ քով, և ծածկել վրան հողով և աղբով, մինչև որ ծածկուի իր բարձրութեան երեք չորրորդ մասն, որով կը ճերմկին ծղօտները և կը փափկանան և կ'ըլլան հաճոյական: Եւ այսպէս կրնան մնալ ձմերան մէկ մասն հողին տակ, միայն տերևներուն ծայրերը դուրս մնալով,

Ձև 44. Կարոս գոնգեղային.

և ծածկելով վրան յարդէ կամ եղեգեայ փսիաթով: Հողտալը կրնամք այլևայլ անգամ ընել, միշտ հողը բարձրացնելով, և կապելով կարոսին տերևներն ի մի տրցակ:

Կարոսին կ'ուտուին թէ տերևները, թէ ծղօտները և թէ արմատը կեղևելով. և են համեմային, ախորժելի, և զօրացուցիչ ստամոքաց, և կը դիւրեն մարսողութիւնը:

152. Կարոս գոնգեղային. (գղ. Céleri-rave. իտ. Sedano-rapa). — Գոնգեղային կարոսն ալ կը ցանուի մարտի մէջ ի սերմնարանի, ուսկից պէտք է փոխադրել մեծնալէն ետքը մայիսի մէջ ի պարտէզ. հողը նախ լաւ մը պատրաստելով և պարարտացնելով, և տնկելէն ետքը ստէպ ջրել: Քաղօցը կրնայ սկսիլ սեպտեմբերի և հոկտեմբերի մէջ. բայց որովհետև այս ամիսներուն մէջ առատ է ամէն տեսակ խաւարտ, լաւ կը համարուի պահել ձմերան, ցանելով ապրիլի մէջ: Եւ դիւրաւ կը պահուի մինչև գարուն, ծածկելով արմատները վերնոյն պէս հողով, ակօսի մէջ: Կրնամք նաև նոյեմբերի մէջ հանել հողէն արմատներն և պահել նկուղի մէջ՝ ուրիշ ելընդաւոր արմատներուն պէս:

Գոնգեղային կարոսն ալ զանազան տեսակներ ունի. ոմանց ելունդը կ'ըլլայ մեծ և տարածեալ, և անոր տակէն մանր արմատներ արձակած (Ձև 44), ոմանց ալ ելունդը բոլորաձև երկայն, կանոնաւոր ձևով, և անոր տակէն տակռիճներ արձակած (Ձև 45): Այս երկրորդ տեսակն որ կ'ըսուի Պրագայի կարոս, շատ ազնիւ է:

Ձև 45. Կարոս Պրագայի.

153. Մշակութիւն. — Թէ բուն կարոսը և թէ գոնգեղային կարոսը կը սիրեն կակուղ, խոր, զով և պարարտ հող, աղբով կամ տարրաբանական պարարտութեամբ պատրաստած: Լաւ է երկիրն աշնան պատրաստել, և տունկերը գարնան փոխադրելէն առաջ տալ հողին վրայ մուր ծխահանի, որ կարոսին աճումն տալէն զատ՝ կը պահէ զինքը միջատներէ և հիւանդութիւններէ: Մոխիրն ալ շատ օգտակար կը համարուի: Կարոսը ցուրտ տեղ լաւ չյաջողիր:

154. Սերմն ունենալու համար պէտք է ընտրել աշնան աղէկ արմատները, և տնկել իրարմէ 50 հարիւրորդամետր հեռի դէպ ամէն կողմ. և ձմեռը ծածկել յարդով և խսիրով. և երբ ալ վախ չկայ սառուցի և եղեման, բանալ վրան և թողուլ որ ծաղկի. և սերմը հա-

սուննալէն ետքը, որ կ'ըլլայ օգոստոսի մէջ, կտրել և չորցնել. Ժողվելով աւելի մէջ տեղի ծաղկածներուն սերմը՝ որ կ'ըլլայ թխագոյն։

Երկու գլխաւոր տեսակ կարոսաց, այս ինքն բուն կարոսին և գոնգեղային կարոսին հարազատ սերմ ունենալու համար, պէտք է այս երկու տեսակներն իրարմէ հեռու տնկել, ապա թէ ոչ իրարու հետ կը զուգին, և ելած բոյսը կ'ըլլայ խառնածին։

Բաւական կը համարուի մի կամ երկու գրամ սերմ առ մի կալ. վասն զի իւրաքանչիւր գրամի մէջ կը գտնուի իբր 2000 սերմ։ Սերմն ուշ կը սկսի ծլիլ, կ'անցնէ 12–20 օր։ Սերմանելէն ետքը հողը միշտ թաց պահելու է՝ որպէս զի կարենան ծլիլ։

ԳԼՈՒԽ ԺԸ

ԼԱԽՈՒՐ ԿԱՄ ՆԵԽՈՒՐ. (տճ. Եապան քէրէվիզ. գղ. Ache. իտ. Appio).

155. Նկարագիր. — Բոյս խոտեղէն, գեղեցիկ կանաչ, նման է կարոսի Մակեդոնի (մաղտանոս), բայց

Ձև 46. Լախուր կամ Նեխուր.

քան զայն լայնատերև և թանձր. կը բուսնի ինքնին ճահճախուտ տեղեր և առուակներու քով (Ձև 46)։

Տնկելով պարտիզի մէջ կը կորսնցնէ իր լեղի համը, և կը գործածուի կերակրոյ, որ կը փարատէ միզարգելութիւնը և փքախտութիւնը։

Հին ժամանակ լախուրը խիստ համբաւաւոր տունկ մի էր Յունաց մէջ, և անով կը պսակէին Նիմէական

խաղերուն մէջ յաղթողները։ Կը չփոթի շատ անգամ կարոսին հետ*։

ԳԼՈՒԽ ԺԹ

ԿԱՂԱՄԲ. (տճ. Լահանա. գղ. Chou. իտ. Cavolo).

156. Նկարագիր. — Կաղամբը խիստ շատ տեսակ ունեցող խաւարտ մի է, հին ժամանակէ ի վեր ծանօթ։ Երբ բոյսն առնու իր կատարեալ աճումն, իր ծղօտին չորս կողմէն՝ որ կ'ըսուի կոճ, կոչրծ, Միջուկ կաղամբի, կ'արձակին մեծամեծ, լայն, թանձր և կնճռած տերևներ, և տակի կողմէն կ'երկըննայ արմատ մը իլաձև, ուղղորդ և մսոտ։ Ծաղիկներն են դեղին և ողկուզաձև. սերմերը մանր, սևորակ, ամփոփեալ պատճի մէջ, որոյ երկայնութիւնը կ'ըլլայ 6–10 հարիւրորդամետր (Ձև 47)։

157. Դասաւորութիւն. — Կաղամբի անբաւ տեսակներն, որք ամէնքն ալ առաջ եկած են վայրենի կաղամբէ, կրնամք վերածել ութ գլխաւոր դասի, այս ինքն.

Ա. Կաղամբ գլխանի. (գղ. Chou pommé, Chou cabu. իտ. Cavolo cappuccio). — Մեր սովորական կաղամբն է, որոյ գոգաձև ընդարձակ, և ողորկ տերևներն իրարու վրայ փաթթած են և կազմեն կլորաձև գլուխ մը ի գոյն կանաչորակ կամ կարմրորակ, և կը շրջապատեն տունկին կուրծը և մանր տերևները։ Ասոր ծաղիկներն են դեղին։

Գլխանի կաղամբը կրնայ բովանդակ տարին ծառայել մարդոյ կերակրոյ համար, եթէ հետ զհետէ սերմանեմք,

* Առ գաղղիացիս Ache անունն այլևայլ առմամբ կը գործածուի. ինչպէս

Ache d' eau է Persil.
Ache douce է Céleri.
Ache de montagne է Livêche.

և ընտրեմք եղանակին յարմար տեսակները։ Գլխանի կաղամբին մէկ տեսակն՝ որ կ'ըսուի Կաղամբ մեծագլուխ (գղ. Chou quintale. իտ. Cavolo quintale), այնչափ

Ձև 47. Կաղամբ. — 1. Ճիւղ ծաղկաբեր. — 2. Պատիճ փակ. — 3. Պատիճ բաց. — 4. Սերմ բոլորշի. — 5, 6. Հատուած սերմի.

մեծ է որ կշռէ մինչև 40 հազարագրամ (Ձև 48), և անկէ կը շինեն Գերմանիա թթուեցի կաղամբի (Choucroute).

Բ. Կաղամբ Միլանոյ (գղ. Chou de Milan. իտ. Ca-

volo di Milano, Cavolo verzotto, Verza). — Վերնոյն մէկ տեսակն է, միայն թէ ասոր տերեւներն որք են պայծառ կամ մթին կանաչ, շատ կնճռած են եւ կէտ

Ձև 48. Կաղամբ մեծագլուխ.

կէտ, եւ ծաղիկները ճերմակ (Ձև 49)։ Այս ալ ունի զանազան տեսակներ, վաղահաս կամ յամրահաս։

Ձև 49. Կաղամբ Միլանու.

Գ. Կաղամբ Բրուսելի (գղ. Chou de Bruxelles. իտ. Cavolo di Bruxelles). — Այս կաղամբը կը տարբերի ուրիշներէն անով, որ իր տարգալաձեւ տերեւներուն անթին վրայ ծղօտին երկայնութեամբ կ'ելնեն մանր գրնտաձեւ կաղամբներ՝ ընկուզաչափ, եւ անոնք են որ կ'ուտուին եւ են համոյական. իսկ գլխին տերեւներն են արձակ (Ձև 50)։

Դ. Կաղամբ կանաչ կամ անգլուխ. (տճ. Լաստառիա.

Ձև 50. Կաղամբ Բրուսելի.

գղ. Chou vert կամ non pommé. իտ. Cavolo a penna). — Այս դասուն տակ կ'իյնան այն ամէն կաղամբներն որ գլուխ չունին, այլ միայն լայնատարած տերեւներ։ Ասոնցմէ շատերն են ի զարդ կամ ի կերակուր

անասնոց, քիչերն են ի կերակուր մարդոյ։ Կը դիմանան սառուցի. կը սերմանին աշնան և կ'ուտուին ձմերան մէջ։ Ասոր մէկ տեսակը կ'ըսուի կաղամբ գանգրաձև (գղ. Chou frisé), տերևները գանգուր ըլլալուն համար (Ձև 51)։

Ե. Կաղամբ ծաղկաբեր (գղ. Chou fleur. իտ. Cavolo fiore). — Այս տեսակը շատ յարգի է, որոյ ծղօտին ծայրը կայ բոլորաձև, մսոտ և մեծ ծաղիկ, բաղկացեալ



Ձև 51. Կաղամբ գանգրաձև, մանուշակագոյն.

պտկանման, հատաձև և ճերմակ ծաղիկներէ, որք են պինդ և ախորժահամ. և կը հասնի ձմեռն (Ձև 52)։

Ծաղկաբեր կաղամբն՝ որ մեր լեզուով կ'ըսուի նաև Հոռոմ կաղամբ, ունի զանազան տեսակներ։ Նէապոլսոյ հսկայաձև ծաղկաբեր կաղամբը շատ երևելի է (Ձև 53), որոյ տերևներն են մութ կանաչ, ընդարձակ և ալէձև, ծաղկեայ գլուխն ճերմակ, շատ մեծ, պինդ, և կրնայ դիմանալ սառամանեաց։ Շուտով կ'եփի, և շատ փափուկ է։

Ձև 52. Կաղամբ ծաղկաբեր.

Զ. Կաղամբ աւռոնեան, որ և կ'ըսուի Բրոկոլի. (գղ. Chou brocoli. իտ. Cavolo broccolo, Broccoli). — Շատ կը նմանի ծաղկաբեր կաղամբի, և կը գործածուի ի նոյն պէտս։ Կը համարուի բրա-

կոլին սովորաբար երկտարեւոր. սերմանելով տարւոյն մէջ, կը բերէ իր պտուղը յաջորդ տարւոյն սկիզբ։ Իր տերևներն աւելի նեղ են և բազմաթիւ, ծաղկին ծղօտներն աւելի երկայն, որով և գետնէն աւելի բարձր կ'ըլլայ իր



Ձև 53. Ծաղկաբեր կաղամբ Նէապոլսոյ.

գլուխը, բայց ըստ ամենայնի նման ծաղկաբեր կաղամբին գլխոյն. և կ'ըլլայ ճերմակ կամ մանուշակագոյն, վաղահաս կամ յամրահաս, և է բնիկ Իտալիոյ։

Է. Կաղամբ գոնգեղային. (գղ. Chou rave. իտ. Cavolo rapa). — Այս կաղամբին ծղօտը հողին երեսէն վեր ուռեցք մը կ'ունենայ մանուշակագոյն (Ձև 54), և այդ ուռած մասն է որ կ'ուտուի, և համն է ընդ մէջ ծաղկաբեր կաղամբի և գոնգեղի, որ ոմանց հաճոյական է, և կը հասնի ամառան մէջ:

Ասոր մէկ տեսակը կայ որ առատ է յԱնգղիա. և կը գործածուի անասնոց տալու, որոյ ուռեցքը տափարակ է և ճերմակ:

Ձև 54. Կաղամբ գոնգեղային.



Ձև 55. Կաղամբ շաղգամային.

Ը. Կաղամբ շաղգամային. (գղ. Chou navet. իտ. Cavolo navone). — Այս կաղամբը կը տարբերի գոնգեղային կաղամբէն անով, որ իր ծղօտը փոխանակ ուռելու հողէն վեր, կ'ուռի հողին տակ (Ձև 55), որոյ մեծութիւնը կրնայ հաւասարիլ մարդոյս գլխոյն, և երբեմն քան զայն աւելի մեծ կ'ըլլայ. գոյնն է ճերմակ: Ասոր համը գոնգեղային կաղամբին նման է: Կան ուրիշ տեսակներ ալ վայրենի և աւելի քան զայս ուռած, որ կը գործածուին անասնոց տալու:

158. Մշակութիւն. — Կաղամբը կը սիրէ կակուղ, զով և խոր փորուած հող, գէթ 30 հարիւրորդամետր խորութեամբ, և պարարտացած աղբով: Պարտէզներու մէջ շատ անգամ կարոսը քաղելէն ետքը կը տնկեն օգոստոսի մէջ կաղամբ Բրուսելի, կամ փետրուարի մէջ վաղահաս կաղամբներ, և անոնցմէ առաջ ծաղկաբեր կաղամբ:

Կաղամբի անգլուխ տեսակները կը տնկուին նաև արտերու մէջ, ցորենը կտրելէն և երկիրը աղբով պարարտացնելէն ետքը, փոխադրելով սերմնարանէն օգոստոսի մէջ մանր տունկերը: Շատ անգամ լազուտի հետ կը տնկեն նաև արտերու մէջ կանաչ կաղամբ:

159. Կը բաւէ 500 գրամ սերմ մի հարիւրակալ երկրի: Եւ սերմը պիտի ըլլայ առողջ, համագոյն, սև և փայլուն: Այն սերմն որ թուխ է և ոչ կատարեալ սև, նշան է թէ հասունցած չէ, պէտք է մէկդի թողուլ. իսկ այն որ դեղնագոյն է՝ կորուսած է բեղնաւորիչ կարողութիւնը:

160. Պէտք է միշտ սերմը ցանել առանձինն ածուներու մէջ, և յետոյ ըստ ժամանակին փոխադրել ուրիշ տեղ: Ածուները պիտի ըլլան շուք տեղ, լաւ պատրաստած և պարարտացած, և սերմը ցանելէն ետքը դնել վրան բարակ խաւ մը հին բուսահողոյ: Կաղամբի սերմնարանին երեսն ամենևին չչորնայ պիտի, և եթէ հարկ ըլլայ՝ պէտք է օրն երկու երեք անգամ ջրել, մինչև որ ծլի և փոխադրութեան ժամանակը հասնի: Սերմնացանութիւնն եթէ լաւ յաջողի, կրնայ մի մետր քառակուսի հողոյ վրայ բուսնիլ 500-800 տունկ: Վաղահաս պտուղ ունենալու համար պէտք է սերմանել յունուարի մէջ տաք հողոյ վրայ և ծածքի տակ:

161. Պարարտութիւն. — Կաղամբին տարրաբանական բաղկացութեան մէջ տիրող տարրն է կալի, և անկէ վերջ կու գան հաւասար չափով բորակածին և կիր: Փորձը ցուցած է որ կաղամբը կը սիրէ առատ աղբ թարմ, իբր 50 տակառաչափ առ մի հարիւրակալ երկիր. և եթէ չկարենամք տալ այդչափ աղբ, կրնամք ըստ մասին լեցնել անոր տեղը տարրաբանական հեղուկ պարարտութեամբ, բոյսերը փոխատնկելու ժամանակ:

Մասնաւոր կերպով ծաղկաբեր և աւսոնեան կաղամբներն օգուտ կը քաղեն հեղուկ պարարտութիւններէ, որք են բորակատ նատրոնի կամ ծծըմբատ աւշակի: Բայց պէտք չէ տալ պարարտութիւն կաղամբի, երբ սկսի գլուխ կապել, վասն զի այնչափ համեղ չըլլար և շուտով կ'աւրուի:

Գլխանի կաղամբներուն համար լաւ է գործածել վերլուսածնատ կրոյ, որովհետև շատ բորակածինը թոյլ կ'ընէ կաղամբին գլուխը, և տերևներն այնչափ իրարու կից չեն ըլլար:

Կրնամք գործածել հետագայ արուեստական պարարտութիւնը, դնելով հաւասար չափով վերլուսածնատ կրոյ և բորակատ նատրոնի 18 %, կամ վերլուսածնատ, ծծըմբատ աւշակի և քլոռուկ կալւոյ իրարու հետ խառն հաւասար չափով: Կը տրուի առ մի հարիւրակալ երկիր 500–700 հգ. գրամ:

162. Ժամանակ սերմանելոյ. — Կաղամբի տեսակներուն համեմատ կը փոփոխի սերմանելոյ ժամանակը: Գլխանի կաղամբն և Միլանու կաղամբն որք են վաղահաս, կրնան ցանուիլ յունուարի մէջ տաք հողոյ վրայ, և մարտին փոխադրել տունկերը:

Սովորաբար կաղամբի սերմանացանութիւնը կ'ըլլայ փետրուարի վերջ և մարտի սկիզբ, և ապրիլի մէջ կը փոխադրեն տունկերը: Կը սերմանեն նաև սեպտեմբերի մէջ, գարնան ուտելու համար:

Կանաչ կամ անգլուխ ըսուած կաղամբն և աւսոնեան կաղամբը կը սերմանեն յունիսի մէջ, և օգոստոսի մէջ կը փոխադրեն:

Ծաղկաբեր կաղամբներուն մէջ այն որ աշնանային է, պէտք է սերմանել մայիսի վերջ կամ յունիսի սկիզբ, և երկու ամսէն փոխադրել, և քաղել նոյեմբերի և դեկտեմբերի մէջ: Իսկ այն որ գարնանային է, սերմանել յունիսի մէջ և փոխադրել օգոստոսի վերջ:

Գոնգեղային և շաղգամային կաղամբները սերմանել գարնանային ծաղկաբեր կաղամբին պէս:

Բրուսելի կաղամբը կը սերմանի ապրիլի, և կը քաղուի սեպտեմբերի և հոկտեմբերի մէջ: Բայց մեծ սերմանացանութիւնը կ'ըլլայ յունիսի սկիզբ, և կը փոխադրեն տունկերը օգոստոսի մէջ, և քաղումը կը տևէ ամբողջ ձմեռը:

163. Փոխատնկութիւն. — Կաղամբներու փոխատընկութիւնը շատ ուշադրութեան կարօտ է: Այն ժամանակ պէտք է ընել երբ ծլած տունկն իր չորրորդ տերևը կը պարզէ: Շատ անգամ օդոյ անհաստատութեան պատճառաւ չկարենալով տաք հողէն փոխադրել տունկերը դուրս տեղ, պէտք է առժամանակեայ փոխատընկութիւն մի ընել լաւ պատրաստած արեգդէմ և հովէ պատսպարեալ ածուի մը մէջ, տնկելով իրարմէ 8 հարիւրորդամետր հեռաւորութեամբ դէպ ամէն կողմ, և վրան ծածկել եղեգնեայ փսիաթով, որպէս զի ձիւնը վրանին չգայ:

164. Տունկերը սերմնարանէն հանելէն ետքը, պէտք է երկար ժամանակ օդոյ մէջ թողուլ, ուրիշ տեղ փոխադրելէն առաջ. և տնկելու համար գայլիկոնով ծակել հողը, և տունկին արմատը շիտակ մէջը խոթել. և նայիլ որ չծռի արմատն, և ճմլել հողն արմատին չորս կողմ որ պարապ տեղ չմնայ, վասն զի կրնայ բորբոս գոյանալ. ի վախճանի, ջրախառն աղբաջրով թրջել, թէ որ փոխատնկութիւնն անձրևէ ետքը չըլլայ:

Տնկոց հեռաւորութիւնն ըստ զանազան տեսակաց կ'ըլլայ: Կանխահասները կրնամք տնկել իրարմէ 40 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, իսկ Բրուսելի կաղամբները 1 մետր հեռաւորութեամբ:

165. Կարեւոր խնամք. — Կաղամբի տունկերը փոխադրելէն ետքը պէտք է ստէպ ջրել, մինչև որ տունկերն աճին և մեծնան: Մեծնալու ժամանակ երկու անգամ քրքրել հողն, և մի անգամ հող տալ արմատներուն: Այս վերջին գործն ընելէն առաջ լաւ է տալ աղբաջուր, և եթէ ուզեմք պարարտացնել հողը նատրոնի բորակատով կամ ծծըմբատով աւշակի, լաւ է տալ երկրորդ անգամ հողը քրքրելէն առաջ, լուծելով այս աղերէն քիչ չափով ջրոյ մէջ և այնպէս ջրել:

166. Բաղոց. — Կաղամբներն ամբողջ տարին կը գործածուին ուտելու, միայն թէ պարտիզպանը գիտնայ

ըստ եղանակին տնկել յաջորդաբար պատշաճ տեսակն և քաղել: Հողէն արմատով հանելէն ետքը, պէտք է կտրել արմատը մօտ տակի տերևներուն: Միլանու կաղամբն և գլխանի կաղամբը սառուցէն առաջ պէտք է քաղել: Իսկ աւստնեան և ծաղկաբեր կաղամբները ցուրտ կ'ուզեն որ հասուննան, ուստի և կը քաղուին ձմերան մէջ, այսպէս նաև Բրուսելի կաղամբը:

Կաղամբը կրնայ պահուիլ այս ինչ ժամանակ նկուղներու մէջ, կամ բացօթեայ կոյտ կոյտ դրած:

167. Գլխանի կաղամբը կրնայ տալ 60 հազարէն մինչև 150 հազար հազարագրամ առ մի հարիւրակալ երկիր. Միլանու կաղամբը 80 հազարէն մինչև 120 հազար հազարագրամ:

Կաղամբներուն միջին քաղոց կը համարուի 70էն մինչև 90 հազար հազարագրամ:

Գոնգեղային կաղամբը կու տայ 45էն մինչև 75 հազար հազարագրամ, շաղգամայինը 40էն մինչև 50 հազար հազարագրամ:

Մի հարիւրալիտր սերմն կաղամբի կը կշռէ 62էն ց70 հազարագրամ:

168. Սերմն կաղամբի. — Կաղամբի սերմն առնելու համար, պէտք է ընտիր և զօրաւոր կաղամբներն իր տեղը թողուլ քաղոց ընելու ժամանակ, կամ փոխադրել մասնաւոր տեղ, զգուշանալով որ զանազան տեսակներն իրարու մօտ չգտնուին, որպէս զի խառնածնութիւն չպատահի, որովհետև ծաղիկները դեռ բեղնաւորած չեն: Այս վախէն ազատ մնալու համար, լաւ կ'ըլլայ զանազան տեսակները այլևայլ ժամանակներու մէջ սերմանել, որպէս զի այլևայլ ժամանակ ծաղկին:

Սերմը ժողվելու համար պէտք է քաղել միայն ընտիր պատիճները, այս ինքն զանոնք որ կանոնաւոր աճմամբ հասունցած են, և թողուլ ծայրի պատիճները: Սերմը կը հասուննայ յուլիսի վերջ կամ օգոստոսի սկիզբ:

169. Հիւանդութիւնք եւ որդունք կաղամբի. — Կաղամբներն հազիւ թէ կը բուսնին՝ ենթակայ կ'ըլլան ճողային ոջլոյ, և չափաւոր մեծնալէն վերջ՝ կանաչ թըրթուրներու, որ կ'ըսուին կաղամբի որդեր, և կը վնասեն կաղամբներու ուտելով իրենց տերևները:

Հիւանդութեանց մէջ գլխաւորներն են Քաղցկեղ (Cancrena, Moria), որ յառաջ գայ սունկէ մը որ կը գոյացնէ մանր թխագոյն պալարներ ծղօտին և տերևներուն վրայ:

Պիսակ (Peronospora), որ նոյնպէս պալարներ կը գոյացնէ տերևներուն և ծաղիկներուն վրայ:

Այտոյց (Ernia di cavoli), որք են զանազան մեծութեամբ ուռոյցներ, որ կ'ելնեն արմատին և կոճղին վրայ, և սովորաբար կը պատահի այն կաղամբներուն որոց հողը շատ պարարտացած է աղբով, և յառաջ գայ սունկէ մը:

Այս հիւանդութիւններէ ազատ ըլլալու համար, պէտք է

Ա. Չափաւոր պարարտացնել հողը աղբով, և պակասը լեցնել տարրաբանական պարարտութեամբ:

Բ. Փոխատնկութեան ժամանակ այն տունկերն որ պալարներ ունին՝ նետել:

Գ. Հիւանդոտ տունկերը հանել և այրել քանի որ սերմ չեն տուած:

Դ. Քանի մը տարի նոյն տեղ չտնկել կաղամբ:

ԳԼՈՒԽ Ի

ԿՈՆՁԵՂ ԿԱՄ ԴՈՒՆ. (*տճ.* *Ակտիլլեզիզ*, *Թօփալագ.* *գղ.* Souchet comestible. *իտ.* Dolcichino. *լտ.* Ciperus edulis).

170. Նկարագիր. — *Կոնձեղ կամ Դուն է բոյս շատակեաց, որոյ գետնասող արմատներն ունին ալերային, մոտ ելունդներ, ձուաձև կամ կլորաձև, կաղնաչափ մեծութեամբ և շրջապատած գօտիներով (Ձև 56): Արմատէն վեր կը բարձրանան սուր և նեղ տերևներ:*

Ձև 56. Կոնձեղ կամ Դուն. — Ելունդ և Բոյս.

Կոնձեղի արմատներուն ելունդները կամ Դունոյ հատիկներն են մոտ և անոյշ, և կ'ուտուին թէ հում և թէ եփեալ: Այս տունկը առատ է ի Հնդկաստան և յԵգիպտոս, բայց կը բուսնի նաև Եւրոպայի հարաւային կողմերը:

171. Մշակութիւն. — *Կոնձեղն ամէն հողի մէջ կը բուսնի, միայն թէ խիստ գէշ չըլլայ. կը սիրէ աւելի կակուղ հող և չափաւորապէս աղբեալ: Պէտք է բահով ակօսներ բանալ ապրիլի վերջ, իրարմէ 30 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և այս ակօսներուն մէջ խումբ խումբ դնել երեք չորս հատիկ դունոյ քովէ քով, և այս խումբերն իրարմէ 12 հարիւրորդամետր հեռաւորութեամբ և 3 հարիւրորդամետր խորութեամբ: Եւ ծլիլը դիւրացնելու համար դնել այս հատիկները ցանելէն առաջ ջրոյ մէջ, օր մը կամ երկու օր:*

Սերմանելէն ետքը պէտք է ջրել, որպէս զի հողը զով մնայ, և բուսնելէն վերջ ջրել միայն սաստիկ չորութեան ժամանակ: Հարկ է երբեմն քրքրել հողը, և մաքրել վնասակար խոտերէ:

172. Քաղոց. — *Քաղոցը կ'ըլլայ երբ սկսին տերևները դեղիննալ, այս ինքն սեպտեմբերի վերջ: Պէտք է ընել երբ օդը և գետինը չոր ըլլայ: Դունոյ հատիկները հողէն հանելէն ետքը դնել արևու մէջ որ չորնան, և կրնան երկար ժամանակ պահուիլ, թէ որ իրարու վրայ շատ դիզուած չմնան:*

ԳԼՈՒԽ ԻԱ

ԳԵՏՆԻ ՊՏՈՒՂ. (*տճ.* *Պէյպուշ*, *Խալալ.* *գղ.* Terre-noix. *իտ.* Bulbo castano).

173. Նկարագիր. — *Գետնի պտուղն, որ արաբական յորջորջմամբ կ'ըսուի նաև Աքաար, բոյս մի է բնիկ Ասիոյ, որ Եւրոպայի մէջ քիչ մշակուած է: Արմատներն ունին կլոր ելունդներ ընկուզաչափ, սև կամ գորշ դըրսէն և ճերմակ ներսէն. և կ'ուտուին նաև հում. բայց աւելի աղէկ է խաշածը կամ մոխրոյ տակ եփածը, և շագանակի համ ունի:*

Տունկին բարձրութիւնն է 30–40 հարիւրորդամետր, ցօղունն է խաղեալ, բազմաճիւղ, տերևներն համադիր և փետրաձև, ծաղիկները ճերմակ, որոց բաժակն է ամբողջ. սերմերն են համեմային, և ունին հոտ և համ վայրի կանգարի սերմանց: Կը սիրէ այս տունկը կաւեղէն և բարձր հող:

ԳԼՈՒԽ ԻԲ

ԳԵՏՆԻ ԿԱՂԻՆ. (*գղ.* Gland de terre. *իտ.* Ghianda di terra. *լտ.* Latyrus tuberosus).

174. Նկարագիր. — *Գետնի կաղինն է տեսակ մը բանջարեղէն, որոյ արմատներն ունին ուռեցներ կաղնաչափ, ճերմակ և շաքարային մսով, և կ'ուտուին, և ունին համ շագանակի:*

ԳԼՈՒԽ ԻԳ

ԴԿՈՒՂ ԵԼՐՆԴԱՅԻՆ. (*գղ.* Dolique bulbeux. *իտ.* Dolico bulboso).

175. Նկարագիր. — *Դկուղն ելրնդային է տեսակ մը բանջարեղէն, բնիկ Ճենաստանի, Ճապոնիոյ և Փիլիպպեան կղզիներուն, որոյ արմատներն ունին կլոր և շաղգամաձև ելունդներ, որք են ախորժահամ, շաքարային և փափուկ, և կրնան ուտուիլ հում և եփած:*

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԽԱՒԱՐՏՔ ՈՐՈՑ ԿՈՃՂԷՋՆԵՐԸ ԿԱՄ ԾՂՕՏՆԵՐԸ Կ'ՈՒՏՈՒԻՆ

ԳԼՈՒԽ Ա

ԽՍՏՈՐ ԿԱՄ ՍԽՏՈՐ. (*տճ.* *Սարմուսագ.* *գղ.* Ail. *իտ.* Aglio. *լտ.* Allium sativum).

176. Նկարագիր. — *Խստորն է բնիկ Ասիոյ բարեխառն կողմանց, և հին ժամանակաց հետէ մշակեալ: Եւ է բոյս խոտեղէն կոճղիզաւոր արմատով, բաժանեալ պճեղ պճեղ, որոյ կոճղէզներն են խառն ի խառն, ճերմակ կամ կարմիր, պատեալ համագոյն մաշկով, և ունին սաստիկ հոտ և համ: Տերևներն են սովորական խստորին՝ երկայնաձև, տափարակ և սրածայր, և ուրիշ տեսակներուն՝ փողաձև կամ գլանաձև (Զև 57), ծաղիկներն կարմրագոյն և հովանոցակերպ ի ծայր ծղօտին:*

177. *Խստորին տեսակները շատ են. ոմանք կը գործածուին իբրև խաւարտ ուտելու համար, և ոմանք առ ի զարդ իրենց ծաղկանց համար:*

Ուտելու խստորը կրնամք բաժնել երեք տեսակ իրենց գունոյն համեմատ, որ կ'ըլլայ ճերմակ, վարդագոյն և կարմիր: Ճերմակը սովորական խստորն է, ամենուն ծանօթ: Վարդագոյնն է վաղահաս, և կարմրագոյնն ունի իր ծղօտին վերին ծայրը խումբ մը կոճղիզակներու, որ կրնան գործածուիլ սերմի տեղ: Այս երկու տեսակներն ալ կը գործածուին սովորական խստորի պէս:

կարմիր տեսակն առատապէս կը մշակուի Լիգուրիոյ մէջ, և անով մեծ առուտուր կ'ընեն Գաղղիոյ հետ։ Եւ այս կարմիր տեսակը մասնաւոր անուամբ կ'ըսուի խըռ-տոր ճռոմեական կամ սպանիական։

178. Մշակութիւն. — Խստորը կը սիրէ կակուղ, չոր և աւազուտ հող, բայց պարարտ և խոր փորուած։ Կը բուսնի բարեխառն կլիմայի տակ, և ծովեզրներու մօտ։ Ջսիրեր դալար աղբ, այլ փտեալ աւե-լուք, զոր կը սփռեն հողին երեսն երբ սկսի ծլիլ։

Խստորը պէտք է տնկել բացօթեայ արտերու մէջ քան թէ պարտիզի մէջ։ Պարտիզի մէջ առ առաւելն պէտք է տնկել քանի մը ածու, և կամ հազարի հետ, և կամ իբրև ածուներու եզերք։

Կը բազմանայ խստորը երկու կեր-պով, այս ինքն սերմով կամ պճեղները տնկելով։ Երկրորդը լաւագոյն է, վասն զի սերմով հազիւ երկրորդ տարին կըր-նամք ունենալ կոճղէզները։

Թէ որ ուզեմք ջրել, պէտք է հողին վրայ շալակներ ընել, և խստորը տնկել շալակին բարձր տեղը, որպէս զի ջուրը ծծելով հասնի ակօսներէն։

179. Պարտէզներու մէջ կը տնկուի նոյեմբերի և մարտի, արտերու մէջ՝ մարտի։ Պէտք է գայլիկոնով ծակ բա-նալ հողին մէջ 6–8 հարիւրորդա-մետր խորութեամբ և իւրաքանչիւր ծակին մէջ դնել մի պճեղ կամ կոճղի-զակ, գլուխը դէպ ի վեր, և ծակերն իրարմէ հեռի 20–25 հարիւրորդամետր դէպ ամէն կողմ։

Ձև 57. Խստոր կամ Սխտոր.

Խստորը քիչ խնամք կ'ուզէ բուս-նելէն ետքը. մանաւանդ թէ բուսոց մէջ ամենէն քիչ խնամք ուզողներէն մէկն է։ Եթէ հարկը պահանջէ, պէտք է քրքրել հողը թեթև կերպով, և ջրել ի յետին հարկաւորութեան, բայց քիչ։

180. Քաղոց. — Յունիսին սկիզբը պէտք է խստորի տունկին ծղօտը կոտրել մայրանին մօտ, որպէս զի մեծ-նայ կոճղէզն. և նոյն ամսոյն վերջ քաղել, խլելով հողին մէջէն և դնել արևու մէջ որ չորնայ. և յետոյ տրցակ տրցակ կապելով կախել չոր սենեկի մը առաստաղէն։

Մի հարիւրակալ գետնոյ վրայ կրնայ բուսնիլ 10,000 խստոր, և 100 խստոր կը կշռէ 3 հազարագրամ։

Կը գործածուի խստորն իբրև համեմ մսի և շատ կե-րակրոց, հում կամ եփեալ։ Գեղացիները հացի հետ հում կ'ուտեն խստորը։ Բայց աւելի զօրաւոր ստամո-քաց յարմար է քան թէ տկար և ջղոտ անձանց, և մարդոյս բերանը կը հոտեցնէ։ Խստորը կը համարուի դեղ փորի ճճիներուն։

ԳԼՈՒԽ Բ

ՍՈԽ. (տճ. Սօղան. գղ. Oignon. իտ. Cipolla). լտ. Allium cepa).

181. Նկարագիր. — Սոխը խստորին ցեղէն է, և սով կը տարբերի որ իր կոճղէզը չունի պճեղներ կամ կոճղիզակներ, և է խաւ ի խաւ, վրան ծածկեալ թա-ղանթեայ չոր մաշկերէ, ի գոյն կարմիր, դեղին կամ ճերմակ (Ձև 58, 59)։

Ծղօտն է զատարկ, և վարի կողմն իլաձև ուռուցիկ։ Տերևները կոճղիզէն դէպ ի վեր կը բարձրանան, և են փողաձև ծղօտին պէս։ Ծաղիկներն են մանր, կանաչո-րակ և խմբեալ հովանոցակերպ, և կը բուսնին ծղօտին ծայր։

182. Տեսակք սոխի. — Կրնամք սոխի տեսակները բաժնել երկու գլխաւոր դաս, Ամարային և Ձմերային։

Առաջին դասուն սոխերն ըստ մեծի մասին են ճեր-մակ, և կը ցանուին սեպտեմբերի մէջ, և փետրուարի

կամ մարտի կը փոխատնկին: Ձմերայինները կը սերմանին յունուարի և կը փոխատնկին մայիսի մէջ. և սովորաբար ձմերային սոխերն արտերու մէջ կը տնկուին. իսկ պարտէզներու մէջ ամարայիններն և մանր սոխերը: Ձմերայինները սովորաբար դեղին կամ կարմիր կ'ըլլան:

Ձև 58. Սոխ ճերմակ.

Դնեմք հոս քանի մը տեսակներն իրենց տեղւոյն անուամբ:

Սոխ Հոլանդական. Է կլոր, ճերմակ, պինդ և վաղահաս. կը մշակուի ձմերան համար և կրնայ պահուիլ երկար ատեն:

Ձև 59. Սոխ կարմիր.

Սոխ Բարլէտտայի. Է ճերմակ, վաղահաս, փափուկ և անոյշ:

Սոխ Կամբրէի. Է մեծ սոխ, իբր 8 հարիւրորդամետր տրամագծով և 4 հարիւրորդամետր թանձրութեամբ. դեղին կեղեւանքով, ձմերային և բարեբեր, և շատ համով:

Սոխ Մադերայի. Է սոխ հսկայաձև իբր 15 հարիւրորդամետր տրամագծով և 5 հարիւրորդամետր թանձրութեամբ: Կեղեւանքն է կարմիր, միսը վարդագոյն, փափուկ և անոյշ, և է ամարային: Ասոր մէկ տեսակն ալ կայ նոյնպէս մեծ՝ բայց կլորաձև, որ կրնայ ամարան մէջ ուտուիլ հում, միսը փափուկ և անոյշ (Ձև 60):



Ձև 60. Սոխ հսկայաձև.

Սոխ Բասսանոյի. Որոյ կոճղէղներն կարմիր են, ձևով անկանոն, բայց շատ փափուկ և համով, և կրնան պահուիլ:

Սոխ Եգիպտոսի. Է բոյս շատակեաց, և կ'արձակէ կոճղիղէն 20–30 ծղօտներ, որք են կակուղ և քաղցրահամ, և կ'ուտուին դալար սոխի պէս: Պէտք է տնկել աշնան, և առաջին տարւոյն մէջ կու տայ մի ծղօտ,

որոյ ծայրը կը բուսնին երկու կարգ կոճղիգակներ՝ որ կը գործածուին տունկը բազմացնելու։ Այս կոճղիգակներն կ'ուզեն լաւ մշակուած և պարարտ երկիր, և կը տնկուին ակօսներու մէջ իրարմէ 45 հարիւրորդամետր հեռաւորութեամբ դէպ ամէն կողմ։

Կոճղիգակներն ալ կ'ուտուին, քացախի մէջ դնելով։ Սոխատան մը կրնայ երկու երեք տարի տևել։

Կը պատահի երբեմն որ կոճղիգակ մը իր կատարեալ աճումն առնելէն ետքը ինքն ալ կ'արձակէ ծղօտ մը՝ ծայրն ուրիշ կոճղիգակներով։

183. Մշակութիւն. — Սոխն ամէն տեղ կը բուսնի բարեխառն գօտւոյ տակ, և կը սիրէ առաւելապէս կակուղ, զով և աւազուտ երկիր։ Պինդ հողի մէջ կոճղէգները քիչ կը մեծնան։ Չսիրեր դալար աղբ, ուստի նախընթաց տարին աշնան պէտք է հողը աղբել։ Եւ եթէ գարնան սերմանելոյ ժամանակ հարկ ըլլայ երկիրը պարարտացնել, պէտք է գործածել փտեալ բուսահող։

Տրրաբանական պարարտութեանց մէջ յարմարագոյն են ծծըմբատ աւշակի և բորակատ նատրոնի, զոր կըրնամք տալ հողը քրքրելու ժամանակ։ Հեղուկ պարարտութիւններ, ինչպէս աղբաջուր կամ մարդկային աղբ, պատշաճ չեն սոխի, մանաւանդ այն սոխի զոր կ'ուզեմք պահել։

Երկիրը պատրաստելու է աշնան, փորելով խոր իբր 30 հարիւրորդամետր, և գարնան սերմանելէն կամ տունկերը փոխադրելէն տասն կամ տասնևհինգ օր առաջ կրկին փորել բահով, դնելով հողը շալակաձև և երկու կողմ ակօսներ ձևացնելով, որք իրարմէ հեռի պիտի ըլլան 40–50 հարիւրորդամետր։

184. Սոխը կրնամք սերմանել ուղղակի պարտիզին մէջ, և կամ սերմանել նախ սերմնարանի մէջ և յետոյ ծլած տունկերը փոխադրել։ Առաջին կերպով չեմք կըրնար մեծ սոխեր ունենալ։ Լաւ է միշտ սերմնարանի մէջ ցանել, և տունկերը հետ զհետէ փոխադրել։ Եւ այս փոխադրութիւնը կրնամք ընել յունուարէն մինչև մարտ, ըստ զանազան տեսակաց սոխոյ։

Սերմը ցանելէն ետքը պէտք է վրան ծածկել 2 կամ 3 հարիւրորդամետր թանձրութեամբ բուսահողով, և

ցուրտէն պատսպարելու համար գոցել եղեգնեայ փսիաթով։ Տասնևհինգ կամ քսան օրէն ետքը կը սկսին ծլիլ, և տունկերն երբ 10–12 հարիւրորդամետր բարձրանան, փոխադրել և տնկել պարտիզի մէջ, պատրաստած շալակներուն գլուխը, կարգաւ տողի վրայ, իրարմէ 10–15 հարիւրորդամետր հեռաւորութեամբ։

Այն սոխերն որ ամարան և աշնան ժամանակ կ'ուտուին, կը սերմանին նախընթաց տարւոյն օգոստոսի, սեպտեմբերի և հոկտեմբերի մէջ, և կը փոխադրին հոկտեմբերի և նոյեմբերի մէջ։

185. Սոխը տնկելէն ետքը պէտք է հողը ստէպ քըրքրել, վնասակար խոտերէ մաքուր պահելու համար։ Այն սոխերն որ մարտի կը փոխադրին, պէտք է ջրել, և մեծնալէն ետքն ոռոգել չափով։ Երբ սոխերուն տունկը առնու իր կատարեալ աճումը, դեռ տերևները չդեղընցած՝ լաւ է կոտրել սոխերուն ծղօտներն, որպէս զի կոճղէգներն աւելի մեծնան։

186. Քաղոց. — Երբ տունկին տերևները սկսին չորնալ, որ կը պատահի օգոստոսի մէջ, պէտք է սոխերը քաղել պայծառ և չոր օդով, և թողուլ տարածեալ դաշտի վրայ արևու մէջ քանի մը ժամ որ չորնան։ Յետոյ տանել ծածքի տակ կամ ուրիշ կամարակապ տեղ, ուր համարձակ օդ բանի, և դիզել իրարու վրայ, որչափ կարելի է քիչ բարձրութեամբ, և թողուլ հոն 10–15 օր։ Այսչափ միջոցի մէջ բաւականապէս կը չորնան սոխերն, և յայնժամ պէտք է ընտրել մանր սոխերը մեծերէն և վիրաւորեալներէն։ Եւ այն սոխերն որ պիտի պահուին, դնել այն վիճակի մէջ որ չկարենան ծլիլ. և այս կ'ըլլայ, երկար ատեն չորցնելով արևու մէջ, և յետոյ տըրցակ տրցակ կապելով կախել չոր և հովահարեալ տեղ, որ ազատ ըլլայ սառուցէ։ Կրնամք նաև խոհանոցի մէջ կախել։

Որպէս զի սոխերը չծլին, ոմանք խորհուրդ կու տան եռացեալ ջրոյ մէջ դնել, և թողուլ մինչև որ ջուրը պաղի, և յետոյ հանել և տարածել չոր և հովահար տեղ։

Կրնամք ունենալ 10 կամ 15 հազար հազարագրամ սոխ առ մի հարիւրակալ երկիր, և 100 սոխ կրնայ կըշռել իբր 15–20 հազարագրամ։

187. Սոխ ի քացախի. — Սոխը քացախի մէջ պահելու և թթուաշ ուտելու համար, պէտք է ընտրել մանր, ճերմակ և անսրատ սոխերը, դնել քացախի մէջ աղով, պղպեղով և ուրիշ համեմներով խառն։ Եւ որպէս զի չապականին, պէտք է

Ա. Ուշ դնել որ քացախը շատ զօրաւոր ըլլայ, վասն զի սոխի մէջ կը գտնուի ջուր 83 առ 100, որ կը տըկարցնէ քացախին ոյժը։ Եւ եթէ քացախը տկար ըլլայ, սոխերը շուտով կ'ապականին, ծածկուելով բորբոսով։

Բ. Գործածել ապակիէ ամաններ, բերաննին լաւ գոցած։ Աղէկ կ'ըլլայ քացախն ամաններուն մէջ դնելէն առաջ եռացնել, մզել, որպէս զի զուտ և պայծառ ըլլայ։

188. Հաւաքումն սերման. — Սոխին սերմը առնելու համար, պէտք է ընտրել լաւ և բարեձև կոճղէզներ, սեպհական իւրաքանչիւր տեսակին։ Եւ տնկել փետրուարի կամ մարտի մէջ պատրաստած հողոյ վրայ, իրարմէ 25 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, մէկ գծի վրայ, այնպէս որ սոխին մայրանը հողէն դուրս մնայ։ Եւ երբ սկսին ծաղկաբեր ծղօտները բարձրանալ, քովերնին խեչակներ դնել, որպէս զի հովէ չկոտրին։

Սոխին բոյսը ծաղկելէն ետքը կու տայ եռանկիւնի պատեաններ, որոց մէջի հատիկներն երբ սկսին սևնալ, պէտք է քաղել. շատ չորնալով կրնան հատիկները գետին թափիլ։

Սերմը պատշաճ հասունութիւնը ստանալուն պէս, պէտք է ծղօտները կտրել սերմով մէկտեղ, բերել չոր տեղ մը որ կատարեալ չորնան, և յետոյ ծեծելով, և ելած սերմը ժողվելով և մաքրելով՝ պահել, և ժամանակին սերմանել։

189. Սոխի վնասակար ճճիներ. — Բաց ի այն միջատներէն որոց վրայ խօսեցանք (73-81), որք կրնան վնասակար ըլլալ սոխի, կայ երկթև փոքրիկ ճանճ մը՝ որ կրնայ շատ վնաս հասցնել սոխի և սխտորի. և է մոխրագոյն, և կը ձգէ իր ձուերը սոխին տերևներուն վրայ, և թրթուրներն հազիւ թէ կը ծնանին, կ'իջնեն վար և կը մտնեն կոճղիգին կամ սոխին մէջ, և կը փըճացնեն շուտով։ Այն սոխերն որ այս թրթուրէն վիրաւորուած են, գարշելի հոտ մը կ'արձակեն փտութեան։

ԳԼՈՒԽ Գ

ՍՈԽ ԱՍԿԱՂՈՆԻԿ. (տճ. Արփաձըգ սօղանը. գղ. Échalotte. իտ. Scalogno).

190. Նկարագիր. — Այս սոխը սովորական սոխէն անով կը տարբերի որ իր ծղօտին տակ կը բուսնին այլ և այլ մանր սոխեր, պարփակեալ միևնոյն մաշկով, ինչպէս է սխտորը։ Տերևներն են փողաձև, երկայն բարակ, ծաղիկներն ծիրանեգոյն մանր և խիտ առ խիտ, հովանոցակերպ։

Այս սոխն ըստ Պլինիոսի Հրէաստանի Ասկաղոն քաղքին շրջակայներէն եկած ըլլալուն պատճառաւ, Սոխ ասկաղոնիկ կոչուած է, որ և կ'ըսուի պարզաբար Ասկաղոն. բայց կը բուսնի հիմայ ամէն կողմ։

Ձև 61. Սոխ ասկաղոնիկ.

Սովորական ասկաղոնէն զատ կայ Ասկաղոն Ջէրսէի (Jersey) (Ձև 61), որ Եւրոպայի հիւսիսային կողմ շատ տարածուած է, և է ընտիր տեսակ մը, լրթագոյն տերևներով և վաղահաս. թէպէտ դժուարաւ կը պահուի, բայց հիւսիսային կողմանց համար օգտակար բերք մի է. որովհետև գարնան սերմանելով կը բերէ քիչ ժամանակի մէջ մեծամեծ սոխեր։

191. Մշակութիւն. — Կը սիրէ թեթեւ հող եւ պատսպարեալ տեղ, եւ ինչ խնամք որ պէտք է խստորի համար, նոյնը ընելու է նաեւ սոխ։ Տնկելու կոճղիզակները կամ պճեղները պիտի ըլլան ողջ եւ անարատ, եւ պիտի տնկուին աշնան, կամ գարնան փետրուարի վերջ, տողի վրայ, իրարմէ 10 հր.մ հեռաւորութեամբ եւ 5 հր.մ խորութեամբ, եւ տողերը 15 հր.մ հեռաւորութեամբ։

Քաղուցը կ'ըլլուի երբ տերեւները սկսին դեղնիլ, այսինքն յուլիսի կամ օգոստոսի մէջ, եւ հողէն հանելէն ետքը դնել արեւու մէջ՝ որ սոխերը լաւ մը չորնան։ Եւ յետոյ դնել չոր տեղ եւ պահել, եւ ձմեռն զգուշանալ ցուրտէն։

Կը գործածուի ակաղոնիկ սոխը հասարակ սոխի տեղ, մանաւանդ համեմներու համար, հում կամ եփեալ, ուրովհետեւ աւելի կծուահամ է։

ԳԼՈՒԽ Դ

ՍՈԽ ԴԱԼԱՐ. (*տճ.* *թազէ սօղան.* *գղ.* Ciboule, Ciboulette. *իտ.* Cipolletta, Cipollina).

192. Նկարագիր. — Դալար սոխը կը նմանի հասարակ սոխի. բայց փոխանակ կոճղէզը մեծ եւ կլորաձեւ ըլլալու, ծղօտին վայրի կողմ փոքրիկ ուռոյց մը կ'ունենայ երկայնաձեւ, կարմրագոյն կամ ճերմակ, որ կ'ուտուի իր դալար ծղօտով եւ տերեւներով, եւ անով կը համեմեն աղցանը (Ձև 62)։ Կ'ուտուի նաեւ կերակրոյ հետ սովորական սոխի պէս։

Ձև 62. Սոխ դալար. — Առանձին տունկ. – Խմբովին ծաղկաբեր տունկեր.

193. Մշակութիւն. — Կը բազմանայ արմատները բաժնելով ի գարնան, կամ լաւ եւս սերմով, զոր պէտք է սերմանել ձմերան վերջ, կակուղ եւ պարարտ հողոյ վրայ, եւ մեծնալէն ետքը երբեմն երբեմն քրքրել հողը եւ ջրել։ Սերմանելէն երկու եւ կէս ամիս ետքը կրնամք քաղել եւ ուտել դալար։

ԳԼՈՒԽ Ե

ՊՐԱՍ ԿԱՄ ՔՈՒՌԱԹ. (*տճ. փրասա. գղ.* Poireau. *իտ.* Porro. *լտ.* Allium porrum).

194. Նկարագիր. — *Է խաւարտ մը խստորի ցեղէ, երկտարեայ, որ ինքնին կը բուսնի Ասիոյ մէջ: Կոճղէզն է ճերմակ, երկայնաձեւ եւ քիչ ուռուցիկ, տերեւներն տափարակ եւ լրթագոյն, ծաղիկներն ճերմակ, հովանոցակերպ. որք կու տան պատճի մէջ սեւ տափարակ հատեր: Ծաղկելէն վերջ կոճղէզը կը մեծնայ եւ պճեղ պճեղ կը բաժնուի, հասարակ խստորի պէս: Ուտելի մասն է գալար կոճղէզն, որ կազմի տերեւներուն տակի ծայրով. զոր կ'եփեն եւ կ'ըլլայ առողջարար կերակուր, եւ անով կը համեմեն նաեւ ապուրը: Գեղացիները կ'ուտեն հում խստորի տեղ:*

195. *Պրասի տեսակները շատ են. ասոնց մէջ Գաղղիոյ Ռուան քաղաքին պրասը շատ համբաւաւոր է իր մեծութեամբ* (*Ձեւ* 63), *որոյ կոճղէզը կարճ է եւ հաստ, բազմաթիւ հակեալ տերեւներով, որք են մութ լրթագոյն: Այս տեսակը դիմացկուն է, եւ ըստ բաւականին անոյշ:*

Ձեւ 63. *Պրաս կամ Քուռաթ Ռուանի.*

196. Մշակութիւն. — *Պրասը գրեթէ նոյն խնամքը կ'ուզէ ինչ որ խստոր եւ սոխ, եւ նոյն կլիմայի մէջ կը բուսնի: Միայն թէ երկիրը շատ աւելի պարարտ պիտի ըլլայ, եւ շատոնց պատրաստած, եւ հողը գայլախագին եւ կաւեղէն:*

Երկիրը պէտք է աշնան փորել բահով եւ աղբով պարարտացնել, եւ թողուլ գուղձերը որ մանրին ձմերան սառուցին: Փետրուարի մէջ նորէն մշակել եւ նորէն աղբել, բայց աղբը պիտի ըլլայ լաւ փտեալ. կրնամք գործածել նաեւ բուսահող:

197. Սերմնացանումն. — *Սերմը կը ցանուի երկու այլեայլ ժամանակ: Կը ցանուի փետրուարի կամ մարտի մէջ, ամարան ունելու համար, եւ կը ցանուի յունիսի կամ յուլիսի մէջ, ձմեռն ունելու համար: Փետրուարի մէջ ցանելու համար բաւական է* 15 *դրամ սերմ առ մի կալ, եւ յունիսի եւ յուլիսի մէջ սերմանելու համար* 10 *դրամ: Կը ծլին* 6 *օրէն ետքը, եւ սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը* 2–3 *տարի:*

198. Փոխատնկութիւն. — *Սերմը սերմնարանին մէջ բաւական մեծնալէն ետքը, այս ինքն երբ արձակէ իր վեցերորդ տերեւը, պէտք է փոխադրել ի պարտէզ ամպամած օր մը, տնկելով պատրաստած ածուներու վրայ,* 8–12 *հր.մ խորութեամբ ըստ տեսակի պրասին: Այս բանիս համար լաւ է ակօս մը բանալ, եւ այն ակօսին մէջ տնկել նորաբոյս պրասներն իրարմէ* 15 *հր.մ հեռաւորութեամբ, եւ ակօսները* 20 *հր.մ հեռաւորութեամբ, եւ յետոյ ծածկել բուսահողով կամ փտերու մէջէն հանած հողով: Բայց տնկելէն առաջ պէտք է տերեւներուն եւ արմատներուն ծայրերը կտրել:*

Փետրուարի կամ մարտի ցանած սերման տունկերը պէտք է փոխադրել յունիսի կիսոյն, եւ ձմերան ունելու պրասը փոխադրել սեպտեմբերի մէջ: Օդը չոր եղած ժամանակ ջրել, եւ քրքրել հողը քանի մը անգամ, մնասակար խոտերէ մաքուր պահելու համար: Եւ երբ տեսնեմք որ պրասը շատ կը բարձրանայ, լաւ է տերեւները ծայրատել:

199. Քաղոց. — *Գարնան ցանածները քաղել սեպտեմբերի մէջ. բայց քաղոց ընելէն քան օր առաջ պէտք է արմատներուն հող տալ, որպէս զի կոճղէզները ճերմկնան: Իսկ ուշ ցանածները պատսպարել ցրտէն, որպէս զի կարող ըլլամք ունել ձմերան մէջ: Եւ այս բանիս համար պէտք է նոյեմբերի մէջ չոր օդով հանել տունկերը հողէն, եւ զետեղել փոսի մը մէջ իրարու մօտ, ծածկել վրան հողով եւ յետոյ յարդով եւ տերեւով: Այսպէս կը պահուին նաեւ այն պրասներն որ են սերման համար:*

Մի կալ երկրէն կրնամք ունենալ 2 *կենդինար պրաս,*

որք կը բովանդակեն 1400 կատարեալ կոճղէզներ և 300 թերի կոճղէզներ։

200. Հաւաքումն սերման. — Այն պրասներն որ սերման պիտի ծառայեն, պիտի ըլլան ընտիր, գեղեցիկ և լաւ պահուած, և տնկուին մարտի կամ ապրիլի մէջ մասնաւոր ածուներու վրայ։ Եւ երբ ցօղունը մեծնայ և մօտ է ծաղկելու, դնել իւրաքանչիւր տունկին քով խեչակ, և անոր վրայ կապել զգուշութեամբ։ Եւ երբ պատիճները սկսին բացուիլ և սերմերը սեւնան, կտրել ծաղիկները կոթով և տրցակ տրցակ կապելով դնել արեւու մէջ որ չորնան, և յետոյ ծեծել և ժողվել սերմը։ Այն սերմն որ առաջ կը հասուննայ, լաւագոյն է։

ԳԼՈՒԽ Չ

ՍԱՄԻԹ. (*տճ. Ռէզենէ. գղ.* Fenouil. *իտ.* Finocchio).

201. Նկարագիր. — Այս խաւարտն ինքնին կը բուսնի իտալիոյ հարաւային կողմ և Միջերկրական ծովուն եզերքն, և է բոյս երկտարեւոր կամ շատակեաց, իլաձև արմատով և հովանոցակերպ դեղին ծաղիկներով։ Կը բաժնուի երկու տեսակ, առաջինը կ'ըսուի Սամիթ կծու կամ վայրենի, և երկրորդը Սամիթ անոյշ։ Առաջնոյն սերմը մանր է և ձուաձև և դառնահամ։ Բայց կան պարտէզներ ուր այս տեսակը կը մշակեն սերման համար (Ձև 64)։ Անոյշ սամիթն, որ և կ'ըսուի Հռոմ կամ Փլորենտեան սամիթ, է կարճ բնով մեծամեծ տերեւներով, որոյ արմատն է ձուաձև, սերմը մեծկակ և տափարակ, ծաղիկներն կանաչորակ և հովանոցակերպ։

Սամիթը թէպէտ ամէն տեղ կը բուսնի, բայց իտալական սամիթը շատ անոյշ և ախորժահամ ըլլալուն, կ'ուտուի ոչ միայն կերակրոյ հետ իբրև խաւարտ, այլ նաև հում իբրև պտուղ, հանելով վրայի հաստ տերեւները և ուտելով միջուկը կամ կուրծքը։

202. Մշակութիւն. — Սամիթ կը սիրէ կակուղ, պարարտ և արեգդէմ երկիր։ Ծովեզերեայ և հարաւային կողմանց սամիթն անոյշ և փափուկ կ'ըլլայ։ Եւ որպէս զի ամբողջ տարին շարունակ կարենամք ունենալ սամիթ, պէտք է սերմանել դեկտեմբերէն մինչև օգոստոս։ Պատրաստել ածուներն աղէկ դրից մէջ, խոր փորուած և հին աղբով պարարտացած։ Եւ ցանել սերմը ուղիղ գծի

Ձև 64. Սամիթ. — Ճիւղ ծաղկաբեր. – Մասն բնի արմատով.

վրայ, գծերն իրարմէ 30 հարիւրորդամետր հեռի. և վրան հողով ծածկելէն վերջ, լաւ մը ջրել գետինը որպէս զի շուտով ծլին։

Եւ երբ մանր տունկերը բարձրանան մինչև 4 հարիւրորդամետր, անօսրացնել եթէ իրարու շատ մօտ ըլլան, և թողուլ իրարու մէջ 15 հարիւրորդամետր հեռաւորութիւն։

Եւ քանի որ մեծնան, սոէպ ջրել և քրքրել հողը, և եթէ բաւական պարարտ չըլլայ երկիրը, կրնամք հողը քրքրելու ժամանակ տալ արմատներուն հաւու և աղաւնոյ աղբ: Եւ այսպէս մինչև օգոստոս բաւական կը մեծնան տունկերն, և կրնամք ճերմկցնելու գործողութիւնը ընել, ինչպէս ըսինք կարոսի համար (151), թաղելով հողի տակ:

Կանխահաս սամիթ ունենալու համար, պէտք է տնկել օգոստոսի մէջ, և փոխադրել հոկտեմբերի մէջ, պատըսպարելով ձմերան սառուցէն յարդէ փսիաթներով, և ձիւնը փարատելէն վերջ հոգալ վերն ըսածնուս պէս ։

203. Հաւաքումն սերման. — Լաւ սերմ ունենալու համար ընտրելու է այն տունկերն որ այնչափ հակամէտ չեն բարձրանալու: Թողուլ ազատաբար որ ծաղկին, և ժողվել այն ծաղկանց սերմերն որ կեդրոնին մօտ են և աւելի ուռճացած, և կատարեալ հասունցած:

Սամթի սերմը կը գործածուի բժշկականութեան մէջ իբրև փքահան և բացողական: Կը գործածուի խմորեղինաց և ըմպելեաց, և հացը համեմելու, և կը հանեն իւղ մը անուշահոտ:

204. Սամիթ արեւելեան. — Կայ սամթի ուրիշ տեսակ մը, (որուն այլազգերէն կ'ըսեն Տարաղ օթու, Թէրէ օթու, գղ. Aneth. իտ. Aneto), և է բոյս տարեւոր, անուշահոտ և համեմիչ, բնիկ Արևելքի, որ կը բարձրանայ 60 հարիւրորդամետրէ մինչև 1մ,50 մետր. տերևներն են նուրբ, ծաղիկներն ծայրաբոյս, հովանոցակերպ և դեղին, պտուղներն ոսպնաձև և մէջի հատը քիչ մը կորնթարդ և սև:

Սերմը հասուննալէն ետքը կը ժողվեն և ըստ ժամանակին կը սերմանեն կակուղ և արեգդէմ երկրի վրայ, և բուսնելէն ետքը կարօտ չէ խնամքի: Բոյսին զանազան մասերը կը գործածուին իբրև համեմ, կերակրոց համ տալու և դիւրամարս ընելու համար:

Կը ժողվեն ծաղիկները ամարան սկիզբ, և տերևները՝ ծաղկելէն առաջ, և կը չորցնեն ու կը պահեն դեղօրէից համար: Զօրնալով քիչ կը պակսի իրենց հոտը: Կը ժողվեն իրեն սերմը աշնան, որ կը գործածուի քացախի

մէջ դրուած մանր վարունգները համեմելու համար, և է գրգռիչ, նոյնպէս և միսը համեմելու: Կը գործածուի նաև առ չաքարագործս անխոնի տեղ:

Կ'եփէ իւղ մը թորեցնելով, որ կը պահէ տընկոյն հոտը, և երբեմն շատ յարգի էր, մանաւանդ ըմբիշներու համար, որք կը համարէին թէ կը կակղցնէ և կը զօրացնէ իրենց անդամները շփելով նոյն իւղով: Կը հանեն իւղ նաև ջուր թորեալ, որ օգտակար է խոստուկի և ստամոքի տկարութեան:

Սամթի ծաղիկներն, տերևներն և սերմերն կը գործածուին խիւս ընելու և մարմնոյն ցաւած մասին վրայ դնելու համար:

Այս երկրորդ սամիթը վերնոյն հետ չշփոթելու համար կրնամք կոչել Սամիթ արևելեան, թէպէտ առ նախնիս մեր պարզ Սամիթ կոչի, կամ ըստ Որմիայ գաւառաբարբառի կոչել Տօրախ, այլազգի անունէն առած:

-⊰-

ԳԼՈՒԽ Է

ԿԱՆԳԱՐ ՎԱՅՐԻ. (տճ. Եապան քէնկէր. գղ. Cardon. իտ. Cardone, Cardo).

205. Նկարագիր. — Վայրի կանգարն ի բնէ շատակեաց բոյս մի է, բայց պարտէզներու մէջ մշակուածը կը համարուի տարևոր. և կը մշակեն իրեն տերևներուն կուրծքը ուտելու համար յետ ճերմկցնելու։ Տերևներուն երկայնութիւնը կը հասնի մի և մինչև միւկէս մետր բարձրութեան. վերին երեսն է ճերմակագոյն կանաչ, և տակի կողմը պատած է բրդեայ մազով, և տերևներուն ծայրը փշով, և յոմանս կը գտնուի մանր փուշեր նաև տերևներուն եզերքն ամբողջ։

Տերևներուն կեդրոնէն կը բարձրանայ երկրորդ տարին զօրաւոր ծղօտ մը, քիչ ճիւղերով, որոց իւրաքանչիւրին ծայր կը բուսնին գլխաձև ծաղիկներ կապտագոյն, որոց ծաղկապատ տերևներն ունին սայրասուր փուշեր խոցոտիչ։ Եւ ծաղիկներն կու տան իրենց սերմերը, որոց բեղնաւորիչ կարողութիւնը կը տևէ մինչև հինգ տարի։

Ձև 65. Կանգար վայրի.

206. Վայրի կանգարներուն տեսակները շատ են, ինչպէս Սպանիոյ, Իտալիոյ և Գաղղիոյ Տուրգաւառին մէջ (Ձև 65)։ Վերջինը թէպէտ միւսներէն փոքր է և աւելի փշոտ, բայց տերևներուն կուրծքը լեցուն, մսոտ և ընտիր է։

207. Մշակութիւն. — Մարտի կամ ապրիլի մէջ պէտք է երկիրը պատրաստել, խոր փորելով և հողը մանրելով, և յետոյ տողի վրայ բանալ ծակեր 10 հարիւրորդամետր խորութեամբ և 1 մետր հեռաւորութեամբ

դէպ ամէն կողմ, և այս տողերուն մէջ տեղ կրնամք տնկել սոխ, խստոր, ստեպղին և այլն, և ծակերը լեցնել փտեալ բուսահողով կամ աւելուքով, և դնել իւրաքանչիւր ծակին մէջ 3 կամ 4 սերմն վայրի կանգարի, իրարմէ 4–5 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և ծածկել վրան բարակ հողով 2 հարիւրորդամետր բարձրութեամբ։

Սերմը պիտի ըլլայ մթնագոյն. թէ որ գորշագոյն ըլլայ, պէտք է նետել, որովհետև կորուսած է իր բեղնաւորիչ կարողութիւնը կամ անպիտան է։ Բաւական կը համարուի 5 դրամ սերմն առ մի կալ, ուսկից կրնամք ունենալ 100 տունկ։

208. Սերմը չորս հինգ շաբաթէն ետքը կը սկսի ծլիլ, և յայնժամ պէտք է քրքրել հողը ամէն զգուշութեամբ, որպէս զի չվնասուին նորատունկ բոյսերը որ շատ տկար են։ Հողն առաջին անգամ քրքրելէն 12 օր ետքը, պէտք է խլել հանել այն տունկերն որ տկար են և թողուլ զօրաւորները։ Եւ այս հանած տունկերը նետել, որովհետև եթէ ուրիշ տեղ տնկեմք, սովոր են նոյն տարւոյն մէջ ծաղկելու։

Ամէն ութ օր պէտք է քրքրել հողը, և ջրել ատէպ երբ հողը չորնայ, այս տունկերը կարօտ են ջրոյ, ապա թէ ոչ շուտով կը ծաղկին, և այսպիսի խնամքով շուտով կ'աճին վայրի կանկարները։

209. Ամառան վերջ, այս ինքն օգոստոսի և սեպտեմբերի մէջ, երբ կատարեալ կը համարուի տերևներուն աճումը, պէտք է ճերմկցնել, կապելով զգուշութեամբ տերևները յարդով կամ խոտով, այնպէս որ չվնասուին, վասն զի վնասուած տերևներն կը փտին։ Լաւ է երեք տեղէն կապել, վարէն, մէջ տեղէն և վերէն, և յետոյ բովանդակ տունկը յարդով պատել, թողլով միայն դուրս տերևներուն ծայրերը։ Այսպէս 20 կամ 25 օր մնալէն ետքը տերևները կը ճերմկին բոլորովին, և կրնամք քաղել։ Բայց այս կ'ըսեմք՝ որ քաղելէն ետքը շուտով պէտք է ուտել, ապա թէ ոչ կը փտին։

Այս ճերմկցնելու գործողութիւնը կրնամք շարունակել մինչև դեկտեմբեր։ Եւ ցուրտը սկսելու ժամանակ աւելի ևս խնամք կ'ուզէ, կապած տունկերը մինչև տերևներուն ծայր հողով ծածկելով։ Եւ որպէս զի ծայրէն

ջուր ներս չմտնէ, կ'անցնեն վրան շրջուն թաղար մը։ Կրնամք նաև ճերմկցնել, ինչպէս ըսինք կարոսի համար (151), միայն թէ փոխադրելու է տունկերը ուրիշ տեղ, արմատին չորս կողմ եղած հողով մէկտեղ։ Ցուրտ եղանակի մէջ ճերմկնալու համար 40 օր պէտք է։

210. Հաւաքումն սերման. — *Վայրի կանկարին սերմը առնելու համար պէտք է ընտրել լաւագոյն տունկերն, և ցրտէն պաշտպանելու համար ծածկել հողով, կամ փոխադրել մասնաւոր պատրաստած ածուներու մէջ, ինչպէս կ'ըլլուի հասարակ կանկարի համար։ Կը ծաղկին յաջորդ տարւոյն ամառան մէջ, և պէտք է զգուշանալ որ թռչունները չուտեն սերմը, վասն զի շատ փափաքող են։*

ԳԼՈՒԽ Ը

ԾՆԵԲԵԿ. (*տճ.* Գուշ գօնմազ. *գղ.* Asperge. *իտ.* Sparago).

211. Նկարագիր. — Է *բոյս շատակեաց երկայնաձև բարակ տերևներով, և զանգակաձև դեղին ծաղկով* (Ձև 66), *որուն կը յաջորդէ իր պտուղն, որ է կարմիր և*



Ձև 66. Ծնեբեկի ճիւղ ծաղկաբեր. Ձև 66'. Ծնեբեկի ճիւղ սերմնաբեր.

կլոր պարկուճ մը եռաբաշխ, որոյ մէջ կը գտնուին քանի մը հատիկ սև, որք են տնկոյն սերմերը (Ձև 66')։ Ար-

մասէն վեր կը բարձրանան այլեւայլ ծղօտներ մսոտ և փափուկ, որք և կ'ուտուին խաշելով, և են համեղաճաշակ քանի որ մատաղ են (Ձև 67)։ Այս ծղօտներն կամ Բողբոջներն, որ կ'ըսուին նաև Խաւարծի (գղ․ Turion. իտ․ Pollone), կը բարձրանան գարնան շիտակ դէպի վեր, զորս հողին տակէն դանակով պէտք է կտրել։ Յետոյ կը սկսին կարծրանալ, ճիւղեր արձակել և կը բարձրանան մինչև մի մետր։



Ձև 67․ Ծնեբեկի խաւարծի․

Արմատներն կը տևեն երեք տարի․ բայց ամէն տարի նոր արմատներ կ'արձակեն հողը բարձրացնելով, և այսպէս երեք կարգ արմատներ կ'ունենան վրայէ վրայ, և երեք տարիէն ետքը կը սկսին մատաղ բողբոջներ արձակել, որք որչափ մեծ, հաստ, փափուկ և համեղ ըլլան, այնչափ աւելի յարգի են։

212․ Տեսակք ծնեբեկի․ — Իտալական տեսակն, որ կ'ըսուի հասարակ ծնեբեկ, իր բողբոջն է կանաչագոյն, ոչ այնչափ մեծ և հաստ, բայց համով։ Իտալականին մէջ Բասսանոյինը յարգի է, որոյ բողբոջը կարճ և հաստ կ'ըլլայ, անոյշ և համեղ, ճերմակ գունով կամ բացագոյն կանաչ։

Մեծ և հաստ բողբոջ տուող ծնեբեկներն Հոլանդական կ'ըսուին, բայց սովորաբար քիչ մը լեղի կ'ըլլան։ Այս տեսակին մէջ համբաւաւոր են Գաղղիոյ Արժանտէօյլի ծնեբեկները, վաղահաս և յամրահաս, որոց բողբոջներն են մեծ և հաստ, ծայրը մանուշակագոյն, վարի մասը կանաչ։ Կան նաև ճերմակ տեսակներ։

213․ Մշակութիւն․ — Ծնեբեկները բարեխառն գօտւոյն ամէն կողմ կրնան բուսնիլ, բայց կանխահաս ունենալու համար, պէտք է ընտրել արեգդէմ և տաք դիրք։ Այն կողմերն որ ենթակայ են եղեման, անյարմար են։

Շատերը կարծեն թէ ծնեբեկն աւազուտ երկիր կը սիրէ, բայց վրիպակ է այդ կարծիքն, երբ քննեմք բողբոջին տարրաբանական բաղադրութիւնը։ Ծնեբեկը կը սիրէ աւելի կրային հող, բայց ոչ չափազանց կրային․ կ'ատէ պինդ և կաւային հողը որ թացութիւն կը պահէ։

Թէ որ մէկն ուզէ իր պարտիզին մէջ կազմել ծնեբեկի ածու մը, պէտք է իր հողն արգասաւորել, այս ինքն, թէ որ պինդ է խառնել աւազով, թէ որ աւազուտ՝ խառնել կրային հողով։

214․ Պէտք է գիտնալ որ ծնեբեկաստան մը կազմելու ժամանակ ինչ պարարտութիւն որ պէտք է տալ, նոյնը չեմք կրնար տալ պահպանութեան համար։

Ի սկզբան կը տրուի ձիոյ, ոչխարի և եզի աղբ, լաւ մը իրարու հետ խառնած։ Կամ հետագայ տարրաբանական պարարտութիւնը աղբի հետ խառնած, առնլով վերոյիշեալ աղբէն՝ որ լաւ փտած ըլլայ՝ 1 մետր խորանարդ և անոր հետ խառնել վերլուսածնատ կրոյ 6 հազարագրամ, քլոռուկ կալւոյ 3 հազարագրամ, ծծըմբատ կալւոյ 1 հգգր, ծծըմբատ աւշակի 4 հգգր, գաճ 3 հգգր։ Այս խառնուրդը բաւական է մի կալ տարածութեան, և պատրաստելու է գործածելէն քանի մը օր առաջ։

Իսկ ծնեբեկի պահպանութեան համար պէտք է գործ-

ածել հետագայ տարրաբանական պարարտութիւնը, զոր ցանելու է գարնան հողին երեսը քանի որ բողբոջները դուրս ելած չեն։

Բորակատ կալւոյ	200	հգր․
Ծծըմբատ աւշակի	100	»
Վերլուսածնատ կրոյ	300	»
Գաճ	400	»

Այս խառնուրդը բաւական է մի հարիւրակալ երկրի, որ և կրնայ փոփոխիլ հողին կազմութեան համեմատ։

215․ Բազմացումն ծնեբեկի․ — Ծնեբեկը կրնամք բազմացնել սերմով կամ տակնուռով։

Աղէկ սերմ ունենալու համար պէտք է ընտրել այն արմատներն, որ լաւ յաջողած են առաջին երկու երեք տարիներուն մէջ, իրենց բարեբերութեամբ և լաւ տեսակով։ Այս արմատները կը տնկուին առանձին տեղ, երկիրը լաւ պարարտացուցած, և կը կտրուին բողբոջներն երկու երեք տարի, քանի որ դեռ թարմ են։ Եւ որպէս զի էգ արմատներն կարենան բեղնաւորիլ, անոնց մէջ պէտք է տնկել արու ծաղկանց արմատներ։

Սերմը պէտք է ժողվել այն տունկերէն որ գէթ չորս հինգ տարեկան ըլլան, և այն տարին որ սերմը պիտի ժողվենք, պէտք է կտրել իգական տնկոց ճիւղերուն ծայրերը, և սերմանց այն պարկուճները որ մանր են և դուրս ցցուած։ Մնացած պարկուճներն երբ հասուննան, պէտք է ժողվել, ճմլել ջրալից ամանի մէջ՝ սերմերէն բաժնելու համար, և ծծուն թղթով չորցնել սերմերը չոր և հովահար տեղ։ Այս սերմը կրնամք ցանել յաջորդ տարին գարնան, թէպէտ և կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը երեք չորս տարի։

216. Իսկ թէ որ ուզեմք բազմացնել տակնուռերով, որք են հողին տակ երկնցած ճիւղերն և ունին տակռիճներ, պէտք է ընտրել այն տակնուռերն որ զօրաւոր են և լայն, և քիչ բայց կորովի աչքեր ունին, և տակռիճներն որ չեն խիտ բայց հաստ, հարկ չէ որ շատ երկայն ըլլան։

217․ Սերմնարան եւ Տնկարան ծնեբեկի․ — Սերմնարան մը կազմելու համար պէտք է պատրաստել երկիրն ինչպէս որ ըսինք վերը, և փետրուարի կամ մարտի մէջ բաժնել ածու ածու միևկէս մետր լայնութեամբ, բանալ ակօսներ իրարու զուգահեռական 5 հարիւրորդամետր խորութեամբ և 15 հարիւրորդամետր հեռաւորութեամբ։ Այս ակօսներուն մէջ դնել սերմերը իրարմէ 3 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և հողով ծածկել և վրան տարածել բուսահող 2 հարիւրորդամետր թանձրութեամբ։ Սերմը կրնամք ցանել նաև յունիսի վերջ, քսանամսեայ տակնուռ ունենալու համար, բայց պէտք է յայնժամ միշտ ոռոգել մինչև որ ծլին։ Ծլելու համար հարկ է գրեթէ ամիս մը ժամանակ, և երբ բոյսերը բարձրանան իբր 8 հարիւրորդամետր, պէտք է անօսրացնել, հանելով մէջերնէն տկարները։ Ամսէ մը ետքը քըքրել հողը և նորէն անօսրացնել, այնպէս որ տունկերն իրարմէ 15 հարիւրորդամետր հեռաւորութիւն ունենան, փրցնելով միանգամայն իրենց արմատէն ելած մոլերն և տակնուռերը։

Ձմեռը գալէն առաջ կտրել ցօղունները 5 հարիւրորդամետր հողէն դուրս, փոցխել հողին երեսը և այսպէս թողուլ տնկարանը մինչև յաջորդ գարուն, և յայնժամ կրնամք տակնուռերը գործածել ծնեբեկաստանի համար։

218․ Ծնեբեկաստան․ — Ծնեբեկաստան մը կազմելու համար պէտք է նախ հողը խոր փորել, գէթ 60 հարիւրորդամետր, հանելով մէջի ամէն խիճերը, քարերը, խոտերը և արմատները․ և հողը կանուխ պատրաստել ձմերան մէջ։ Բանալ փոսեր հիւսիսէն դէպ ի հարաւ, լայն 50 հարիւրորդամետր և խոր 25, և հեռի իրարմէ 70 հարիւրորդամետր։ Փորած հողը դնել շալակաձև, ազատ մնացած տեղւոյն վրայ։ Փոսին յատակը դնել վերոյիշեալ աղբէն (214) խումբ խումբ իրարմէ 80 հարիւրորդամետր հեռաւորութեամբ․ և իւրաքանչիւր խումբին վրայ ընել ձեռքով փոքրիկ ծակ մը քանի մը հարիւրորդամետր խորութեամբ և 10–15 հարիւրորդամետր լայնութեամբ, և այս ծակերուն մէջ մարտի ամսոյն տեղաւորել մի մի տակնուռ ծնեբեկի, և ծածկել վրան բարակ հողով իբր 5 հարիւրորդամետր բարձրութեամբ և

ոչ աւելի։ Թէ որ աւելի խոր դրուին, չյաջողիր ծնեբեկաստանը, վասն զի տակնուերն օդոյ ազդեցութեան ենթակայ չըլլալով՝ կը տկարանան և աղէկ չեն մեծնար։ Լաւ կ՚ըլլայ հողը ճմլել տակնուերուն վրայ, և առատապէս աղբել տնկելու ժամանակ։ Ըսածնէս կը տեսնուի որ աղբը կը շրջապատէ ծնեբեկի տակնուերը, և ոչ թէ տակը դրուած է, ինչպէս կ՚ըլլուի ուրիշ բուսոց համար։

219. Ծնեբեկաստանը միշտ մաքուր պահելու է խոտերէ, և ջրելու է մանաւանդ առաջին տարւոյն ամառան մէջ։ Աչնան պէտք է կտրել 10–12 հարիւրորդամետր երկայնութեամբ դեղինցած ցօղունները և քիչ մը բանալ հողը արմատին չորս կողմ, դնելով հողը չալակին վրայ։ Ձմեռան վերջ դնել քիչ մը պարարտութիւն տարրաբանական կամ բուսահող տակնուերուն վրայ, և տարածել քիչ մը հող՝ չալակէն առնլով. հարկաւ քանի որ դեռ բուսականութիւնն սկսած չէ։ Այս ատեն պէտք է փոխանակել չորցածներուն տեղ ուրիշ տակնուեր, և իւրաքանչիւրին քով խեչակ մը դնել որպէս զի ըստ ժամանակին կարող ըլլամք անոնց ցօղունը կապել խեչակին վրայ։

Երկրորդ տարին և անոր յաջորդ տարիներուն մէջ հարկ չէ ջրել ծնեբեկաստանը, այլ գէթ երկու տարին անգամ մը տալ տարրաբանական պարարտութիւն հողին երեսը, քրքրելով հողը. նոյնպէս ստէպ քրքրել հողը գարնան և ամառն, և աշնան փորել և բանալ արմատներուն չորս կողմ, որ կ՚ըսուի Բաժակել։ Բաւական է որ արմատներն 5 հարիւրորդամետր բարձրութեամբ հողով ծածկած ըլլան, որպէս զի չվնասին ցրտէն։ Երրորդ տարին գարնան իւրաքանչիւր տակնուին վրայ չոր հող դնել իբր 10 հարիւրորդամետր բարձրութեամբ և 20 լայնութեամբ, և սկսիլ բերքին առաջին քաղոցն ընել։ Բայց հողը տալէն առաջ պէտք է տալ պարարտութիւն, կտրել ցօղունին քով բուսած մանր ճիւղերը։ Աչնան կտրել ցօղունները, վերցնել դրած հողը և դնել չալակին վրայ։ Զնոյն կրկնել և յաջորդ տարիներուն մէջ։

220. Քաղոց. — Ծնեբեկին բողբոջները գարնան կը բարձրանան վեր կակուղ հողին մէջէն, որ պիտի ըլլայ

տափարակ դրուած և ոչ դիզուած։ Եւ երբ բողբոջին գլուխը հողէն դուրս կ՚ելնէ, հողին տակէն մասնաւոր դանակով կտրել, կամ փրցնել մատով՝ բանալով հողը, որով վնաս մը չըլլար տակնուին։

Երրորդ տարին, նմանապէս յաջորդ չորս տարիներուն մէջ պէտք չէ ամէն բողբոջները կտրել, այլ թողուլ միշտ մի հատ, յետ վեց եօթն հատ քաղելէն։

221. Թէ որ ուզեմք կանխահաս բողբոջներ ունենալ, պէտք է վեցամեայ ծնեբեկաստանի մէջ ընտրել ուղղանկիւնի երկայն մաս մը, մէկկէս մետր լայնութեամբ, որոյ բոյսերն առոյգ և զօրաւոր ըլլան, և ամիս մը առաջ յորում կ՚ուզեմք բողբոջները փայելել, բանալ փոս մը նոյն տեղւոյն չորս կողմ 50 հարիւրորդամետր լայն և նոյնչափ խոր, և լեցնել այդ փոսը ձիոյ պարզ աղբով, լաւ մը կոխելով և բարձրացնելով 30 հարիւրորդամետր հողին երեսէն վեր. և ծնեբեկներուն վրայ տալ պարարտութիւն իբր 10 հարիւրորդամետր բարձրութեամբ։ Տասնևհինգ օրէն ետքը տաքութեան աստիճանը կը հասնի մինչև 25°, և յայնժամ վրան դրած պարարտութիւնը վերցնել, և ծածկել ապակի ծածկոցով։ Անկէ տասնևհինգ օր ետքը կրնամք քաղել բողբոջներն և ուտել։

Լաւ ծնեբեկաստան մը կրնայ տևել մինչև 20 տարի, և իւրաքանչիւր տակնու կրնայ տալ տարին 10–15 բողբոջ ուտելու։

222. Հիւանդութիւնք եւ որդունք վնասակարք. — Բորբոս և ժանկ երբեմն մեծ վնաս կը հասցնեն ծնեբեկի, կարծրացնելով իր ցօղունները։

Միջատներու մէջ վնասակար են խլրդածղրիթ և խոյեղջիւր (73), որք կը վնասեն բողբոջներուն, գետնին տակէն փորեր բանալով։

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԽԱԻԱՐՏՔ ՈՐՈՑ ՏԵՐԵՒՆԵՐԸ Կ'ՈՒՏՈՒԻ

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱԶԱՐ. (*տճ.* ***Մառուլ.*** *գղ.* Laitue. *իտ.* Lattuga).

223. Նկարագիր. — *Հազարը խաւարտ մի է, որոյ տերևներն արմատէն վեր կը բարձրանան, և իր միջուկին կամ կուրծքին վրայ կը շրջապատեն կարգ կարգ, տարգալաձև: Ոմանց տերևները գլուխ կը կազմեն ձուաձև, և ոմանց են լայնարձակ և երկայն, ինչպէս է Հռոմէական հազարը* (Ձև 68):

Միջուկին գագաթէն վեր կը բարձրանայ ցօղուն մը բազմաճիւղ, ուսկից կ'ելնեն գլխաձև ծաղիկներ, բաղմաձոյլ և դեղնագոյն, որոց կը յաջորդեն իրենց տափարակ սերմերը, ճերմակ կամ սև ըստ տեսակաց:

Հազարի տեսակները շատ են, բայց ամէնքն ալ վայրենի տեսակէն յառաջ եկած, և կը բուսնին աշխարհիս ամէն կողմ, և գործածուին ուտելու և աղցան ընելու: Ասիոյ հազարն աւելի համբաւաւոր է և համեղ քան թէ Եւրոպիոյ:

224. Մշակութիւն. — *Հազարը կը սիրէ կակուղ հող մանրած և չափաւոր պարարտ և տաք դիրք: Ոչ երբեք պէտք է տալ դալար աղբ. աւելի լաւ կը յաջողի այն հողին մէջ որ տարի մը առաջ առատապէս աղբեալ ըլլայ: Դալար աղբը կը բարձրացնէ տունկը, առանց տերևները գլուխ կապելու:*

Հազարը առէպ պէտք է ջրել, որով կը փափկանայ և

կ'անուշնայ: Եւ կրնամք բովանդակ տարին ուտել, ցանելով գարնանային, ամարային, աշնանային և ձմերային տեսակները:

225. *Գարնանային հազարը կրնամք դեկտեմբերի և յունուարի մէջ ցանել սնդուկներու մէջ, քիչ մը խիտ, որպէս զի փետրուարի մէջ կարենամք ուտել դալար տերևներն աղցանի պէս:*

Փետրուարի մէջ փոխադրել տունկերը պատրաստած ածուներու մէջ որ ըլլան արեգդէմ, և տնկել իրարմէ 25 *հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և գիշերները ծածկել յարդով և ցերեկները բանալ: Եւ թէ որ ուզեմք*

Ձև 68. *Հազար հռոմէական.*

աւելի կանխահաս ունենալ, կրնամք ծածկել գիշերները ապակի զանգակներով և ցերեկները բանալ որ օդ ծծեն. և այսպէս մարտի վերջ կ'ունենամք գեղեցիկ հազարներ ուտելու:

Փետրուարի և մարտի մէջ պէտք է ընել երկրորդ սերմանումը բացօթեայ ածուներու վրայ: Եւ երբ սերմերը ծլին և արձակեն երկու տերև, փոխադրել և լայնել: Փոխադրութեան ժամանակ ջանալ որ արմատները չվնասին. հողը շատ չճնշել արմատներուն վրայ. և եթէ օդը տաք

ըլլայ, փոխատնկութիւնը ընել երեկոյեան դէմ, մինչդեռ գարնան և աշնան ժամանակ լաւ է առաւօտուն ընել։

Փոխատնկելէն վերջ պէտք է ջրել տունկերը առատապէս, նոյնպէս և ամէն օր, ամառն երեկոյեան դէմ, և առաւօտուն երբ գիշերները ցուրտ ըլլան։ Ուրիշ խնամք չուզեր, բայց եթէ քրքրել երբեմն երբեմն հողը և մաքրել վնասակար խոտերէ։

Ամառային հազարները կը ցանուին ապրիլ ամսէն մինչև յունիս ամիս, ընտրելով ղով և խոնաւ դիրք։ Պէտք է ցանցառ ցանել սերմը, որովհետև փոխատնկութիւն չըլլար։

Ձմերային հազարները կը ցանուին օգոստոսի կէսէն մինչև սեպտեմբերի կէս, որպէս զի տունկերը շատ չմեծնան, ապա թէ ոչ կը մեռնին ցուրտէն։ Եւ աշնան վերջերը փոխադրել ուրիշ ածուներու մէջ որ հարաւային կողմ ըլլան և արեգդէմ, և ընել 5–8 հարիւրորդամետր խորութեամբ ակօսներ և լայն 10–12, և տնկել իրարմէ 10–15 հարիւրորդամետր հեռաւորութեամբ։ Այսպէս իրարու մօտ կը դրուին, որովհետև ձմերան ցրտէն միշտ քանի մը հատ կը մեռնին։ Ձիրենք ցրտէն պաշտպանելու համար վրանին պէտք է ծածկել փխաթով, և տաք օրերուն արև եղած ժամանակ բանալ։ Այս ձմերային հազարները փոխատնկելու ժամանակ լաւ է գործածել աղբաջուր։

Եւ որպէս զի հռոմէական հազարը սովորական հազարին պէս գլուխ կապէ, պէտք է յարդով կապել տերևները։

226. Ամէն տեսակ հազարէ կ՚ելնէ կաթնեղէն, դառն և թմրեցուցիչ հիւթ մը, որով կ՚ըլլայ հազարն առողջարար, դիւրամարս և մեղմեցուցիչ։ Մի կալ երկրի վրայ կը բուսնին 1200 տունկ, որք կշռեն իբր 3000 հազարագրամ։

Հազարներն շուտով կը փոխեն իրենց ցեղը, ուստի սերման համար պէտք է ընտրել այն տունկերն որ պատշաճին իրենց ցեղին, և թողուլ որ մեծնան ազատաբար, և ժողվել հեռ զհետէ սերմը երբ հասուննայ։

Սերմը կը ծլի 7 օրուան մէջ, և կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը 4 կամ 5 տարի։ Մի կալ երկրի համար հարկաւոր է 3 գրամ սերմ։

ԳԼՈՒԽ Բ

ԵՂԵՐԴ, ԵՂԵՐԴԱԿ ԿԱՄ ՎԱՅՐԻ ՀԱԶԱՐ. (տճ. Բլատիքիա. գղ. Chicorée. իտ. Cicoria, Radicchio).

227. Նկարագիր. — Եղերդ է բոյս մը խոտեղէն շատակեաց, որ ինքնին կը բուսնի դաշտերուն մէջ և ճանապարհներուն եզերքը. արմատն է ուղղորդ և իլաձև, տերևներն անկանթ, ատամնաձև, երկայն բարակ և քիչ մը մազոտ. ծաղիկներն կապուտակ, որ կը բուսնին տերևոց անթին մէջ երկու երկու։

Այս տեսակն է որ գեղացիները կը ժողվեն դաշտերու մէջէն և կ՚ընեն աղցան։ Իսկ այն որ կը մշակուի պարտէզներու մէջ, այս վայրենի տեսակէն յառաջ գայ, և անով կը տարբերի անկէ որ իր տերևներն աւելի լայն են, խիտ, փափուկ և ոչ այնչափ լեղի (Ձև 69)։

Ձև 69. Եղերդ հոլանդական.

228. Եղերդի տեսակները շատ են, և մշակութեամբ ազնուացած Իտալիոյ, Գաղղիոյ և Բեղգիոյ մէջ։

Բեղգիոյ եղերդը համբաւաւոր է իրեն տերևներուն մեծութեամբ և անուշութեամբ։ Պէտք է ցանել յունիսի մէջ ցանցառ. և երբ արմատներն մեծնան, այս ինքն

նոյեմբերի մէջ հանել հողէն, կտրել տերևները մայրանէ 3–4 հարիւրորդամետր վեր․ նոյնպէս կտրել նաև արմատներուն ծայրերը։ Եւ յետոյ դնել հողին տակ 20 հարիւրորդամետր խորութեամբ, և ծածկել թեթև և պարարտ հողով, և դեկտեմբերի մէջ յարդախառն աղբով։ Յունուարի մէջ վերցնել վրայի հողը, և կը տեսնեմք որ եղերդի արմատները խումբ խումբ տերևներ արձակեր են հազարի պէս, ճերմակ, փափուկ և ընտիր, որ կ'ուտուին իբրև աղցան։

Իտալիոյ Տրեվիզի կերպը քիչ մը կը տարբերի ասկէ։ Աշնան վերջերը կը փոխադրեն տունկերը գինետան կամ ախոռի մէջ, հոն պատրաստելով բուսահողէ ածու մը 1 մետր լայն, իսկ երկայնութիւնն որչափ որ ուզուի, և եղերդի հանած արմատներուն բովանդակ տերևները կտրելէն ետքը տեղաւորել հողին եղերքը չխտակ դիրքով, իրարմէ 15 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, այնպէս որ արմատները հողին մէջ թաղուին, և հազիւ մայրանը դուրս մնայ։ Վերջը այս արմատներուն վրայ դնել ուրիշ կարգ մը բուսահողոյ 20 հարիւրորդամետր բարձրութեամբ, և անոր վրայ ալ շարել ուրիշ արմատներ վերն ըսած կերպով, և այսպէս հետ զհետէ 4 կամ 5 կարգ արմատներ, և վերին կարգը ծածկել 20 հարիւրորդամետր հողով, և նայիլ որ միշտ խոնաւ մնայ վրայի հողը, բայց ոչ սաստիկ թրջելով, որպէս զի չփտին արմատները։ Քիչ օրէն կը սկսին տերևներն արձակիլ, որք կ'ըլլան ճերմակ եթէ օդ չտեսնեն, կամ կարմրախառն, կանաչ և փափուկ. և երբ ըստ բաւականին մեծնան կտրել և ուտել։

229․ Գաղղիոյ մէջ կը սերմանեն եղերդը ապրիլի վերջ կամ մայիսի սկիզբ, և հողը պարարտացնելու համար կը գործածեն քաղքին փողոցներուն ցեխը, որ խիստ յարմար է այս տունկերուն։ Տողի վրայ կը սերմանեն, տողերն իրարմէ 30 հր․մ հեռաւորութեամբ, և կը գործածեն իբր 150 լիտր սերմն 100 կալ երկրի համար։ Տերևները մեծնալէն ետքը, կը կտրեն և կը գործածեն աղցանի։ Եւ աշնան վերջերը հոկտեմբերէ սկսեալ մինչև դեկտեմբեր, կը հանեն արմատները հետ զհետէ որչափ որ կ'ուզեն, և կը կապեն տրցակ տրցակ, և կը փոխադրեն նկուղներու մէջ ուր ոչ լոյս մտնէ և ոչ հով,

չորս կողմէն գոցուած ըլլալով. և հոն պատրաստել պատի մը քով ածուներ, ձիոյ դալար աղբով, իբր 35 հարիւրորդամետր բարձրութեամբ, կոխոտել ոտքով և ջրել։ Եւ երբ աղբին սաստիկ տաքութիւնն անցնի և հասնի 25 աստիճանի, յայնժամ կրնան գործածուիլ ածուները։

Բայց եղերդները ածուներուն վրայ դնելէն առաջ, պէտք է քակել տրցակները, կտրել տերևները և միայն թողուլ մէջ տեղի բողբոջը․ նոյնպէս և արմատները չափով կտրելէն ետքը նորէն կապել մանր տրցակներ, և դնել ածուներուն վրայ ոտքի վրայ կեցուցած կամ առ ի չեղ, այլևայլ կարգ ետևէ ետև, և իւրաքանչիւր կարգին մէջ դնել պարարտ հող, քիչ թանձրութեամբ։ Իսկոյն կը սկըսին արմատները բողբոջել, և 10 կամ 12 օրուան մէջ տերևները կ'երկննան մինչև 30 հարիւրորդամետր։ Եւ որպէս զի շուտով մեծնան, լաւ է ամէն օր ոռոգել մաքուր ջրով, վասն զի ջրոյ փոքրիկ ատեղութիւն մը կը փտեցնէ



Ձև 70 · Մօրուացան․

տերևները։ Երբ տերևներն հասնին 30 հարիւրորդամետր երկայնութեան, կրնան կտրել և վաճառել որ ճերմկցած կ'ըլլան. և կ'ըսուին Մօրուշացաւ, (գղ. Barbe de capucin. իտ. Barba di capuccino). մօրուքի թելերուն նման երկնցած ըլլալուն համար (Զև 70)։



Զև 71. Եղերդ սրճոյ.

230. Եղերդ սրճոյ (Chicorée à café). — Եղերդի տեսակ մի է շատակեաց, որ կը մշակուի իր թանձր, մեծ և իլաձև արմատներուն համար (Զև 71), որ խորովելէն, մանրելէն և աղալէն ետև կը գործածուի սրճոյ տեղ, կամ խառնելով կէս առ կէս սրճոյ հետ։ Սա է վայրենի եղերդի տեսակ մը լայն տերևներով, որ հիմա կը մշակուի նաև Եւրոպիոյ մէջ, ի Գաղղիա, Բելգիա, Հոլանդա և ի Գերմանիա։

Կը սերմանեն զայն ապրիլի կամ մայիսի մէջ, հողը լաւ փորելով և պատրաստելով, և ցանելով առ մի հարիւրակալ երկիր 2 կամ 3 հազարագրամ։ Կը ծլին սերմերը 15 օրուան մէջ, և տունկերուն մեծնալուն ժամանակ երկու երեք անգամ պէտք է քըքրել հողը և մաքրել խոտերը, և սեպտեմբերի սկիզբ կտրել ամբողջ տերևներն՝ որպէս զի արմատները լաւ եւս մեծնան, և կտրած տերևները տալ կերակուր անասնոց։ Եւ հոկտեմբերի մէջ հանել արմատները հողէն, դիզել իրարու վրայ՝ ծածկելով յարդով, որպէս զի սառոյցը չվնասէ։

Մի հարիւրակալ երկրէ որ լաւ մշակուած ըլլայ, կ'ելնէ 20 կամ 25 հազար հազարագրամ արմատ։

231. Արմատները յետոյ կը տարուին ի գործատուն, ուր թեթև կերպով վրան կը կեղևեն, կը լուանան, և վերջը կը կտրեն չորս կտոր դէպ երկայնութիւն, և այս կտորներն ալ կը ջարդեն մանր 5 կամ 6 հարիւրորդամետր երկայնութեամբ, և յետոյ իսկոյն կը տանին ի ջերմանոց, ուր տաքութիւնն ըլլայ 50 կամ 55^0, և դարձնել երբեմն երբեմն վեր ի վայր։ Տասներկու ժամ բաւական է արմատները կատարեալ կերպով չորնալու համար։

Ջերմանոց մը ուր երկու վառարան ըլլայ, կրնայ չորցնել 24 ժամուան մէջ 300–400 հազարագրամ արմատ։

Արմատներն այսպէս չորնալէն ետքը կը դրուին տաքցած երկաթի գլաններու մէջ, որք կը դառնան իրենց առանցքին վրայ, և այսպէս քիչ ժամանակի մէջ տաքութեամբ կ'աղանձին արմատները. և երբ աղանձումը կամ խորովումն աւարտելու վրայ է, խառնել 2 առ 100 ի կշիռ մեղրաջուր կամ կարագ, և նորէն դարձնել գլանները քանի մը վայրկեան։ Մեղրաջուրը կամ կարագը կու տայ եղերդի արմատոց կտորներուն վրայ փայլունութիւն մը և գոյն թուխ կամ կարմրագոյն թուխ, որով կը նմանին սրճոյ հատերուն։

Խորովելէն ետքը հանել գլաններէն և տարածել տափարակ երկաթի ամաններու վրայ որ պաղի, և պաղելէն ետքն աղալ և փոշիացնել։

Եղերդի 100 հազարագրամ արմատները չորնալով կը մնան 30 կամ 35 հազարագրամ, և 100 հազարագրամ չորցած արմատներէ կը մնայ խորովելով 75 հազարա-

գրամ, և 100 հազարագրամ խառնված արմատներէ կ'ելնէ 40 հազարագրամ փոշի որ կրնայ փոխանակել սրճոյ տեղ. մնացած 60 հազարագրամն են մանր կըտորներ։

Եղերդի սրճոյ 100 հազարագրամ փոշին կ'արժէ 30–50 փրանկ ի Գաղղիա։

232. Մշակութիւն. — Եղերդի որևիցէ տեսակը կը սիրէ կակուղ, զով և խոր փորուած հող, և պարարտացած փտեալ բուսահողով։

Սերմանելը կը սկսի փետրուարի կամ մարտի մէջ, երբ օդը ներէ և հողը չոր ըլլայ, և կը շարունակի մինչև սեպտեմբեր ամիս։ Սերմը հազիւ քիչ մը հողով ծածկելու է, և գետինը միշտ թաց պահել ջրելով։

Թէ որ ուզեմք եղերդին տերևներն ուտել իբրև աղցան, յայնժամ պէտք է խիտ ցանել, գործածելով 10 գրամ սերմ առ մի կալ։ Սերմը 8 օրուան մէջ կը ծլի, և կը պահէ իր բեղնաւորութիւնը 6–8 տարի։

Տերևներն երբ բարձրանան 5–10 հարիւրորդամետր, կտրել և աղցան ընել։ Տերևները կտրելէն վերջ պէտք է քրքրել հողը և մաքրել, և շուտով նորէն կ'աճին տերևներն, այնպէս որ ամսէ մը ետքը նորէն կրնամք կըտրել, և այսպէս հետ զհետէ մինչև երեք, չորս անգամ տարւոյ մէջ։ Բայց երեքէն աւելի պէտք չէ կտրել, վասն զի կը լեղինան։ Լաւ է ուրիշ ածուներու վրայ նորէն ցանել։

Ըստ ծնէս կը հետևի, թէ եղերդի տերևներով գարնան, ամարան և աշնան կրնամք լաւ աղցան ունենալ։ Բայց եղերդի յարգը շատ աւելի մեծ է ձմերան մէջ մեզի մատակարարած աղցանով, որ աւելի փափուկ է և անոյշ, և թէ ինչպէս պէտք է ընել խօսեցանք վերը 228, 229։ Ձմերան համար եղած եղերդը պէտք է տողի վրայ ցանել, տողերն իրարմէ 10 հարիւրորդամետր հեռաւորութեամբ։

233. Հաւաքումն եղերդի սերման. — Եղերդի սերմը առնելու համար պէտք է ընտրել աղէկ արմատներն որ բացօթեայ մեծցած ըլլան և ձմերան մէջ պատսպարեալ ցրտէն, բայց ոչ ճերմկցած, և որոց տերևներն երբէք

կտրած չըլլան։ Եւ երբ մեծնան ծաղկաբեր ցօղունները, դնել քովերնին խեչակ մը և կապել, և ծաղկելէն ու սերմը հասուննալէն ետև ժողվել։

Թէպէտ եղերդն իբրև խաւարտ չունի դառնիճի և հազարի յարգը, բայց գարնան և ձմերան մէջ կը փընտրուի։ Եւ դաշտերու մէջ ինքնին բուսած գարնանային եղերդը հաճելի է ամենուն և առողջարար կերակուր, թէպէտ և քիչ մը լեղի։

ԳԼՈՒԽ Գ

ԴԱՌՆԻՃ ԿԱՄ ԵՂԷԳ. (տճ. Հիւնտիւպա. գղ. Chicorée endive, Scarole. իտ. Indivia. լտ. Cicorium endivia).

234. Նկարագիր. — Դառնիճն եղերդի ազնիւ տեսակ է, որ և կ'ըսուի Եղէգ։ Տերևներն արմատէն վեր կը բուսնին, բազմաթիւ, լայնարձակ, ողորկ, և գետնի

Ձև 72. Դառնիճ կամ Եղէգ լայնատերև.

վրայ տարածուած (Ձև 72)։ Պէտք է սերմանել յունիսի մէջ, աշնան ուտելու համար իբրև աղցան։

Ասոր մէկ տեսակն է իտալականը, գանգրաձև եր-

կայն տերևներով (Ձև 72'), որ շատ համեղ է, և կ'ուտուի աշնան. ձմերան ցուրտին չդիմանար։ Ասոր տերևներուն խարիսխը վարդագոյն կ'ըլլայ։

235. Մշակութիւն. — Դառնիճը կը սիրէ կակուղ, զով և խոր փորուած հող, և պարարտացած փտեալ բուսահողով. թաց հողի մէջ չյաջողիր։ Կրնամք ունենալ բովանդակ տարին, սերմանելով հետզ հետէ։

Սերմանելով փետրուարի սնդուկներու մէջ, և մարտի փոխադրելով պատրաստած ածուներու վրայ որ ըլլան արեգդէմ, կրնամք ուտել մայիսի կիսոյն։ Յետոյ սերմանելով մայիսի մէջ, կրնամք ուտել օգոստոսի մէջ, և սերմանելով յուլիսի և օգոստոսի մէջ, ուտել աշնան և ձմերան մէջ։

Ձև 72'. Դառնիճ գանգրատերև.

Սերմանելէն ետքը պէտք է ջրել ստէպ, մինչև որ ծլին, և երբ քիչ մը մեծնան, փոխադրել պատրաստած ածուներու մէջ և տնկել իրարմէ 25 հր.մ հեռաւորութեամբ դէպ ամէն կողմ, և տնկելէն վերջ ջրել կամ ոռոգել։ Եւ մինչև որ կատարեալ աճումն առնուն, քըրքրել հողն երկու երեք անգամ և մաքրել խոտերէ։

236. Դառնիճն աւելի յարգ կ'առնու եթէ իր տերևները ճերմկնան։ Եւ այս դիւրաւ կ'ըլլայ եթէ փոխատնկելէն 40 օր ետքը, տունկին ամէն տերևներն իրարու հետ միացնելով կապեմք մէջ տեղէն յարդով, և արմատին վրայ քիչ մը հող տամք։ Շաբաթէ մը ետքը ուրիշ

կապ մը ընել իւրաքանչիւր տնկոյն ծայրն, այնպէս որ 10 օրէն ետքը կրնամք կտրել և վաճառել։

Եւ որպէս զի լաւ յաջողի սպիտակացումը, կապելու գործն ընելու համար ընտրել չոր օդ, այս ինքն, թէ տունկին տերևները և թէ գետինը չոր ըլլայ. և ջուր տալու ժամանակ զգուշանալ որ տերևներուն վրայ չգայ, այլ միայն արմատներուն։ Եւ որովհետև սպիտակացումը քիչ ժամանակի մէջ կ'ըլլայ, անոր համար պէտք է հետզհետէ ընել, և ոչ ամէնքը միանգամայն։

237. Ձմերան պահելու համար օգոստոսի մէջ ցանուած տունկերը, պէտք է նոյեմբերի մէջ կապել վերոյիշեալ կերպով, և փոխադրել իրենց արմատին հողով գինետուն կամ ուրիշ յարկածածուկ տեղ մը, և դնել քովէ քով բարակ աւազի մէջ որ քիչ մը թրջած ըլլայ։

Կրնամք նաև բացօթեայ պարտէզի մէջ պահել, փորելով փոս մը 20 հարիւրորդամետր խորութեամբ որ ըլլայ չոր տեղ, և հոն դնել արմատները քովէ քով իրենց հողով մէկտեղ։ Այս գործը ընել չոր և տաք օրուան մէջ. և փոխատնկելու ժամանակ կտրել ամէն փտած և կոտրած տերևները։ Եւ փոսին վրայ եղեգներով և տերևներով ծածք մը ընել, որ անձրև և հող ներս չմտնեն։

238. Հաւաքումն սերման. — Սերմը հաւաքելու համար պէտք է օգոստոսի մէջ ցանուած ու ձմեռը պահուած տունկերէն ընտրել աղէկները, և մարտի մէջ տնկել բացօթեայ տեղ, և հոն թողուլ մինչև որ ծաղկի և ծաղկաբեր ցօղունը չորնայ, այս ինքն, մինչև օգոստոսի վերջ կամ սեպտեմբերի սկիզբ։ Եւ տունկերը կորզելով հանելէն ետքը, թողուլ քանի մը օր գիշերային ցօղի տակ և արևու մէջ, որպէս զի սերմերը դիւրաւ կարենան ելնել իրենց պարկուճներուն մէջէն, որ կ'ըլլայ ծեծելով։

Մի կալ երկրի համար հարկաւոր է 3 գրամ սերմ, որ կը պարունակէ 2400 հատ սերման։ Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը 5 կամ 6 տարի։

239. Բերք. — Մի կալ երկիր կրնայ բերել մինչև 1000 դառնիճ, որ կշռեն 3000-3500 հազարագրամ։ Դառնիճն է առողջարար խաւարտ մը, որ կ'ուտուի հում իբրև աղցան։

ԳԼՈՒԽ Դ

ՃԱՐՃԻՐ, ՃԱՐՃՐՈՒԿ ԿԱՄ ԿՌԱԲԱՆՋԱՐ. (*տճ.* Չիրձիր. *գղ.* Pissenlit. *իտ.* Radicchiella. *լտ.* Leontodon taraxacum).

240. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն, չատակեաց, եղերդի ցեղէն, որ ինքնին կը բուսնի դաշտերուն մէջ, և կ'ուտուի իբրև աղցան։ Բայց հիմայ Գաղղիացիք ազնուացուցած են այս բոյսը և պարտիզի խաւարտներուն կարգն անցուցած, որոյ տերևներն աւելի մեծ և բազմաթիւ կ'ըլլան, որք են լերկ և ճղճղկէն (Ձև 73)։*



Ձև 73. *Ճարճիր, Ճարճրուկ կամ Կռաբանջար.*

Ամէն տարի արմատէն դէպ ի վեր կը բարձրանան տերևները խմբովին, և գարնան ասոնց մէջ տեղէն կը բարձրանայ սնամէջ ցօղուն մը, որոյ գագաթան վրայ կը բուսնին գլխաձև դեղին ծաղիկներ, որք երկկարգ ծաղկապատներ ունին։ Պտուղն ունդ մի է, որոյ ծայրն է ատամնաձև և բարակ, և կը վերջանայ մազեղէն ցըցունքով։

241. Մշակութիւն. — *Ճարճիրը կը բուսնի որևիցէ հողոյ մէջ որ աւազուտ և հողածխային չըլլայ, բայց կը սիրէ աւելի թաց հող։ Կը սերմանեն մարտի կամ ապրիլի մէջ, և բուսնելէն վերջ կը հանեն և կը տնկեն տողի վրայ, տողերն իրարմէ 20–25 հարիւրորդամետր հեռի։ Շատ խնամք չուզեր, բաւական է մի անգամ քրքրել հողը։*

Ազնուացած ճարճրուկը կ'ուտուի երբեմն կանաչ տերևներով, բայց լաւագոյն կը համարուի տերևները ճերմըկցնելն, որով կ'երթայ նաև իր դառնութիւնը։ Դիւրին կերպն է հող տալ արմատներուն վրայ և ծածկել տունկերն իբր 15 հարիւրորդամետր կակուղ հողով հոկտեմբերի մէջ, և այսպէս տերևները հողին մէջէն վեր բարձրանալով կը ճերմկին, և երբ իրենց ծայրերը հողէն դուրս ելնեն մարտէն մինչև մայիս, պէտք է կտրել և ուտել, որք են միզեցուցիչ և մաքրիչ արեան։

ԳԼՈՒԽ Ե

ԱՍՈՐԵԱԿ ԿԱՄ ԱՍՈՐԵԿ. (*տճ.* Ռոգգա սալաթա. *գղ.* Roquette. *իտ.* Ruchetta. *լտ.* Eruca sativa).

242. Նկարագիր. — *Տարևորական բոյս մի է որ կը բարձրանայ մինչև 25–30 հարիւրորդամետր, և է երկու տեսակ, ընտանի և վայրի։ Տերևներն արմատին չորս կողմէն կը տարածուին խիտ, երկայն և կանաչ (Ձև 74), և մէջ տեղէն կը բարձրանայ ծաղկաբեր և մազոտ ցօղունն, որոյ ծաղիկներն են ողկուզաձև, ճերմակ, և կը ծաղկին մայիսի կամ յունիսի մէջ, և նարնջի ծաղկին հոտն ունին։ Սերմը պարփակեալ է գլանաձև ողորկ պատենի մէջ։ Կ'արձակի տերևներէն զօրաւոր և անախորժ հոտ մը, և իրենց համն է կծու և տտիպ, և սակայն կը գործածուին իբրև համեմ և աղցան, և են գրգռիչ և հակընդահար։*

Վայրի ասորեակն է ուղղաբուն, բազմաճիւղ և տարածեալ. տերևները փետրաձև, ծաղիկներն դեղին, և կը բուսնի ամէն աւազուտ և թաց տեղ, պատերու քով, և կ'ուտուի իբրև աղցան:

Զև 74. Ասորեակ կամ Ասորեկ. — Բոյս և ծաղիկ.

243. Մշակութիւն. — *Ուզելով մշակել ասորեակը, պէտք է գարնան կանուխ սերմանել ցանցառ, և սերմանումը շարունակել ամբողջ ամառը: Տունկերը մեծնալէն ետքը քրքրել հողը, ջուր տալ, և եթէ շատ խիտ են՝ անօսրացնել: Եւ այսպիսի խնամքով կը նուազի տերևներուն դառնութիւնը: Սերմանելէն վեց շաբաթ ետքը կրնամք կտրել դալար ընձիւղները և ուտել, որ կը բուսնին արմատին քովէն:*

ԳԼՈՒԽ Ձ

ԱՆՄԵՌՈՒԿ ԿԱՄ ՓՐՓՐԵՄ. (*տճ.* *Սէմիզ օթու.* *գղ.* Pourpier. *իտ.* Porcellana. *լտ.* Portulaca oleracea).

244. Նկարագիր. — *Անմեռուկն՝ որ մեր մէջ կ'ըսուի նաև* **փրփրեմ, փերփերամ, փարփար, կոձկորակ,** *և վայրենին՝* **խառնձուկ**, *է բոյս խոտեղէն, բնիկ Հնդկաստանի, բայց Եւրոպիոյ մէջ ալ ընտանեցած է և յաճախեալ:*
Կ'ուտուի նաև վայրենին, հում իբրև աղցան, կամ քացախի մէջ դրած և կամ եփած, և է զովարար և միզեցուցիչ:
Անմեռուկի տունկը կը տարածուի գետնի վրայ, ունելով հիւթեղ և լերկ ճիւղեր. տերևներն են մսոտ, փայլուն, ձուաձև և ամբողջ. ծաղիկներն՝ անկոթ և դեղին, սերմերն՝ բազմաթիւ և աժենամանր (Զև 75):

Զև 75. Անմեռուկ կամ Փրփրեմ. — Բոյս և ծաղիկ.

245. Մշակութիւն. — *Փրփրեմի գործածութիւնը Արևելք ինչպէս նաև Գաղղիա յաճախեալ է և ունի քանի մը տեսակ: Կը սիրէ աւազուտ, արևոտ և պարարտ երկիր, չդիմանար ձմեռան ցրտոյն: Պէտք է ցանել ապրիլի մէջ տողի վրայ, տողերն իրարմէ 25 հարիւրորդամետր հեռի, և սերմը ծածկել քիչ հողով: Կը ծլին 15 օրուան մէջ, և կը պահեն իրենց բեղնաւորիչ կարողութիւնը 2 կամ 3 տարի: Հարկաւոր է 5 գրամ սերմ մի կալ երկրի համար:*
Տունկերը մեծնալէն ետքը կրնամք բովանդակ տարւոյն մէջ կտրել ծայրերը և ուտել աղցանի պէս:
Մի անգամ սերմանելէն ետքը հարկ չէ կրկին սեր-

մանել։ Բաւական է թողուլ տունկ մը որ ինքնին ծաղկի և բերէ իր սերմը, անկէ յաջորդ տարին շատ տունկեր կը բուսնին։

ԳԼՈՒԽ Է

ԳԱՌՆԱԼԵԶՈՒ ՊՍԱԿԱՁԵՒ. (*գղ.* Corne de Cerf. *իտ.* Minutina, Erba stella. *լտ.* Plantago coronopus).

246. Նկարագիր. — *Գառնալեզուի* (*գղ.* Plantain) *տեսակ մի է, որոյ մազոտ տերևները կը նմանին եղջերուի եղջերաց, անոր համար գաղղիերէն ըսուած է* Corne de

Ձև 76. Գառնալեզու պսակաձև. — Տերև և տունկ ծաղկաբեր.

Cerf. *և որովհետև արմատին չորս կողմ բոլորաձև տարածուած են գետնոյ վրայ* (Ձև 76), *ուստի և մեք ուզեցինք կոչել Գառնալեզու պսակաձև լատիներենի թարգմանութեամբ։ Արմատն է իլաձև, սերմը խիստ մանր, զոր պէտք է ցանել մարտի մէջ կակուղ և զով հողոյ վրայ։*

Երբ գարնան երկննան տերևներն իբր 10 *հարիւրորդամետր, կրնամք կտրել և ուտել իբրև աղցան։ Եւ կըտրելը կրնամք կրկնել այլևայլ անգամ, թէպէտ և ամառը քիչ մը կը կարծրանան տերևները. բայց այս կարծրութիւնը կ՚անցնի ստէպ ոռոգելով։ Եւ սակայն լաւագոյն է նորէն սերմանել՝ փոխանակ ստէպ ջրելու։ Ի վերջոյ այս ալ կ՚աւելցնեմք՝ թէ քիչ է այս տնկոյն գործածութիւնն իբրև խաւարտ։*

ԳԼՈՒԽ Ը

ԿՈՏԻՄՆ, ԿՈՏԵՄ. (*տճ. թէրէ. գղ.* Nasturtium, Cresson alénois. *իտ.* Agretto. *լտ.* Lepidium sativum).

247. Նկարագիր. — *Է բոյս տարեւոր ուղղարմատ, որոյ ցօղունը կը բարձրանայ* 20–30 *հարիւրորդամետր. տերևներն են համադիր և բոլորշի* (Ձև 77), *բայց կ՚ըլլան նաև երկայնաձև։ Ծաղիկներն են մանր, ճերմակ և հասկաձև, և կը բուսնին տերևոց անթին մէջ, որոց կը յաջորդեն իրենց սերմունք՝ պարփակեալ խորխի մէջ։ Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը* 2–4 *տարի։ Կոտիմն է բնիկ Պարսկաստանի, ուր ինքնին կը բուսնի վայրենի վիճակի մէջ։*

248. Մշակութիւն. — *Այս տարեւոր բոյսը շուտ աճող բոյս մի է, որոյ տերևներն թէպէտ կծու են, բայց կը գործածուին գարնան և ձմերան աղցաններուն հետ խառն, իբրև զարդ։ Սկսեալ մարտէն կրնամք սերմանել փոքրիկ ածուներու մէջ, և յետոյ շարունակաբար ամէն* 15 *օրն։ Որ և իցէ հողոյ մէջ կրնամք սերմանել, բայց կը սիրէ աւելի կակուղ հող. և ամառը պէտք է շուքի տակ պահել զով տեղ, ապա թէ ոչ տերևները կը կարծրանան և տունկը շուտով հունտի կ՚երթայ։*

Կրնամք սերմանել անկարգ կերպով, բայց լաւ է սերմանել տողի վրայ, որով դիւրաւ կ՚ըլլայ խոտերը մաքրել

և քաղել տունկին տերևները: Ձմեռը պէտք է սերմանել սնդուկներու մէջ և պահել տաք տեղ:

Հազիւ թէ տերևները կը բարձրանան 6 հարիւրորդամետր, պէտք է քաղել և ուտել, և որչափ ստէպ քաղուին այնչափ աւելի կ'ուշանայ ծաղկելը:

249. Սերմը ժողվելու համար պէտք է կոտեմի ընտիր տունկերէն քանի մը հատը թողուլ ծաղկելու, առանց կտրելու իրենց տերևները, և ծաղկանց ճիւղերը կը բարձրանան մինչև 40–50 հարիւրորդամետր, և երբ դեղնին այդ ճիւղերը, կտրել և ժողվել սերմը:

Ձև 77. Կոտիմ, կոտեմ. — Ճիւղ և տունկեր.

Կոտեմի սերմէն կ'ելնէ եղ ընտիր 50 առ 100 այրելու համար: Ուստի այս տունկը կրնայ նաև արտերու մէջ ցանուիլ եղը հանելու համար, գիտնալով մանաւանդ որ այս տունկին մշակութիւնը դիւրին է նկատմամբ պարարտութեան և կլիմայի: Օրինակ իմն, բատատի բերքը կամ ուրիշ բերք մը քաղելէն ետքը, որոյ համար հարկաւոր եղած ըլլայ հողը քրքրել, պէտք է հերկել հողը, և մարտին մանկեռել և ապրիլի սկիզբ սերմանել տողի վրայ կոտիմ, բայց այնպէս որ տողերուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնն ըլլայ 25 հարիւրորդամետր, և տունկերուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնը 7 հարիւրորդամետր, որով կալի մը համար կ'երթայ 160

գրամ սերմ: Երբ տունկերն սկսին ծլիլ և հողէն դուրս ելնել, պէտք է տափել գլանով հողին երեսը, որպէս զի արմատները հաստատուին, և երբ բարձրանան տունկերը 5 հարիւրորդամետր, քրքրել հողը, և յունիսի վերջ քաղել:

250. Թշնամիք կոտեմի. — Կոտեմի գլխաւոր թշնամին է հողին լուն, զոր կրնամք ջնջել մրով և փոշւով կրոյ:

ԳԼՈՒԽ Թ

ՋՐԿՈՏԻՄՆ, ՋՐԿՈՏԵՄ. (*տճ. Սու թերէսի. գղ.* Cresson de fontaine *կամ* d' eau. *իտ.* Crescione. *լտ.* Nasturtium).

251. Նկարագիր. — *Ջրկոտեմ է բոյս շատակեաց, նման կոտեմի, որ և կ'ըսուի Ջրախոտ, Ջրխոտ, և կը բուսնի ինքնին վտակաց եզերքը և թաց տեղեր. որոյ ցօղուններն են դատարկ և խաղեալ, տերևներն բաղկացած մանր և բոլորաձև կանաչ տերևակներէ, ծաղիկներն են ճերմակ, մանր, ծայրաբոյս և ողկուզաձև, որք կը բացուին յունիս և յուլիս ամիսներուն մէջ, և կուտան երկայն, գլանաձև և ծուռ պատիճներ, լցուած մանր և կարմրագոյն հատերով:*

252. Մշակութիւն. — Թէպէտ ջրկոտիմը կը բուսնի սովորաբար գետերու և հոսանուտ ջրերու եզերքը, բայց թէ որ մէկն ուզէ մշակել նաև պարտիզի մէջ, պէտք է տնկել ոռոգելի կորիներուն եզերքը փոքրիկ բոյսեր, և թողուլ առանց կտրելու որ ինքիրեն աճին և բազմանան: Եւ երբ մեծնան և երկննան 15–20 հր.մ, պէտք է կըտրել, բայց արմատէն իբր 10 հր.մ վեր, որպէս զի նորէն բողբոջին շուտով:

Ջրկոտեմի տերևներն են մաքրիչ արեան, միզեցուցիչ և հակընդահար, և կ'ուտուին հում իբրև աղցան, խոռոված միսին հետ:

ԳԼՈՒԽ Ժ

ՎԱՐՍԱՄՆ ԿԱՄ ՍԻՍԱՄԲԱՐ. (*պրս. Փերսամ. իտ.* Rucola selvatica. *լտ.* Sisymbrium murale).

253. Նկարագիր. — *Ջրկոտեմի նման բոյս մի է, և սով միայն կը տարբերի, որ Ջրկոտեմն է ջրային և սա ցամաքային, և կը բուսնի ինքնին աւազուտ տեղեր, պատերու քով և բարձր և չոր տեղեր։*

Կը բարձրանայ մինչև մի մետր. տերևներն եղջերուի եղջիւրներուն կը նմանին, նեղ և լերկ, և կպած են ճիւղերուն համադիր կերպով, և ունին սեպհական հոտ մը սուր, և կը գործածուին իբրև աղցան։ Ծաղիկներն են դեղին, որոց նեկտարին փափաքող են մեղուներն։ Ով որ ուզէ մշակել այս տունկը. պէտք է ցանել գարնան և աշնան։

ԳԼՈՒԽ ԺԱ

ՀՆԴԻԿ ԿՈՏԻՄՆ ԿԱՄ ԱԽՐԻԶԱՆ. (*տճ. Հինտ թերեսի. գղ.* Capucine. *իտ.* Nasturzio d' India, Astuzia. *լտ.* Tropaeolum).

254. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն տարեոր կամ երկարակեաց, որոյ ծղօտն է երկայն, պատաղիճ և մագլող, ծաղիկներն մեծ և անկանոն, պտուղներն կամ սերմերն են երեք հատ իրարու հետ միացած և ամփոփած առանձին խորշերու մէջ* (*Ձև* 78)։

Հնդիկ կոտիմը կամ Ախրիզանը հարաւային Ամերիկայէն եկած է Եւրոպա, և երկու տեսակ կը բաժնուի. Մեծ և փոքր։

Մեծ ախրիզանը (*գղ.* Grande capucine. *իտ.* Astuzia maggiore) *կը բարձրանայ մինչև* 2 *մետր. տերևներն են բոլորշի, վահանաձև և անկիւնաւոր. ծաղիկներն գեղեցիկ, դեղին նարընջագոյն, որ հետ զհետէ կը բացուին ամբողջ ամառը, և կը գործածուին զարդի և աղցանները համեմելու։ Իր դեղին պտուղները՝ նաև ծաղկանց կոճակները՝ քացախի մէջ դրուելով կը գործածուին կապարի պէս։ Տունկին ամէն մասերն ունին կոտիման յատկութիւն, և են միզաբեր և հակընդահար։*

Փոքր ախրիզանը (*գղ.* Petite capucine. *իտ.* Astuzia minore) *կը բարձրանայ մինչև* 8 *հր.մ. իր տերևներն են երկայնաձև, և գրեթէ ամբողջ. ծաղիկներն դեղին և միայն տակի երկու թերթերն կարմրով բըծաւորեալ, և կը գործածուին վերնոյն պէս։ Կան տեսակներ որոց արմատն է մսոտ և ելընդաւոր, և կ'ուտուի մանր բողկի պէս։*

255. Մշակութիւն. — *Ախրիզանը կը մշակուի պարտէզներու մէջ աւելի զարդի համար քան թէ իբրև խաւարտ։ Իրեն գեղեցիկ դեղին ծաղիկները կը գործածուին աղցանները զարդարելու, և կ'ուտուին նաև իբրև աղցան իր տերևներով միասին, համեմելով եղով և քացախով։*

Կը սիրէ կակուղ և պարարտ հող, և անյարմար է փոխատնկութեան։ Կ'ուզէ արեգդէմ դիրք, և կը խորշի ցրտէն։ Ուզելով պահել ձմերան մէջ իրեն գեղեցիկ և հոտաւէտ ծաղիկներուն համար, պէտք է ցանել թաղարներու մէջ։

Սերմանելը կ'ըլլայ ապրիլի մէջ տողի վրայ, տողերն իրարմէ հեռի 40 հր.մ։ Սերմերը կը պահեն իրենց բեղնաւորիչ կարողութիւնը 3 կամ 4 տարի։

Ձև 78. Հնդիկ կոտիմ կամ Ախրիղան. — Ճիւղ ծաղկաբեր.

Ախրիղանի ճիւղերն երկայն և տկար ըլլալուն համար, պէտք է խուիներ դնել քովը լուբիայի պէս։

Ամառը պէտք է քրքրել հողը, մաքրել վնասակար խոտերէ, և ջրել առատապէս երեկոյեան դէմ։

Սերմանելու համար պէտք է ժողվել այն սերմը որ նախ կը հասուննայ և կը սկսի կորուսանել իր կանաչ գոյնը։

ԳԼՈՒԽ ԺԲ

ԲԱԶՈՒԿ. (տճ. Բազր. գղ. Bette. իտ. Bietola. լտ. Beta vulgaris).

256. Նկարագիր. — Բոյս մի է խոտեղէն, ուղղաբուն, որ կը բուսնի Ասիոյ և Եւրոպիոյ ամէն կողմ. արմատներն են գլանաձև, տերևներն լայն և ձուաձև, ի գոյն բաց կանաչ, ծաղիկներն մանր և ճերմակ։ Կ'ուտուին բազկին տերևները խաշելով սպանախի պէս. կը գործածուին նաև խարանները պատելու, ըլլալով կակղեցուցիչ և մեղմիչ ցաւոց։

257. Մշակութիւն. — Դժուարին չէ այս տնկոյն մշակութիւնը, կը բուսնի ամէն հողի մէջ։ Բայց որպէս զի տերևներն ըլլան մեծ և թանձր, պէտք է հողը խոր փորել և պարարտացնել։

Սովորաբար կը սերմանի յուլիսի կամ օգոստոսի մէջ, և բուսնելէն ետքը պէտք է զատել և տնկել իրարմէ 40 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և ստէպ ոռոգել, և երբեմն թեթև կերպով հողը քրքրել և հանել վնասակար խոտերը։ Բազուկը ցրտին կը դիմանայ, այնպէս որ եթէ ձմեռը խիստ սաստիկ ըլլայ, բաւական կը համարուի արմատները ծածկել յարդով կամ տերևով։ Եւ գարնան կ'ուռճանան և կ'արձակեն մեծամեծ տերևներ, և այս երկրորդ տարւոյն մէջ կը հասուննան սերմերն, զոր կը ժողվեն սեպտեմբեր ամսոյն մէջ, նախապատիւ համարելով այն սերմերն որք կը գտնուին գլխաւոր ճիւղերուն մէջ տեղ. ծայրինները հասարակ կը համարուին։

ԳԼՈՒԽ ԺԳ

ԳԱՂՏԻԿՈՒՐ. (*տճ. Լիսանի սէվր. գղ.* Bourrache. *իտ.* Borrana, Borraggine. *լտ.* Borrago officinalis).

258. Նկարագիր. — *Բոյս խոտեղէն, տարեւոր, որոյ ծղօտն է թանձր, մսոտ և հիւթեղ, և կը բարձրանայ 30–40 հարիւրորդամետր. տերեւներն են ձուարդ, և ցըցուած սուր մազերով, ինչպէս նաեւ ծղօտն. ծաղիկներն են ողկուզաձեւ, երկնագոյն կապոյտ։*

Կ'ուտուին տերեւներն սպանախի պէս, և ծաղիկներն են առ ի վարդ աղցանի։

259. Մշակութիւն. — *Գաղտիկուր կը բուսնի ինքնին պարարտ հողերու և փլատակներու մէջ։ Կրնամք նաեւ մշակել ցանելով իր սերմը պարարտ և կակուղ հողոյ վրայ։ Որ և իցէ ամսոյ մէջ կրնամք սերմանել, բայց լաւ է մարտի մէջ սերմանելն, որպէս զի գալար տունկերը կարենամք ուտել, խորովելով հաւկիթով և ալիւրով։*

Գաղտիկուրը մի անգամ սերմանելէն ետքը ինքնին կը բազմանայ ինկած սերմերով, և խնամքի կարօտ չէ։

Այս տունկին հին ժամանակ շատ յարգ կը տրուէր, և կը գործածուէր բժշկութեան մէջ իրեն խաշոյն իբրեւ քրտնաբեր և միզեցուցիչ։

Եզնալեզու (*գղ.* Buglosse. *իտ.* Buglossa) *ըսուած տունկն ալ գաղտիկուրի տեսակէն է, և նոյն բաներու կը գործածուի։ Այս երկու բոյսերն իրարու հետ կը շփոթին։*

ԳԼՈՒԽ ԺԴ

ՍՊԱՆԱԽ ԿԱՄ ՇՈՄԻՆ. (*տճ. Իսփանախ. պրս. Իսփանաճ. գղ.* Epinard. *իտ.* Spinace. *լտ.* Spinaccia oleracia).

260. Նկարագիր. — *Բոյս մի է խոտեղէն, տարեւոր, բնիկ Պարսկաստանի, որ Արաբացւոց ձեռքով մտած է Սպանիա և տարածուած Եւրոպիոյ ամէն կողմ։ Շոմինը երկու տեսակ է. մին կ'ըսուի Շոմին ճապարակ, կլոր և մանր տերեւներով և փշոտ հատերով. միւսն Շոմին Հոլանդայ՝ ողորկ հատերով, մեծ թանձր, տիգաձեւ և հակադիր տերեւներով, որոց անութներուն մէջ կը բուսնի կապուտակ ծաղիկը ողկուզաձեւ, որուն կը յաջորդէ սերմը* (Ձե 79)։

261. Մշակութիւն. — *Սպանախը լաւ կը յաջողի կակուղ և պարարտ հողի մէջ, որ փտեալ աղբով պարարտացած ըլլայ, և հիւսիսային հովերէ պատսպարեալ։*

Կրնամք սպանախը ուտել տարւոյն մէջ ինն ամիս ամբողջ, վասն զի դիւրաւ մեծցող բոյս մի է, և կ'ուտուի մսի հետ խաշելով։ Բայց դժուարամարս է, և անյարմար տկար ստամոքսներու, թուլացուցիչ և կակղիչ։

Պէտք է սերմանել հետ զհետէ սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներու մէջ, որպէս զի կարենամք ձմեռը և գարնան ուտել, և սերմանել փետրուարի և մարտի մէջ, որպէս զի կարենամք ապրիլի և մայիսի մէջ ուտել. մայիսէն անդին լաւ չէ սերմանել, որովհետեւ կը դեղիննան ճիւղերը և տերեւները։

Սերմը հողին երեսը ցանելէն ետքը պէտք է բահով վրան զարնել, որ մասամբ հողին մէջ մտնէ։ Կալ մը երկիր աշնան ցանելու համար հարկաւոր է 250 *գրամ սերմ, և* 400 *գրամ՝ գարնան ցանելու համար։ Եթէ օդը տաք ըլլայ իբր* 20°, *շուտով կը ծլի սերմը* 3 *օրուան մէջ, ապա թէ ոչ քիչ մը կ'ուշանայ։ Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը մինչեւ* 5 *տարի։*

262. *Երբ նորատունկ բոյսերը չորս տերեւ կ'արձա-*

կեն, պէտք է անօսրացնել, և հանածները կրնան համարուիլ առաջին բերք։ Եւ այս անօսրացումը այլևայլ անգամ ընել՝ որչափ մեծնան տունկերը, և հանածները ուտել. իսկ անոնք որ կը մնան, աւելի աճումն կ՚առնուն։ Բոյսերուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնն 8

Ձև 79. Սպանախ կամ Շոմին.

հարիւրորդամետրէ պակաս պիտի չըլլայ։ Ձմերուն մէջ կրնամք մի անգամ կտրել, և գարնան երկու անգամ. անկէ վերջ բոյսը կը սկսի իր ծաղկաբեր ծղօտն արձակել, ուստի լաւ է նորոգել սերմը։

Պարտիզպանը պիտի գիտնայ որ լաւ շոմին ունենա-

լու համար պէտք է հողը առատապէս պարարտացնել սերմանելու ժամանակ, և յետոյ ոռոգել նաև աղբաջրով։ Ձմերային սպանախին հողը պէտք է երկու անգամ քրքրել և ամառայինը մի անգամ։ Պարտիզպաններու համար աւելի շահաւոր է ձմերայինը։

Մի կալ երկրէն կրնամք տարին 150 հազարագրամ սպանախի բերք առնուլ։

Սառոյցը երբեմն կ՚ուռեցնէ տերևները և կ՚երևին թափանցիկ, և կը համարուին իբրև խանգարեալ. բաւական է ժողվելէն ետքը դնել պաղ ջրոյ մէջ, և յետոյ կաթեցնել ջուրը, որով կ՚առնուն տերևներն իրենց առաջին կանաչութիւնը առանց ամենևին վնասուելու։

263. Հաւաքումն սերման. — Սպանախը երկաբնակ բոյս մի է, այս ինքն, կան բոյսեր որ մինակ արու ծաղիկներ կը բերեն, և կան որ մինակ էգ ծաղիկներ կը բերեն։ Ուստի, սերմը ժողվելու համար պէտք է թողուլ ածուներէն մին որ սերմանած ըլլայ աշնան։ Բեղնաւորութիւնը կատարուելէն վերջ, գարնան պէտք է հանել արու ծաղիկ ունեցող տունկերը, և էգ ծաղիկ ունեցող տունկերուն քով դնել փոքրիկ նեցուկներ։ Մայիսի կամ յունիսի մէջ սերմերը բաւական հասունցած ըլլալով, պէտք է կտրել ծաղկաբեր ծղօտները և չորցնել շուքի մէջ, և յետոյ ծեծելով ժողվել սերմը, մաքրել, և լաւագոյնը դնել փոքրիկ քսակներու մէջ և պահել չոր տեղ։

ԳԼՈՒԽ ԺԵ

ՀԱՒԱՂՑԱՆ. (*տճ.* *Գուզուզ կէվրէյի.* *գղ.* Mâche, Doucette. *իտ.* Valeriana domestica, Dolcetta. *լտ.* Valerianella).

264. Նկարագիր. — *Բոյս մի է տարեկոր կամ երկտարեկոր, մեծամեծ, մութ կանաչ և ձուարդ տերևներով որք կը տարածուին գետնոյ վրայ, և ունին ուռոյցներ, մանաւանդ ծայրերուն վրայ* (Ձև 80), *և են համեղաճաշակ և փափուկ, և կը գործածուին իբրև աղցան: Տերևներուն մէջ տեղէն կը բարձրանայ ծղօտ մը* 15 *հարիւրորդամետր բարձրութեամբ, որոյ գագաթին վրայ կ'ելնէ փունջ մը ծաղկանց՝ ճերմակ:*

Ձև 80. Հաւաղցան. — Բոյս և տերև.

265. Մշակութիւն. — *Հաւաղցանը շատ տեղ ինքնին կը բուսնի դաշտերու մէջ. և եթէ ուզեմք մշակել, պէտք է սերմանել օգոստոսի կէսէն վերջ, որպէս զի կարենամք աշնան աղցանի տեղ գործածել. և սերմանել հոկտեմբերի մէջ, որպէս զի փետրուարի և մարտի մէջ կարենամք ուտել:*

Հաւաղցանը կը յաջողի աւելի պինդ հողերու մէջ: Սերմանելէն ետքը բաւական է թեթև հողով ծածկել:

Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը 4–6 *տարի: Մի կալ երկրի համար հարկաւոր է* 20 *գրամ սերմ, որոյ մէջ կը գտնուին* 14,000 *հատ, դնելով տունկերուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնը* 8 *հարիւրորդամետր: Լաւագոյն է երկրորդ տարւոյն սերմը քան թէ առաջին տարւոյն: Սերմերը կը ծլին* 8–12 *օրուան մէջ:*

Օգոստոսի մէջ սերմանելէն ետքը եթէ չոր երթայ եղանակը, պէտք է ջրել. ուրիշ խնամքի կարօտ չէ, բաց ի խոտերը մաքրելէն:

Եւ որպէս զի յունուարի վերջ կարենամք ունենալ այս աղցանը, բաւական է ձմեռը ծածկել վրան հարևանցի կերպով անասնոց յարդախառն աղբով:

ԳԼՈՒԽ ԺԶ

ՔԵՂԱԿԱՐՈՍ. (*տճ.* *Ֆրէնկ մաղտանոս.* *գղ.* Cerfeuil. *իտ.* Cerfoglio. *լտ.* Chærephyllum sativum).

266. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն տարեկոր կամ երկտարեկոր, հակադիր, լերկ և փետրաձև տերևովք, և հովանոցակերպ ծաղկամբք* (Ձև 81): *Կը բարձրանայ մինչև* 30 *հարիւրորդամետր, և է խոտ անուշահոտ և համեմային, և կը գործածուին իր տերևներն իբրև զարդ աղցանի, կամ իբրև համեմ կերակրոյ:*

267. Մշակութիւն. — *Դիւրին է քեղակարոսի մշակութիւնը. և կրնամք ամբողջ տարուան մէջ ունենալ, սերմանելով ամէն ամիս, ամառն ընտրելով շուք տեղ, և գարնան ու աշնան արևոտ տեղ:*

Կը յաջողի ամէն հողի մէջ, միայն թէ շատ թաց չըլլայ: Իր սերմն է երկայն բարակ և սրածայր, սև գունով, և կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը 3–4 *տարի, և կը ծլի* 10 *օրուան մէջ: Կը ցանուի տողի վրայ, և տողերն իրարմէ հեռի* 15 *հարիւրորդամետր: Մի կալ գետնոյ համար հարկաւոր է* 15 *գրամ սերմ: Ցանելէն ետքը պէտք է բարակ հողով ծածկել, և ուրիշ խնամքի պէտք չունի, միայն թէ մաքրել հողը վնասակար խոտերէ: Ի Գերմանիա քեղակարոսի սերմը հացի հետ կը խառնեն:*

Քեղակարոսի են իբրև տասնեհինգ տեսակք, որոց քանի մի տեսակը դնեմք հոս, որք կ'ուտուին:

Քեղակարոս մշկահոտ. (գղ. Cerfeuil musqué). — Է երկարակեաց բոյս մը, մեծ և պղուամազոտ տերևներով, և ունի սաստիկ հոտ, ոչ այնչափ ախորժելի, և կը գործածուի հասարակ քեղակարոսի պէս։

Ձև 81. Քեղակարոսի ճիւղ ծաղկաբեր.

Քեղակարոս անիսոնահոտ կամ Սպանիական. (գղ. Cerfeuil anisé կամ d' Espagne). — Է երկարակեաց բոյս մը անիսոնի հոտով և համով, և մեծ քան զհասարակ քեղակարոս։ Կը սերմանեն աշնան։

Քեղակարոս ելընդային. (գղ. Cerfeuil tubéreux). — Է երկտարեոր բոյս, որոյ արմատն է մսոտ, ալերային, քիչ մը անոյշ, արտաքուստ սև գորշախառն և ներսէն ճերմակ դեղնագոյն, և ունի փոթորի ձև (Ձև 82)։ Ասոր արմատը շատ համով է, փոքր ստեպղինի մեծութեամբ։ Կը սերմանեն սեպտեմբերի մէջ և կը ժողվեն գարնան։ Կրնամք նաև սերմանել գարնան և ուտել աշնան. բայց որովհետև սերման բեղնաւորիչ կարողութիւնը քիչ ժամանակ կը պահուի, ուստի ձմեռը պէտք է սերմնարանի մէջ հողի տակ դնել։ Այն արմատներն որ սերման համար պիտի պահուին, պէտք է գարնան կամ աշնան նորէն տնկել, իրարմէ մի մետր հեռաւորութեամբ, և սերմը կը հասուննայ յուլիսի կամ օգոստոսի մէջ։



Ձև 82. Քեղակարոս ելընդային.

Քեղակարոս Պրեսկոտի. (գղ. Cerfeuil de Prescott). — Է բնիկ Սիբերիոյ և արևելեան Ռուսաստանի, որ վերնոյն նման է և կը մշակեն իր ելունդին համար, որ է կոնաձև երկայն, գորշագոյն, ալերային և շատ համով։ Կը սերմանեն ապրիլի մէջ, և կը քաղեն արմատներն օգոստոսի վերջ, որ կրնան պահուիլ չոր և առողջ տեղ մինչև գարուն։

ԳԼՈՒԽ ԺԷ

ԹԱՂԹ ԿԱՄ ԹԱՅԼ. (*տճ. Թաղէբ, Գօյունն սարմաշըղը. գղ.* Arroche, *անգ.* Belle-Dame. *իտ.* Atreplice. *լտ.* Atriplex hortensis).

268. Նկարագիր. — *Է բանջար խոտոյ տարեոր, որ կը բարձրանայ մինչև 1,50 մետր. տերևներն են մեծ, թանձր և տիգաձև (Ձև 83), որ կրնան ըլլալ ըստ զանազան տեսակաց կանաչ, կարմիր, ճերմակ և դեղին: Կը գործածուի սպանախի տեղ, անոր համար կ'ըսուի նաև Հոռոմ սպանախ, բայց համը սովորական սպանախէն հասարակ է: Կրնամք սերմանել մարտէն մինչև սեպտեմբեր. և իր տերևն'րն ամարան տաքին օգտակար կերակուր կ'ըլլան:*

Ձև 83. Թաղթ կամ Թայլ.

Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը մինչև 2 տարի. և պէտք է ժողվել ընտիր բոյսերէն երբ հասուննան:

Այս բոյսն իր գոյնզգոյն տերևոց համար կը ցանուի նաև զարդի համար, և կը բուսնի ամէն հողոյ մէջ:

ԳԼՈՒԽ ԺԸ

ՄՈԼՈՇ ԿԱՄ ԲԱՂՐՋՈՒԿ. (*տճ. Էպէմկիւմէճի. գղ.* Mauve. *իտ. և լտ.* Malva)..

269. Նկարագիր. — *Բաղրջուկն որ և կ'ըսուի Աղէկտակ, և յունական անուամբ Մոլոշ, երկու տեսակ է.*

Ձև 84. Մոլոշ կամ Բաղրջուկ. — Ծիւղ ծաղկաբեր.

մին կ'ըսուի Բաղրջուկ փոքր, միւսը Բաղրջուկ մեծ կամ վայրի. երկուքն ալ օգտակար են, և կը բուսնին ինքնին աշխարհիս ամէն կողմ դաշտերուն մէջ:

Առաջին տեսակն է խոտեղէն, տարեօրական, բազմաճիւղ և գետնատարած. տերևներն երիկամնաձև, մազոտ կամ լերկ. ծաղիկներն մենակեաց, ճերմակ վարդագոյն, բուսեալ տերևոց անթին մէջ, և կը բացուին ամառը:

Երկրորդ տեսակն է թփեղէն, երկարակեաց, և կը բուսնի անմշակ տեղեր, ուղղարմատ և բազմաճիւղ, որոյ ճիւղերը շիտակ կը բարձրանան իբր 30 հարիւրորդամետր բարձրութեամբ. տերևներն են լայն, ատամնաձև և ըլթակաւոր, ծաղիկներն մեծ և ծիրանեգոյն (Զև 84):

270. Հին ժամանակ Յունաց և Հռովմայեցւոց մէջ, և Արևելք մինչև հիմայ կ'ուտեն բաղրջուկի տերևները իբրև խաւարտ, եփելով մսի հետ, և կը համարուի թուլացուցիչ:

Կը գործածուին բժշկութեան մէջ երկու տեսակին ալ տերևները՝ խիւս ընելով իբրև կակղիչ և հասունցնող եւլունդներու, և իրենց եփուկը՝ գրեխի. ծաղիկներն են օգտակար կուրծքի, ուստի և իրենց թուրջը կամ օշարակն է դարման հարբխի և բորբոքման շնչողական գործարանաց:

Անասուններն չեն սիրեր ուտելու բաղրջուկի տերևներն, ոչ դալար և ոչ չոր: Ուստի բաղրջուկը պարտիզպանութեան մէջ չունի այնչափ կարևորութիւն:

Կան բաղրջուկի տեսակներ որ կը գործածուին զարդի տեղ պարտէզներու մէջ, իրենց ծաղկանց համար:

Ամէն տեսակ բաղրջուկները կը բազմանան սերմով:

ԳԼՈՒԽ ԺԹ

ԹՐԹՆՋՈՒԿ. (տճ. Գուզու գուլաղը. արաբ. Հումայզ. գղ. Oseille. իտ. Acetosa. լտ. Rumex acetosa).

271. Նկարագիր. — Բոյս խոտեղէն ուղղարմատ, որոյ ծաղկաբեր ծղօտներն կը բարձրանան մինչև 60 հարիւրորդամետր, և են մառնէաձև. տերևներն համադեր, որ գետնէն վեր քիչ կը բարձրանան, և են տիգաձև կամ գառան ականջի նման, ասոր համար կ'ըսուի նաև Գառնականջ, և սովորաբար կ'ըլլան կարմրորակ (Զև 85): Ծաղիկներն են մանր, կապուտակ, փընջաձև և արուէգ. և իւրաքանչիւր ծաղիկ կը բերէ մի սերմ եռանկիւնի բրգաձև:

Զև 85. Թրթնջուկ.

272. Մշակութիւն. — Թրթնջուկի տեսակները շատ են, որոց տերևները կը գործածուին կերակրոյ, և են առողջարար և զովացուցիչ. և շատ անգամ կը խառնուին սպանախի հետ, ասոր անհամութիւնը չափաւո-

րելու համար։ Թրթնջուկէ կ՚ելնէ թթուշուտ թրթնջկա-կան, որ է բուսական թթուուտ մը բաղադրեալ կալիոյ հետ։

Թրթնջուկի տեսակներուն մէջ երևելի է Գաղղիոյ Պելվիլի Թրթնջուկն, որոյ տերևներն սովորական Թըր-Թընջուկէն աւելի մեծ են և կանաչ գունով. համով շատ չեն տարբերիր սովորականէն, և թերևս քիչ մը աւելի թթու են. և այս տեսակն է որ Պարիսու մօտերը կը մշակուի։

Թրթնջուկն ինքնաբոյս տունկ մի է. կը սիրէ աւելի բարձր դիրք բլրոյ վրայ, կակուղ և պարարտ հող և ոչ խոնաւ։ Կը բազմանայ սերմով, և կը սերմանեն գար-նան։ Պէտք չէ շատ ջուր տալ, որովհետև համը կը պակսի։ Ծլելէն 20 օր ետքը կրնամք կտրել տերևները և ուտել, և այսպէս շարունակել 20 օրէ 20 օր։ Սեպ-տեմբերէ մինչև ձմեռ ուշացնել կտրելու ժամանակները։

Թրթնջուկը կրնայ բազմանալ նաև բաժնելով տուն-կերը, որք կրնան տևել մինչև 10 տարի։ Բայց լաւ է երկու, երեք տարին անգամ մը նորոգել տունկերը, որով և վնասակար խոտերէ ազատ կը մնայ։

273. Վնասակար որդունք Թրթընջկի. — *Թրթնջուկը բաց ի խղունջէ և լորտուկէ՝ ունի ուրիշ վնասակար որ-դեր ալ, որ կ՚ուտեն իր տերևները մայիս և յունիս ա-միսներուն մէջ, մանաւանդ եթէ եղանակը չոր երթայ։ Ասոնց դարման կը համարուի, խառնել ջրոյ հետ 1 առ 100 ծծըմբաբնածխատ կալիոյ և ջրել։*

ԳԼՈՒԽ Ի

ԹԹՈՒԿԻՉ. (*տճ. Եապան գուզու գուլաղը. գղ.* Oxalide. *իտ.* Acetosella. *լտ.* Oxalis crenata).

274. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն շատակեաց, որոյ տերևներն արմատէն վեր կը բարձրանան, և կը բաղկանան երեք տերևակներէ (Ձև 86)։ Թթուկիչն ունի շատ տեսակներ, որոցմէ ոմանք կը մշակուին զարդի հա-*



Ձև 86. Թթուկիչ.

մար, իրենց գեղեցիկ տերևներուն և ծաղիկներուն պատ-ճառաւ, և ոմանք իբրև խաւարտ ուտելու համար, որոց տերևներն են կծուահամ։ Կայ տեսակ մը որ ունի ե-լընդաւոր արմատներ, ձուաձև երկայն, ընկուզաչափ, ճերմակ դեղնորակ կամ վարդագոյն, և այդ տեսակն

Ամերիկայի Պերու աշխարհին մէջ սովորական ուտելի բոյս մի է իր ելունդին համար (Ձև 87)։ Այս ելունդները ի սկզբան են սաստիկ թթու. բայց դրուելով բըրդեայ պարկերով արևու մէջ, կորուսանեն բոլորովին իրենց թթուութիւնը և կ'ըլլան անոյշ և ալերային։ Իրեն



Ձև 87. Թթուկիչ ելընդաւոր.

տերևները և դալար բողբոջները կը գործածուին թըրթընջուկի պէս աղցանի։

Թթուկիչը Եւրոպայի մէջ քիչ կը գործածուի իբրև խաւարտ։

Առ նախնիս մեր Թթուկիչ և Թրթնջուկ նոյն կը համարուին, որք իրարու նման բոյսեր են։

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԽԱՒԱՐԾԻԼ. (տճ. Րավենտ. գղ. Rhubarbe. իտ. Rabarbaro. լտ. Rheum).

275. Նկարագիր. — *Խաւարծիլ, որ և կ'ըսուի Գաքծիղ, Իշխուճ, է բոյս խոտեղէն, շատակեաց, ուղղաբուն և բազմատեսակ, որ կը գործածուի իբրև դեղ, իբրև կերակուր և իբրև զարդ, և ամէն տեսակներն ալ նշանաւոր են իրենց արմատական և մեծատարած տերևներուն գեղեցկութեամբ (Ձև 88)։ Է բնիկ հիւսիսային կողմանց Ասիոյ, Ճենաստանի և Թաթարաստանի, բայց կը բուսնի նաև Եւրոպիոյ մէջ։*

Խաւարծիլի արմատներն են մեծ և բազմաճիւղ, և կ'ըսուին Խաշնդեղ, Գաք, և կը գործածուին իբրև դեղ. և են արտաքուստ սևորակ, և ներքուստ դեղին կարմրորակ։ Ծաղկաբեր ցօղուններն կը բարձրանան մինչև երկու երեք մետր, և կը բերեն փնջաձև ճերմակ ծաղիկներ. որոց կը յաջորդէ իրենց սերմը եռանկիւնաձև։

Ձև 88. Խաւարծիլ.

276. Մշակութիւն. — *Խաւարծիլը կը սիրէ խոր և կակուղ հող և ոչ կաւեղէն, և ըստ բաւականին պարարտ. որ և իցէ դիրք իրեն յարմար կու գայ։ Որովհետև արմատները խոր կը թափանցեն, անոր համար պէտք է աշնան երկիրը փորել գէթ 60 հարիւրորդամետր խորութեամբ և լաւ մը աղբել։ Եւ գարնան ապրիլի մէջ բահով նորէն փորել և բանալ փոքրիկ ակօսներ իրարմէ 30 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և անոնց մէջ*

ցանել սերմը։ Եւ երբ ծլին և մեծնան տունկերը, զատել և հեռացնել իրարմէ, այնպէս որ ձմեռը դեռ չհասած տունկերը 30 հարիւրորդամետր հեռի ըլլան իրարմէ։

Յաջորդ գարնան հանել տունկերը և փոխադրել ուրիշ տեղ, որ պատրաստուած ըլլայ վերոյիշեալ կերպով, և հոն տնկել նորատունկ բոյսերն իրարմէ 1 կամ 1 ½ մետր հեռաւորութեամբ, ըստ տեսակի խաւարծիլի։

Խաւարծիլը կրնայ բազմանալ նաև արմատները բաժնելով, բայց նայելու է որ շատ խոր չտնկուին։

Երկրորդ տարին հազիւ կրնան կտրուիլ մանր տերևներն ուտելու համար, և կը գործածուին աղցանի։ Եւ որպէս զի տունկը չտկարանայ, լաւ կ'ըլլայ կտրել ծաղիկները և չթողուլ որ բարձրանան։ Եւ այսպէս կրնայ խաւարծիլի տունկ մը ապրիլ մինչև 20 տարի։

Ուրիշ խնամք չուզեր, բայց եթէ հողը կակուղ պահել և մաքրել վնասակար խոտերէ, և աշնան ծածկել աղբով, և նոյն աղբը գարնան հողի տակ դնել։

277. *Խաւարծիլի արմատները դեղի գործածելու համար պէտք է հանել զիրենք հողին մէջէն չորրորդ տարիէն ետքը, և այն ատեն կ'ունենան հարկաւոր պնդութիւնը։ Յետոյ մաքրել, կեղուել և կտրել կտոր կտոր 8 կամ 10 հարիւրորդամետր լայնութեամբ, և դնել օդոյ մէջ որ չորնան։ Բաւական չորնալէն ետքը անցնել կըտորները քուղի վրայ և կախել չոր և հովահար տեղ մը որպէս զի կատարեալ չորնան, որ կը տևէ ամիս ու կէս կամ երկու ամիս։ Համն է դառն և փոթոթիչ, և ունի մասնաւոր համեմային հոտ մը, և է կազդուրիչ ստամոքաց։ Եթէ ծամեմք բերնով կը դեղինցնէ թուքը։*

Հայաստան սովորութիւն է կախել խաւարծիլի արմատը խաչանց պարանոցէն, զոր կը ծամեն խաչինք, և է թեթև մաքրողական, և ասոր համար ըսուած է Խաչնդեղ։

ԳԼՈՒԽ ԻԲ

ԽՄԻ, ԲՈԽՆԻ. (*տճ.* *Մէլայիք օթու.* *արաբ.* *Ախշնպիշլիւ խիթայի.* *գղ.* Angélique, Archangélique. *իտ.* Angelica, Arcangelica. *լտ.* Archangelica officinalis).

278. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն շատակեաց, որ ինքնին կը բուսնի խոնաւ տեղեր, և երկու երեք տարուան մէջ կ'առնու իր կատարեալ աճումը։ Կը սիրէ թաց և շուք տեղ, բայց ոչ կաւեղէն հող։*

Բնիկ է Ասորւոց երկրին, բայց կը բուսնի նաև աշխարհիս ամէն կողմ։ Ունի շատ տեսակներ, բայց գըլխաւոր երկու տեսակ կը բաժնուի. առաջինը կոչեմք Խմի (Ձև 89), որ աւելի փոքր կ'ըլլայ, և երկրորդը Բոխնի (Ձև 90), որ մեծ և գերագոյն է քան զառաջինն։ Երկուքն ալ իրարու նման են, հակադիր, կանաչ և ճղճըղկէն տերևներով և հովանոցակերպ, ճերմակ և հոտաւէտ ծաղիկներով, և կը բարձրանան մինչև 1 կամ 2 մետր։ Երկրորդ տեսակին իսկական իւղն, որ է դեղնագոյն և կ'ելնէ սերմերէն և արմատէն (Ձև 91), աւելի գերազանց է և առատ քան թէ առաջինէն ելածը, և կը գործածուի շաքարեղինաց, անուշի և զանազան ըմպելեաց։ Դալար տերևներն ալ ալքոհլի մէջ դնելով և պատրաստելով այլևայլ կերպով՝ կը գործածուին խմորեղինաց մէջ։

Եւրոպիոյ հիւսիսային կողմ, Նորվեգիա և Լապոնիա, կը գործածեն խմին իբրև խաւարտ, և կ'ուտեն հում կամ եփած, և մանաւանդ ուրիշ կերակրոյ հետ խառն։ Կը գործածուի և իբրև դեղ միզեցուցիչ, քրտնաբեր և ստամոքական։

Տնկոյն ամէն մասերը կ'արձակեն անոյշ հոտ, և ունին դառն և մշկային համ։*

* *Մեր լեզուին մէջ* Խմի *և* Բոխնի *համանիշ են, ինչպէս Եւրոպացւոց մէջ* Angélique *և* Archangélique.

279. Մշակութիւն. — Խմին կրնամք բազմացնել արմատները բաժնելով։ Բայց թէ որ ուզեմք առատապէս ունենալ, պէտք է սերմանել, և բոյսերը ծլելէն և

Ձև 89. Խմի. — Ճիւղ ծաղկաբեր.

աճելէն ետքը՝ բաժնել սեպտեմբերի մէջ և տնկել տողի վրայ, իրարմէ 50 հարիւրորդամետր հեռաւորութեամբ

դէպ ամէն կողմ։ Եւ եթէ յաջորդ գարնան արձակեն ծաղկի ծղօտներ, լաւ է ամէնքն ալ կտրել երբ սկսին ծաղկիլ։

Մեծ խնամքի կարօտ չէ, միայն թէ պէտք է ստէպ

Ձև 90. Բոխնի. — Ճիւղ ծաղկաբեր.

հողը քլքրել և մաքրել վնասակար խոտերէ, և աղբել երբեմն երբեմն։

Տերևներուն քաղոցը կ'ըլլայ երկրորդ տարին մայիսի վերջերը, և արմատներուն քաղոցն աշնան։ Սերմը առնըլոյ համար պէտք է թողուլ անարատ քանի մը տունկեր,

և հաւաքել օգոստոսի մէջ, և աշնան ցանել: Կը գըտնուի 1 գրամ սերմին մէջ 150–180 հատ:

280. *Վայրի խմւոյ տերևները կու տան գեղեցիկ դեղին ներկ մը, որով կը ներկեն ասուեղէնները դեղին ոսկեգոյն: Մեղուները շատ փափաքող են այս տնկոյն ծաղկին, և կազմեն ընտիր մեղր: Շատ անգամ կը տընկեն խմին վտակաց եզերքը զարդի համար, և կազմեն գեղեցիկ թփիկներ:*

Ձև. 91. *Արմատ բոխնոյ.*

Խմին է նշանակ խանդի, և հին բանաստեղծներն անոր տերևներով կը պսակուէին: Է նաև նշանակ մելամաղձոտութեան:

ԳԼՈՒԽ ԻԳ

ՄԱՆԱՆԻԽ ԿԱՄ ՄԱՆԱՆԵԽ. (*տճ.* *Հարտալ.* *գղ.* Moutarde. *իտ.* Senapa. *լտ.* Sinapis alba-nigra).

281. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն, տարևոր և ուղղարմատ, և կը բարձրանայ իբր կէս մետր և աւելի. ծաղիկներն են ողկուզաձև, դեղին տժգոյն, և իւրաքանչիւր ծաղիկն ունի 4 թերթ, և ծաղկանց տեղ կը փոխանակեն մանր բոլորշի հատեր, նեղ և փոքր պատենի մէջ ամփոփած: Տերևներն են մեծ և ատամնաձև և կորդ շօշափելու:*

Մանանեխը գլխաւոր երկու տեսակ ունի, ճերմակ և սև մանանեխ, ըստ գունոյ սերմանց:

Սև մանանեխը կը բուսնի ինքնին ցորենոյ արտերուն մէջ: Կը սերմանեն առատապէս իրեն սերմանց համար, որ ի սկզբան կարմիր կ'ըլլան, բայց հասուննալով կը սևնան: Սերմանց ալիւրէն կը շինեն բժշկութեան մէջ խիստ տապացուցիչ, որ կ'այրէ կը կարմրցնէ դրուած տեղը: Ալիւրն է դեղնորակ:

Ճերմակ մանանեխին հատերը կրկնապատիկ մեծ են քան սև մանանխոյ, բայց զօրութիւնը տկար: Կը գործածուի բժշկութեան մէջ իբրև ըմպելի բացողական և մաքրիչ արեան:

Կայ երրորդ տեսակ մը մանանեխի որ կ'ըսուի Ճենական մանանեխ, որոյ տերևները կաղամբի տերևներուն պէս մեծ են, և կը գործածուին իբրև խաւարտ ուտելու, և ունին սպանախի համ: Կը ցանուի օգոստոսի մէջ պարարտ հողի վրայ, և պէտք է ջրել քանի որ չէ ծըլած, և ամիս ու կէսէ ետքը կրնամք սկսիլ կտրել տերևները և ուտել քանի որ դալար են, որ կը տևէ մինչև ձմեռ, և ունի հաճոյական և տտիպ համ մը:

282. *Մանանեխի սերմանց ալիւրով, և մանաւանդ սև մանանեխի ալիւրով կը շինուին ամոքանք կերակրոյ, որ կը հալեցնէ կերակուրը և կը բանայ մարդոյս ախորժակը: Եւ կ'ըլլայ հարելով գինւոյ քացխոյ հետ,*

կամ քացախի և գարեջրոյ հետ։ Ոմանք կը խառնեն նաև շաքար։

Ճերմակ մանանխոյ հատերէն կ'ելնէ ճմլելով իւղ վառելու համար 30–33 առ 100, ուստի և կրնամք մշակել իբրև բոյս իւղաբեր։ Իսկ սև մանանխոյ հատերէն կ'ելնէ իւղ 15–20 առ 100։

283։ Մշակութիւն. — Մանանեխը կը սիրէ թեթև, կրային կամ գայլախազային հող. և շուտով բուսնելուն համար՝ կրնամք ցանել ցորենի արտերուն մէջ կամ երկրին առաջին բերքը կտրելէն ետև։ Եւ կը ցանուի 12–15 հազարագրամ առ մի հարիւրակալ երկիր։ Ուստի մանանեխն աւելի արտերու բոյս է քան թէ պարտիզի։

Բայց թէ որ մանանեխը տնկեմք սերման համար քան թէ տերևներուն համար, յայնժամ բաւական կ'ըլլայ 3–5 հազարագրամ առ մի հարիւրակալ, և տունկերը պէտք է տնկել տողի վրայ, և տողերը իրարմէ հեռի 40–50 հարիւրորդամետր, որպէս զի արօրակով կարենամք մէջ տեղէն անցնիլ և հողը քրքրել։

Մի հարիւրակալ հողէ կ'ելնէ մանանեխի հատ 15–25 հարիւրալիտր, և մի հարիւրալիտրը կը կշռէ 68–72 հազարագրամ։

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽԱԻԱՐՏՔ ՈՐՈՑ ՊՏՈՒՂԸ ԿԱՄ ՍԵՐՄԸ Կ'ՈՒՏՈՒԻ

ԳԼՈՒԽ Ա.

ԼՈՒԲԻԱ ԿԱՄ ԼՈՎԻԱՍ. (*տճ. Ֆասուլիա. գղ.* Haricot. *իտ.* Fagiolo. *լտ.* Phaseolus).

284. Նկարագիր. — Բոյս խոտեղէն, տարևոր, պատղիճ և ընդաբեր. որոյ տերևներն կը բաղկանան երեք մանր և սրտաձև տերևակներէ. Ծաղիկներն կ'ելնեն տերևոց անթին մէջ ողկուզաձև, ճերմակ, դեղին կամ կարմրորակ, որք հաճոյ են մեղուաց։ Ծաղիկներուն կը փոխանակէ իրենց ունդը կամ սերմը՝ երկայն և երկբացիկ պատճի մէջ ամփոփեալ, թուով հինգ վեց հատ, ձուաձև, քիչ մը տափարակ, և զանազան գունով, այս ինքն ճերմակ, դեղին, կարմրորակ, մանուշակագոյն, սև, և այլն։ Ընդոց մեծութիւնը, գոյնը և ձևը կը տարբերի ըստ զանազան տեսակաց լուբիայի (Ձև 92)։ Լուբիան պատղիճ տունկ ըլլալուն պատճառաւ, երբոր քիչ մը բարձրանայ գետնէն, պէտք է քովը խեչակներ դնել, որպէս զի փաթութի անոնց վրայ և կարենայ կենալ կանգուն։ Կայ տեսակ մը լուբիա ցած, որ կ'ըսուի թզուկ լուբիա (*գղ.* Haricot nain), որ կարօտ չէ խեչակի (Ձև 93)։

285. Մշակութիւն. — Լուբիան կը խորշի սառուցէ, սաստիկ խոնաւութենէ, և ամառային չարաչար տաքէն և երկար անձրևներէն։ Կը սիրէ կակուղ և ընտիր հող, և ոչ պինդ և կաւեղէն։ Լուբիան, ինչպէս նաև ուրիշ ամէն ընդեղէնք, պարարտութեանց համար այնչափ կա-

րոտ չեն բորակածնի, զոր կը ծծեն հողէն իրենց արմատներով և օդէն իրենց տերևներով, այլ կարօտին աւելի կալւոյ և լուսածնական թթուուտի: Պէտք չէ տալ դալար աղբ, այլ մշակել այն հողին մէջ որ տարի մը առաջ աղբով պարարտացած ըլլայ.

Կրնամք գործածել հետագայ տարրաբանական պարարտութիւնը մի կալ հողի համար. այս ինքն 3-5 հազարագրամ վերլուսածնատ կրոյ 18^0, 1-2 հազարագրամ ծծըմբատ կալւոյ կամ քլոռուկ կալւոյ:

Ձև 92. Լուբիա պատաղեհ.

Ձև 93. Լուբիա Թզուկ.

286. Լուբիայի մշակութիւնը կրնայ տարբերիլ ըստ նպատակին որուն պիտի ծառայէ: Այս ինքն,

Ա. Ուտել լուբիան դալար իր պատենով մէկտեղ:
Բ. Ուտել լուբիայի ունդը դալար:
Գ. Ուտել լուբիայի ունդը չոր՝ ձմերան մէջ:

287. Մշակութիւն դալար լուբիայի. — Դալար լուբիայի համար պէտք է ընտրել այն տեսակները որ աւելի յարմար են, ինչպէս է Թզուկ լուբիան, Բեդգիոյ սև լուբիան: Յաջողելու գլխաւոր պայմանն է Թացութենէ զգուշանալ, որ կը փտեցնէ տունկերը: Պէտք է սերմանել յունուարի սնդուկներու մէջ որ պատրաստած ըլլան բուսահողով և ընտիր հողով, և ծածկած ապակւով, և ներքին տաքութիւնն ըլլայ 15-18^0: Քիչ անգամ պէտք է ջրել, և այն առաւօտուն երբ բացուին վրայի ապակի պատուհանները, որպէս զի խոնաւութիւնը ցնդի:

Սերմանելէն երկու ամիս ետքը կրնամք ժողվել դալար լուբիաները: Բայց թէ որ չուզեմք ունենալ խիստ վաղահաս դալար լուբիաներ, ինչպէս են վերոյիշեալ կերպով սնդուկներու մէջ մեծցածները, կրնամք սերմանել սնդուկի մէջ փետրուարի կիսոյն, և ապրիլի մէջ փոխադրել պատրաստած ածուներու մէջ, որ ըլլան արեգդէմ և պատսպարեալ եղեամէ, ծածկելով գիշերները չարժական խսիրներով:

Եւ եթէ ուզեմք բացօթեայ ցանել, պէտք է սերմանել Թզուկ լուբիայի սերմը մարտի կիսէն մինչև ապրիլի վերջ, լաւ պատրաստած ածուներու մէջ, որ ըլլան արեգդէմ և պաշտպանեալ ցուրտ հովերէ: Կը ցանուի տողի վրայ, տողերն իրարմէ 30 հարիւրորդամետր հեռի, բանալով փոքրիկ ծակեր 8 կամ 10 հարիւրորդամետր խորութեամբ, և իրարմէ 30 հր.մ հեռաւորութեամբ, և իւրաքանչիւր ծակին մէջ դնել 5 կամ 6 հատ, և ծածկել հողով: Եւ երբ սերմը ծլի և արձակէ 4 տերև, քըրքրել հողը, տալ պարարտութիւն տարրաբանական: Եւ մինչև որ տունկերը մեծնան և տան իրենց պտուղը, պէտք է մէկ երկու անգամ քըքրել հողը, որով աւելի կը մեծնան լուբիայի պատիճները. զորս պէտք է քաղել դալար և հետ զհետէ և խաւրել ի վաճառ, և չթողուլ որ կատարեալ կերպով հասուննան:

Թէ որ ուզեմք ամարան մէջ ունենալ դալար լուբիա, պէտք է սերմանել յունիսի և յուլիսի մէջ զով տեղ մը: Եւ եթէ ուզեմք աւելի ուշ ունենալ, պէտք է սերմանել օգոստոսի և սեպտեմբերի մէջ:

Իսկ սերմը ժողվելու համար պէտք է սերմանել ապրիլի վերջ, և ամէն խնամք ունենալ, և առնցմէ չկտրել ամենևին դալար պատենով լուբիաները՝ մինչև որ կատարեալ կերպով հասուննան և դեղիննան:

288. **Մշակութիւն լուբիայի որոց ունդը դալար կամ չոր պիտի ուտուի**. — *Այս տեսակին սերմը կը սերմանի ապրիլի կիսէն մինչև սեպտեմբերի վերջ։ Կրնայ ըլլալ թզուկ տեսակէն և կրնայ ըլլալ բարձր և պատաղիճ տեսակէն։ Թզուկ տեսակին մշակութեան կերպը նոյն է վերնոյն հետ, իսկ բարձր տեսակէն երբ ուզեմք ցանել, պէտք է ցանել տողի վրայ, տողերն իրարմէ* 60 *հարիւրորդամետր հեռի, նոյնչափ և ծակերն իրարմէ հեռի; դնելով իւրաքանչիւր ծակին մէջ* 8 *կամ* 10 *հատ սերման։ Երբ ծլին և արձակեն* 4 *տերևներ, պէտք է քրքրել հողը. և երբ սկսին բարձրանալ և խիղբ արձակել, պէտք է արմատներուն հող տալ և դնել քովերնին խեչակներ՝ որպէս զի կարենան կպչիլ անոնց վրայ։ Երբ պտուղը հասուննայ, այս ինքն երբ պատճին մէջի հատերը մեծնան և պատիճը դեղիննալու վրայ է, ժողվել, և մէջի ունդը ուտել դալար։*

Իսկ չոր ուտելու համար ուրիշ բան պէտք չէ ընել, բայց եթէ թողուլ տունկերը մինչև որ սկսին չորնալ, և յետոյ քաղել և դնել արևու մէջ որ լաւ մը չորնան, և ապա ծեծել, որով ունդերը դուրս կը թափին պատիճներուն մէջէն, զոր կը ժողվեն և կը պահեն, ձմեռն ուտելու համար։

289. *Մի կալ երկրի մէջ լուբիա ցանելու համար հարկաւոր է* 800 *գրամ սերմն։ Եւ մի կալ երկրին տուած բերքն է* 3,50–4 *կենդինար պատիճ, կամ* 1,15–1,30 *կենդինար չոր ունդ։ Մի հարիւրալիտր չոր ունդը կը կշռէ* 77–78 *հազարագրամ։*

ԳԼՈՒԽ Բ

ԴԿՈՒՂ ԿԱՄ ՊՈՐՏԻԿ. (*տճ.* *Պէօյրիւլճէ.* *գղ.* Dolic. *իտ.* Fagiolo dall' occhio. *լտ.* Dolichos).

290. **Նկարագիր**. — *Է բոյս տարևոր ընդաբեր, լուբիայի ցեղէն, և բնիկ Հնդկաստանի, որ կը բուսնի աշխարհիս ամէն տաք կողմերը։ Եւ լուբիայի պէս երկու տեսակ է, թզուկ և բարձր. և կը մշակուին լուբիայի պէս։ Տերևներն են եռաթերթ և եռանկիւնի, ծաղիկներն ճերմակ կամ վարդագոյն, պատիճներն գրեթէ գլանաձև, որոց մէջ ամփոփած են մանր ունդեր երիկամնաձև, ճերմակ դեղնորակ, և պորտին վրայ սև բիծ մը ունի, անոր համար մեր մէջ ըսուած նաև Սևպորտիկ կամ այլազգի անունէն խանգարեալ Պոչոձիկ։*

Դկուղն աւելի համով է քան գլուբիա, թէպէտ հատերը քան զայն փոքր, և կ'ուտուի լուբիայի պէս երեք կերպով ալ, այս ինքն դալար պատենով, դալար կամ չոր հատերով։

Դկուղի կան զանազան տեսակներ։ Եգիպտոսի մէջ շատոնց ի վեր կը մշակուէր այդ խաւարտը, և հոն կը բարձրանայ մինչև երեք չորս մետր. ծաղիկներն են հոտաւէտ, ճերմակ կամ մանուշակագոյն և ողկուզաձև, պատիճներն կարճ, և մէջի հատերը ձուաձև տափարակ, ի գոյն ճերմակ կամ սև. սև տեսակին պորտին նիշն է ճերմակ։

ԳԼՈՒԽ Գ

ԲԱԿԼԱՅ. (*տճ.* Պագլա. *գղ.* Fève. *իտ.* Fava. *լտ.* Faba vulgaris).

291. Նկարագիր. — *Է բոյս ընդարեր, ուղղաբուն, և իբր մի մետր բարձրութեամբ. ցօղունն է քառակուսի, սնամէջ. տերևներն համադիր, և բաղկանան ձուաձև տերևակներէ, կանաչագոյն. ծաղիկներն կը բուսնին տերևոց անթին մէջ, ճերմակ գունով, բծաւորեալ ի սև. ունդերն ամփոփած են երկայն պատենի մէջ խորշ խորշ, որոյ արտաքին կողմն է կանաչ և ներքին կողմը ճերմակ և մազոտ: Ունդերն են ձուաձև և տափարակ* (Ձև 94), *և լայնագոյն ծայրը սև նիշ մը ունի երկայն: Դալար եղած ժամանակ են կանաչ, բայց չորնալով կ'ըլլան դեղնագոյն:*

Բակլայն կ'ուտուի լուբիայի պէս, դալար պատենով, և կամ ունդը միայն դալար կամ չոր: Չէ այնչափ դիւրամարս, բայց ընդեղինաց մէջ ամենէն աւելի սընընդարար:

Բակլայի տեսակները շատ են, և ըստ այնմ ունդերը կ'ըլլան առաւել կամ նուազ մեծ և տափարակ, և գոյներն ալ կը տարբերին:

292. Մշակութիւն. — *Բակլայն թէպէտ բնիկ է Պարսկաստանի և Ափրիկէի, բայց կը բուսնի հիմայ ամէն երկիր, բարեխառն գօտւոյ տակ, և կը սիրէ այնպիսի հող՝ ուր կալի և կիր շատ գտնուին, ուստի և աւելի յարմար է իրեն պինդ և կաւեղէն հող քան թէ կակուղ և աւազուտ հող:*

Կը սերմանի փետրուարէ մինչև ապրիլ, բայց կանխահաս բակլայն կը սերմանի դեկտեմբեր և յունուար ամիսներուն մէջ, խնամով փորուած և պատրաստած ածուներու վրայ, սերմանելով տողի վրայ, իրարմէ 40 հարիւրորդամետր հեռաւորութեամբ դէպ ամէն կողմ, դնելով 4 հատ իւրաքանչիւր ծակին մէջ, որոյ խորութիւնը պիտի ըլլայ 4–5 հարիւրորդամետր: Բաւական է 1 կալ երկրի համար 1,750 հազարագրամ սերմ, որ կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը հինգ վեց տարի, և կը ծլի 7–10 օրուան մէջ:

Երբ բոյսերն արձակեն չորրորդ տերևը, պէտք է քըրքրել հողը և տալ հող արմատոց. և եթէ հարկաւոր ըլլայ, դնել պարարտութեան համար հողոյ վրայ մոխիր կամ տարրաբանական պարարտութիւն:

Ձև 94. Բակլայ. — Ճիւղ ընդարեր.

Ծաղկելու ժամանակ պէտք է ծայրատել բոյսերը, որպէս զի պատիճներն մեծնան և ազատ ըլլան տունկերը սև միջատէ մը, որ բակլայի պատուհասն է: Բակլայի

մնասակար պատուաբոյծ տունկն է Առիւծախոտ (գղ. Orobanche), որ խածփրէ և կը փճացնէ բոյսը։ Պէտք է արմատով խլել տունկը և այրել։ Մէկ առիւծախոտ կրնայ հարիւր հազար սերմ տալ։ Բակլայի առաջին բերքը կանաչ վիճակի մէջ ժողվելէն ետքը, եթէ ուզեմք երկրորդ բերք ունենալ ուշ, պէտք է բոյսերը կտրել՝ հողէն 5 կամ 6 հարիւրորդամետր բարձր, և եղանակը եթէ լաւ երթայ, այս ինքն սաստիկ չոր չըլլայ, կրնան բոյսերը նորէն աճիլ և մեծնալ, և տալ երկրորդ պտուղ ուշ ժամանակ։

293. Հաւաքումն սերման. — *Բակլայի սերման համար պէտք է ընտրել զօրաւոր տունկերուն վրայ այն պատիճները որ մեծ են և կատարեալ և նախ հասունցած, և թողուլ բոյսերուն վրայ որ չորնան։ Եւ վերջը ժողվել և պահել պատճով մէկ տեղ մինչև սերմանելոյ ժամանակ, որոյ բերքին քանակն ամէն տեղ միօրինակ չէ։ Կրնամք մի կալ հողէն ունենալ 40 հազարագրամ ունդ չոր, և 30 հազարագրամ չոր տերև և ցօղուն անասնոց տալու համար։*

ԳԼՈՒԽ Դ

ՈԼՈՌՆ. (*տճ.* *Պիզիլիա.* *գղ.* Pois. *իտ.* Pisello. *լտ.* Pisum sativum).

294. Նկարագիր. — *Ոլոռն որ և կ'ըսուի Մաշ, արաբերէն անուամբ, է բոյս խոտեղէն, ընդաբեր, տարևոր և սովորաբար պատաղիճ, ունելով խիղբեր որով կը պատատին տունկերը խեչակներու վրայ, և այս խիղբերը կը բուսնին տերևներուն ծայրերը մի կամ երկու զոյգ (Ձև 95)։ Ծաղիկներն են մեծ, ճերմակ կարմրախայտ որ կը բուսնին տերևոց անթին մէջ, որոց կը փոխանակեն երկայն, գլանաձև պատիճներ, և անոնց մէջ գնդաձև ունդեր, թուով մինչև 10 կամ 12 հատ։*

Ոլոռան տեսակները շատ են լուբիայի պէս, և իրեն նման կը բաժնուին երկու գլխաւոր դաս, թզուկ և բարձր ոլոռն։ Թզուկ ոլոռները կը բարձրանան մինչև 25 հարիւրորդամետր, իսկ բարձր ոլոռները մինչև 2 մետր, և կը կենան կանգուն պատատելով խեչակներու վրայ։

Ոլոռն ընդեղինաց մէջ ազնիւ տեսակներէն մէկն է, և կ'ուտուի դալար պատճով միասին, քանի որ դեռ կատարեալ հասունցած չէ, և մանաւանդ Արևելքի կամ Պարսկաստանի ոլոռը, որոյ պատիճներն են տափարակ և քաղցրահամ։ Կ'ուտուին նաև մինակ ունդերը դալար՝ պատճէն հանելով, ինչպէս են Եւրոպական տեսակներուն շատերը, և կամ կը չորցնեն տունկին վրայ, և փեճօկելով կը պահեն ձմեռն ուտելու համար։

295. Մշակութիւն. — *Ոլոռը կը սիրէ տաք կլիմայ, պատսպարեալ ցուրտէ։ Կը բուսնի գրեթէ ամէն տեսակ հողի մէջ, բայց կ'ուզէ առաւելապէս կակուղ և ընտիր հող, և կ'ատէ թաց և կաւեղէն հողը։ Հողը պարարտացնելու համար կրնամք գործածել նոյն տարրաբանական պարարտութիւնը ինչ որ ըսինք լուբիայի համար, միայն թէ կրնամք պակսեցնել տասներորդ մաս մը բօրակածնի, կալւոյ և լուսածնական թթուուտի։*

Ոլոռը կը սերմանի հոկտեմբերի և նոյեմբերի մէջ, պատրաստած արեգդէմ ածուներու վրայ, որպէս զի գարնան կարենամք ուտել իր պտուղը։ Կը սերմանի նաև փետրուարի և մարտի մէջ, որպէս զի կարենամք ամառան և աշնան ուտել. և սերմանելու կերպը նոյն է ինչ որ ըսինք լուբիայի համար։



Զև 95. Ոլոռն. — Պատիճ և ճիւղ ծաղկաբեր.

Երբ կը բարձրանան տունկերը 15 հարիւրորդամետր, պէտք է քրքրել հողը, և զնոյն կրկնել երբ խիղբերը երևնան, և յայնժամ տալ հող արմատներուն և դնել քովերնին խեչակ։ Պտուղը կանխահաս ընելու և պատիճներն աւելի մեծնալու համար լաւ է ծայրատել տունկերը երրորդ ծաղկէն վեր։

Ամառան մէջ պէտք է առատապէս ջրել ոլոռան տունկերը։

296. Հաւաքումն սերման. — *Լաւ սերմ ունենալու համար պէտք է ընտրել զօրաւոր տունկերուն առաջին հասունցած պատիճները, և թողուլ որ կատարեալ հասուննան։ Այն տունկերը որոցմէ սերմ պիտի առնումք, պէտք է անվրէպ ծայրատել։*

Մի կալ երկիր սերմանելու համար պէտք է 600–800 *գրամ ոլոռն, որ կը ծլի* 5 *օրուան մէջ՝ եթէ օդոյ տաքութիւնը* 15 *աստիճան ըլլայ։ Սերմը կը պահէ իր բեղնաւորութիւնը* 4 *կամ* 5 *տարի։ Մի կալ երկրէ կրնամք ունենալ* 80–120 *հազարագրամ չոր սերմ ոլոռան։*

ԳԼՈՒԽ Ե

ՍԻՍԵՌՆ. (*տճ. Նօհուտ. գղ.* Pois chiche, Garvanche. *իտ.* Cece. *լտ.* Cicer arietinum).

297. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն, տարեկր և ընդաբեր, նման ոլոռան, և կը տարբերի անկէ անով որ իր տնկոյն ամէն մասերը ծածկած են մազով։ Կը բարձրանայ մինչև* 40–50 *հարիւրորդամետր. ցօղունն է անկիւնաւոր, տերևներն ձուարդ և ատամնաւոր, ծաղիկներն մանր և ճերմակ, և կը բուսնին տերևոց անթին մէջ, որոց կը փոխանակեն իր պտուղներն ամփոփեալ ձուաձև պարկուճի մէջ, որոյ ծայրը կը վերջանայ ծռած քթով։ Իւրաքանչիւր պարկուճին մէջ կը գտնուի երկու ունդ կամ սիսեռն, գրեթէ կլոր և ըստ բաւականին մեծ և վրան խորտուբորտ* (Զև 96)։

Սիսեռը բնիկ է Պարսկաստանի և անկէ տարածուած Հնդկաստան, Աֆրիկէի հիւսիսային կողմ և Եւրոպիոյ հարաւային կողմ։ Անուանի է Սպանիոյ սիսեռը և սնընդարար։ Սիսեռը կրնայ ըլլալ ճերմակ, դեղին, սև և կարմիր, բայց ճերմակն յարգի է։

298. Մշակութիւն. — Սիսեռը լաւ կը յաջողի բարեխառն կլիմայի տակ, մանաւանդ դաշտային տեղ: Կը սիրէ պարարտ և կրային հող և աղբով լաւ պարարտացած: Մշակութեան կերպը նոյն է ինչ որ ըսինք լուբիայի և ոլոռան համար: Կը սերմանի մարտի մէջ տողի վրայ 40 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և երբ տունկերը բարձրանան 20 հարիւրորդամետր, հող տալ արմատներուն վրայ: Հազիւ երբեք հարկ կ'ըլլայ երկրորդ անգամ քրքրել հողը:

Ձև 96. Սիսեռ.

Քաղոց ընելու համար պէտք է տունկերը խլել արմատով երբ չորցած են, և վերջը ծեծել գաւազանով ունդերը հանելու համար:

299. Մի կալ երկրէ կրնամք ունենալ 10–20 լիտր սերմ, և յարդ կրկնապատիկ ի կշիռ: Մի հարիւրալիտր չոր սիսեռը կը կշռէ 72–80 հազարագրամ:

Սիսռան ունդն է ի կերակուր մարդոյ, թէպէտ և

դժուարամարս է, պատճառաւ իր մէջ գտնուած առատ բորակածնային նիւթոց: Սպանիոյ մէջ շատ է գործածութիւնը քան թէ Եւրոպիոյ ուրիշ կողմերը:

ԳԼՈՒԽ Զ

ՈՍՊՆ. (տճ. Մէրճիմէք. գղ. Lentille. իտ. Lente, Lenticchia. լտ. Ervum lens).

300. Նկարագիր. — Է բոյս խոտեղէն, ընդաբեր, որ կը բարձրանայ 20–40 հարիւրորդամետր. ցօղունն է անկիւնաւոր, տերևներն են բաղադրեալ և ունին խիղբ, ծաղիկներն կը բուսնին տերևոց անթին մէջ, մի կոթի վրայ երկու երեք ծաղիկ մանր և ճերմակ, բծաւորեալ կապոյտ կամ կանաչ: Ծաղկանց կը յաջորդեն իրենց պտուղը կամ ունդը, տափարակ պատճի մէջ ամփոփած, և իւրաքանչիւր պատճի մէջ կը գտնուի երկու կամ երեք ունդ մանր, բոլորաձև և տափարակ, և երկու կողմը քիչ մը կորնթարդ, որ ըստ տեսակի ոսպի կ'ըլլայ աւելի կամ պակաս (Ձև 97):

Կը բուսնի ինքնին Ասիոյ արևմտեան կողմ բարեխառն կլիմայի տակ, նոյնպէս Յունաստանի և Իտալիոյ մէջ. և այս տեղերէն տարածուած է ուրիշ ամէն կողմ բարեխառն գօտւոյ տակ:

301. Մշակութիւն. — Ոսպը կը սիրէ թեթև և կրային հող. իսկ պինդ և կաւեղէն հողի մէջ թէպէտ խոտեղէն մասը մեծ աճումն կ'առնու, բայց ունդերը տկար կ'ըլլան: Ոսպը շատ խնամք չուզեր, և ամէն տեղ կրնայ բուսնիլ: Կը ցանուի սիսռան պէս գարնան, և տաք երկիրներու մէջ նաև աշնան, և մշակութեան կերպը նոյն է որ ինչ սիսռան:

Եւ որովհետև պատիճները չորնալով շուտով կը բացուին և մէջի ունդերը գետին իյնալով կը կորնչին, ա-

նոր համար պէտք չէ երկար ժամանակ թողուլ յետ հասուննալուն, որ կը պատահի յուլիսի վերջերը, այլ հանել տունկերը արմատով առաւօտուն, քանի որ պատիճները գիշերային ցօղով թրջած են։ Կրնամք 1 կալ հողէ ունենալ 10–15 լիտր ոսպ չոր, որոյ գոյնն է խարտեաշ,

Ձև 97. Ոսպն.

և կրկնապատիկ յարդ ի կշիռ հազարագրամի, որ է համօյական կերակուր անասնոց։ Մի հարիւրալիտր ոսպը կը կշռէ 78–80 հազարագրամ։

Ոսպը կը գործածուի ուտելու եփելով մսի հետ, կամ ձիթով ապուր շինելու, որ կ'ըսուի Ոսպնաբան։

ԳԼՈՒԽ Է

ՎԱՅՐԻ ՈԼՈՌՆ. (տճ. Աց պուրչաք. գղ. Gesse. իտ. Cicerchia. լտ. Lathyrus sativus).

302. Նկարագիր. — Վայրի ոլոռն, որ և կ'ըսուի կատուչիճանկ, և արաբացի անուամբ ճուլպան, է բոյս ընդարբեր, ոլոռան տեսակէն, անկլինաւոր ցօղնով որ կը



Ձև 98. Վայրի ոլոռն կամ ճուլպան.

բարձրանայ մինչև 60 հր.մ. տերևներն են երկայն, փետրաձև որք ունին խիղբեր. ծաղիկներն ճերմակ, կարմիր, կապոյտ, որոց կը փոխանակեն գորշ ունդեր անձև, ամփոփեալ երկայնաձև և տափարակ պատճի մէջ (Ձև 98)։

Ճուլպանն ունի քառասունէն աւելի տեսակներ, ոմանք տարեոր և ոմանք երկարակեաց։ Այն որ կ'ըսուի ճուղ-

պանն ընտանի, կը մշակուի իրեն ունդին համար, բայց փորձուած է որ վնասակար է, և ով որ ուտէ՝ կը թունաւորուի դանդաղ կերպով. և սակայն հանդերձ այսու աղքատ գեղացիներն որ կը բնակին լերանց վրայ Իտալիա, Գաղղիա, Սպանիա, ստիպեալ աղքատութենէ կը խառնեն ճուլպանի ալիւրը ուրիշ արմտեաց ալիւրին հետ՝ հաց շինելու համար։

Ընդ հակառակն ճուլպանի ամէն տեսակներն ընտիր խոտ են անասնոց համար, և մանաւանդ վայրի ճուլպանը, որոյ ունդերը վնասակար են ձիոց (Զև 99)։

Զև 99· Վայրի ճուլպան·

303 · Մշակութիւն · — Ճուլպանն հասարակ բոյս մի ըլլալով, ամէն կլիմայի տակ կրնայ բուսնիլ։ Կը դիմանայ սաստիկ ցրտութեան և չորութեան, ուստի և օգտակար կը համարուի սաստիկ ցուրտ և ցամաք երկիրներու մէջ ցանելը։ Կը ցանեն սովորաբար սեպտեմբերի մէջ, արմտիքը կորելէն ետև. և կը ցանեն 250 լիտր առ մի հարիւրակալ։ Երբեմն կը ցանեն գարնան վարսակի հետ, որոյ վրայ կը պատատի իր խիղբերով. և կու տան ի կեր անասնոց, որոյ քաղոցի ժամանակը հասած կը համարուի երբ ծաղիկներն բոլորովին բացուին. պէտք չէ սպասել որ պատիճներն երևան ելնեն. և հնձել մանգաղով, և տալ անասնոց դալար կամ չոր։ Մի հարիւրակալ երկրէ կրնայ ելնել 20–25 կենդինար չոր խոտ։

⟡

ԳԼՈՒԽ Ը

ԱՐԱՔԻԴ ԿԱՄ ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԵՆԻ. (*տճ. Եէր ֆըստըղը, Ամերիքան ֆըստըղը. գղ.* Arachide, Pistache de terre. *իտ.* Arachide, Cece *կամ* Pistacchio *կամ* Nocciola di terra. *լտ.* Arachys hypogæa).

304 · Նկարագիր · — Է *բոյս ընդաբեր, Ամերիկայէն եկած Եւրոպիոյ հարաւային կողմ, և կը համարուի բնիկ Բրազիլի, բայց կը բուսնի նաև Ճենաստան, Ճապոնիա, Հնդկաստան, և Սենեգալ, տաք երկիրներու մէջ։ Կը բարձրանայ 25–35 հարիւրորդամետր. ցօղունն արմատին մօտ՝ է բոլորշի, բարձրերը քառակուսի։ Տերևներն են համադիր, բաղկացեալ չորս ձուաձև տերևակներէ, որոց երեսը պատեալ է աղուամազով։ Ծաղիկներն են դեղնագոյն որ կը բուսնին տերևոց անթին մէջ, և ունին փոքրիկ կոթեր։ Վերիններն ամուլ են, իսկ վարիններուն էգ ծաղիկներն բեղնաւորելէն ետքը իրենց կոթը կամաց կամաց կ'երկննայ, և ծաղկին ձուընկալ ամանը դէպ ի գետին կը ծռի և կ'երկննայ, և հինգ վեց օրուան մէջ կը մտնէ հողին մէջ և կը թափանցէ խոր։ Եւ յայնժամ պտուղը կը սկսի ձևանալ իբր 10 հարիւրորդամետր խորութեամբ, ամփոփեալ երկխորշ գլանաձև և փայտեղէն բարակ պարկուճի մէջ, որոյ երկայնութիւնն է 2 կամ 3 հարիւրորդամետր, որոց մէջ կը գտնուի երկու հատ պտուղ պիստակաձև կամ սիսռան նման, մարմնոյ գունով, և ունին ճերմակ, ալերային և իւղային նիւթ մը, որոյ համը կաղնոյ կը նմանի, և կ'ուտուի հում կամ եփեալ (Զև 100)։ Խորովելով հատերը և աղալով՝ կրնայ գործածուիլ կոլոհատի տեղ։ Բայց գլխաւորապէս կը տնկեն արաքիդը իւղ եղ հանելու համար, որ կը գործածուի թէ ուտելու, թէ օճառ շինելու և թէ մեքենայները օծելու։ Ձէչը կը գործածուի անասնոց և հողոյ պարարտութեան։ Տերևներն են ի կերակուր անասնոց։*

Այս տնկոյս զարմանալի յատկութեանը համար, որ ծաղիկները բեղնաւորելէն ետև կ'երկննան ու կը ծռին

և գետին մտնելով կը պտղաբերեն, կոչուած է իր պըտուղը Գետնապիստակ կամ Գետնակաղին, և եւրոպական անուամբ Արաքիդ։

305. Մշակութիւն. — *Արաքիդ կը սիրէ կակուղ հող, մշակուած ապրիլի մէջ և պարարտացած աղբով, և մայիսի մէջ ցանել տողի վրայ, տողերը 50 հարիւրորդամետր հեռի և տունկերը 20։ Տաք երկիր կ'ուզէ. ծլելու համար հարկաւոր է 13°, ծաղկելու համար 20°, և պըտղաբերելու համար 22°։ Պէտք է երկու անգամ քըքրել հողը, և սաստիկ չորութեան ժամանակ ջրել։*

Առաջին ծաղկելուն ժամանակ պէտք է հող տալ արմատներուն, որպէս զի ձուընկալ ամանները դիւրաւ

Ձև 100. Արաքիդ կամ Գետնապիստակենի.

կարենան մտնել հողին մէջ։ Յետ մի անգամ ծաղկելոյ կը ծաղկի երկրորդ անգամ, և յայնժամ պէտք է խնամով հող տալ արմատներուն։

Հոկտեմբերի կիսոյն կ'աւարտի ծաղկելը, և յայնժամ պէտք է հնձել տունկերը մանգաղով, որոց խոտեղէն մասը տալ ի կերակուր անասնոց, և պտուղները հանել բահով հողին մէջէն։

306. *Մի կալ երկրէ կրնամք ունենալ 10 հազարագրամ գետնակաղին, ուսկից կ'ելնէ եղ 35–40 առ 100, և է պայծառ և անհոտ, և դժուարաւ կը ծթրի, անոր համար վերադաս կը համարուի քան զձէթ, բայց չհասնիր անոր պարարտութեան։*

ԳԼՈՒԽ Թ

ՅԱԿՈԲՈՒԿ. (*տճ. Ալքեաքենճ, Հապըլ յարուս. գղ.* Alkekenge, Coqueret. *իտ.* Alkekengi, Chichingero. *լտ.* Physalis pubescens *կամ* peruviana).

307. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն, տարեոր, որ և կ'ըսուի ռամկօրէն Քաքանամ։ Կը բարձրանայ մինչև 1 մետր, և կը բուսնի ինքնին շատ տեղ ցանկերու և այգիներու մէջ։ Բնիկ է Ամերիկայի Պերու աշխարհին։*

Ձև 101. Յակոբուկ.

Արմատն է ներդային և ուղղորդ, բունն մազոտ և բազմաճիւղ, տերևներն ձուարդ սրածայր, ծաղիկներն մենակեաց և դեղին. պտուղներն մսոտ, կարմիր կամ դեղին, կլոր, կեռասի մեծութեամբ, և ամփոփեալ իւրաքանչիւր պտուղ առանձին մեծ պարկուճի մէջ, որ է բազմանկիւնի

ձևով առանց կպչելու, և ունին թութի նման մանր տափարակ կուտեր, և ախորժելի թթուաշ համ մը, և կը համարուին բացողական, ինչպէս նաև տնկոյն տերևները, ծաղիկները և արմատները (Ձև 101)։ Ցակոբուկի սովորական տեսակն է տարևոր, և ամէն տարի հարկ է ցանել։ Մօտ տարիներուս մէջ եկաւ Եւրոպա ուրիշ տեսակ մը Ցապոնացւոց երկրէն, երկարակեաց և կարմիր նարընջագոյն պտղով, որոյ տունկը շատ տարիներ կը դիմանայ։ Բայց կը գործածուի աւելի ի զարդ պարտիզաց։

308. Մշակութիւն. — Ցակոբուկի տեսակները շատ են, և բուսնին տաք և բարեխառն կլիմաներու տակ, ինչպէս ոսկեխնձոր կամ պղտիկ։ Հարաւային տաք կողմերը կրնայ ուղղակի արտին մէջ ցանուիլ, բայց բարեխառն կողմերը լաւ է սերմնարանի մէջ ցանել ոսկեխընձորի պէս, և յետոյ փոխադրել պարտիզի մէջ։ Ասոր մշակութեան կերպը նոյն է ոսկեխնձորին հետ, անոր համար ուզողը հոն կրնայ նայիլ։

Պտուղները պէտք է ժողվել երբ կատարեալ կը դեղնին, և ժողվելու է իրենց վրայի պարկուճով, և դնել քանի մը օր արևու մէջ որ չորնան, և յետոյ պահել չոր տեղ, տարածելով տախտակի վրայ, և կը պահուին այսպէս ամբողջ ձմեռ։ Շուտով կը մգլոտին թաց տեղ։

ԳԼՈՒԽ Ժ

ԿԱՊԱՐ. (տճ. քեպէր. գղ. Caprier. իտ. Cappero. լտ. Capparis spinosa).

309. Նկարագիր. — Է փոքրիկ թուփ գետնատարած, փշոտ, որ հազիւ կը բարձրանայ 80 հարիւրորդամետր, և է բնիկ բարեխառն երկիրներու, և մեր լեզուին մէջ կ'ըսուի ռամկաբար Կապրցախ, Կօրաք։ Տերևներն են համագիր, ձուաձև, ամբողջ և մսոտ. ծաղիկներն ճերմակ, լայն, ունելով տրամագիծ 5 կամ 6 հարիւրորդամետր, և են արուէգ, որք կու տան գնդաձև կամ ձուաձև մանր պտուղներ (Ձև 102), ձիթապտղոյ մեծութեամբ, սրածայր երկու կողմէն, որ համեմելով կ'ուտուին. և կ'ըսուին Ունդք կապարոյ. իսկ Կապարն է ծաղկաբեր կոճակները՝ զորս պէտք է ժողվել ծաղկին բացուելէն առաջ, և աղելով ու քացախի մէջ դնելով պահել, և գործածել իբրև համեմ կերակրոյ հետ, և է հակընդահար։ Այն համեմային համը որ ունի կապար, առաջ կուգայ սերմնափակէն կամ թէ ըսել ծաղկաբեր գործարաններէն, որք եթէ մեծնան՝ կը կարծրանան և կորուսանեն իրենց համը։ Ուստի պէտք չէ շփոթել կապարը իր ունդին հետ։

310. Մշակութիւն. — Կապար կամ Կապրցախ է բնիկ Ասիոյ, և անկէ մտած է ի Յունաստան, և ի Փոքր Ասիա, և ինքնին կը բուսնի դաշտերու մէջ։ Կը համարուի երկրագործներէն վնասակար բոյս մը, որովհետև կը տարածուի հողին երեսը, և դժուարաւ կրնամք խլել։ Կը բուսնի ևս հին պատերու խոռոչներուն մէջ որ հարաւային կողմ ըլլան, և կը տարածուի պատերուն վրայ։ Կը սիրէ կրային հող, անոր համար է որ պատերուն խոռոչներուն մէջ լաւ կը յաջողի։ Կրնամք կապարը բազմացնել սերմով, սերմանելով գարնան կամ աշնան սերմնարանի մէջ, և յետոյ փոխադրել և տնկել պատերուքով հարաւային կողմ։ Կրնամք ևս բազմացնել ճիւղերով

կամ արմատներուն քով ելած մոլերով, որք ունենան փոքրիկ տակուիճներ: Ճիւղերը պէտք է հաւասարաչափ կըտրել իբր 25 հարիւրորդամետր երկայնութեամբ, և տնկել պատրաստած հողի մէջ, մինչև որ արմատ արձակեն, և վերջը մարտին մէջ փոխադրել: Կապարանոց մը հինգ վեց տարուան մէջ կատարեալ կը համարուի և առատ բերք կուտայ, և կրնայ տևել այդպէս մինչև յիսուն տարի և աւելի: Մայիսի մէջ պէտք է սկսիլ ժողվել կապարը որ կը տևէ մինչև յուլիս և օգոստոս: Հարկաւ ծաղկին կոճակները ժողվելու ժամանակ կը մնան նաև ոմանք որք կը բացուին, և յետոյ կը բերեն իրենց ունդը, զոր պէտք է ժողվել քանի որ կանաչ է, և չէ կարծրացած:

Ձև 102. Կապար. — Ճիւղ ծաղկաբեր և ընդաբեր.

311. Բացօթեայ դաշտի մէջ եղած մշակութիւնը քիչ է Եւրոպայի մէջ: Եւ եթէ ուզուի մշակել այդպէս, պէտք է ընտրել չոր և կրային հող. և եթէ այդ պակաս ըլլայ, պէտք է դնել հողին մէջ կրային նիւթոց մանրուք, ճանապարհներու փոշի, կամ կիր որ երկար ժամանակ օդոյ մէջ թողուած ըլլայ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԲԱՄԻԱ. (տճ. Պամիա. գղ. Gombo կամ Ketmie comestible, Bamia. իտ. Gombo. լտ. Hibiscus esculentus).

312. Նկարագիր. — Է բոյս ընդաբեր, տարևոր, որ կը բուսնի Ասիա, Ափրիկէ և հարաւային Ամերիկա. կը սիրէ տաք երկիր, և կը բարձրանայ 60-70 հարիւրորդամետր: Ցօղունն է հաստ, չիտակ, և քիչ ճիւղերով. տերևներն են մեծ, բլթակաւոր, ատամնաձև, և գորշ տակի կողմէն. ծաղիկներն դեղին, մենակեաց, պտուղներն են երկայն բրգաձև և մազոտ, և ունին հինգ կող ցցուած, և կ'ուտուին իբրև խաւարտ եփելով, դալար կամ չոր, և են կպչուն, և մասնաւոր համ մը ունին, և իրենց մէջ ամփոփած են սերմերը (Ձև 103): Քիչ է Եւրոպայի մէջ այս խաւարտին գործածութիւնը, բայց Արևելք և Ամերիկա յաճախեալ:

Ձև 103. Բամիա.

ԳԼՈՒԽ ԺԲ

ԴԱՐԱՊՂՊԵՂ. (*տճ․ Պաձպիպէր․ գղ․* Piment. *իտ․* Peperone. *լտ․* Capsicum annuum).

313․ Նկարագիր․ — *Է բոյս խոտեղէն, տարեոր, որոյ տերևներն են նեղ և նիզակաձև, ծաղիկներն մենակեաց, և կը բուսնին տերևոց անթին մէջ, պտուղներն ողորկ, երկայն, կոնաձև, տափ և այրող (Ձև 104), կանաչ ի սկզբան, և կարմիր հասունցած ժամանակ, և կը գործածուին իբրև պղպեղ կերակրոց համ տալու համար։*



Ձև 104․ Դարապղպեղ․

Պտուղն երկու երեք անկատար խորշ բաժնուած է ներսէն, և լեցուն է սերմերով։

Դարապղպեղն է բնիկ Հնդկաստանի, ուսկից փոխադրեցաւ Ամերիկա և Եւրոպիոյ հարաւային կողմ. կը բուսնի նաև Եգիպտոս և Ափրիկէի այլևայլ կողմերը, և Արևելք։

Դարապղպեղի տեսակները շատ են ըստ զանազան աշխարհաց ուր կը բուսնին։ Սովորական գոյնն է կարմիր, բայց կայ նաև դեղնագոյն։ Կան տեսակներ որ շատ աւելի մեծ են քան զսովորականն և երկայն, ինչպէս է Սպանիականը (Ձև 105), որոյ համն ալ անոյշ է։ Կայ նաև պղտիկ կամ ոսկեխնձորոյ ձևով (Ձև 106)։ Ափրիկէի Սահրա աշխարհին գլխաւոր խաւարտն է դարապղպեղ, ուր բնակիչներն հում ալ կ'ուտեն։



Ձև 104'․ Դարապղպեղ կարմիր, պլանդակ ձևով.

314․ Մշակութիւն․ — *Մեր կողմերը կանխահաս դարապղպեղը պէտք է սերմանել փետրուարի և մարտի մէջ տաք բուսահողոյ վրայ, և յամրահասը մարտի և ապրիլի սնդուկներու մէջ։ Երբ ծլի սերմը և բարձրանայ իբր 15 հարիւրորդամետր, կամ թէ ըսել երբ տայ հինգերորդ տերևը, փոխադրել բացօթեայ արտերու մէջ։*

Դարապղպեղ կը սիրէ կակուղ և շատ պարարտ երկիր, որ ըլլայ արեգդէմ։ Պէտք է տնկել տողի վրայ,



Ձև 105. Դարապղպեղ Սպանիական.

տողերը 50 հարիւրորդամետր իրարմէ հեռի և տունկերը 30 հարիւրորդամետր, և հողը մանրած և լաւ պատրաս-



Ձև 106. Դարապղպեղ պոլաիկի ձևով.

տած։ Տնկելէն վերջ ջրելու է, և յետոյ նոյնպէս ստէպ ջրելու է երբ հարկը պահանջէ, և երբեմն երբեմն քըրքրել հողը և գէշ խոտերը քաղել։

315. Քաղոց. — Քաղոցը կ'ըլլուի հետ զհետէ երբ պտուղն հասուննայ։ Եւ պտուղը կ'ուտուի ինչպէս ըսինք դալար, կամ քացախի մէջ դրած և կամ արևու մէջ չորցուցած։ Սերմը առնելու համար պէտք է թողուլ պտուղը որ լաւ մը հասուննայ, և չորցնելէն ետքը ծեծել, և սերմը զատելէն ետքը՝ մնացած փոշին կը ծառայէ պղպեղի տեղ։

ԳԼՈՒԽ ԺԳ

ՎԱՐՆԳԵՆԻ. (տճ. խըյար. գղ. Concombre, Cornichon (մանր) իտ. Cocomero, Cetriolo կամ Citriuolo. լտ. Cucumis sativus).

316. Նկարագիր. — Վարնգենին է բնիկ Հնդկաստանի, և անկէ տարածուած աշխարհիս ամէն կողմ, և կը բուսնի տաք և բարեխառն կլիմայներու տակ։ Դդումներու ցեղէն է, երկայնատարած, անկիւնաւոր և պատատուկ ճիւղերով, որք ունին խիղբեր, և անով կը պատատին խեչակներու վրայ։ Տերևներն համադիր, սըրտաձև և եզերքը խոռոչաւոր, վրան մազոտ, ինչպէս նաև ցօղունը։ Ծաղիկներն են դեղին, արու և էգ ծաղիկները նոյն բոյսին վրայ են, առանձինն։ Պտուղն որ կ'ըսուի Վարունգ, է երկայն, գլանաձև, չիտակ կամ ծուռ, մսոտ, և երեսը կանաչ սպիտակագոյն, ողորկ և ակոսաւոր (Ձև 107)։ Մէջը բաժնուած է երեք թաղանթեայ խորշ ընդ երկայնութիւն, և լցուած հիւթեղ մսով և անհուն տափարակ սերմերով որք ամփոփեալ են բջիջներու մէջ։ Եւ երբ պտուղն կատարեալ հասուննայ և մեծնայ, յայնժամ իր գոյնը կը դեղնի, և կոչի Պաչուղակ։ Բայց այս վիճակին կը հասցնեն՝ երբ կ'ուզեն սերմը առ-

նուլ, այլ ուտելու համար միշտ կանաչ կտրելու է, երբ չափահաս է, որոյ մէջի սերմերն անզգալի են և կ'ու-տուին։ Բայց երբեմն կը կտրեն վարունգը նաև ծաղիկը իր ծայրը, ինչպէս կը տեսնուի նաև մեր ձեւին մէջ, մանր և մատղաշ հասակի մէջ, որ շատ հաճոյական է ուտելու, և կը դրուի քացախի մէջ, և կ'ուտուի մսեղէն կերակրոյ հետ։ Գեռահասակ և մանր վարունգը վրան մանր բշտիկներ ունի ցցուած։ Վարունգը թէպէտ զո-վացուցիչ է, բայց դժուարամարս. և կ'ուտուի հում կե-ղևելով, և կամ աղցան ընելով։

Ձև 107. Վարունգ մեծ և փոքր.

Վարունգի տեսակները շատ են, և ընտրելի կը հա-մարուին անոնք որոց միսը սեղմ է և ոչ թոյլ, և քիչ կուտով կամ սերմով, որք են ախորժահամ։

317. Մշակութիւն. — Ամէն տեսակ վարունգները կը սիրեն պարարտ հող, մանաւանդ բորակածնային պա-րարտութիւն։ Ուստի հարկ է անասնոց աղբ լաւ փտած, և աղբ աղաւնոյ և մարդոյ։ Մի հարիւրակալ երկրի հա-մար հարկաւոր է 300 կենդինար աղբ և 5 կենդինար բորակատ նատրոնի։

Աղբը հողին մէջ լաւ տարրաբաշխեալ պիտի ըլլայ, անոր համար լաւ է աշնան աղբել երկիրը և գարնան տալ 150 հգ.գր ծծըմբատ կալւոյ և 280 վերլուսածնատ կրոյ առ մի հարիւրակալ։ Հողը պէտք է խոր փորուած ըլլայ և մանրած, և պատսպարեալ արևմտեան սաս-տիկ քամիներէ։

Մայիսի սկիզբ պէտք է պատրաստած հողին մէջ ընել փոքրիկ ծակեր 30 հարիւրորդամետր խորութեամբ և լայնութեամբ, և իրարմէ 1 մետր հեռաւորութեամբ. և լեցնել ծակերը բուսահողով կամ հաւու աղբով՝ որ չոր հողով խառնած ըլլայ, ասոր վրայ դնել սերմը 4 կամ 5 հատ, իրարմէ 5 կամ 6 հարիւրորդամետր հե-ռաւորութեամբ և բոլորաձև դիրքով, և ծածկել հողով։

Ծլելը փութացնելու համար լաւ է սերմը դնել քանի մը ժամ ջրոյ մէջ, և երեսը լողացողները նետել։ Մի հարիւրակալ երկրի համար բաւական է 600 գրամ սերմ, որ կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը 5–6 տարի։

Թէ որ գետինը թացութեան ենթակայ է, փոխանակ գուբեր բանալու՝ պէտք է փոքրիկ հողակոյտեր ընել և ցանել անոնց վրայ։

318. Սերմը ծլելէն ետքը իւրաքանչիւր թումբին մէջ պէտք է 2 հատ թողուլ, խլելով տկարները։ Եւ երբ բարձրանան 8–10 հարիւրորդամետր, ծայրատել եղըն-գով տունկերը երկրորդ տերևէն վեր, երկու կողմնակի բազուկ միայն ունենալու համար, որք երբ երկննան՝ զանոնք ալ ծայրատել երրորդ տերևէն վեր. անոնցմէ ելած ճիւղերն ալ պէտք է ծայրատել, բայց չորրորդ և հինգերորդ տերևներէն վեր։ Այսպէս ընելով պէտք չէ թողուլ իւրաքանչիւր տնկոյն վրայ 5 կամ 6 պտղէն ա-ւելի, և այս բանիս համար պէտք է ընտրութիւն ընել և տկար պտուղները կտրել, և ծայրատել թողած պըտ-ղոյն ճիւղը երկրորդ տերևէն վեր։

Պահելու պտուղները ընտրելէն ետքը, ծայրատել ա-մէն ճիւղերը որ շատ կ'երկննան, և կտրել նոր ընձիւղ-ները, որպէս զի տունկին հիւթը հաւաքուի պահուած վարունգներուն վրայ։

Առաջին անգամ ծայրատելու ժամանակ պէտք է ար-մատներուն հող տալ, և չմոռնալ առատապէս ջրելու, մանաւանդ տաք ատեն. վասն զի վարունգը շատ ջուր կ'ուզէ։

Քացախի մէջ դնելու մանր վարունգներ ունենալու համար, առաջին ծայրատումը փոխանակ ընելու երկրորդ տերևէն վեր պէտք է ընել երրորդ տերևէն վեր, որով կ'արձակին երեք կողմնակի բազուկներ, զորս պէտք է թողուլ որ երկննան ըստ կամի, և բարձրանան խեչակներու վրայ։

319. **Եթէ** *ուզեմք վաղահաս վարունգ ունենալ, որ շատ յարգի է և գին կ'ընէ, կրնամք դեկտեմբերի կէսէն մինչև փետրուար սերմանել ջերոցի մէջ՝ աղբով պարարտացած և տաքցած հողի վրայ, ուր տաքութեան աստիճանը միօրինակ ըլլայ։ Շուտով կը ծլին տունկերը, և երբ քիչ մը մեծնան՝ փոխադրել ուրիշ պատրաստած և տաք հողի վրայ, և ընել յաջորդաբար վերոյիշեալ ծայրատումները։ Ջերոցին ապակի պատուհանները պէտք է գիշերները և ցուրտին ծածկել փսիաթով, և ցերեկները աղէկ օդին բանալ։*

320. Քաղոց. — *Աղցան ընելու վարունգը պէտք է ժողվել քանի որ կանաչ է և ոչ կատարեալ հասունցած. իսկ անոնք որ քացախի մէջ պիտի դրուին, պէտք է հետզհետէ ժողվել՝ երբ հասուն վարունգին մեծութեան երրորդ կամ չորրորդ մասին հաւասարին։*

Մի կալ երկրէն կրնամք ունենալ 350 վարունգ աղցան ընելու, և 700 մանր վարունգ քացախի մէջ դնելու։ Բովանդակին կշիռը 400 հազարագրամ։

Սերմը առնելու համար պէտք է ընտրել գեղեցիկ վարունգները, և թողուլ երկրի վրայ մինչև որ դեղնին և սկսին փտիլ և կոչիլ Պաշուշլակ։ Յետոյ ժողվել և կտրել դէպ երկայնութիւն երկու մաս, և հանել մէջէն հատերը, չորցնել արևու մէջ և դնել թղթեայ քսակներու մէջ և պահել։

ԳԼՈՒԽ ԺԴ

ՊԱՏԻՆՃԱՆ ԿԱՄ ՊԱՏՆՃԱՆ. (*տճ. փաթլիճան. գղ.* Aubergine, Melongène. *իտ.* Petronciano, Melanzano (*բոյսն*) Petronciana, Melanzana (*պտուղն*). *լտ.* Solanum melongena).

321. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն տարևոր, բնիկ Ասիոյ և հարաւային Ամերիկայի, և մեր մէջ կ'ըսուի նաև Հատաղ. ցօղունն է կէս փայտեղէն, չիտակ, գլանաձև, մազոտ և բազմաճիւղ. տերևներն են համադիր, լայն, ձուա-*

Ձև 108. *Պատինճան կամ Հատաղ.*

ձև և հասարակօրէն գորշ աղուամազով պատած, ծաղիկներն մանուշակագոյն կամ կարմրագոյն, և բաժակը՝ որ կ'ընդարձակի պտղոյն հետ, է կանաչագոյն, հաստ և փշոտ։ Պտուղն է մանուշակագոյն, երկայն, կլորակ, որ

մէկ ծայրէն մինչև միւս ծայր երթալով կը լայննայ և բոլորշի կը վերջանայ. երկայնութիւնը կ՚ըլլայ 25–30 հարիւրորդամետր և լայնութիւնը 7–8 հր.մ, վրան փայլուն և ողորկ կեղևով, ի գոյն մութ մանուշակի. միսն է ճերմակ, (Զև 108), և ուտելու համար պէտք է կտրել քանի որ չափահաս է և ոչ սաստիկ հասունացեալ. հում չուտուիր, վասն զի անհամ է միսը, բայց եփելով կ՚ըլլայ համեղաճաշակ կերակուրներ: Պատինճանի կամ հատաղի գործածութիւնն յաճախեալ է Արևելք, ոչ այնչափ Եւրոպայի մէջ, և կ՚ընեն անով զանազան տեսակ կերակուրներ:

Զև 109. Պատինճան թզուկ, վաղահաս.

Կայ ուրիշ տեսակ պատինճան մը թզուկ ըսուած, որոյ տունկը մանր է, ցօղունը մթնագոյն, պտուղը ձուաձև, երկայն իբր 12 հր.մ և լայն 8 հր.մ և գոյնը մթին մանուշակագոյն, և ոչ երկայն տեսակին չափ փայլուն, և է վաղահաս և ընտիր (Զև 109):

322. Մշակութիւն. — Պատինճանի մշակութեան կերպը նոյն է ինչ որ ըսինք գարապղպեղի համար: Բայց որովհետև պատինճանի տունկերը շատ կը մեծնան, ուստի պէտք է տնկել իրարմէ 70 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և նոյն պատճառաւ աւելի առատ ջրել:

Պտուղն որպէս զի շուտով հասնի և աւելի մեծնայ, պէտք է ծայրատել տունկերը: Ծաղիկները կ՚ելնեն միշտ կողմնակի ճիւղերուն վրայ. ուստի երբ սկսին պտուղներն երևան ելնել, պէտք է կտրել գլխաւոր ցօղունին երկայնութիւնը, որպէս զի տերևներուն աճումը դադրի, և բովանդակ հիւթը պտուղներուն երթայ:

Եւ երբ ուզեմք մեծ պտուղներ ունենալ, պէտք է իւրաքանչիւր տնկոյն վրայ երեք հատէ աւելի չթողուլ: Ընտրելու է աղէկները, և թողլու է մի պտուղ իւրաքանչիւր ճիւղին վրայ: Եւ որպէս զի հիւթն երթայ միայն այս պտուղներուն վրայ, պէտք է կտրել միւս անօգուտ ճիւղերը և ամէն նոր ընձիւղները, և թողուլ միայն այն ճիւղերը որոց վրայ պտուղ կան:

Պտուղներն կը հասուննան հետ զհետէ օգոստոսի, սեպտեմբերի և հոկտեմբերի մէջ: Եւ սերմ ունենալու համար պէտք է ընտիր պտուղներէն թողուլ վարունգի պէս որ լաւ հասուննան և դեղնին, որով և մէջի տափարակ սերմերը կը մեծնան և կը հասուննան: Եւ վերջը թողուլ պտուղները արևու մէջ որ սկսին փտիլ. յետոյ ճեղքել, ժողվել մէջի սերմերը, չորցնել և պահել, որք իրենց բեղնաւորութիւնը կը պահեն երեք չորս տարի:

Պատինճանը կը սերմանի մարտի և ապրիլի, լաւ պատրաստած և պարարտացած հողի վրայ: Եւ եթէ ուզեմք քացախի մէջ դնելու համար մանր պատինճաններ ունենալ, պէտք է ընել ինչպէս որ ըսինք քացախի մէջ դնելու վարունգին համար (316):

ԳԼՈՒԽ ԺԵ

ՈՍԿԵԽՆՁՈՐ. (*տճ.* *Տօմաթէս.* *գղ.* Tomate. *իտ.* Pomodoro, Tomata. *լտ.* Lycopersicum esculentum).

323. Նկարագիր. — *Է բոյս տարեոր, բնիկ Պերու աշխարհին Ամերիկայ, ուսկից եօթնևտասներորդ դարուն Եւրոպա եկած է։ Ցօղունն է բազմաճիւղ և մագլող, որ կը բարձրանայ* 40–60 *հարիւրորդամետր, և ոմանք մին-*

Ձև 110. Ոսկեխնձոր.

չև մի մետր և աւելի. և պատած է մազով ինչպէս նաև տերևները, և կ'արձակէ գէշ հոտ մը վնասակար երբ չփեմք։ Տերևներն են փետրաձև, անհաւասար հատուած-ներով և խորտաբորտ. վերին երեսը մթին կանաչ, տակի երեսը բաց կանաչ. ծաղիկներն՝ դեղին ողկուզաձև, որ

կը բացուին յուլիս և օգոստոս ամիսներուն մէջ. պը-տուղներն որ կոչին Ոսկեխնձոր կամ Պոլտիկ, են կա-կուղ և հիւթեղ, բոլորաձև և տափարակ երկու կողմէն, բաժանեալ անհաւասար թուով բլիթներ, և պատեալ փայլուն և ողորկ մորթով՝ ի գոյն կարմիր կամ դեղին,



Ձև 110′. Ոսկեխնձոր բոլորշի.

և երևան ակօս ակօս դէպ ի լայնութիւն (Ձև 110)։ *Պտղոյն մէջ կը գտնուին անթիւ մանր հատեր դեղնա-գոյն և տափարակ, որք են իրեն սերմը։ Պտղոյն տրա-մագիծը կը տարբերի ըստ տեսակին* 5–11 *հարիւրոր-դամետր. և կը հասուննայ աշնան ժամանակ։ Կայ ուրիշ*

տեսակ մը արուեստով լաւցուցած, որոյ բոյսն է թզուկ, պտուղն բոլորշի, խնձորի նման, մսոտ, ընտիր, վաղահաս և բարեբեր (Ձև 110):

Պոլտիկի տեսակները խիստ շատ են, և կը տարբերին ձևով, գունով և մեծութեամբ, բայց ընտրելի են վաղահաս տեսակները:

324. Մշակութիւն. — Ոսկեխնձորը բնիկ տաք երկիրներու պտուղ ըլլալով, կը փոխուի իր մշակութեան կերպն ըստ կլիմային ուր կը բուսնի: Բարեխառն գօտւոյ տակ ալ կը բուսնի, բայց միշտ տաք դիրք ընտրելու է. Թաց տեղ չսիրեր, կը վախնայ ցուրտէն, բայց կը դիմանայ ծովային քամիներուն: Իր սիրած հողն է խառնուրդ գայլախազային, կրային և կաւեղէն հողերու, ուստի կակուղ և պարարտ հող, մանաւանդ կալւով խառն: Պիտի ըլլայ նաև խոր փորուած, և ըստ կարի ոռոգելի: Մի հարիւրակալ երկիր պարարտացնելու համար հարկաւոր է 150 կենդինար աղբ և 3 կենդինար քլոռուկ կալւոյ: Մի հարիւրակալ երկրէ կրնամք ունենալ 500 կենդինար ոսկեխնձոր, և 20 կենդինար տնկոյն չորցած ցօղունները և տերևները:

Ոսկեխնձորն ամառային բոյս ըլլալով, պէտք է աշնան երկիրը փորել և գարնան միւս անգամ. և աղբը դնել աշնան՝ հողը մշակելու ժամանակ, և գարնան մանրել հողը և խառնել, որպէս զի պարարտութիւնն հաւասար տարածուի ամէն կողմ:

325. Երբ գարնան անցնի միգի վախը, պէտք է սնդուկներու մէջ յունուարի և փետրուարի ցանուած և բուսած ոսկեխնձորի տունկերը՝ փոխադրել պատրաստած արտերուն մէջ, և տնկել տողի վրայ, իրարմէ 30 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և դնել իրենց քով փոքրիկ ձողակներ մի մետր բարձրութեամբ, և այս ձողակները իրարու կցել բարակ ճիւղերով կամ եղեգներով և կամ երկաթի թելերով, և անոնց վրայ կապել տունկերուն ճիւղերը:

Տնկոց փոխադրութիւնը պէտք է ընել օրուան զով ժամանակին, և երեկոյի ջրել, որպէս զի հողը հաստատուի արմատներուն չորս կողմ: Տունկերը մեծնալէն ետքը, քըքրել հողը և մաքրել վնասակար խոտերը, և երբեմն երբեմն առատապէս ջուր տալ:

Երբ տունկերն հասնին ձողակներուն բարձրութեան, ծայրատել, և կողմնակի ճիւղերէն թողուլ հինգ վեց հատ, իրարմէ հեռի 25 հր.մ, և մնացորդ ճիւղերը և ընձիւղները ամէնքն ալ կտրել: Եւ երբ պտուղներն կաղնոյ չափ ըլլան, կապել ճիւղերը թելերուն վրայ, և ծայրատել, և կտրել անոնց վրայ ելած նոր ընձիւղները: Պտուղներն չափաւոր մեծնալէն ետև, ոռոգել տունկերը առատապէս, և փրցնել ըստ մասին այն տերևները որ շուք կը ձգեն պտղոց վրայ:

326. Քաղոց եւ ճիւթ ոսկեխնձորի. — Ոսկեխնձորի պտուղներն ամէնքն միանգամայն չեն հասուննար, ուստի պէտք է հետ զհետէ քաղել երբ հասուննան: Ոսկեխնձորը կը գործածուի ուտելու իբրև կերակուր՝ եփելով, և իբրև համեմ՝ իր ջուրը հանելով և պահելով, որով կը համեմեն տեսակ տեսակ կերակուրներ: Իբրև համեմ պահելու համար շատ տեսակ կերպեր կան, բայց դնեմք հոս լաւագոյն կերպ մը:

Պէտք է ոսկեխնձորը լաւ մը ճմլել, և յետոյ կաթսայի մէջ դնել և տաքցնել մեղմ կրակով, և շարունակ խառնել: Զգուշանալու է չափազանց տաքցնելէն, որպէս զի այրածի համ չառնու: Յետոյ դնել պարզուտի մէջ և ճմլել որ հիւթը վազէ, և այս հիւթը գոլորշացնել մեղմ կրակով, մինչև առնու օշարակային թանձրութիւն. և քանի որ տաք է՝ դնել շիշերու մէջ և վրան 2 հր.մ թանձրութեամբ ձէթ, և դնել շիշերը եռացեալ ջրոյ բաղանեաց մէջ, բերաննին սունկով լաւ մը գոցելով:

Արևելք ուրիշ պարզ կերպ մը կը գործածեն պոլտիկի հիւթը պահելու համար: Ճերտ չերտ կը կտրեն պտուղները ընդ լայնութիւն և կը դնեն մեծ ամանի մէջ կարգ կարգ, աղալով իւրաքանչիւր կարգը, և կը թողուն օր մը որ ջուրը ինքնին դուրս տայ: Երկրորդ օրը կը ճմլեն ուժգին և կ'անցնեն մաղէ, և ելած ջրեղէն հիւթը արևու մէջ կը դնեն ընդարձակ և քիչ խորութիւն ունեցող ամաններով, որ արևու տաքութեամբ ջուրը գոլորշանայ, և մնացած թանձր կարմրագոյն հիւթը կը դնեն բղուղներու մէջ բերաննին լաւ գոցած և կը պահեն, և հետ զհետէ կը գործածեն:

327. Պահպանութիւն դալար ոսկեխնձորոյ. — *Ոսկեխնձորը դալար պահելու համար, պէտք է ժողվել առողջները և կէս հասունցածները, և մաքրելէն ետքը դնել մեծ բղուղներու կամ տակառակներու մէջ, բայց այնպէս որ միոյն կոթը չվնասէ միւսոյն։ Լեցնել զօրաւոր աղաջուր, խառնելով աղ 8 առ 100, և վրան ծածկել ագնիւ ձիթով 2 հր.մ թանձրութեամբ, և այսպէս լաւ կը պահուին ոսկեխնձորները։ Պահելու համար եղած ոսկեխնձորները լաւ է ժողվել օգոստոսի անձրևներէն առաջ։*

328. Հաւաքումն սերման եւ հիւանդութիւնք ոսկեխնձորոյ. — *Սերմը առնելու է զօրաւոր բոյսերէն, և ասոնց վրայէն ընտրելու է վաղահաս պտուղները որ կ'աճին գլխաւոր ցօղունին վրայ, և ձևով ալ նշանաւոր են։ Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը երեք չորս տարի։*

Ոսկեխնձորոյ տունկն ենթակայ է պխակ հիւանդութեան, ուստի փոքրիկ ջրհանով պէտք է սրսկել ծծմբատի պղնձոյ և կրոյ ջրային խառնուրդը, դնելով 3 առ 100 երկուքէն ալ ջրոյ մէջ։

ԳԼՈՒԽ ԺԶ

ԿԱՆԿԱՐ. (*տճ.* *Էնկինար.* *գղ.* Artichaut. *իտ.* Carciofo. *լտ.* Cynara scolymus).

329. Նկարագիր. — *Կանկարն՝ որ ռամկօրէն կ'ըսուի Արտիճուկ, է բոյս երկարակեաց, հաստ արմատով, նեարդային, մեծատարած, ճղճղկէն և թանձր տերևներով,*



Ձև 111. Կանկար.

չիտակ, ակօսաւոր և հաստ բնով, որոյ ծայրը գլուխ մը ունի գնտաձև, կազմեալ սրածայր և սեղմ տերևներով, (Ձև 111, 111′), և այդ գլխոյն մէջ տեղէն դուրս կ'ելնեն

խումբ մը ծաղկանց հովանոցակերպ (Ձև 112), իր թանձր մսեղէն ընդունարանէն վեր բարձրանալով, բարակ և անթիւ մազմզուկներով, ի գոյն կապտորակ մանուշակի, գեղեցիկ տեսլեամբ։ Այդ գլուխն է որ կը համարուի պտուղ, և կ'ուտուի ծաղկելէն առաջ, և կ'ըսուի կանկար, կանգար, որոյ կէս հատուածն է (Ձև 113)։

Կանկարն է բնիկ Եթովպիոյ, բայց կը բուսնի նաև Ասիա, Ափրիկէ և Եւրոպա, և շատ տեղ կը բուսնի ինքնին վայրենի վիճակի մէջ, և այդ վայրենի տեսակէն ելած է ընտանի կանկարը։ Վայրենին է փշոտ, իսկ ընտանին անփուշ, և ունի շատ տեսակներ։ Արևելեան կանկարը փափուկ է և համեղ, մանաւանդ քանի որ դեռ մանր է, և կ'ուտուի տերևներով մէկտեղ. բայց երբ մեծնայ կանկարը, տերևներն կը կարծրանան և չեն ուտուիր, մանաւանդ արտաքին տերևները զորս պէտք է նետել։ Եւ յայնժամ իր մսոտ սկաւառակաձև տակի ընդունարանն է որ կ'ուտուի, ձիթով կամ մսով եփած։

Ձև 111· Կանկարի գլուխ·

Ձև 112· Կանկարի ծաղիկ·

330․ Մշակութիւն․ — Կանգարը բարեխառն կլիմայի տունկ է, թացութիւն չսիրեր։ Երբ ձմեռը ցրտութիւնն իջնայ մինչև 5 աստիճան, տունկերը շատ կը կրեն, նաև կը չորնան։ Ընտանի կանկարն աւելի փափուկ է քան զվայրենին և զգայուն ցրտութեան. անոր համար Եւրոպայի մէջ հարաւային կողմերը կը տնկեն, և շատ տեղ ձմեռը վրայ չհասած, արմատներուն վրայ հողէ փոքրիկ ամբարտակներ կազմեն հիւսիսային կողմէն, ցուրտէն և սառուցէն պաշտպանելու համար, կապելով տերևները ի մի խումբ։

Կանկարը պարարտ հող կ'ուզէ, խոր փորուած՝ մինչև 50 հարիւրորդամետր։ Եւ հողը պարարտացնելոյ համար ամենէն ընտիրն է բուսահող փըտեալ, որոյ հետ պէտք է խառնել մոխիր։ Եւ եթէ ուզեմք տարրաբանական պարարտութիւն գործածել, պէտք է 1000 հազարագրամ տարրաբաշխեալ աղբի հետ խառնել 20 հազարագրամ քլորուկ կալիոնի և նոյնչափ վերլուծանատ կրոյ, և այս խառնուրդէն տալ 2 հազարագրամ իւրաքանչիւր տունկին. որով և բաւական կ'ըլլայ այդ խառնուրդը 520 տնկոց։

Ձև 113· Կանկար հատեալ·

331․ Կանկարը կը բազմացնեն գրեթէ միշտ իր արմատին քով ելած մոլերով, և հազիւ երբեք սերմով։ Այդ մոլերը կ'ուտուին նաև, բայց կանխաւ պէտք է ծածկել հողով, միայն գլուխնին դուրս թողլով, ուր կը ճերմկնան, և ամսէ մը ետքը կրնայ հանուիլ և ուտուիլ։ Իսկ բազմացնելու համար պէտք է ընտրել զօրաւոր տունկերը, և նայիլ որ մոլերուն արմատները կէս փայտեղէն ըլլան, և ունենան երեք չորս տերև։

Կը տնկեն կանգարը աշնան տողի վրայ, իւրաքանչիւր կանգար իրարմէ մի մետր հեռաւորութեամբ, և գարնան կը փոխեն այն տունկերը որ վատուժցեր են։ Մոլերը տնկելու համար պէտք է հողին մէջ փոսեր բանալ

30 հարիւրորդամետր լայնութեամբ, դնել մէջը պարարտութիւն, և յետոյ տնկել և ծածկել հողով, նայելով որ 10 հարիւրորդամետրէ աւելի խոր չտնկուի։ Քանի մը օրէն ետքը ջրել, որպէս զի ապահով ըլլամք որ արմատները բռնեն. և քանի որ մեծնան՝ պէտք է երբեմն երբեմն քրքրել հողը և վնասակար խոտերը հանել։

Ամառան մէջ պէտք է կտրել այն ցօղունները որ ծայր չունին, և կտրելու է ըստ կարի գետնոյն հաւասար, և աշնան մերկացնել տունկերը և թողուլ իւրաքանչիւր տնկոյն վրայ երկու կամ երեք ընտիր բողբոջներ։ Իսկ ձմեռն՝ ինչպէս վերը ըսինք, հողով ծածկել արմատները, և գարնան մարտի կամ ապրիլի մէջ քիչ քիչ վերցնել հողը արմատներուն վրայէն, որպէս զի խկոյն ազատ օդ և արև տեսնելով՝ չվնասուին տունկերը, և կտրել տակի փտած տերևները։ Յետոյ քիչ մը պարարտութիւն տալ և փորել բահով արմատներուն չորս կողմ։

Երկրորդ տարւոյն խնամքն ալ նոյն է առաջին տարւոյն հետ, և երրորդ տարիէն ետքը լաւ է փոխել կանկարները. վասն զի շատ տարիներ թողլով, բերքը կը նուազի։

332. Քաղուց. — Կանկարի պտուղները պէտք է ժողվել հետ զհետէ երբ հասուննան, սկսեալ մայիսէն մինչև սեպտեմբեր։ Ի սկզբան կտրածներն աւելի փափուկ են, մանր և համեղ. բայց կտրելուն պէս պէտք է տանել ի վաճառ, վասն զի շուտով կը թոռմին և կը սևնան։ Եթէ ուզեմք քանի մը օր պահել, պէտք է դնել զով տեղ, բայց ոչ խոնաւ, և ծածկել կանաչ տերևներով։

Թէ որ ուզեմք պահել ձմերան համար, պէտք է կտրել երկու մաս և չորցնել արևու տակ կամ հնոցի մէջ։ Եւ կամ քացախով խաշել և դնել եղի տակ։

Ընտիր կանկարանոց մը կրնայ տալ առ մի հարիւրակալ 90 հազարէն մինչև 100 հազար գլուխ կանկարի։ Իւրաքանչիւր տունկ կրնայ տալ 8–12 կանկար։ Բայց գաղղիական կանկարը քիչ պտուղ կու տայ, այս ինքն միջին հաշուով 4 գլուխ առ մի տունկ, որով և առ մի հարիւրակալ երկիր կ՚ըլլայ իբր 40 հազար գլուխ։

Եթէ ուզէ մէկը մեծագլուխ կանկարներ ունենալ, պէտք է թողուլ իւրաքանչիւր արմատին վրայ մի կամ

երկու պտուղ, ձմեռը ծածկել հողով բովանդակ տունկը՝ ծայրը միայն դուրս թողլով, և գարնան հողը բանալէն ետքը հոգալ մասնաւոր խնամքով, և տալ հետագայ տարրաբանական պարարտութիւնը ջրոյ մէջ լուծուած. այս ինքն 30 մաս ծծըմբատ աւշակի և 70 մաս վերլուսածնատ կրոյ, և երեք շաբաթը անգամ մը տալ չափով նոյն լուծումը իւրաքանչիւր արմատին վրայ, կտրելով աւելորդ տերևները։ Այսով կ՚ունենամք մեծամեծ կանկարներ, մինչև 30 հր.մ տրամագծով, որ անհաւատալի կ՚երևի։

Կանկարի պտուղները քաղելէն ետքը պէտք է կտրել տակէն անոնց ցօղունները, նմանապէս երկայն տերևներուն ծայրերը, որպէս զի արևուն տաքութեամբ չորնայ երկիրը բուսոց չորս կողմ, և յետոյ չինել հողակոյտեր արմատներուն վրայ, ձմերան սառուցէն պահպանելու համար։

ԳԼՈՒԽ ԺԷ

ԱՆԱՆԱՍ. (*տճ.* *Անանաս.* *գղ.* Ananas. *իտ.* Ananasso. *լտ.* Bromelia ananas, Ananas sativus).

333. Նկարագիր. — *Անանաս է բնիկ Ամերիկայի այրեցած գօտւոյ տակ եղած երկիրներուն, և մանաւանդ Անտիլեան կղզիներուն, և 1594ին Լուսիտանացւոց ձեռքով մտաւ արևելեան Հնդկաստան, ուր շատ ծաղկեցաւ: Ծղօտն է չիտակ, հաստ, մոտ և հիւթեղ. տերևներն կ'ըլլան երկայն 20–40 հարիւրորդամետր, ուրդաձև, սրածայր, և եզերքը փշոտ. ծաղիկներն են հաւկաձև, մանուշակագոյն կամ կապտորակ, որոց կը փոխանակեն պտուղներն իրարու կից, գնտաձև կամ ձուաձև, որոց վրայի կեղևը կ'ըլլայ կարմիր, դեղին, մանուշակագոյն կամ սև, զոր կեղևեն և կ'ուտեն տակի միսը՝ որ է դեղին: Պտուղը չոճւոյ սոնօպրիին կը նմանի և կ'ըսուի Անանաս (Ձև 114): Պտղէն վեր կան ցցուած կարճ տերևներ իբրև ճեղանակ մը: Բոյսին ծղօտը պտղին մէջէն անցած է, և երբ հասուննայ պտուղը, կը կտրեն ծղօտին մէկ մասով մէկտեղ և վրայի ճեղանակով, և այնպէս կը հանեն ի վաճառ:*

334. *Անանասն ազնիւ և յարգի պտուղներէն մէկն է, որոյ համն ելակի, դեղձի, խնձորի համերուն խառնուրդ մի է, անոյշ հոտով և ջրոտ, թթուաշ և շաքարային. և ուտելու համար կը կտրեն ծայրի տերևները, կը կեղևեն պտուղը, և շերտ շերտ կը կտրեն բարակ և բոլորաձև, և վրան բարակ շաքար ցանելով կ'ուտեն. բայց առանց շաքարի ալ կ'ուտուի, միայն թէ շաքարով ազնիւ համ մը կ'առնու: Տաքցուցիչ է պտուղը, ուստի շատ չուտուիր: Կ'ելնէ մէջէն զանազան բուսական թթուուտներ, մանաւանդ թթուուտ խնձորական: Շաքարագործք անանասի հիւթը կը գործածեն զանազան շաքարեղինաց և օշարակաց, իր ազնիւ համին և հոտին համար: — Մարտինիկի անանասը կը կշռէ մինչև 2 հազարագրամ, և երկայնութիւնն է 30 հարիւրորդամետր: Անանասի տեսակները շատ են:*

Մշակութիւն. — *Անանաս՝ ինչպէս ըսինք, կը մշակուի տաք երկիրներու մէջ, և Եւրոպա ջերոցներու մէջ: Ի սկզբան շատ յարգի էր Եւրոպայի մէջ, բայց հիմայ շոգենաւներով դիւրաւ կը հասնին Անտիլեան և Կանարեան կղզիներէն:*

Ձև 114. Անանաս.

Կը սիրէ պարարտ և տաք երկիր, կ'ատէ խոնաւութիւն, և շուտով կը փտին արմատները խոնաւութեամբ։ Մեծ խնամք կ'ուզէ Եւրոպա ջերոցներու մէջ պահելու համար, և տալու է չարունակ նոյն աստիճան տաքութիւն, լոյս և կակուղ հող։ Տասնևհինգ կամ տասնևութ ամսոյ մէջ կրնայ պտղաբերել։

336. Բազմացումն. — Կը բազմանայ անանաս իր արմատէն վեր բարձրացած շառաւիղներով կամ թէ ըսել մոլերով, և քիչ անգամ սերմով։ Սերմով մեծցած տունկը չորս հինգ տարի կ'ուզէ պտուղ տալու համար, իսկ մոլերով բազմացած տունկը երկու երեք տարիէն պտուղ կու տայ։ Կը տնկեն մոլերը յուլիսէն մինչև սեպտեմբեր, կտրելով վրայի տերևները։

ԳԼՈՒԽ ԺԲ

ԵԼԱԿԵՆԻ. (տճ. Չիլէք. գղ. Fraisier. իտ. Fragola, Fravola. լտ. Fragaria vesca, Fragaria vulgaris).

337. Նկարագիր. — Է բոյս խոտեղէն, մազոտ, երկարակեաց, որոյ ցօղունն է կարճ, և կ'արձակէ երկայն շառաւիղներ, որք հողին երեսը իրենց ծունկերուն վրայ արմատ կ'արձակեն և կը կպչին հողին (Ձև 115)։ Տերևներն կը բաղկանան երեք մանր և ձուաձև տերևակներէ. ծաղիկներն են վարդագոյն, ճերմակ և հնգաթերթ, որոց կը փոխանակեն իրենց պտուղներն և կոչին Ելակ, Գետնամարուք (գղ. Fraise. իտ. Fragola), ձուաձև կամ գնտաձև, երեսը վարդագոյն և մանր ուռէցքով լցուած, միսը ճերմակ, կակուղ, անուշահամ և քաղցրահոտ (Ձև 116)։

338. Ելակի տեսակները շատ են, վայրի և ընտանի։ Վայրին ինքնին կը բուսնի անտառներուն մէջ, մանր է բայց քաղցրաճաշակ։ Ընտանին շատ տեսակ է. մեր ձեռին մէջ դրուածը Չորից եղանակաց ըսուածն է, որ տարին ամբողջ պտուղ կու տայ, այս ինքն, գարնան, ամառան և աշնան։ Կան տեսակներ որոց պտուղը քան զայս մեծ է, բայց մի անգամ կու տան, գարնան ժամանակ, և այսպիսեաց մասնաւոր խնամք կ'ուզէ։ Մեծ տեսակ ելակը մեր մէջ կ'ըսուի Խմորուկ (գղ. Capron. իտ. Fragolone), և բոյսը Խմորկենի (գղ. Capronier).

115. Ելակենի.

339. Մշակութիւն. — Ելակենին կը սիրէ կակուղ հող, խառնուրդ գայլախազային, կաւեղէն և կրային հողերու։ Կը բուսնի ամէն տեղ, բայց կը սիրէ աւելի արեգդէմ դիրք, և կը դիմանայ հովերու։

Պէտք է երկիրը բահով փորել խոր, մանրել հողը, մաքրել վնասակար խոտերէ և մանաւանդ անոնց արմատներէն, որք շատ կը վնասեն ելակներուն և դժուարաւ կրնամք վերջը մաքրել։ Յետոյ բաժնել ածու ածու 1մ,40 լայնութեամբ, և ակօսով իրարմէ բաժնուած. որով կրնամք դիւրաւ ամէն աշխատութիւնները կատարել։

Ձև 116. Ելակ.

Ելակենին տնկելու ժամանակ պէտք չէ գործածել դալար աղբ, այլ տնկելու է այն երկրին վրայ որ տարի մը առաջ աղբած ըլլայ. ո-

րով աւելի համով ելակներ կու տայ։ Բայց թէ որ ելակենին տնկելու երկիրը տարի մը առաջ աղբած չըլլայ, կրնամք գործածել բուսահող փտեալ, աւելուք և մոխիր։

340. Բաւական չէ միայն տնկելու ժամանակ տալ պարարտութիւն հողոյ, այլ և ամէն տարի, որովհետև ելակենին սպառիչ է հողոյ։ Եւ բերքը քաղելէն ետքը, լաւ կը համարուի տալ աղբ հաւեղինաց՝ լուծեալ ջրոյ մէջ, կամ տալ հետագայ բաղադրութիւնը.

Վերլուսածնատ կրոյ	100	գրամ
Բորակատ Նատրոնի	100	»
Ծծըմբատ կալւոյ	100	»

լուծեալ 100 լիտր ջրոյ մէջ, տալով 5 լիտր այդ լուծմանէ առ 1 մետր քառակուսի։

Եւ եթէ ուզեմք աշնան պարարտացնել ելակատանը, կրնամք գործածել հետագայ պարարտութիւնը, տալով առ 1 կալ

Աղբ փտեալ	100	հզրգր.
Վերլուսածնատ կրոյ	3	»
Քլոռուկ կալւոյ	2	»

Քլոռուկի տեղ կրնամք դնել ծծըմբատ կալւոյ 1,750 հազարագրամ։ Նախ պէտք է սփռել հողին վրայ տարրաբանական պարարտութիւնը, յետոյ աղբը։

341. Բազմացումն ելակենւոյ. — Ելակենին կը բազմանայ չորս կերպով.

Ա. Վայրի ելակենիներով որ ինքնին կը բուսնին.
Բ. Արմատները բաժնելով.
Գ. Շառաւիղներէն բուսած արմատներով.
Դ. Սերմով։

Առաջին կերպը կը կատարուի աշնան կամ օգոստոսի անձրևներէն ետքը, երթալով անտառ և հոն ընտրելով լաւագոյն բոյսերը, հանել արմատով և զգուշութեամբ բերել և տնկել պարտիզին մէջ։

Երկրորդ կերպն է ելակենւոյ արմատները բաժնելով, որ լաւագոյն կերպն է, և կ'ըլլան աւելի բարեբեր։

Երրորդ կերպն է շառաւիղներուն վրայ բուսած արմատները հանելով և տնկելով, և այս սովորական կերպն է, և կ'ըսուի Աղուրայ։ Բայց որպէս զի տունկերը լաւ ըլլան, պէտք չէ թողուլ որ արմատ արձակող շառաւիղները չորսէն աւելի ըլլան, և պէտք է կտրել շառաւիղներուն ծայրը առաջին հանգուցէն ետև։

Զորրորդ կերպն է սերմով բազմացնելը, որոյ գործածութիւնը թէպէտ քիչ է Իտալիա, բայց կը գործածուի Գաղղիա և Անգղիա, մանաւանդ մեծ և նոր տեսակ ելակներ հասցնելու համար։

342. Հաւաքումն սերման. — Ելակի սերմը ունենալու համար, պէտք է թողուլ պտուղները զօրաւոր արմատներուն վրայ որ լաւ մը հասուննան, և յետոյ ձեռքով ճմլել ջրալից ամանի մէջ։ Այս ջուրը ամանել և փոխել այնչափ անգամ, մինչև որ սերմերը լաւ մը լուացուին, յետոյ տարածել ծծուն թղթոյ վրայ և չորցնել շուքի մէջ։ Թէպէտ և սերմերն երկու տարի կը պահեն իրենց բեղնաւորիչ կարողութիւնը, թէ որ չոր տեղ պահուին թղթէ քսակներու մէջ դրուած, բայց լաւ է յաջորդ տարին ցանել։ Այս բանիս համար պէտք է յունիս կամ յուլիս ամսոյ մէջ պատրաստել ածու մը, հողը մանրելով և փտեալ բուսահողով լաւ մը պարարտացնելով, և սերմանել ցանցառ և ծածկել վրան բարակ հողով։ Եւ մինչև որ սերմերն ծլին, պէտք է միշտ ջուր տալ, բայց քիչ, օրը երկու երեք անգամ, զգուշանալով որ սերմերը հողէն դուրս չելնեն։ Յուլիսի տաքութեամբ և գետնոյն թացութեամբ ութ կամ տասն օրուան մէջ կը ծլին ելակենիները, զորս պէտք է միշտ ջրել օրը անգամ մը։ Երկու ամսուան մէջ տունկերն հինգ տերև կ'ունենան, և պէտք է յայնժամ հանել և տնկել պարտիզին մէջ սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսոյ մէջ, իրարմէ 30 հարիւրորդամետր հեռաւորութեամբ, և ջրել։ Եւ քանի որ մեծնան, երբեմն երբեմն քրքրել հողը և մաքրել վնասակար խոտերէ։ Ջրելը չափով ընելու է, վասն զի չափազանց ջրելով՝ պտղոյն համը և հոտը կ'երթայ։ Ամառն արևուն մուտքէն վերջ ջրելու է, և գարնան՝ առաւօտուն։

343. Քաղոց. — Եղակենւոյ պտղոյն հասունանալու ժամանակն անորոշ է ըստ տեսակաց, ըստ կլիմայի, ըստ երկրին, ըստ դրից և մշակութեան:

Պէտք է ժողվել եղակը երեկոյի կամ առաւօտուն երբ ցօղն անցած է: Եւ եթէ հեռի տեղ պիտի երթայ, նայելու է որ կատարեալ հասունցած չըլլան, և դնել սապատներու մէջ որ շատ խոր չըլլան: Պտուղներն ամէնքը միանգամայն չեն հասնիր, ուստի ընտրանօք ժողվելու է:

Լաւ բան է քաղոցը ընելէն եսև այցելութիւն մը ընել եղակաստանին, պակսեցնելու համար երկրորդական արմատները որ շառաւիղներուն վրայ ելած են, որք կը տկարցնեն բոյսը և կ՚ընեն քիչ բերրի և անպիտան: Ուստի, լաւ է զասոնք կտրել նետել, և թողուլ միայն այն տարին երբ կ՚ուզեմք արմատներով բազմացնել: Այս գործը տարին երկու անգամ ընել, գարնան երբ կը սկսին տունկերն աճիլ և մեծնալ, և աշնան՝ քաղոցէն ետքը:

344. Եղակաստան մը շատ տարի կրնայ դիմանալ շարունակ երիտասարդանալով, այս ինքն երկրորդական արմատները կտրելով. բայց լաւագոյն է երեք տարին անգամ մը հինը հանել և նոր տնկել: Եւ այս նորոգելը փոխանակ ամէնքը մէկտեղ ընելու՝ լաւ է ամէն տարի երրորդ մասը միայն նորոգել: Այն մասը որ պիտի նորոգեմք, քաղոց ընելէն վերջ պէտք է խոր փորել և ուրիշ բան տնկել, գէթ առ ժամանակ մի:

Մի կալ երկրէն կրնամք ունենալ 150 հազարագրամ եղակ:

—⁂—

ԳԼՈՒԽ ԺԹ

ՁՄԵՐՈՒԿ ԿԱՄ ՄԵՂՐԱՊՈՊ. (տճ. Գարբուզ. գղ. Pastèque, Melon d'eau. իտ. Cocomero, Anguria. լտ. Cucumis citrullus, Citrullus vulgaris).

345. Նկարագիր. — Է բնիկ հարաւային կողմանց Ափրիկէի և Ասիոյ, և շատ ժամանակէ ի վեր մշակեալ նաև Եւրոպայի հարաւային կողմ: Ձմերուկն է տկար բոյս խոտեղէն, տարևոր և գետնատարած. ճիւղերն երկայն, տկար և մագլող. տերևներն մեծ, տարածեալ,



Ձև 117. Ձմերուկ կամ Մեղրապոպ.

հերձեալ և մազոտ, ինչպէս նաև բովանդակ տունկն է մազոտ. ծաղիկներն են դեղին և մենարնակ, այս ինքն, արու և էգ ծաղիկները նոյն տնկոյն վրայ իրարմէ զատուած, պտուղն է մեծաքանակ, բոլորաձև կամ ձուաձև, արտաքուստ կանաչ և լերկ կեղևով, և ներքին միսը սովորաբար գեղեցիկ կարմիր, ջրոտ, անուշահամ, զովացուցիչ և լի ամբաւ և տափարակ կուտերով, որ սփռեալ

են մսին մէջ, և սովորաբար կ'ըլլան սև, բայց կ'ըլլայ նաև կարմիր և դեղին, և կը ծառայեն սերման (Ձև 117)։ Սև կուտով եղած ձմերուկն աւելի յարգի է և անոյշ։ Ձմերուկի ջրեղէն մասն է 89,5 և հաստատուն մասը 10,5։ Այս հաստատուն մասը կը բաղկանայ 16 բուսական նեարդիւէ, 13 օսլայէ, 48 շաքարէ, 15 հանային նիւթերէ, և մնացորդն առ 100 զանազան ուրիշ նիւթերէ։ Կուտին մէջ կը գտնուի իւղ 36 առ 100։

346. Ձմերուկն ըստ այլևայլ դրից տեղւոյն, կլիմայի, պարարտութեան հողոյ և տաքութեան կ'ըլլայ առաւել կամ նուազ մեծ։ Սովորականներն երկու երեք քաշ կը կշռեն, բայց կան նաև որ 10, 20 և մինչև 50, 60 քաշ կը կշռեն։ Համբաւաւոր են Ասորւոց և Միջագետաց ձմերուկները մեծութեան կողմանէ, բայց չեն այնչափ համեղ։ Կայ ընտիր տեսակ մը ձմերուկի որ մեր մէջ կ'ըսուի Աձուր, արաբերէն Շէմամ, և է շատ քաղցրահամ։

347. Մշակութիւն. — Ձմերուկն՝ ինչպէս ըսինք՝ տաք երկիր կը սիրէ, և իր մշակութեան կերպը նոյն է ըստ ամենայնի ինչ որ ըսինք վարունգի համար (315)։ Միայն խօսիմք ձմերուկի տունկերը ծայրատելու և ոռոգելու կերպին համար։

Ծայրատելը կամ կրճատումը պէտք է սկսիլ երբ պըտուղները կը կապեն։ Եւ այս կ'ըլլայ Ա. Թողլով իւրաքանչիւր տնկոյն վրայ մի պտուղ, կամ առ առաւելն երկու կամ երեք, կտրելով միւս ամէն բողբոջները։ Բ. Կտրել ամէն իգական ծաղիկները որ կը բացուին պըտղատու ճիւղին վրայ։ Գ. Ծայրատել այս պտղատու ճիւղը՝ պտղէն երեք հանգոյց վեր։

348. Ամառային սաստիկ տաքութեամբ եթէ ձմերուկի տունկերը սկսին կրել, պէտք է ոռոգել ջրով ձմերուկի արտը, քանի որ դեռ տունկը չէ թառամած և պտուղը չէ սկսած հասուննալ։ Պէտք է ջուրը թողուլ արտին երեսը ամբողջ գիշեր մը կամ առաւօտուն հինգ կամ վեց ժամ, որպէս զի հողն լաւ մը թրջի։ Այսպէս ոռոգելէն ետքը պէտք է թողուլ քանի մը օր և չմտնել արտին մէջ, մինչև որ հողը հաստատուի։ Ըստ պատշաճի մի անգամ ոռոգելը բաւական կը համարուի՝ մինչև որ հասուննան ձմերուկները։

Եւ երբ ձմերուկներն քիչ մը մեծնան և կշռեն իբր 1 հազարագրամ, պէտք է զիրենք շտկել գլուխնին դէպ ի վեր դարձնելով ուր կը գտնուի ծաղիկը, որպէս զի աղէկ ձև առնուն և շուտով հասուննան։

349. Քաղոց. — Ձմերուկի քաղոցը կ'ըլլայ օգոստոսի վերջ, և կը տևէ ամբողջ սեպտեմբեր, և հասուն ըլլալը կը ճանչցուի երբ կոթը սկսի չորնալ, և երբ ձեռքերնիս առած զարնեմք վրան և լսեմք մէջէն խուլ ձայն մը։

Սովորաբար կը հասուննան ձմերուկներն ոռոգելէն 40 օր ետքը։ Քաղելէն ետքը կրնան պահուիլ ամիս մը կամ երկու, դնելով զով և չոր տեղ։ Ամառ ատեն զովացուցիչ պտուղ մի է քաղցրահամ և ջրոտ, բայց պէտք է չափաւոր ուտել, և գիտել որ հասուն ըլլայ և աղէկ տեսակ, ապա թէ ոչ անհանգստութիւններ կը բերէ։ Կեղևները կերակուր են ձիոց և արջառոց։

Իտալիոյ հարաւային կողմերը մի հարիւրակալ երկիր կրնայ բերել 3–4 հազար ձմերուկ, և կշռէ իւրաքանչիւրը 6–10 հազարագրամ։ Մի հարիւրակալ երկրի հարկաւոր է 2–3 հազարագրամ սերմ։

ԳԼՈՒԽ Ի

ՍԵԽԵՆԻ. (*տճ.* *Գավուն.* *գղ.* Melon. *իտ.* Popone. *լտ.* Cucumis melo, Melo vulgaris).

350. Նկարագիր. — *Սեխենին է բոյս խոտեղէն և տարեւոր, բնիկ Ասիոյ և ըստ ոմանց Ափրիկէի, երկայն և ճկուն ճիւղերով որք են գետնատարած, և ոմանք մագլող՝ իրենց խիղբերով. տերեւներն են նեարդային, հերձեալ զանազան ձեւերով, և պատեալ մազով ինչպէս նաև բովանդակ բոյսը. ծաղիկներն են մենաբնակ, և կը բացուին յունիսէ մինչև օգոստոս, նախ արու ծաղիկներն և յետոյ էգ ծաղիկներն, երկուքն ալ զանգականձև: Պտուղներն են զանազան գունով, մեծութեամբ, ձեւով և համով, և կ'ըսուին Սեխ, և ռամկաբար ըսուած է Պրեխ: Ոմանց կեղևը կ'ըլլայ ողորկ, փայլուն, դեղին կամ կանաչ. և ուրիշներուն խորտուբորտ, ակօսաւոր, խատուտիկ: Ձեւն է բոլորշի, ձուաձև, կամ երկու ծայրերը տափարակ. միսն է ջրոտ և ախորժահամ, դեղնագոյն, ճերմակ, և մարմնագոյն. ոմանց կակուղ և ոմանց պինդ (Ձև 118): Սեխին միջուկը պարապ է, և հոն ամփոփած են իր սերմերը կամ կուտերը, որք են ձուարդ, ողորկ, տափարակ և դեղին, և սուր ծայրով կցեալ հիւթեղ ներդերու հետ, որք են անուտելի, և գրաւած սեխին դատարկ միջուկը:*

Ձև 118. Սեխ.

351. *Սեխի տեսակները խիստ շատ են, որոց մէջ անուանի է Զմիւռնիոյ մօտ Մագնեսիայի սեխը երկայնաձև, որոյ կեղևն է դեղին կամ կանաչ և ողորկ փայլուն. միսը ճերմակ, ջրոտ, փափուկ, հոտաւէտ և շատ քաղցրահամ: Երկրորդն է Կանտալուպ ըսուած իտալական սեխը, որ Նէապոլսոյ մօտ Կանտալուպ քաղքին անուամբ կոչուած է, և հիմա Գաղղիա, Անգղիա և ուրիշ կողմեր տարածուած է* (Ձև 119, 120, 121): *Ասոր միսն է կարմիր կամ նարընջագոյն և շատ քաղցրահամ: Զմիւռնիոյ և Կանտալուպի սեխերը շատ մեծ կ'ըլլան, և կը կշռեն մինչև* 15–20 *հազարագրամ, և կրնան պահուիլ երկու երեք ամիս:*

352. Մշակութիւն. — *Սեխենին կը սիրէ տաք կլիմայ, և կակուղ ու խոր փորուած հող: Պէտք է տնկել պարտիզի մէջ արեգդէմ, և ոռոգելը ոչ միշտ հարկաւոր համարուած է, որովհետև երկիրը խոր փորուած ըլլալով կը պահէ թացութիւնը, և սեխենւոյ արմատներն խոր և տարածուած ըլլալով՝ կը ծծեն ամէն կողմէն իրենց սնունդը:*

119. Սեխ կանտալուպ Անգղիոյ.

Հողին պատրաստութեան և պարարտացնելու կերպը նոյն է ինչ որ ըսինք վերը վարնգենւոյ համար (315): *Հողը պատրաստելէն վերջ պէտք է գուբեր բանալ* 35 *հարիւրորդամետր լայնութեամբ և* 20 *հր.մ խորութեամբ, և իրարմէ* 1,50 *մետր հեռաւորութեամբ: Այս գուբերը պէտք է աղբով լեցնել որ կատարեալ փտած չըլլայ, և լաւ մը ճմլել ոտքով, և վրան կոյտ մը ընել նոյն աղբէն՝ քովի հողէն իբր* 20 *հր.մ բարձր: Եւ ասոր վրայ դնել բարակ հող* 15 *հր.մ բարձրութեամբ, որ կազմէ կոնաձև մը:*

Այսպէս կոները պատրաստելէն վերջ, պէտք է անոնց գագաթը տափարակել, և բանալ ծակեր 10 հր.մ լայնութեամբ, և դնել իւրաքանչիւր ծակին մէջ 3 կամ 4 սեխի կուտ, և ծածկել վրան թեթև հողով։ Բուսնելէն ետքը թողուլ իւրաքանչիւր ծակին մէջ մէկ տունկ միայն։ Եւ որպէս զի սերմը շուտով ծլի, պէտք է դնել կանխաւ ջրոյ մէջ, և ցանելէն ետքը ջրել հողը։ Սեխը կը ցանուի ապրիլի սկիզբէն մինչև մայիսի վերջ։

Ձև 120. Սեխ կանտալուպ Ալժերիոյ.



Ձև 121. Սեխ կանտալուպ Լուսիտանիոյ.

353. Ծայրատումն սեխենեաց. — *Երբ սեխենւոյ սերմը ծլի և արձակէ չորրորդ տերևը, պէտք է կտրել սուր դանակով բոյսին ցօղունը երկրորդ տերևէն վեր, և այս հատումը պիտի ըլլայ ծուռ և մաքուր, որպէս զի շուտով գոցուի վէրքը։ Այս առաջին ծայրատումէն ետքը կը բուսնին երկրորդ արմատներ աւելի խոր, և վերի արմատները կը մնան անպիտան։ Այս նոր արմատներուն բուսնելով կը բուսնին նաև երկու ճիւղեր մնացած տերևներուն անթին մէջէն։ Այս երկու ճիւղերն որ կազմեն երկու բազուկներ, պէտք է թողուլ որ արձակեն մինչև տասն տերև. և յայնժամ ծայրատել սուր դանակով ութերորդ տերևէն վեր։ Մնացած տերևներուն իւրաքանչիւրին անթին մէջէն կը բուսնին նոր ճիւղեր, որոց վրայ կ'երևին նախ արու ծաղիկներն, և քանի մը օրէն ետքը էգ ծաղիկներն։*

Եւ երբ պտուղներն ընկուզի չափ ըլլան, պէտք է ընել երրորդ ծայրատումը, որով հիւթը կը հաւաքուի պտուղներուն վրայ։ Եւ այն ամէն ճիւղերն որ պտուղ չունին պէտք է ծայրատել հինգերորդ կամ վեցերորդ տերևէն վեր, և պտուղ ունեցող ճիւղերը պտղէն երկու տերև վեր։

Յաջորդ շաբթուն մէջ պտուղներն խնձորի չափ մեծցած կ'ըլլան, անոնցմէ պէտք է ընտրել զանոնք որ կ'ուզեմք պահել, և միւսները կտրել նետել։ Իւրաքանչիւր տնկոյն վրայ չորս պտղէն աւելի պէտք չէ թողուլ, այսինքն երկու պտուղ իւրաքանչիւր կողման վրայ, մին յաջ և միւսն ի ձախ՝ երկու բազուկներուն առաջին ճիւղերուն վրայ. և կտրել բազուկներուն ծայրերը չորրորդ ճիւղերէն վեր. և անոնք որ պտուղ չունին՝ կտրել չորրորդ տերևէն վեր։ Եւ եթէ ուրիշ ճիւղեր ալ ելնեն հետ զհետէ, անոնք ալ ծայրատել հինգերորդ տերևէն վեր։

354. *Սեխը կը հասուննայ օգոստոսի կիսէն մինչև սեպտեմբերի վերջ։ Եւ կ'իմացուի հասուն ըլլալը երբ սկսի անոյշ հոտ արձակել, և իր կոթը թոռմիլ և չորնալ։*

Կ'ուտուի սեխը հում, բայց կ'ըլլայ իրմէ նաև քաղցրաւենիներ. և քիչ մը տհաս կտրելով՝ կրնայ ուտուիլ դդումի պէս եփելով։ Սեխը չէ այնչափ սննդարար, բայց է զովացուցիչ և կակղեցուցիչ։ Եթէ տհաս ուտուի կամ չափէն աւելի, փորհարութեան և ուրիշ անհանգստութեանց պատճառ կ'ըլլայ։ Առողջ և զօրաւոր կազմուած ունեցողներն կրնան ուտել անվնաս, բայց ոչ տկար կազմուած ունեցողներն, ոչ հիւանդութենէ նոր ելնողներն, և ոչ նստողական կեանք անցնողներն։

Իւրաքանչիւր կալ կրնայ բերել 60 սեխ. և մի կալ երկրի համար հարկաւոր է 10 գրամ սերմ։ Սերմը կը ծլի 5 օրուան մէջ, և կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը 6–8 տարի։

355. *Սեխը կրնայ առաջ գալ բնի տաքութեամբ ջերոցներու մէջ, ուր տաքութիւնն ըլլայ գէթ* 15^0 *գիշեր*

ատեն և ցերեկը 18^0. և ցանել դեկտեմբերի կամ յունուարի մէջ, ընտրելով մանր տեսակ սեխը. և ունենալ այն խնամքը ինչ որ վերը ըսինք։ Եւ որովհետև սեխը լոյս կը սիրէ, պէտք է ցերեկները բանալ ջերոցին ապակի պատուհանները երբ օդը լաւ ըլլայ։ Մայիսի մէջ կը հասուննայ պտուղը։

Եւ եթէ կէս բանի կերպով ուզեմք հասունցնել սեխը, պէտք է տնկել մարտի սնդուկներու մէջ, և ծածկել վրան ապակի պատուհաններով. և երբ ծլին և քիչ մը մեծնան, փոխադրել տունկերը հողով միասին պատրաստած ածուներու վրայ, ջրել և ծածկել ապակի զանգակներով, և քանի մը օր չթողուլ որ լոյս տեսնէ, մինչև որ ապահով ըլլամք որ բռնած են արմատները հողին մէջ։ Եւ օդը տաքնալէն ետքը կրնամք վերցնել վրայի զանգակները, և ուրիշ գործերը ընել վերոյիշեալ կերպով։

ԳԼՈՒԽ ԻԱ

ԴԴՄԵՆԻ. (տճ. Գապաք. գղ. Courge կամ Citrouille. իտ. Zucca. լտ. Cucurbita pepo).

356. Նկարագիր. — Է բոյս խոտեղէն, տարեւոր և պատաղիճ, որոյ ցօղունն է երկայնաձիգ, անկինաւոր, ճկուն, կորդ և փշոտ, և կ'արձակէ երկայն ճիւղեր գետ-



Ձև 122. Դդմենւոյ ծաղիկ.

նատարած կամ մագլող իրենց խիղբերով. տերևներն են լայն, երիկամնաձև, հերձեալ, և իրենց կոթը մազոտ. ծաղիկներն մենաբնակ, մեծ, զանգակաձև, դեղին կամ

ճերմակ (Ձև 122). պտուղներն մեծ, և զանազան ձևե-րով և գունով, և կոչուին Դդում, և ունին անբաւ տե-



Ձև 123. Դդում, փտուր կոչուած.

սակ։ Ոմանց արտաքին երեսն է ողորկ, և ոմանց խոր-տաքորտ և ակօսաւոր. գոյնը դեղին, կանաչ կամ խա-



Ձև 124. Դդում, փակեղն կոչուած.

տուտիկ, և կը կրեն զանազան անուններ ըստ տեսակաց, որոց գլխաւորներէն քանի մը տեսակը դնեմք հոս.

Փտուր. (տճ. ճէրվաձը գապաղը. գղ. Potiron). (Ձև

123)։ Դդում մեծ, կարմիր կամ դեղին մսով, որ կը պահուի երկար ժամանակ, դնելով չոր և զով տեղ, և կ'ուտուի եփելով։

Ձև 125. Դդում գդակաձև.

Փակեղն. (գղ. Giraumon turban) (Ձև 124), և **Դը-դում գդակաձև** (գղ. Courge bonnet) (Ձև 125)։ Այս

Ձև 126. Դդում Բրազիլի շաքարային.

երկուքն ալ են փտուրի տեսակէն, և իրենց ձևին հա-մար այդպէս կոչուած։

Դդում Բրազիլի շաքարայինը (գղ. Courge sucrière de Brésil) (Ձև 126), որոյ միսն անոյշ է, և կը գործածուի ուտելու եփելով։

Այս ամէն դդումներուն միջուկը դատարկ է սեխի պէս, և լցեալ տափարակ, ճերմակ և մսոտ կուտերով։

357. Արևելք գործածական դդմոյ տեսակներնեն *Մեղրադդում* (տճ. պալ գապաղը) երկայն և գլանաձև, որոյ վրայի մորթն է դեղին, ողորկ, և միսն է նոյնպէս դեղին, անոյշ և համեղ, և կը պահուի երկար ժամանակ։ — *Բազկադդում* (տճ. գոլ կամ սամա գապաղը), որ բազկի պէս երկայն և նեղ է, ճերմակ գունով. բոյսն է պատաղիճ, և պտուղը բարձրէն կը կախուի։ — *Կօշ*, որ և կ'ըսուի *Տող* (տճ. սու գապաղը. գղ. Calebasse), որուն Կարնեցիք կ'ըսեն ճտով դդում, երկայն կոթին համար, է տեսակ մը դդում գնդաձև և երկայն կոթով, որոյ միջուկը կը հանեն, և մնացած մասը կը չորցնեն, որ հիննալով կը կարծրի, և կը գործածեն գեղացիք ջրոյ կամ գինւոյ ամանի տեղ։

Ձև 127. Դդում մանր.

Ձև 128. Դդում Նէապօլսոյ.

Բայց դդմոյ տեսակներուն մէջ ամենէն աւելի գործածականն է *մանր դդումը*, վարունգի ձևով (գղ. Coucourzelle կամ Courge d'Italie) (Ձև 127), որոյ կուտերն են մանր, և կ'ուտուի խաշած իբրև աղցան. դընելով եղ և քացախ, կը գործածուի նաև զանազան տեսակ կերակրոց։ Ասոր մէկ տեսակն է *Նէապօլսոյ դդումը* (Ձև 128), ողորկ երեսով և լեցուն մսով, և չպահուիր երկար ժամանակ։

358. Մշակութիւն. — Դդմենին կը սիրէ տաք կլիմայ, կակուղ և պարարտ հող։ Իրեն վրայ եղած խնամքը նոյն է ինչ որ ըսինք վարունգի, սեխի և ձմերուկի վրայ։

Դդումը աշնան և ձմերան մէջ ուտելու համար պէտք է սերմանել մայիսի մէջ։ Իսկ գարնան ուտելու համար սերմանել աշնան վերջ սնդուկներու մէջ, մանաւանդ մանր տեսակները, և գարնան սկիզբը փոխադրել պատրաստած ածուներու մէջ։ Ոմանք չեն կրճատեր դդմենւոյն ծայրերը, բայց սովորաբար լաւ կը համարուի կրճատել երկու տերևէն վար, երբ բոյսը հինգերորդ տերևը կ'արձակէ, և պտուղը կապելէն ետքը կրճատել միւս անգամ, պտղէն երեք տերև վեր։ Կրճատմամբ պտուղներն աւելի կը մեծնան, բայց պէտք չէ թողուլ տնկոյն վրայ երեք պտղէ աւելի։

Մի հարիւրակալ երկրէ կրնամք ունենալ 100,000 դդում։ Դդումի կուտերէն կ'ելնէ եղ 10 առ 100, որ կրնայ գործածուիլ լուսաւորութեան։ Մի հարիւրալիտր դդումի կուտ կը կշռէ 43 հազարագրամ։ Մի հարիւրակալ երկիր սերմանելու համար հարկաւոր է կէս հազարագրամ սերմ, որ կը ծլի 5 օրուան մէջ, և կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը մինչև 6 տարի։

Դդումը սննդարար ուտելեաց մէջ վերադաս կը համարուի քան զձմերուկ և սեխ, բայց կ'ուտուի եփելով և կազմէ հաճոյական կերակուրներ և ըստ բաւականին առողջարար։ Կ'ուտուին նաև դդումի ծաղիկներն խորովելով եղի մէջ։

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ԽԱԻԱՐՏՔ ՈՐ ԿԸ ԳՈՐԾԱԾՈՒԻՆ ԻԲՐԵՒ ՀԱՄԵՄ

359. Գիտելիք. — Թէպէտ վերը յիշուած բոյսերէն ոմանք կը գործածուին նաև իբրև համեմ, ինչպէս են ժախուկ կամ Տարգալախոտ (142), Սամիթ (201), Ախրիզան (254), Քեղակարոս (266), Մանանեխ (281), Կապար (309), բայց հոս առանձինն կ'ուզեմք խօսիլ այն բուսոց վրայ, որ կը գործածուին լոկ իբրև համեմ կերակրոյ։

ԳԼՈՒԽ Ա.

ՌԵՀԱՆ ԿԱՄ ՇԱՀԱՍՊՐԱՄ. (տճ. ֆէսլիյէն. գղ. Basilic. իտ. Basilico. լտ.

360. Նկարագիր. — Է բոյս խոտեղէն, տարևոր, որոյ տեսակներն շատ են, և կը համարուին իբր քառասուն տեսակ, բայց կը բաժնուին երկու գլխաւոր դաս, Մանրատերև և Մեծատերև։ Բոյսը կարճ է, և կ'ըլլայ 25-50 հարիւրորդամետր բարձրութեամբ ըստ տեսակին, բայց խիտ և բազմաճիւղ. տերևներն են ձուաձև, կանաչ կամ մանուշակագոյն. ծաղիկներն ճերմակ, ողկուզաձև կամ հասկաձև, թուով 10 կամ 12։ Կը տեսեն ծաղիկներն յունիսէն մինչև հոկտեմբեր։ Ռեհան է բնիկ է Հնդկաստանի, և կը բուսնի տաք երկիրներու մէջ։

Ռեհանին հոտն է գեղեցիկ, և ինքն համեմային, գրգռիչ և լի ցնդական անուշահոտ իւղով։ Կը գործածուի

ծոթրինի պէս կերակուրները համեմելու, և բժշկութեան մէջ իբրև բուժիչ վիրաց ուրիշ խոտերու հետ։

361. Մշակութիւն. — Ռեհանը կը սերմանեն մարտի կամ ապրիլի սնդուկներու մէջ, և երբ սերմը ծլի և քիչ մը մեծնայ, կը փոխադրեն մայիսի մէջ պատրաստած ածուներու վրայ որ ըլլան արեգդէմ։ Շահասպրամը՝ որ կը նշանակէ թագաւորական ծաղիկ, կրնայ նաև թաղարներու մէջ մեծնալ։ Կը սիրէ կակուղ և պարարտ հող։ Սերմը կը ծլի 12 օրուան մէջ երբ օդոյ տաքութիւնն ըլլայ 14 աստիճան։ Կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը երեք չորս տարի։ Մի կալ երկրի համար պէտք է 5 գրամ սերմ, և մի կալ երկրի վրայ կրնայ տնկուիլ 1800 բոյս, իրարմէ 20 հր.մ հեռի։ Գլխաւոր խնամքն է առէպ ջրել։

Կը քաղեն տերևները համեմի համար, երբ սկսին ծաղիկները բացուիլ։ Իսկ դալար տունկէն կը հանեն իսկական իւղ մը անուշահոտ, որ հիննալով կը կարմրի։

Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը 3 տարի, բայց լաւ է սերմանել նախընթաց տարւոյն սերմը, և նայիլ որ կատարեալ ըլլայ և հասուն. անոր համար սերմի որոշուած տունկերը լաւ է քանի մը օր աւելի թողուլ որ լաւ հասուննան։

Անիսոնի սերմը շուտով կը ծլի, և քիչ մը մեծնալէն ետքը պէտք է բաժնել նորատունկ բոյսերը և տնկել իրարմէ 20 կամ 25 հր.մ հեռաւորութեամբ։ Եւ մինչև որ ծաղկին, պէտք է ստէպ քրքրել հողը և մաքրել վնասակար խոտերէ։ Բաւական կրնայ ըլլալ երկու անգամ հողը քրքրելը, բայց լաւ է առաւելուլ քան նուազել, և հողը քրքրելու ժամանակ տունկերուն արմատին հող տալ։ Ստէպ քրքրելով հողը, կակուղ կը մնայ, որով և տունկերը չեն չորնար և լաւ կը մեծնան։

364. Քաղոց. — Յունիսի վերջ կամ յուլիսի սկիզբ անիսոնը կատարեալ կերպով կը ծաղկի, և անկէ ետքը ուրիշ բան պէտք չէ ընել։ Օգոստոսի սկիզբ կը սկսին թափիլ ծաղկանց տերևները, և կոթը կը կորսնցնէ իր գեղեցիկ կանաչ գոյնը և կը դեղնի, և այն ժամանակ անիսոնի սերմը հասունցած կը համարուի. ուստի պէտք է ժողվել առաւօտուն քանի որ ցօղ իջած է, որով և սերմը գետին չթափիր. և ժողվելու տունկերը պէտք է արմատով խլել և խուրձ խուրձ կապել և դնել կալի վրայ արևու մէջ որ չորնան. և լաւ մը չորնալէն ետքը ծեծել, որ սերմերը թափին և բաժնուին տունկէն։

Եթէ բերքը քիչ է, կրնայ մարդ ձեռքով ժողվել հովանոցակերպ ծաղիկները, և հանել սերմը։ Թէ որ շատ ըլլայ, պէտք է ծեծել ծաղիկները գաւազանով տափարակ տախտակի վրայ որ քիչ մը ծռած ըլլայ, որով սերմը գետին կ'իյնայ և բոյսին մնացորդ մասը ծեծողին ձեռքը կը մնայ, որ կը նետէ մէկդի։ Վերջը սերմը պէտք է մաքրել մաղելով կամ հոսիչ գործւով։ Եւ յետոյ դնել միւս անգամ արևու մէջ որ լաւ մը չորնայ, և տանիլ ի շտեմարան։

365. Առ մի հարիւրակալ կրնամք ունենալ մինչև 500–800 հազարագրամ ընտիր սերմ, որ իր բարձր գնոյն համեմատ ամէն աշխատութեանց ծախքը հանելէն զատ կ'աւելնայ ևս մեծ գումար մը. վասն զի իր գինն է ըստ տարւոյն 110–150 փրանկ առ մի կենդինար։

ԳԼՈՒԽ Գ

ԳԻՆՁ. (*տճ.* *քիշնիշ.* *գղ.* Coriandre. *իտ.* Coriandro, Coriandolo. *լտ.* Coriandrum sativum).

366. Նկարագիր. — Գինձ է բոյս տարևոր կամ երկտարևոր, բնիկ Իտալիոյ և Սպանիոյ, և կը բուսնի նաև Եգիպտոս և Հնդկաստան։ Կը բարձրանայ 50–60 հարիւրորդամետր. ցօղունն է շիտակ, բոլորշի, լերկ և բազմաճիւղ. տերևներն են մանր, ձուաձև կամ բոլորշի. ծաղիկներն ճերմակ կամ քիչ մը ծիրանեգոյն, հովանոցակերպ և ծայրաբոյս (Ձև 130), որ կը բացուին յունիսի կամ յուլիսի մէջ։ Պտուղն կամ սերմն է գնտաձև, և կը բաղկանայ երկու կիսագնտաձև մասերէ իրարու կպած, դեղին թխորակ, որ կոչի Գինձ. և է հոտաւէտ և համեմային, և անիսոնի պէս կը գործածուի կերակուրները համեմելու, և է գրգռիչ և փքահան. բայց աւելի ևս կը գործածուի ըմպելեաց և շաքարեղինաց։ Պտուղը կամ սերմը քանի որ կանաչ է, կ'ըլլայ գարշահոտ, ինչպէս են նաև տունկին ամէն կանաչ մասերն, և կ'արձակեն մլուկի հոտ, ուսկից ելած է իր յունական անունը Քորիոն, վասն զի Քորիս կը նշանակէ Մլուկ։ Գինձը չորնալէն ետքը կ'ըլլայ անուշահոտ, հաճոյական և համեմային. բայց հիննալով կ'առնու կարմիր գոյն մը, և այնպիսին պէտք է նետել։ Գինձէն կ'ելնէ իսկական իւղ մը անգոյն և հոտաւէտ, որ կը խառնեն ըմպելեաց մէջ, և իր մի հազարագրամը կ'աժէ 400–500 փրանկ։

367. Մշակութիւն. — Գինձ կը սիրէ թեթև, խոր և արեգդէմ երկիր. կաւեղէն, պինդ և ցուրտ հողի մէջ չյաջողիր։ Կը սերմանեն մարտի կամ սեպտեմբերի մէջ, երկիրը լաւ պատրաստելէն ետքը։ Պարարտութիւն շատ չսիրեր։ Բոյսերը մեծնալէն ետքը, որք իրարմէ 15–20 հր.մ հեռաւորութիւն պիտի ունենան, պէտք է հողը երբեմն երբեմն քրքրել, և մաքրել վնասակար խոտերէ։

Աղէկ սերմ կը բերեն այն տունկերն որ ձմեռէ առաջ կը բուսնին, և կը քաղեն սերմը յուլիսի վերջ կամ օգոստոսի մէջ, երբ տակաւ կը հասուննան, կամ թէ ըսել, կ'առնուն դեղին թխորակ գոյն մը, և բոյսը կը չորնայ. և յայնժամ պէտք է կտրել մկրատով հովանոցակերպ ծաղիկները առաւօտուն քանի որ ցօղը չէ անցած, որովհետև սերմերը կը թափին եթէ չոր ըլլան:

Ձև 130. Գինձ.

Եւ յետոյ դնել սաւանի մը վրայ արևու մէջ որ լաւ մը չորնան ծաղիկները. ծեծել և ժողվել սերմերը, և պահել եթէ լաւ չորցած ըլլան, ապա թէ ոչ կը սեւնան և կը խմորին: Պահելու է չոր տեղ և ազատ օդոյ ազդեցութենէն, որպէս զի չկորուսանեն իրենց համեմային յատկութիւնը: Մի հարիւրալիտր սերմը կը կշռէ 30–32 հազարագրամ:

ԳԼՈՒԽ Դ

ՄԱՐԶԱՆՈՆ ԿԱՄ ՄԱՐԶԱՆԳՈՇ. (պրս. Մերզենկիւշ. տճ. Մերճանք քեօշք. գղ. Marjolaine. իտ. Maggiorana. լտ. Origanum majorana).

368. Նկարագիր. — Մարզանոն, որ մեր մէջ ըսուած է նաև Անձարակ, և ըստ ոմանց նաև Մուշամբար կամ Միսամբար, է բոյս երկարակեաց, որոյ ցօղունն է կէս փայտեղէն, բազմաճիւղ. տերևներն հակադիր, ձուաձև և մանր, որք կ'արձակեն հոտ համեմային: Ծաղիկներն են հասկաձև, հոտաւէտ, վարդագոյն և քիչ անգամ ճերմակ (Ձև 131):

Մարզանոն կը գտնուի ինքնաբոյս ցանկերու և արտերու եզերքը կրային հողերու վրայ: Բայց կը տնկեն նաև պարտէզներու մէջ իր անոյշ հոտին համար, որ կ'արձակի տունկին ամէն մասերէն երբ թեթև կերպով շփեմք:

Ունի երկու տեսակ, սև և ճերմակ: Սևը կը բարձրանայ մինչև 40 հր.մ, որոյ տերևներն են մթնագոյն կանաչ և ծայրերը բացագոյն կանաչ, և տունկը աղուամազով պատած: Իսկ ճերմակ տեսակն սևին չափ չբարձրանար, և բովանդակ տունկն է ճերմակագոյն, աղուամազով պատած:

369. Մշակութիւն. — Մարզանոն կը բուսնի տաք և խոնաւ կլիմայի տակ, և կը սիրէ աւազուտ երկիր՝ որ պարարտացած ըլլայ նախորդ տարին:

Կը բազմանայ՝ արմատին քով ելած մոլերը բաժնելով, աղուրայով կամ սերմով: Ամէն եղանակի մէջ կըրնամք տնկել, և ձմեռը պէտք է պատսպարել ցրտէն և սառուցէն: Թէպէտ և երկարակեաց տունկ մի է, բայց լաւ է երկու տարին անգամ մը նորոգել տունկերը: Պէտք է տնկել գծի վրայ իրարմէ 10 հր.մ հեռաւորութեամբ և գծերը 20 հր.մ հեռաւորութեամբ:

Սերմը կը ծլի 8 օրուան մէջ, երբ օդոյ տաքութեան

աստիճանն ըլլայ 14, և կրնայ պահել իր բեղնաւորիչ կարողութիւնը 2–3 տարի։ Մի կալ երկրի համար բաւական է 2 գրամ սերմ, որ կը բովանդակէ 3400 հատ սերման։

Բոյսերը մեծնալէն ետքը պէտք է երբեմն երբեմն քըրքրել հողը և մաքրել մնասակար խոտերէ, և չորութեան ժամանակ ջրել։

Զև 151. Մարզանոս կամ Մարզանգոշ.

370. Քաղոց. — Առաջին քաղոցը կ'ըլլայ յուլիսի մէջ, կտրելով տունկը գետնէն 3 հր.մ բարձրութեամբ։ Զորս շաբաթէն ետքը կ'ըլլայ երկրորդ քաղոցը. և թէ եղանակն աղէկ երթայ, կրնամք ընել երրորդ քաղոց ալ աշնան ժամանակ։

Կտրած ճիւղերը պէտք է դնել արևու մէջ չորնալու համար, և վերջը տերևները քաղել, որ քսակներու մէջ դրուած կը վաճառուին զանազան կերակրոց համեմունք ընելու համար, ինչպէս ռեհանի տերևները. և է կազ-

դուրիչ և գրգռիչ։ Տերևներէն կը հանեն նաև իւղական իւղ մը անուշահոտ։

Միայն երկու տարեկան տունկերն կրնան տալ սերմն, որ կը գործածուի չաքարեղինաց։

ԳԼՈՒԽ Ե

ԱՆԱՆՈՒԽ ԿԱՄ ԱՆՆՈՒԽ. (*տճ.* *Նանէ.* *գղ.* Menthe. *իտ.* Menta. *լտ.* Mentha sativa).

371. Նկարագիր. — Է բոյս երկարակեաց, լայնարձակ արմատովք, չիտակ և ողորկ ցօղնով, հակադիր և ոլոցաձև տերևներով, ծիրանեգոյն, հասկաձև և ծայրաբոյս ծաղիկներով, որք կը բուսնին տերևոց անթին մէջ։

Կան անանխոյ իբր 25 տեսակք, որ կը բուսնին բարեխառն գօտւոյ տակ Ասիոյ և Եւրոպայի մէջ։ Անանխոյ տեսակներուն շատերն են սաստիկ հոտաւէտ, և ունին համ տաքցուցիչ և գրգռիչ, ուստի և կը համարուին ստամոքական և հակալորցք, մանաւանդ Պղպեղային կամ Անգլիական ըսուած անանուխը՝ որոյ մշակութիւնն առատ է Անգլիա, և իր ցօղունն է քառանկիւնի և մազոտ, տերևներն նիզակաձև և սրածայր, և ծաղիկներն հասկաձև և մանուշակագոյն (Զև 132)։ Ասոր տերևներէն կը հանեն իւղ իւղական, որ կը գործածուի չաքարեղինաց և ըմպելեաց։ Այս իւղութիւնը սուր հոտ, դառն ու այրող համ ունի, որ վերջը զովութիւն կը բերէ։ Այս իւղութեան մի հազարագրամը կ'աժէ 200 փրանկ։ Իսկ այն որ կ'ըսուի Անանուխ կանաչ, է նուազ գրգռիչ, և կը գործածուի համեմներու։

372. Մշակութիւն. — Տնական գործածութեան համար բաւական է ունենալ պարտիզի մէջ մէկ երկու տունկ, իսկ առուտուրի համար պէտք է տնկել արտերու մէջ։ Կը յաջողի առաւելապէս կակուղ և զով հողի մէջ և ծմակային տեղ։ Պէտք է մաքրել հողը մնասակար

Ձև 132. Անանուխ կամ Աննուխ.

խոտերէ, և ամառուան մէջ երբեմն ջրել: Թէ որ ուզեմք պարտէզի մէջ մնակել, պէտք է արմատին քով ելած մոլերը ջնջել, որք սաստիկ կը տարածուին:

Անանուխը կը բուսնի ինքնին նաև անտառներու և մարգագետիններու մէջ և առուակներու քով, և երբեմն արմատները ջրի մէջ, և այդ կ'ըսուի Անանուխ ջրային և ռամկաբար Ջրի նանէ (Menthe aquatique). *Իսկ վայրի անանուխն որ կը բուսնի քարերու մէջ, կ'ըսուի Քարանանուխ:*

Անասուններն կը խորշին անանուխը ուտելէն:

Կը բազմանայ անանուխ իր մոլերով, զոր պէտք է հանել մայր արմատին քովէն, և սեպտեմբերի կիսոյն տնկել ուրիշ տեղ կարգաւ տողի վրայ, տողերն իրարմէ 30 *հր.մ հեռի:*

Քաղոցը կ'ըլլայ ծաղկելէն առաջ կամ ծաղկելու մօտ: Տերևները կը չորցնեն շուքի մէջ, և յետոյ պարկերու մէջ դրած կը տանին ի վաճառ, կամ կը խաւրեն ի գործարան, իրեն հոտաւէտ իւղը հանելու համար:

ԳԼՈՒԽ Զ

ԱՐՋՆԴԵՂ ԿԱՄ ՍՈՆԻՃ. (*պրս. Շունիզ. տճ. Չէօրէք օթու. գղ.* Nigelle. *իտ.* Nigella. *լտ.* Nigella sativa).

373. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն տարևոր, որոյ ցօղունն է աղուամազոտ և բազմաճիւղ, տերևներն հա-*

Զև 133. Արջնդեղի կամ Սոնիճի ծաղիկ.

մադիր, անկոթ և ճղճղկէն, ծաղիկներն կապոյտ, ծայրաբոյս, բաժակաձև, հնգաթերթ և պատեալ տերևա-

նման խորխով, որոյ ստորին մասն է մազոտ (Զև 133)։ Պտուղներն են պատճի մէջ ամփոփեալ սև հատեր եռանկիւնի, որ կ'ըսուին Արջնդեղ, Սոնիճ կամ Շոնիզ, Սև ճուշնա, Սև ճնտիկ. և են համեմային և հոտաւէտ, և կը գործածուին իբրև համեմ, հացի և կարկանդակաց վրայ, ուստի և կ'ըսուի նաև Հացհամեմ (չէօրէք օթու)։ Խորովելով սև հնտիկները և խառնելով ուրիշ համեմներու հետ, կ'ընեն քաղցրաւենի մը ընտիր և գրգռիչ. կը խառնեն նաև օշարակաց հետ, անոյշ հոտ մը տալու համար։ Կ'ելնէ այս սերմերէն նաև իւղ, զոր կը շփեն մարմնոյ վրայ բաղնիքէն ելնելէն ետքը։ Այս տեսակը կ'ըսուի Արջնդեղ Դամասկոսի։ — Կայ ուրիշ տեսակ մ'ալ՝ որ կ'ըսուի Արջնդեղ արտորէից, որ ինքնին կը բուսնի դաշտերու և ցորենոյ արտերու մէջ, որ թէպէտ առջինին պէս նշանաւոր չէ, բայց է դաշտային գեղեցիկ ծաղիկներէն մէկը, դեղին կամ կապոյտ և աստղաձև։

374. Մշակութիւն. — *Արջնդեղն կը բազմանայ սերմով. և կը սերմանեն գարնան կակուղ և զով հողի վրայ։ Աշնան սերմանեալ արջնդեղն աւելի զօրաւոր կ'ըլլայ, եթէ կարենայ դէմ դնել ձմերան ցրտոյն։*

Դիւրին է արջնդեղի մշակութիւնը, և կը գործածուի իբրև զարդ պարտիզի։

ԳԼՈՒԽ Է

ՉԱՄԱՆ. (*տճ. Զիմէն. գղ.* Cumin. *իտ.* Cumino. *լտ.* Cuminum cyminum).

375. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն, տարեւոր, նման սամթի, բարակ և նեարդային արմատով, բազմաճիւղ ցօղնով որ կը բարձրանայ 20–30 հր.մ։ Տերեւներն են համադիր, լերկ, և հերձեալ երկու բարակ մասեր. ծաղիկներն են ճերմակ, մանր և հովանոցաձև, և կը բացուին յունիսի մէջ, որոց կը յաջորդեն իրեն պտուղները, սև հատեր գծաւոր, սուր և համեմային հոտով, տաք և ախորժելի համով. հատերուն ծայրը կայ երկայն մազ՝ որ կը կտրի հասունցած ժամանակ։ Իւրաքանչիւր պտուղ կը բաղկանայ երկու հատերէ, որոց մէկ կողմն է կորնթարդ, միւս կողմը տափարակ։*

Չամանին հատերը կը գործածուին իբրև համեմ կերակրոյ և խմորեղինաց. Արեւելք կը գործածեն միսը ապխտելու, Գերմանիա և Հոլանդա կը դնեն հացի և պանրոյ մէջ։ Կազմեն չամանով ընտիր ըմպելիք, և կը հանեն իրմէ իսկական իւղ մը սաստիկ կծու, որ կը լուծուի ալքոհլի մէջ։ Չամանն է բնիկ Ասիոյ, բայց կը մշակեն նաև յԵգիպտոս, ի Հնդկաստան և յԵւրոպա։

376. Մշակութիւն. — *Չամանին մշակութիւնը շատ պարզ է։ Կը սերմանեն իր հատերը ապրիլի կամ մայիսի մէջ, երբ վախ չկայ այլ ևս եղեման. կ'ուզէ թեթև, պարարտ և լաւ պատրաստած հող։ Եւ երբ մեծնան տունկերը, պէտք է քըքրել հողը քանի մը անգամ և մաքրել վնասակար խոտերէ։ Յուլիսի վերջ կամ օգոստոսի սկիզբ կ'ըլլայ հատերուն քաղոցը, նման անիսոնի քաղոցին* (364)*։ Մի հարիւրալիտր հատ չամանի կշռէ* 35 *հազարագրամ։*

ԳԼՈՒԽ Ը

ՉԱՄԱՆ ՀԱՅՈՑ ԿԱՄ ՃԱՊՈՒՌ. (*տճ. Քիմիոն. գղ. իտ.* Carvi. *լտ.* Carum carvi).

377. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն, երկտարեւոր, որոյ արմատներն են իլաձև, դեղնորակ, միսը ճերմակ, և համը կը նմանի ստեպղինի։ Արմատէն վեր կը բարձրանան տերևները և կը շրջապատեն ցօղունը որ բարձր կ'ըլլայ իբր* 40 *հր.մ։ Ծաղիկներն են մանր, ճերմակ կամ դեղնորակ. պտուղներն են սև հատեր, համեմային և գրգռիչ, որ կը գործածուին իբրև համեմ կերակրոյ, նոյնպէս և ճերմակ արմատները, և են ստամոքական և փքահան անիսոնի պէս։*

Ճապուռը կը մտնէ նաև հացի, խմորեղինաց և ըմպելեաց մէջ, և մանաւանդ Չամանօղի (Kümmel) *ըսուած ըմպելւոյն մէջ, որ յարգի է Գերմանացւոց։ Հոլանդա կը համեմեն պանիրը ճապուռով։ Հայոց չամանէն կ'ելնէ իսկական իւղ մը, զոր կը խառնեն այլևայլ հեղուկներու հետ։*

378. Մշակութիւն. — *Հայոց չամանն է բնիկ Ասիոյ և Հայաստանի, ինչպէս անունն իսկ կը ցուցանէ։ Եւրոպայի մէջ հիմա կը մշակուի առաւելապէս ի Հոլանդա։ Մշակութիւնը դիւրին է, կը սիրէ շուք և զով տեղ, չյաջողիր թաց և պինդ հողի մէջ, և ոչ չոր աւազուտ հողի մէջ։ Դալար աղբը յարմար չէ իրեն, վասն զի կը փտեցնէ արմատը։ Այն երկիրները ուր կիր և կալի կը պակսին, հողը պարարտացնելու համար յարմար է մոխիր, աղբաջուր և բուսահող։ Ուր որ ճապուռ տնկուած է, պէտք է թողուլ այն երկիրը տասը տարի, միւս անգամ հոն ճապուռ ցանելու համար։ Կը սերմանեն սովորաբար բակլայի ածուներուն մէջ, և բակլաները քաղելէն ետքը պէտք է քըքրել հողը, և յաջորդ գարնան միւս անգամ քըքրել, և քաղել ամարան վերջ ճապուռի պտուղը, որ շատ շահաւոր է։*

Բայց կրնամք նաև սերմանել առանձինն, պատրաստած ածուներու վրայ սեպտեմբերի մէջ, և յունիս ամսոյ մէջ փոխադրել և տնկել ուրիշ տեղ, իրարմէ 30 հր.մ հեռի, կտրելով արմատներուն և տերևներուն ծայրերը, և մինչև ձմեռ երկու երեք անգամ քրքրել հողը, կակուղ և մաքուր պահելու համար, և յաջորդ գարնան քրքրել նորէն, նոյնպէս և ծաղկելէն առաջ: Յունիսի վերջ կը հասուննայ սերմը, զոր պէտք է առաւօտուն կանուխ կամ երեկոյեան դէմ կտրել ճիւղով կամ հանել արմատով, կապել տրցակ տրցակ և դնել արևու մէջ որ չորնան: Եւ քանի մը օրէն ետքը ծեծել, որպէս զի սերմը թափի, և յետոյ դնել նորէն արևու մէջ, չորցնել, ծեծել, վասն զի սերմերն ամէնքը միանգամայն չեն հասուննար:

Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը երկու երեք տարի:

Հայոց չամանը թէպէտ գլխաւորապէս իր սերման համար կը տնկուի, որ նոյն անուամբ կը կոչուի, բայց կ'ուտուին նաև իր արմատները, տերևները և դալար ընձիւղները, երբ չուզէ մէկը սպասել իր սերման:

ԳԼՈՒԽ Թ

ՀՈՌՈՄ ՉԱՄԱՆ, ԲԼԹԵՆԻ. (*տճ.* *Պօյ թօխումու.* *արաբ.* *Հուլպա.* *գղ.* Fenu-grec. *իտ.* Fieno greco, Trigonella. *լտ.* Fœnum græcum, Trigonella fænum græcum).

379. Նկարագիր. — *Է բոյս տարեոր, առատ ի Յունաստան, ուր կը գործածուի իբրև խոտ ի կեր անասնոց: Արմատն է բարակ և ներդային, ցօղունն է մատնէքաւոր, իբր 30 հր.մ բարձրութեամբ, տերևներն ձուաձև և կանաչ. ծաղիկներն են դեղնորակ, բուսեալ տերևոց անթին մէջ. պտուղներն են անձև, և մանր հատեր դեղնորակ, ամփոփուած երկայն, նեղ և լերկ պատճի մէջ, և ունին հոտ սաստիկ և համեմային, և կը գործածուին իբրև համեմ կերակրոյ, և կ'ըսուին Հոռոմ չաման կամ Բլիթեն: Հին ժամանակ յարգի էր Յունաստանի և Եգիպտոսի մէջ, նաև առ Հռովմայեցիս: Տալով բլթենին ձիոց և արջառոց, կը գիրցնէ զիրենք առժամանակեայ. և երբ դադրին ուտելէն, կ'անցնի գիրութիւնը: Բլիթենի ալիւրէն կազմի խիւս կակղեցուցիչ և փարատիչ ցաւոց: Ճմլելով հատերը՝ կ'ելնէ իւղ կարմիր մսագոյն:*

380. Մշակութիւն. — *Հոռոմ չամանը կ'ուզէ ընտիր և լաւ պատրաստած հող: Կը ցանեն փետրուարի կամ մարտի մէջ, երբ վախ չկայ եղեման: Հարաւային կողմերը կը սերմանեն աշնան սեպտեմբերի կամ հոկտեմբերի մէջ. և կը սերմանեն նետելով օդոյ մէջ, 15 կամ 16 հազարագրամ առ մի հարիւրակալ երկիր, և յետոյ կը ծածկեն հողով: Կը հնձեն բլթենին երբ կատարեալ ծաղկեալ է, և կու տան իբրև խոտ անասնոց և ոչխարաց, բայց կը համարի երկրորդական կարգի խոտ: Եթէ ուզեն ժողվել իր սերմը, պէտք է կտրել ցօղունները երբ սերմին պատիճներուն մեծագոյն մասն հասունցած է, և խուրձ խուրձ կապելով դնել կալի վրայ արևու տակ՝ մինչև որ կատարեալ չորնան, և յետոյ ծեծել գաւազանով և սերմերը ժողվել, մաղել, մաքրել և հանել ի վաճառ:*

ԳԼՈՒԽ Ժ

ԿԱՐՈՍ ԸՆՏԱՆԻ ԿԱՄ ԿԱՐՈՍ ՄԱԿԵԴՈՆԻ. (*տճ. Մաղտանոս. գղ.* Persil. *իտ.* Prezzemolo. *լտ.* Petroselinum).

381. Նկարագիր. — *Է բոյս խոտեղէն, երկտարեւոր, որոյ արմատն է իլաձեւ, թանձր եւ մսոտ։ Առաջին տարւոյն մէջ կու տայ մանր կանաչ տերեւներ, հերձեալ, եւ եզերքն ատամնաձեւ, եւ երկրորդ տարւոյն մէջ կը բարձրանայ ծաղկին ծղօտը 50-80 հարիւրորդամետր, եւ իր ճիւղերուն ծայրը կը բացուին մանր հովանոցակերպ կապոյտ ծաղիկներ։ Կը մշակեն բոյսը մէկ տարի միայն, երբ չեն ուզեր իր սերմը ժողվել, որ է դեղնագոյն մանր հատեր եռանկիւնի, տափարակ երկու երեսէն եւ կորընթարդ երրորդ երեսէն, եւ ունի հինգ դուրս ցցուած կողմեր։*

Ընտանի կարոսին տերեւներն են համեմիչ, եւ կը գործածուին կերակուրները համեմելու՝ հում կամ եփեալ, որ կը գրգռէ ախորժակը եւ դիւրամարս կ'ընէ կերակուրը։ Բժշկականութեան մէջ արմատներն են միզեցուցիչ, հատերն գրգռիչ, ուսկից կ'ելնէ իւղական իւղ ցընդական։ Նապաստակներն ու ճագարները կը սիրեն ընտանի կարոսը, բայց վառեակներուն եւ թութակներուն մահաբեր է։

382. Մշակութիւն. — *Ընտանի կարոսին տեսակները շատ են. հասարակ տեսակը շատ կը նմանի մոլախնդի՝ որ է սաստիկ թունաւոր խոտ մը, ուստի պէտք չէ անոր հետ շփոթել։ Լաւ է սերմանել այն տեսակները, որոց տերեւներն են գանգրաձեւ, ուստի եւ դիւրաւ կը ճանչցուին։*

Մակեդոնի կարոսը շատ պահանջող բոյս չէ, բայց կը սիրէ կակուղ, խոր եւ ոչ այնչափ պարարտ հող։ Կը սերմանեն գարնան պատրաստած ածուներու վրայ, ամառն ուտելու համար. կը սերմանեն յուլիսի մէջ՝ աշնան ուտելու համար. եւ կը սերմանեն օգոստոսի մէջ՝ ձմերան եւ գարնան ուտելու համար։

Սերմը պէտք է ցանել տողի վրայ, տողերը իրարմէ 15–20 *հր.մ հեռի, եւ ջրել առատ մինչեւ որ սկսի ծլիլ։ Դժուարաւ կը ծլին սերմերը, եւ հարկաւոր է* 21 *օր մինչեւ որ ծլին, երբ օդոյ տաքութիւնն ըլլայ* 12–18 *աստիճան։ Մի կալ երկրի համար հարկաւոր է* 20 *գրամ սերմ։*

Պէտք է երբեմն երբեմն քրքրել հողը, մաքրել վնասակար խոտերէ, եւ ջրել եթէ եղանակը չոր երթայ։ Երբ տունկերն արձակեն վեցերորդ տերեւը, կրնամք կտրել եւ ուտել, եւ բոյսը նորէն կու տայ, եւ այսպէս հետզհետէ։ Եւ ձմերան մէջ պահելու համար, վրան ծածկել խսիրով, եւ աղէկ օդերուն բանալ։

Սերմը առնելու համար պէտք է թողուլ քանի մը զօրաւոր տունկեր առանց կտրելու, որ ցանուած ըլլան գարնան, եւ ձմեռը պէտք չէ վրան ծածկել, եւ յաջորդ տարւոյն մէջ կը բարձրանան ծաղկաբեր ծղօտներ, եւ կը բերեն ծաղիկ եւ սերմն, զոր պէտք է ժողվել օգոստոսի մէջ։

383. *Իտալիոյ Նէապոլիս քաղաքին ընտանի կարոսը շատ մեծ է, եւ հաստ արմատ ունի, զոր սովորական կարոսին պէս կրնամք ճերմկցնել, եւ ուտել եփելով կամ իբրեւ աղցան։*

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԾՈԹՈՐ ԿԱՄ ԾՈԹՐԻՆ, ԾԱԹՐԻՆ. (*տճ. Քէքլիկ օթու. պրս. Սահթէր. գղ.* Thym. *իտ.* Timo. *լտ.* Thymus vulgaris).

384. Նկարագիր. — *Այս տունկը մեր մէջ ըսուած է նաև Ուրց, Խազուր, Սադիր (պրս.) և Թիւմ (յն). և է թուփ մշտադալար, շատակեաց, բազմաճիւղ, և կը բարձրանայ իբր 25 հարիւրորդամետր. տերևներն են մանր, խիտ և մոխրագոյն կանաչ, ծաղիկներն են մանր, վարդագոյն կամ ճերմակ, հասկաձև և ծայրաբոյս* (Ձև 134)։

Ձև 134. Ծոթոր կամ Ծոթրին, Ծաթրին. — Ամբողջ բոյս և ճիւղ.

Կը գործածուին ծոթորի տերևներն դալար կամ չոր իբրև համեմ կերակրոյ՝ իրենց սուր և խնկաւէտ հոտին համար։

385. Մշակութիւն. — *Ծոթոր երկու տեսակ կը բաժնուի. մին է Բուն ծոթոր ըսուածը, միւսն է Զամբուռ*

(Serpolet). *Ծոթոր կը բուսնի ինքնին չոր և քարուտ տեղեր. իսկ մեր պարտէզներուն մէջ ածուներուն եզերքը կը տնկեն, և կը սիրէ աւելի տաք դիրք և կակուղ հող։ Կը բազմանայ աղուրայով կամ սերմով։ Սովորաբար երկու տարին անգամ մը պէտք է փոխել իր տեղը։*

Եթէ մէկն ուզէ մշակել առատապէս, պէտք է բոյսերը կատարեալ աճումն առնելէն ետքը կտրել գետնին հաւասար, և չորցնել արևու մէջ, և գործածել իբրև համեմ։ Մի կալ երկրի վրայ կրնամք տնկել 1400 տունկ ծոթորի, որ չորնալով կորուսանէ իր կշռէն 66 առ 100։ Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը 2 տարի, և հարկաւոր են 15 գրամ սերմ մի կալ երկրի համար։

386. Զամբուռ. — *Զամբուռ որ և կ՚ըսուի Վայրի ծոթոր, Կաքաւախոտ, Հոմի (գղ.* Serpolet. *իտ.* Serpillo, Sermolino. *արաբ. Հաշա), է ցած թուփ մը խիտ և բազմաճիւղ, որ կը բուսնի չոր, քարուտ և անմշակ տեղեր, ծիրանեգոյն, մանր և անուշահոտ ծաղիկներով, սիրելի մեղուաց։ Այսոր տերևներն ալ բուն ծոթորի պէս կրնան գործածուիլ իբրև համեմ, բայց չունին անոր ամէն հանգամանքը։*

ԳԼՈՒԽ ԺԲ

ԼԻԲԱՆՈՎՏԱՆ ԿԱՄ ՀԱԶՐԷՎԱՐԴ. (*տճ. Պիպերիճէ. գղ.* Romarin. *իտ.* Rosmarino, Ramerino. *լտ.* Rosmarinus).

387. Նկարագիր. — *Այս տունկը մեր մէջ բուսած է նաև Լոռնաստակի ծառ և ռամկաբար խնկոռնի։ Այդ վերջին անունը հիմա աւելի յաճախեալ է գործածութեան մէջ, և է թուփ, մի կամ երկու մետր բարձրութեամբ, երկայնաձև, տոկուն, և հակադիր տերևներով, որք փայլուն են վերին երեսէն և ճերմակ վարի երեսէն. ծաղիկներն են մանր, կապուտակ կամ ճերմակ և ողկուզաձև (Ձև 135)։*

Ձև 135. Լիբանովտան կամ Հազրէվարդ. Ամբողջ բոյս, ճիւղ և ծաղիկ.

Կը բուսնի ինքնին Միջերկրական ծովուն եզերքը, Յունաստան, Արևելք և Իտալիա, և կը գործածուին իր տերևներն իբրև համեմ միսը խորովելու, և բժշկութեան մէջ իբրև կազդուրիչ և գրգռիչ ներսէն և դրսէն. նոյնպէս կը գործածուի և առ իւղեփեցս։ Դաղմատիա կը հանեն տերևներէն իւղ իւկական, որ կը գործածուի բժշկութեան մէջ։ Մի կենդինար տերևներէ կ'ելնէ 200 գրամ իւղ։ Ծաղիկներն սիրելի են մեղուներու։

Լիբանովտանի գործածութիւնը և մշակութիւնը նման է ծոթորի։

Սովորաբար պարտէզներու մէջ պատերու քով կը տընկեն քանի մը տունկ, առտնին պիտոյից համար։

ԳԼՈՒԽ ԺԳ

ՉՈՒԻՐԱԿ, ԿՈՐՆԳԱՆ ԿԱՄ ԿՈՐՆԿԱՆ, ԿԱՏԱՒԱՆ. (*տճ. փուտնէնկ, նկօյէկի օթու. գղ.* Origan. *իտ.* Origano, Regamo, Accinghero. *լտ.* Origanum vulgaris).

388. Նկարագիր. — *Այս բոյսը մեր մէջ ըսուած է նաև Գաղձն, Թուրբ, Մարեմայ խոտ, որք կը նշանակեն ուրիշ բոյսեր ալ։ Զուիրակն կամ Կորնգան է բոյս խոտեղէն, բազմաճիւղ, որոյ տերևներն են մեծ, ձուաձև և մազոտ տակի կողմէն. ծաղիկներն են գլխաձև կամ հասկաձև։ Հասարակ տեսակը կը բուսնի լեռներու, անտառներու և ցանգերու մէջ, և կը ծաղկի ամարան վերջ։*

Կորնգան է տունկ խնկաւէտ և դառնահամ, և կը գործածուի իբրև համեմ կերակրոյ, մանաւանդ անձրուկ ձկան։ Իրեն եփուկը կը գործածուի ի դարման երկարատև հարբուխի և ջղացաւոյ, և է կազդուրիչ և քըրտնաբեր։

Տնկաբաններէն շատերը կը համարին զկորնգան մարզանգուշի տեսակ, և մշակութիւնն ալ ըստ այնմ կ՚ըլլայ. բայց կորնգան է նուազ պահանջող կլիմայի և հողոյ կողմանէ, և ամէն տեղ կը բուսնի։

ԳԼՈՒԽ ԺԴ

ԵՂԵՍՊԱԿ. (*տճ. Ֆիշ օթու, Ադա չայը. գղ.* Sauge. *իտ.* Salvia. *լտ.* Salvia officinalis).

389. Նկարագիր. — *Բոյս շատակեաց, իբր երկու ոտնաչափ բարձրութեամբ, որոյ ծղօտն է փայտեղէն, բազմաճիւղ, և ունի իբր 400 տեսակ։ Տերևներն են հակադիր և ձուաձև. ծաղիկներն գեղեցիկ, ի գոյն կապոյտ կարմրորակ, և կը ծաղկին ամբողջ ամառը (Ձև 136)։*

Ձև 156. Եղեսպակի ճիւղ և տերև.

Այս տունկն է հոտաւէտ և դառնահամ, որոյ տերևներէն կ՚ելնէ իւղական իւղ մը։ Կը գործածուին տերևները միսը համեմելու, և բըժշկութեան մէջ իբրև կազդուրիչ և գրգռիչ, և ի դարման ջղերու ձըգտման, որոյ եփուկը թէյի պէս կը խմուի, և շատ հաճոյական է ճենաց։

Եղեսպակի վայրենի տեսակը, որ կը բուսնի ինքնին այգիներու մէջ և անդաստաններու եզերքը, կ՚ըսուի մեր մէջ Կմնտաշ (գղ. Sauge sauvage*), կապոյտ ծաղիկներով։ Եւ այն տեսակն որ ունի մեծամեծ դեղին ծաղիկներ, պատեալ մածուցիկ հիւթով, կ՚ըսուի Մեղրբեր (գղ.* Sauge glutineux).

390. Մշակութիւն. — *Եղեսպակ կը սիրէ չոր, բարձր և հարաւային դիրք։ Ձմեռէ կը վախնայ, մանաւանդ եթէ սաստիկ ըլլայ։ Կը բազմանայ ճիւղերով և քիչ անգամ սերմով։ Սերմը դնելու է 2 հր.մ հողին տակ. և մի կալ երկրի համար հարկաւոր է 15 գրամ սերմ, որ կը ծլի 20 օրէն։ Կը պահէ սերմն իր բեղնաւորիչ կարողութիւնը 3 տարի։ Լաւ է 4 տարիէն աւելի չթողուլ եղեսպակը նոյն հողին վրայ։*

ԳԼՈՒԽ ԺԵ

ԿՈՐԴԻԻՆ. (*տճ. կէյիք օթու. գղ.* Sarriette. *իտ.* Santoreggia. *լտ.* Satureia hortensis).

391. Նկարագիր. — *Է փոքրիկ թուփ, որոյ ծղօտն է փայտեղէն, մազոտ, կարմրորակ, քառանկիւնի և բազմաճիւղ. տերևներն են նեղ, երկայն և փափուկ, և ունին համ և հոտ համեմային. ծաղիկներն են մանր, կարմրորակ, անթային, անուշահոտ, և երկու երկու մի կոթի վրայ (Զև 137)։*

Այս տունկն է ստամոքական, միզաբեր և կազդուրիչ. իր տերևոց եփուկը զօրացուցիչ է ստամոքաց։ Բայց գլխաւորապէս կը գործածուին տերևներն կերակուրները համեմելու, և մանաւանդ ոսպ և բակլայ։

Լերանց կորդիւնն ունի ծիրանեգոյն ծաղիկներ, անուշահոտ և խնկաւէտ, որ կը բուսնի Արևելք լերանց վրայ, ուսկից կ'ելնէ հոտաւէտ իւղ մը գեղնորակ։

Զև 137. Կորդիւնի բոյս և ճիւղ.

392. Մշակութիւն. — *Կորդիւնը կը սերմանեն աշնան կամ գարնան, տողի վրայ. տունկերն իրարմէ 25 հր.մ հեռի. որով մի հարիւրակալ գետնոյ վրայ կրնայ ըլլալ 1400 տունկ։ Մի կալ երկրի համար հարկաւոր է 10 գրամ սերմ, որ կը ծլի 12 օրուան մէջ, եթէ օդոյ տաքութեան աստիճանն ըլլայ 14–18։ Սերմը կը պահէ իր բեղնաւորիչ կարողութիւնը 2 տարի։ Տունկին օդոյ մէջ գտնուած մասը կը կտրուի հետ զհետէ ամառան մէջ, և կը գործածուի իբրև համեմ։*

ԳԼՈՒԽ ԺԶ

ՔՐՔՈՒՄ. (*տճ. Զաֆրան. պրս. Քիւմքիւմ. գղ.* Safran. *իտ.* Zafferano. *լտ.* Crocus sativus).

393. Նկարագիր. — *Է բոյս կոճղիզաւոր, չատակեաց, իբր 20 հր.մ բարձրութեամբ. տերևներն են կանաչագոյն, երկայն և նեղ, ունելով մէջ տեղ ճերմակ գիծ մը ընդ երկայնութիւն, և կը բուսնին ծաղիկներէն անմիջապէս ետքը։ Ծաղիկներն են կարմիր, մանուշակագոյն կամ դեղին, անուշահոտ, որ տերևներուն պէս վեր կը բարձրանան կոճղիզին մէջէն, երկայն խողովակաձև, ծայրը զանգակաձև 6 մաս բաժնուած (Զև 138)։ Ծաղիկն ունի 3 կարմիր նարընջագոյն սորդներ, սաստիկ հոտաւէտ, զոր կը կտրեն տակէն այն մասին վրայ ուր կը սկսի ճերմկիլ, և կը չորցնեն արևու մէջ կամ վառարանի վրայ մեղմ կրակով, դնելով երկու ծծուն թղթոյ մէջ։ Չորնալէն ետքը կը մանրեն և կը խաւրեն ի վաճառ, և այն է որ կ'ըսուի Քրքում, զոր կը գործածեն իբրև համեմ կերակրոյ և ըմպելեաց, որոց կու տայ դեղին գոյն։*

Զև 138. Քրքում.

Քրքումի պտուղն է եռանկիւնի խոզակ, երեք մաս բաժնուած, մէջը անթիւ մանր բոլորաձև սերմեր։ Քրքումը բազմացնելու համար չեն գործածեր իր սերմը, այլ մանր կոճղէզները որ կ'ելնեն մայր կոճղիզին քով, որք են բոլորաձև վերի կողմէն և տափարակ տակի կողմէն, և սոխի պէս բարակ մաշկերով շրջապատած։

394. Մշակութիւն. — Քրքում է բնիկ Ասիոյ և Հնդկաստանի, և կը բուսնի նաև Եւրոպայի հարաւային կողմ. կը սիրէ տաք, չոր, կակուղ, պարարտ և արևահար երկիր: Լաւ չյաջողիր կաւեղէն, կրային և աւազուտ երկրի վրայ, այլ միայն իրենց խառնուրդին մէջ: Երկիրը պէտք է բահով փորել խոր և աղբով պարարտացնել, և յունիսի և յուլիսի մէջ կոճղէզները տնկել պատրաստած փոքրիկ ակօսներու մէջ, որոց խորութիւնն է 20 հր.մ. և իրարմէ հեռաւորութիւնը 30 հր.մ, ընտրելով աղէկ կոճղէզները և ոչ տափարակները, և հանելով դրսի կեղևը, որով երևան կ'ելնեն այլայլած կոճղիզակներն, զորս պէտք է նետել: Ակօսներուն յատակը կը դրուի աղբ, և կոճղիզակները դնելէն ետքը՝ վրան ծածկել հողով 10 հր.մ բարձրութեամբ: Կոճղէզներուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնը պիտի ըլլայ 15 հր.մ:

Հոկտեմբերի սկիզբ կը սկսին կոճղիզակները մեծնալ և տերև արձակել, և նոյն ամսոյն կիսոյն կը սկսին ձեռքով ժողվել ծաղիկները առաւօտուն ցօղն անցնելէն ետքը, պայծառ օդով:

Քաղոցը ընելէն ետքը պէտք է քրքրել հողը, նոյնպէս ընել գարնան և ամառը, հետևեալ երկու տարիներուն մէջ, և քաղել հոկտեմբերի մէջ:

Ծաղիկները քաղելէն ետքը, անմիջապէս պէտք է կտրել սոսորդները և չորցնել, ինչպէս ըսինք վերը: Սոսորդներուն կտրելու կերպն այս է, զոր կ'ընեն կանայք. բռնելով ձախ ձեռքով ծաղիկը ու աջ ձեռքով բանալով ծաղկին բաժակը ու բռնելով սոսորդները, կտրել սակէն ձախ ձեռքին բթամատին եղընգով՝ ճերմակ գծին վրայէն: Յաջող կին մը 5 ժամուան մէջ կրնայ պատրաստել 250 գրամ թարմ քրքում:

395. Մի հարիւրակալ երկրէ առաջին տարին կ'ելնէ 6–10 հգ.գր քրքում. երկրորդ տարին 20–30 հգ.գր, նոյնպէս և երրորդ տարին: Չորնալով կը կորսնցնեն իրենց կշռոյն չորս հինգերորդ մասը: Չորցած քրքումը կ'աժէ առ մի հազարագրամ 90–100 փրանկ: Կ'ելնէ 100 հազար ծաղկէ մի հազարագրամ չոր քրքում:

Քրքմաստան մը երեք տարիէն աւելի չտևեր: Յունիսի կամ յուլիսի մէջ պէտք է բահով հանել կոճղեզները, և գէշերը զատելով՝ տնկել աղէկները ուրիշ տեղ:

Քրքումի թշնամիներն են մուկներն և նապաստակներն: Առջիններն կը կրծեն իր սոխը, երկրորդներն կ'ուտեն իր տերևները: Քրքումին սոխերն ենթակայ կ'ըլլան երբեմն փտութեան, որոյ դարմանն է տալ ծծըմբատ երկաթոյ՝ լուծեալ ջրոյ մէջ:

ԳԼՈՒԽ ԺԷ

ԶՈՊԱՅ ԿԱՄ ԶՈՒՓԱ. (*տճ.* *Զուֆա*, *Զիւպրա*. *գղ.* Hyssope. *իտ.* Issopo. *լտ.* Hyssopus officinalis).

396. Նկարագիր. — Է փոքրիկ թուփ, հակադիր, նեղ և նիզակաձև տերևներով, կարմիր, ծիրանեգոյն, կապոյտ և հասկաձև մանր ծաղիկներով, որք են անուշահոտ, ինչպէս նաև տերևներն, որք կը գործածուին իբրև համեմ կերակրոյ, և են կազդուրիչ և ստամոքական: Կը հանեն տերևներէն և ծաղիկներէն ջուր թորեալ և իւղ խակական, որ ունին տնկոյն հոտը: Ծաղկոցներու մէջ կ'ընեն զոպայէ ածուներու եզերք:

ՄԱՍՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՍՈՒՆԿ ԵՒ ԳԵՐԵՐԻ

ԳԼՈՒԽ Ա.

ՍՈՒՆԿ. (*տճ. Մանթար. գղ.* Champignon. *իտ.* Fungo. *լտ.* Agaricus campestris).

397. Նկարագիր. — *Է բոյս գաղտասեր, անտերև, անծաղիկ, անպտուղ, անարմատ, և կեցած է չիտակ ծղօտի մը վրայ հովանոցակերպ, մսոտ, կակուղ և սպընգանման գլխով, որ կ'ըսուի Յոռնի, և իր գնտաձև գըլուխը կ'ըսուի Գլխարկ (գղ.* Chapeau. *իտ.* Cappello), *որոյ ներքին կողմը բաժնուած է անբաւ բարակ թերթեր:*

Սունկին սովորական գոյնն է ճերմակ, բայց կ'ըլլայ նաև դեղին, սև, թուխ, խարտեաշ, ձիթագոյն, նարընջագոյն և կարմիր:

398. *Սունկին տեսակները շատ են, և կը բուսնին ինքնին անտառներու և մարգագետիններու վրայ. կան որ կ'ուտուին, բայց շատերն են թունաւոր, և լաւ պէտք է ճանչել:*

Գտնեմք հոս քանի մը տեսակ սունկերու պատկերները: Ձև 139 *է Ղարիկոն ուտելի, և ձև* 140 *է Ղարիկոն թունաւոր. — Ձև* 141 *է Ոսկեսունկ ուտելի, և ձև* 142 *Ոսկեսունկ թունաւոր. Ձև* 143 *է Մորկեղ, սունկ ուտելի և յարգի, որ կ'ըլլայ կաղնոյ մեծութենէ մինչև նարընջի մեծութեամբ, գնտաձև: Ձև* 144 *է Թնջուկ թունաւոր, և ձև* 145 *է Թնօպի թունաւոր*[1]*: Այս վերջին երկու սունկերն ունին իրենց ուտելի տեսակներն ալ:*

1. *Ղարիկոն. գղ.* Agaric. *իտ.* Agarico.
Ոսկեսունկ. գղ. Oronge. *իտ.* Orongia.
Մորկեղ. գղ. Morille. *իտ.* Morilla.
Թնջուկ. գղ. Bolet. *իտ.* Boleto.
Թնօպի. գղ. իտ. Amanite.

399. *Ուտելի սունկն յարգի է սեղաններու վրայ, վասն զի է սննդարար և հաճոյական քմաց, թէպէտ և չէ այնչափ դիւրամարս: Որչափ աւելի մանր ըլլան սունկերն և թարմ, այնչափ աւելի ապահով կրնամք ըլլալ թէ թունաւոր չեն: Եւ սակայն դիւրին չէ որոշելը թունաւորը ուտելի տեսակէն. վասն զի արտաքին կերպարանքով գրեթէ տարբերութիւն չունին իրարմէ:*

400. Մշակութիւն. — *Սունկը մշակելու վախճանն այս է, որ կրնամք տարւոյն ամէն եղանակներուն մէջ սունկ ուտել, և միանգամայն ապահով ըլլալ որ վնասակար չեն:*



Ձև 139. *Ղարիկոն ուտելի.*

Ձև 140. *Ղարիկոն թունաւոր.*

Մշակելի սնկոց մէջ մի միայն է Դաշտային ղարիկոնն, որոյ սերմը ինչպէս նաև ուրիշ ամէն տեսակ սունկերուն, է մանր փոշի, ամենամանր հատիկներէ բաղկացեալ, որք կը գտնուին գլխարկին տակի թերթերուն մէջ: Այս գլխարկը կեցած է ծղօտի մը վրայ, որոյ վարի կողմն հաղորդած է գետնոյն տակ սնկոյ բուսական մասին, որ կ'ըսուի Բողբոջ սնկոյ (գղ. Mycélium. *իտ.* Micelio), *որով պարտիզպաններն կը բազմացնեն սունկը:*

Սնկոյ բողբոջն է նուրբ խողովակ, բաղկացեալ մանր բջիջներէ, քովէ քով դրուած, և կրնայ ըլլալ պարզ կամ ճիւղ ճիւղ բաժնուած, և զանազան ձևերով:

401. Գլխարկին վրայի բարակ մաշկը կ'ըլլայ ճերմակ, թէ որ սունկը դեռահասակ է և շուքի մէջ մեծցած. ապա թէ ոչ՝ կ'ըլլայ գորշ: Այդ մաշկը դիւրաւ հերձանելի է:

Գլխարկին տակի թերթերն են վարդագոյն, որք կը դառնան ի մթնագոյն՝ սունկը կտրելէն ետքը. իսկ կոճղիզային ղարիկոնին մէջ միշտ ճերմակ են, և սաով կ'ո-

Ձև 141. Ոսկեսունկ ուտելի. Ձև 142. Ոսկեսունկ թունաւոր.

րոշուի կոճղիզային ղարիկոնը՝ որ է թունաւոր: Գտնեմք ուրիշ նշան մը՝ կոճղիզային ղարիկոնը դաշտային ղարիկոնէն որոշելու համար: Պէտք է ճմլել սունկի գլխարկը. թէ որ կաթնեղէն նիւթ մը վազէ, ըսել է թէ կոճղիզային տեսակն է, և եթէ պայծառ հիւթ մը վազէ, ըսել է թէ ուտելի տեսակն է:

Սունկերը կրնամք մշակել բացօթեայ այն արտերուն մէջ ուր վարունգ և սեխ տնկուած են. կամ մշակել պատի քով, յարկածածուկ տեղ, ախոռի կամ գինետան մէջ, և այլն: Եւ կամ չարժական սնկաստաններ ընել տակառի, սնդուկի կամ ուրիշ նման ամաններու մէջ: Սունկը բուս-

նելու համար կ'ուզէ օդ, տաքութիւն և թացութիւն, ինչպէս ամէն տունկերն: Շատերն կը բուսնին խոնաւ տեղեր: Չկայ բոյս որ այնպէս շուտով մեծնայ և բազմանայ՝ ինչպէս է սունկ:

402. Սունկերը բազմացնելու կերպ. — *Սունկերը մշակելու կերպին մէջ երկու գլխաւոր բաներ կան դիտելի, սունկի բողբոջը և աղբի պատրաստութիւնը: Սունկի բողբոջը որ կը ծառայէ սունկին բազմանալուն փոխանակ սերման, կը գտնուի աղբի հին կոյտերուն վրայ ինքնաբոյս: Ձիոց աղբին մէջ այն աւելի ընդունելի է, որ լաւ սնունդ առնող և աշխատող ձիերուն ըլլայ, կամ*

Ձև 145. Մորկեղ ուտելի. Ձև 144. Թնջուկ թունաւոր.

իշոյ և ջորւոյ աղբը, որ քիչ յարդով խառն ըլլայ, և միզով տոգորեալ: Որ և իցէ եղանակի մէջ պէտք է որ աղբը հինցած ըլլայ գէթ 15 օր, և ցուրտ եղանակին մէջ 20 և աւելի օր: Աղբը ախոռէն հանելէն ետքը պէտք է տանել սահմանեալ տեղ մը, որ արևէն և անձրևէն պատսպարեալ ըլլայ, և դնել գետնոյն վրայ մի մետր լայնութեամբ, և երկայնութիւնը որչափ որ հարկաւոր է, հանել մէջէն չփտած յարդը և ուրիշ օտար նիւթերը: Եւ այսպէս հետ զհետէ կարգ կարգ դիզել աղբը վրայէ վրայ, և ճմլել, զարնել և ջրել շատ անգամ, միօրինակ կերպով: Կոյտին բարձրութիւնը պիտի ըլլայ 60–70 հր.մ, և վրայի կողմ կոր: Ութ օրէն ետքը, որ կրնայ ըլլալ

աւելի կամ պակաս ըստ տաքութեան աստիճանի օդոյ, պէտք է կոյտը շրջել, և դնել նոյն կարգով քովը ուրիշ տեղ, վրայի կարգը տակ և տակինը վրան։ Այլ ևս ութ օր, և ահա աղբակոյտը պատրաստ կը համարուի, և կ'ըլլայ սև, փայլուն, իւղակերպ, և կ'ունենայ մասնաւոր հոտ մը, և տաքութիւնը 32^0 Հ։ Եւ այս վիճակին մէջ աղբը կը գործածուի սունկի բողբոջները բազմացնելու։

403. Տեղը որոշելէն ետքը պէտք է պատրաստած աղբը տանել հոն և դնել ձիոյ կռնակի պէս, կամ պատին կռթնած և առ ի չեղ։ Բարձրութիւնը պիտի ըլլայ 60 հր.մ և լայնութիւնը 70, եթէ ձիոյ կռնակի պէս դրուի. իսկ պատին քով բաւական է 50 հր.մ լայնութիւն։ Աղբը դնելու ժամանակ պէտք է կարգ կարգ դնել, ճմլել ուժով, և վերջը թողուլ երեք չորս օր, ծածկելով վրան տերևներով։ Թէ որ շատ չոր ըլլայ աղբը, պէտք է թրջել։ Երբ աղբակուտին տաքութիւնը հասնի $18–20^0$ Հ. դնել վրան կարգ մը աւազուտ հող։ Եւ եթէ հարկ է աղբին տաքութիւնը աւելցնել, պէտք է ջրել, բայց զգուշանալ որ տաքութիւնը չանցնի 25^0 Հ. վասն զի կը մեռնին յայնժամ բողբոջները։

Ձև 145. Թնոպի թունաւոր.

404. Ծնած բողբոջները սերմանելէն քանի մը օր առաջ պէտք է տանել սահմանեալ տեղը, որ թացութեամբ և տաքութեամբ զօրանան։ Եւ երբ հասնի սերմանելոյ ժամանակը, պէտք է 20 հր.մ հեռաւորութեամբ և 4 հր.մ խորութեամբ ծակեր բանալ հողին մէջ, և դնել այս ծակերուն մէջ բողբոջի կտորներ գէթ կաղնոյ մեծութեամբ, և ծածկել վրան հողով և ջրել։

Քանի մը օրէն ետքը, առ առաւելն տասն օրէն ետքը, նայիլ թէ բողբոջներն վատուժցած են, որ կը ճանչցուի վրայի ճերմակ և բարակ թելերէն, և այսպիսիները փոխել և նորէն սերմանել։

Հետագայ աշխատութիւններն համեմատ են տեղւոյն օդահարութեան, չափաւոր տաքութեան, մշտատև պահպանութեան և զգալի թացութեան։ Հարկ չէ շատ օդ և շատ լոյս, մանաւանդ թէ մթութիւնը կ'երագէ սունկերուն աճումը։ Անոր համար սունկերուն շատ աշխատութիւնները և քաղումը կ'ըլլուի ճրագի լուսով, զգուշանալով տաքէն պաղ անցնիլը։

405. Ամսէ մը ետքը, եթէ ամէն գործեր ըստ պատշաճի եղած են, կը տեսնեմք որ հողին երեսը կ'ուռի կը բարձրանայ և կը ճեղքի և սունկը կը ծնանի, և այսպէս հետ զհետէ հարիւրաւոր սունկեր կը ծնանին և կը մեծնան։ Կրնամք քաղել երկու օրը անգամ մը, երբ սունկերն մեծ կ'ըլլան աղաւնոյ ձուոյ չափ։ Օգտակար չհամարուիր թողուլ որ աւելի մեծնան, որով և գլխարկին թերթերն կը բացուին։ Լաւ սնկաստան մը չորս հինգ ամիս կրնայ շարունակ սունկ մատակարարել. բայց լաւ է երկու ամսէն ետքը նորոգել, շարունակաբար ընտիր բերք ունենալու համար, և հիները աւրել, որոց բերքը կը սկսի հետ զհետէ պակսիլ։

Պարարտութիւնը կամ աղբը որ գործածուեցաւ մի անգամ, չկրնար ծառայել այլ ևս սնկոյ համար, բայց կրնայ օգտակար ըլլալ կանաչեղինաց և ծաղկանց։

406. Սնկոյ սերմը ունենալու համար, հողակոյտերը աւրելէն առաջ պէտք է լաւ մը ճմլել բահին հակառակ կողմով, և կտրել բահով շերտ շերտ, և տանել յարկածածուկ տեղ որ չորնան, և յետոյ տանել ի շտեմարան, և հարկաւոր եղած ժամանակ գործածել իբրև սերմն։ Այս կերպով կրնան սնկոյ բողբոջներն պահուիլ հինգ վեց տարի։

ԳԼՈՒԽ Բ

ԳԵՐԵՐԻ ԿԱՄ ՀՈՂՍՈՒՆԿ. (*տճ. Եէր մանթարը, Դօնուզ էլմասը, Դօմալան. արաբ. Քամաճ. գղ.* Truffe. *իտ.* Tartufo. *լտ.* Tuber cibarium).

407. Նկարագիր. — Է *տեսակ սնկոյ ելընդաւոր, որ ինքնին կը բուսնի, և կ'աճի հողոյ տակ, անոր համար ըսուած է մեր մէջ նաև Հողսունկ, և առ Նախնիս մեր ըսուած է նաև Բողբոջ: Կը բուսնի սովորաբար ընտանի կամ վայրի կաղնի ծառոց տակ, և կ'ըլլայ ընկուզի և հաւկթի մեծութեամբ, ըստ այլևայլ տեսակաց: Ձևն է կլոր կամ ձուաձև, խորտաբորտ և ոմանք ողորկ. չունի արմատ, և հազիւ կը ցուցանէ գործարան կազմութեան. միսն է սեղմ, հոտաւէտ, համեմային և համեղաճաշակ, ունելով իր մէջ ցանցաձև նեարդեր ուր կը ծնանին սերմերը* (Ձև 146): *Կ'ըլլայ զանազան գոյներով. սևագոյնն ամէն տեսակներէն աւելի ընտիր է, իսկ ճերմակը, դեղինը և կարմիրն է կարծր անհամ և դժուարամարս: Բայց իտալական ճերմակ տեսակն յարգի է: Գորշագոյնն ալ համեղաճաշակ է և սաղուն երեսով, բայց ունի խստորի հոտ, ուստի և կը գործածուի համեմի տեղ:*

Կը գտնուի հողսունկ աշխարհիս ամէն կողմ, և ինքնաբոյս ըլլալուն պատճառաւ չգիտցուիր իր տեղը. որ և ինքնին կ'աճի և կը բազմանայ սերմով, զոր կը թողու հողին տակ փտած գերերի մը, և այս սերմէն առաջ կու գան սունկի բողբոջներ, կամ թէ ըսել նուրբ ճերմակագոյն թելեր, որոցմէ կը ծնանին նոր գերերիներ:

408. *Հողսունկին բուսած տեղերը դիպուածով կը գտնուի, փորելով գետինը* 15-25 *հարիւրորդամետր: Շատ անգամ գերերւոյ տեղերը գտնելու համար կ'առնուն հետերնին խոզի ձագ կամ շուն, որոց հոտոտելիքը սուր ըլլալով, կը փորեն գետինը ուր որ գերերի կայ, և կը հանեն դուրս և կը սկսին ուտել: Խոզերուն շատ ախորժելի է, և կը հանեն միշտ հասունցածը և ոչ տհասը: Մինչդեռ մարդիկ այնչափ չեն ճանչեր:*

409. Մշակութիւն. — *Գերերին կը սիրէ բարեխառն կլիմայ, սաստիկ չորութիւնն իրեն օգտակար չէ և չկրնար բազմանալ: Կ'ուզէ կակուղ և զով հող, կաւեղէն և կրային, և կը բուսնի սովորաբար անտառներու մէջ ուր կը գտնուի բուսահող: Բայց թէ որ մէկն ուզէ արուեստական գերերաստան մը կազմել, պէտք է ընտրել անտառային տեղ, կամ ընել արուեստական անտառ, որով*



Ձև 146. Գերերի կամ Հողսունկ.

և շարունակ կրնայ ունենալ գերերի: Անտառին շուքը և զովութիւնն օգտակար է գերերւոյ սերմանց բուսնելուն:

Արուեստական անտառ ընելու համար սովորաբար կը տնկեն կաղնի ծառեր տողի վրայ՝ իրարմէ 4–5 *մետր հե-*

աւորութեամբ, որոց դիրքն ըլլայ ըստ կարի հիւսիսէն դէպ հարաւ։ Եւ արուեստական սերմ ունենալու համար, գարնան և ամառան մէջ անձրևի պատրաստութեան ժամանակ պէտք է հողին տակ դնել թարմ կամ չոր գերերւոյ կտորներ. որք փտելով հողին տակ և արձակելով բողբոջներ՝ կը ծնանին նոր հողսունկեր։

Արուեստական գերերաստանէ մը կրնամք քաղել պտուղը վեցերորդ կամ ութերորդ տարիէն սկսեալ, և կրնայ տևել միօրինակ տասն կամ տասներկու տարի։ Ձմերային տեսակը կրնամք քաղել օգոստոսէն մինչև մարտ, ամառային տեսակը ապրիլէ մինչև սեպտեմբեր։

Գերերւոյ ներկայութիւնը յայտնի կ'ըլլայ հողին ճեղքուածներէն, հոն խոտ չբուսնելէն և իր մասնաւոր հոտէն որ կ'ելնէ հողին երեսէն վեր ցուրտ և չոր առաւօտներ։

410. *Կրնամք պահել գերերին ամիս մը կամ երկու՝ հողոյ և աւազի մէջ, զգուշանալով թացութենէ և տաքութենէ. և եթէ ուզեմք աւելի երկար ժամանակ պահել, պէտք է չորցնել։*

Գերերին հնուց ի վեր հարուստներու սեղանին վրայ միայն կը գտնուի, ախորժահամ է և բանայ մարդոյս ախորժակը, ուստի և կը մտնէ իբրև համեմ որսոյ կերակուրներու մէջ. բայց եթէ չափէն աւելի ուտուի, կ'ըլլայ տաքցուցիչ և անմարս։

ՄԱՍՆ ՈՒԹԵՐՈՐԴ

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՊԱՐՏԻԶՊԱՆԻ

ՅՈՒՆՈՒԱՐ

411. Յունուարի մէջ պարտիզպանին ընելու աշխատութիւնները. — *Յունուար ամսոյն մէջ պարտիզպանին գլխաւոր աշխատութիւններն են յետագայք։*

Ցուրտ օրերուն մէջ պէտք է փոխադրել աղբը և բուսահողը. և երբ հողը չոր է և ոչ սառած, փորել բահով և պատրաստել գարնան համար։ Մաքրել փոսերը, և եթէ հարկ է՝ նոր փոսեր բանալ ջրոյ ընթացքին համար։ Մաքրել պարտէզը անցեալ տարւոյն բերոց ամէն մնացորդներէն որ մնացած են հողին տակ, աղբել ծներեկաստանը երեսէն։ Եւ եթէ օդն աղէկ ըլլայ, կրնամք փոխատնկել կանխահաս կաղամբներ, պրասի, սխտորի և սոխի մէջ տեղ, որք կը տնկուին նոյնպէս յունուարի մէջ։

Լաւ պատսպարեալ տեղերու վրայ կրնամք սերմանել կանխահաս ոլոռն, բակլայ, չոմին, որպէս զի գարնան կարենամք ուտել։

Սերմանել ջերոցներու և սնդուկներու մէջ կարոս, գլխանի կաղամբ և ուրիշ կանխահաս կաղամբներ, ամառային ճերմակ հազար և սոխպղին, որպէս զի բուսնելէն ետքը կարենամք փետրուարի և մարտի մէջ փոխադրել բացօթեայ տեղ։

Եւ եթէ չունենայ պարտիզպանը պատրաստած ջերոցներ, կրնայ պատրաստել այս ամսոյն մէջ, որպէս զի կարող ըլլայ սերմանել սեխ, վարունգ, ոսկեխնձոր և եղերդ։

Համառօտ ըսել, յունուարի մէջ պէտք է կարգի դնել ամէն ձմերային մշակութիւնները, սերմանել և մեծցնել այն ամէն խաւարտները որ երկու ամիս վերջ պիտի տնկուին բացօթեայ հողի մէջ, նոյնպէս և աղցանները։ Բանալ կամ ծածկել կանկարներու արմատները, ըստ որում անցած է կամ ոչ սառուցի ժամանակը։

412. Ուտելի խաւարտք. — *Յունուար ամսոյն մէջ ուտելի խաւարտներն են վայրի կանգար, ստեպղին, սպանախ, կարօս, կաղամբ, ձմերային կարմիր հազար, և եղերդի արմատներ։*

ՓԵՏՐՈՒԱՐ

413. Փետրուարի մէջ ընելու աշխատութիւնք. — *Փետրուարի մէջ կ'աւելնան պարտիզին աշխատութիւններն։ Բաց ի յունուարի մէջ եղած աշխատութիւնները գլուխ հանելէն, այս ամսոյն մէջ պէտք է սերմանել ստեպղին, փոխատնկել պրասի, ընտանի կարօսի տունկերը և ցանել աղցան. կրնամք ցանել նաև ճակնդեղ։*

Եթէ չգտնուին համեմային տունկեր, կրնամք տնկել ամսոյս վերջ կամ մարտի սկիզբ խնկունւոյ կամ լիբանովտանի, եղեսպակի, ցոպայի, ծոթորի և մարգանոնի ճիւղեր։ Եթէ ուզէ մէկը ծնեբեկաստան կազմել, այս ամիսը յարմար է երկիրը պատրաստելու համար։

Ծնեբեկաստաններն շատ շահաբեր են, եթէ իրենց վրայ ըլլուի կարևոր խնամք ըստ իրենց պահանջանաց։

Այս ամսոյս ուրիշ աշխատութիւններն են հող տալ թզուկ ոլոռան և բակլայի որ ցանուած են աշնան, կարօսի և եղերդան՝ որպէս զի ճերմկնան, և պատրաստել ածուները փորելով և պարարտացնելով։

414. Ուտելի խաւարտք. — *Փետրուարի մէջ ուտելի խաւարտներն են կաղամբ ծաղկաբեր, կաղամբ Միլանու, կաղամբ Բրուսելի, վայրի կանգար, կարօս, ստեպղին և շոմին։*

ՄԱՐՏ

415. Մարտի մէջ ընելու աշխատութիւնք. — *Մարտի ամիսը պարտիզպանի համար կարևոր ամիսներէն մէկն է լաւ աշխատելու։ Այս ամսոյս մէջ աւարտելու է երկիրը բահով փորելը, փոցխով շտկելը և աղբելը։ Թէ որ ուշանայ երկիրը աղբելը, չկրնալով աղբն ըստ արժանւոյն տարրաբաշխիլ և միանալ հողին հետ, կը պակսի տարեկան բերքը։*

Այս ամսոյս մէջ պէտք է սերմանել այն խաւարտները զորս կ'ուզեմք դալար ուտել ամէն 15 կամ 20 օրը, ինչպէս են ոլոռն, հազար։ Բաց ի լուբիայէ, այս ամսոյս մէջ կրնամք սերմանել ամէն տեսակ խաւարտ, նաև գետնախնձոր, որոյ համար տաք դիրք ընտրելու է։

Եթէ օդը ներէ, պէտք է բանալ կանկարները՝ հողը վերցնելով, և տունկերը կոկել և պարարտացնել երկիրը. և երբ սկսին ուռճանալ, հանել արմատին քովէն վեր ելած բողբոջները որ կ'ուտուին։

416. *Մարտի ամսոյն մէջ կը փոխատնկեն խաւարտներուն շատերը, ինչպէս են գլխանի կաղամբ, եղակ և սոխ։ Կը սերմանեն ծնեբեկները, կը տնկեն ծնեբեկաստանի մէջ ամսոյս վերջերը չոր օդով ծնեբեկի բողբոջները, ընտրելով մէկ տարեկան եղողները, որք երեք տարիէն պտուղ կու տան։ Երկու տարեկան բողբոջները փոխատնկելով տկար կը մնան, և ոչ երբեք կու տան աղէկ բերք։ Միայն սերմը առնելու համար կը գործածուին երկու տարեկան բողբոջներ։ Պէտք չէ տնկել այն բողբոջները՝ որ երկայն ճամբորդութեամբ չորնալու վրայ են, վասն զի կը փտին հողին մէջ։*

Ջերոցի մէջ եղած բոյսերուն վրայ մասնաւոր ուշադրութիւն պէտք է ընել. թէպէտ և ցուրտէն այնչափ վախ չըլլայ, բայց արևուն տաքութիւնը կրնայ վնասակար ըլլալ փոքրիկ բոյսերուն. ուստի փոխանակ ապակի պատուհանները միշտ բանալու աղէկ օդերուն, երբեմն հարկ է շուքի տակ թողուլ նորատունկ բոյսերը, որպէս զի

չվնասուին արևուն տաքութենէն, ինչպէս են վարունգ, սեխ, ոսկեխնձոր և այլն։

417. Ուտելի խաւարտք. — Մարտի մէջ ուտելի խաւարտներն քիչ են. և են վերջին մնացորդք վայրի կանգարի, ստեպղինի, կարոսի, սպանախի, և պատսպարեալ տեղ մեծցած աղցաններ։

ԱՊՐԻԼ

418. Ապրիլի մէջ ընելու աշխատութիւնք. — Մինչև հիմա ժամանակ չըլլալով հողը պատրաստել դդումի տեսակներուն համար, այս ամսոյս սկիզբէն պէտք է սկսիլ։ Ապրիլի կիսէն վերջ տնկել հողին վրայ ջերոցի մէջ մեծցած դդումի մանր բոյսերը, և կամ սերմանել պարտիզի մէջ, և վրան ծածկել ապակի զանգակներով։ Այս ամսոյն մէջ եղեամ շատ կ'իջնայ, ուստի պէտք է պատըսպարել խոտով կամ ուրիշ կերպով կանխահաս խաւարտները։ Սովորաբար կը գոյանայ եղեամ, երբ տաք ցերեկի յաջորդէ ցուրտ և պարզ գիշեր։ Եղեման բերած վնասն յայտնի է նորաբոյս տերևներուն ծայրերը խամրելէն. և եղեմանէ կրած բոյս մը դժուարաւ կրնայ առաջ գալ։

Եթէ ցրտութեան պատճառաւ մարտին մէջ բացուած չեն կանկարներուն բոյսերը, պէտք է այս ամսոյն մէջ ընել, հանելով արմատին քովի բողբոջները, և թողլով միայն երկու ընտիր և հաստ ծղօտներ։ Եթէ աւելի թողումք, կը պակսի բերքին քանակը և որակը։ Հանած բողբոջներուն ընտիրները կրնամք ուրիշ տեղ տնկել, որով նոր կանկարանոց կ'ունենամք, և միանգամայն աշնան ուտելու կանկարներ։ Ընդուկներու մէջ սերմով բուսած նոր կանկարները պէտք է տնկել բացօթեայ, պարարտացնելով նախ հողը և մաքրելով ամէն վնասակար խոտերէ։

419. Բոյսերուն ջուր տալը ըստ կարի առաւօտուն պէտք է ընել և ոչ յերեկոյի, երկիրը չպաղեցնելու և

սառուցի պատճառ չտալու համար։ Բայց պէտք է գիտնալ որ ջրել հարկ է երբ օդը չոր ըլլայ. բայց այս եղանակիս մէջ ցօղն առատ ըլլալուն, պէտք է ջրել միայն նոր տնկած բոյսերը և սերմերը։ Այս ամսոյս մէջ ամէն բոյսեր մեծ աճումն առնլով, պէտք է մասնաւոր խնամք ունենալ եղերդի, քեղակարոսի վրայ, որպէս զի չանցնի անոնց քաղոցին ժամանակը։ Եւ ըստ չափու գործածութեան պէտք է սերմանել հազար, կարոս, եղերդ, սամիթ, պրաս և ընտանի բողկ։

Տաք երկրի մէջ մարտին փոխատնկած կաղամբները՝ ապրիլի մէջ պէտք է աղբել, մանաւանդ մարդկային աղբով, և տնկել գլխանի կաղամբ, սև կաղամբ՝ ձմերան համար։ Իսկ մեր բարեխառն կլիմային տակ ապրիլի մէջ կը սերմանեն նաև գետնախնձոր, կանխահաս լուբիա և պատինճան։

Ապրիլի վերջերը կը փոխադրեն մեծ կարոսները և կը սերմանեն չոմին ձմերան համար։

Ապրիլի մէջ կը շարունակի ելակները տնկելը։

Եւ որպէս զի շուտով մեծնան ոսկեխնձոր և պատինճան, պէտք է պատրաստել պարարտ և տաք հող, և հոն տնկել առժամանակեայ անոնց մանր բոյսերը, որ ապակւոյ տակ սերմէ առաջ եկած են, մինչև գայ ժամանակ որ նոյն բոյսերը կարող ըլլան բացօթեայ ուրիշ տեղ տնկուիլ։

420. Ուտելի խաւարտք. — Ապրիլի մէջ ուտելի խաւարտներն են հազար, թրթնջուկ, սպանախ, ոլոռն թըզուկ, ծնեբեկ և եղերդ։ Այս ամսոյս մէջ դեռ այնչափ առատութիւն չկայ կանաչեղինաց։ Պարտիզի մէջ դեռ կրնայ գտնուիլ ծաղկաբեր կաղամբ և կաղամբ աւսոնեան կամ բրոկոլի։

ՄԱՅԻՍ

421. Մայիսի մէջ ընելու աշխատութիւնք. — Այս ամսոյս մէջ ընելու աշխատութիւնները շատ են և զանազան։ Զգտնուին պիտի պարապ ածուներ, բաց անոնցմէ որ նորանոր սերմանց համար պահուած են։

Ամսոյս առաջին կիսոյն մէջ պէտք է սերմանել այն լուբիան որ չորցնելով պահելու համար է։ Բայց թէ որ կլիմայն սաստիկ չոր է, և ոռոգելու ջուր չկայ, պէտք չէ սերմանել։ Անոր տեղ կրնամք սերմանել ամէն տասնևհինգ օր այն լուբիան որ թարմ կ'ուտուի, և սերմանել հարկաւոր եղածին չափ։

Այս ամսոյս մէջ կը սերմանեն բացօթեայ ամէն տեսակ դդում, սեխ ձմերային, ձմերուկ, վարունգ, դաբաղպեղ, վայրի կանդար, գողի սեաւ, զանազան տեսակներ կաղամբի, և Բրուսելի կաղամբ՝ որ ձմերան համար է։ Կը փոխատնկեն ոսկեխնձոր, մեծ տեսակ հազար, պատինճան, և ամսոյս վերջերը կը սերմանեն հռոմէական հազար որ կ'ուտուի յուլիսի և օգոստոսի մէջ. ոմանք կը սերմանեն նաև ընտանի բողկ, ճակնդեղ, եղերդ, կարոս, ստեպղին, և այլն։ Եղերդի սերմը պէտք է կրկնել, վասն զի քիչ կը դիմանան տունկերը տաք եղանակին մէջ։

422. Փոխատնկելը որպէս զի յաջողի, դիտելու է որ տունկերն ոչ շատ մեծցած և ոչ շատ փոքր ըլլան. և փոխատնկելէն առաջ ջրել, և երեկոյեան դէմ փոխադրել։

Ուր որ ջուր չկայ առատապէս ջրելու համար, լաւ է նորատունկ բոյսերը ծածկել խոտով կամ յարդով, որով կը պահուի գետնին թացութիւնը չափաւորապէս։

Բաց ի այս աշխատութիւններէն, պարտիզպանը պէտք է անդադար քրքրել հողը և հող տալ արմատներուն, մաքրել վնասակար խոտերէն, և ոչ վայրկեան մը անհոգ կենալ, մանաւանդ թէ որ հողը պինդ է։ Քանի որ գիշերները զով են, կրնամք ջրել բոյսերը առաւօտուն. և երբ տաք ըլլան գիշերները, կրնամք ջրել նաև օրուան մէջ։

423. Ուտելի խաւարտք. — Մայիս ամսոյ մէջ ուտելի խաւարտները շատ են, այս ինքն ծնեբեկ, եղերդ, շոմին, թթուկիչ, կանկար, սլոռն, ելակ ամէն եղանակի։

ՅՈՒՆԻՍ

424. Յունիսի մէջ ընելու աշխատութիւնք. — Այս ամսոյս մէջ կը շարունակի սերմանել թարմ ուտելի լուբիան, հռոմէական հազար, կաղամբ Միլանու, կաղամբ գլխանի, կաղամբ աւսոնեան,՝ բողկ, եթէ մինչև հիմա սերմանուած չէ։ Այս ամսոյս մէջ կը ցանուի թզուկ և միջահասակ ստեպղին, որ ձմերան համար հաճոյական կերակուր է։ Աշնան և ձմերան համար կը ցանուի զանազան տեսակ եղերդներ, պրաս, կարոս, այնպէս որ ամէն ածուներն լցուած ըլլան։ Եւ երբ ածու մը դատարկի, խկոյն պէտք է աղբել, պատրաստել և տնկել հոն ուրիշ տեսակ խաւարտ մը։

Այս ամսոյս մէջ հաւաքելու է խաւարտներու միացորդները, տերևները, զորս աղբի հետ խառնելով պէտք է փտեցնել, թափելով վրան աղբաջուր. և եթէ աղբ չըլլայ՝ դնել հող, և չթողուլ կանաչ խոտերը որ առանձինն փտին։

Ամսոյս վերջերը եթէ գետինն անձրևով քիչ մը զովանայ, ցանել բողկ և հանել խստորը, և տանել ամէն խնամք ելակաստանի վրայ։ Այս ամսոյս մէջ առատ է ելակ. և որպէս զի շարունակ կարենայ պտուղ տալ, պէտք է ջրել առատապէս, մանաւանդ ջրախառն աղբաջրով։

Վարունգ, սեխ, ձմերուկ, դդում կը մեծնան այս ամսոյս մէջ. և որպէս զի դիւրաւ հասուննան պտուղներն և ազնուանան, պէտք է ծայրատել։ Եթէ ծայրատումն ըստ արժանւոյն ըլլուի, միշտ օգտակար կ'ըլլայ։

425. Ուտելի խաւարտք. — Յունիս ամսոյ մէջ կան ամէն տեսակ ուտելի խաւարտներ, և բան մը չպակսիր սեղանը զարդարելու համար։ Ծնեբեկ և կանկար ա-

ւարտելու վրայ են, բայց դալար լուբիան և ոլոռն կը փոխանակեն անոնց տեղ։ Յունիսին վերջերը կը սկսի պատինճան, դդում, գլխանի կաղամբ, ոսկեխնձոր, ըստեպղին, կարոս և աղցանի զանազան տեսակներ։

ՅՈՒԼԻՍ

426. Յուլիսի մէջ ընելու աշխատութիւնք. — Այս ամսոյս մէջ կը սերմանեն այն խաւարտները որ պիտի ուտուին չորս ամսէ ետքը, ցուրտը չսկսած. այսպէս են դալար ուտելու լուբիա և աղցաններ։

Եթէ յունիսի մէջ չէ ցանուած, յուլիսի սկիզբը կը սերմանեն բողկ, և յուլիսի կիսոյն հռոմէական հազար։ Այս ամսոյն մէջ կը հանեն խստորը, և արևու մէջ չորցնելէն ետքը կը կապեն տրցակ տրցակ և կը պահեն չոր տեղ։ Եւ յուլիսի վերջերը կը ցանեն ստեպղին, բողկ, սոխ և ուրիշ ասոնց նմաններ։

Կը տնկեն պրաս, կարոս, եղերդ և կը բազմացնեն նաև կանկարները իրենց արմատին քով ելած մոլերով։

Այս ամսոյս մէջ կ'աւարտի կանխահաս բատատի քաղոցը, և կը ժողվեն խաւարտներուն շատին սերմերը, կը կտրեն սոխերուն ծղօտները, կը տնկեն քրքում, մինչդեռ սոխ, ձմերուկ և դդմոյ տեսակները մեծնալու վրայ են։

Յուլիսի մէջ կամ օգոստոսի սկիզբ պէտք է փորել դատարկ մնացած ածուները, աղբել և պատրաստել աշնան սերմանելու համար։ Կապել եղերդը և վայրի կանկարը ճերմկնալու համար, խնամով ծայրատել ոսկեխընձորի տունկերը, որով պտուղները կը մեծնան և շուտով կը հասուննան։

Յուլիսի մէջ առատ ջուր պէտք է տալ կանաչեղինաց, և մանաւանդ կաղամբի, հազարի և եղերդի։

427. Ուտելի խաւարտք. — Յուլիս ամսոյն մէջ առատ են ամարային լուբիա, շոմին, տեսակ տեսակ աղցաններ, ճակնդեղ կարմիր, ստեպղին, ոսկեխնձոր, պատինճան և կաղամբ։ Եւ յուլիսի վերջերը կարոս և քանի մը տեսակ սեխ՝ որ տնկուած ըլլան աղէկ դրից մէջ։

ՕԳՈՍՏՈՍ

428. Օգոստոսի մէջ ընելու աշխատութիւնք. — Օգոստոսի մէջ պէտք է սերմանել շոմին, աղցան՝ ձմեռան համար, և համառօտ ըսել՝ այն ամէն խաւարտները որ կրնան ցուրտին դիմանալ, և տալ պտուղ յաջորդ տարւոյն մէջ, ինչպէս են ճերմակ սոխ, պրաս, գազի սեաւ։ Նաև կրնամք սերմանել հազար, քեղակարոս, բողկ՝ պատըսպարեալ ածուներու մէջ. Նմանապէս և ստեպղին, յաջորդ գարնան ուտելու համար։ Եւ եթէ ունենամք ազատ սնդուկներ, կրնամք սերմանել ոլոռն, լուբիա, և պահել ձմերան սառուցէն։

Օգոստոսի կիսէն վերջ կրնամք սերմանել վայրի բողկ և ամէն տեսակ ընտանի բողկեր և դառնիճ։ Փոխատընկել կարոս, ծաղկաբեր կաղամբ՝ որք յունիսի մէջ ցանուած են, և ժողվել սոխերը։

Ժողվել սերմերը և զգուշանալ որ խառնածին չըլլան։ Ջրել առատապէս լուբիաները, և ծայրատել դդմատեսակ պտուղները պտղէն վեր։

Կրնամք Միլանու կաղամբը և ծաղկաբեր կաղամբը զօրացնել հեղուկ պարարտութեամբ կամ գուանոյով. և յամրահաս սեխերը՝ հաւեղինաց աղբով։

429. Ուտելի խաւարտք. — Օգոստոսի մէջ ուտելի խաւարտներն առատ են, ինչպէս ոսկեխնձոր, պատինճան, թրթնջուկ, լուբիա, ստեպղին, շոմին և տեսակ տեսակ կաղամբներ։

ՍԵՊՏԵՄԲԵՐ

430. Սեպտեմբերի մէջ ընելու աշխատութիւնք. — *Այս ամսոյս մէջ կը շարունակի սերմանել այն ամէն խաւարտները, որ պիտի ուտուին ձմերան սառուցէն առաջ, և որոց վրայ խօսեցանք նախորդ ամսոյն մէջ։*

Առաջին անձրևէն ետքը, որ այս ամսոյն մէջ չպակսիր, երբ օդը խոնաւ է և յարմար բուսականութեան, պէտք է տնկել ելակենին, և ջրել առատապէս մինչև որ բռնեն տունկերը։ Նոյնպէս պէտք է տնկել կաղամբները։ Եւ հետզհետէ որչափ տաքութիւնը պակսի, պէտք է նուազել ջուր տալը։

Պարապ մնացած ածուները պէտք է փորել և աղբել։

431. Ուտելի խաւարտք. — *Սեպտեմբերի մէջ ուտելի խաւարտներն աւելի առատ են և հիւթեղ քան նախորդ ամսոյն մէջ, վասն զի հողն աւելի զով է։*

Այս ամսոյս մէջ կը գտնուին ոսկեխնձոր, կարոս, պատինճան, ստեպղին, շոմին, սեխ, աղցան, և այլն։ Կը ժողվեն քրքումը, այս ինքն՝ քրքումի սոսորդները, զորս պէտք է շուտով չորցնել շուք տեղ։ Կը ժողվեն դդումը և սեխը, պահելու ձմերան համար։

ՀՈԿՏԵՄԲԵՐ

432. Հոկտեմբերի մէջ ընելու աշխատութիւնք. — *Պարտիզպանն այս ամսոյն մէջ պէտք է այնպէս կարգի դնել պարտէզը, որ կարենայ ունենալ ձմերան համար հարկաւոր կանաչեղէններ, և պատսպարել բոյսերը ձմերան ցուրտէն։ Հոկտեմբեր ամիսը ձմերան սկիզբ կը համարուի։*

Պէտք է պատրաստել ածուները, ըստ ժամանակին սերմանելու համար ոլոռ, բակլայ, բողկ ընտանի, աղցան, քեղակարոս, և ուրիշ ասոնց նմաններ, գարնան ուտելու համար։

Պէտք է ժողվել կարոս, վայրի կանգար և հանել հին կանկարները. և միանգամայն շարունակել սպիտակացումը կարոսի, վայրի կանգարի և եղերդի։

Պէտք է ծածկել յարդով գիշերները վերջին ցանուած լուբիաները, ժողվել ծառերուն տերևները և ուրիշ ամէն մնացորդ նիւթերը, և փտեցնելով պատրաստել բուսահող, և խառնել ուրիշ պարարտութեանց հետ։

Միայն այն բոյսերուն պէտք է ջուր տալ որ նոր փոխատնկած են, և տալ առաւօտուն։

433. *Այս ամսոյն մէջ քիչ են սերմերը, և կը սերմանի շոմին, քեղակարոս, ծննդեան ուտելու համար, և հազար՝ տաք հողի մէջ։ Կակուղ և չոր հողի մէջ կրնամք փոխատնկել ծներեկի բողբոջներ, ծածկելով շատ աղբով։ Կը տնկուին գարնանային կաղամբներ և ձմեռային հազար։ Կը բազմացնեն եղեսպակը և ուրիշ հոտաւէտ բոյսերը իրենց ճիւղերով։ Կը փոխատնկեն ընտանի կարոսը, աղցանը, սոխը, սխտորը, պրասը, դառնիճը, ելակը։*

Կը կտրեն ամէն բուսոց ծղօտները որք արդէն ծաղկած են, և արևու մէջ չորցնելէն ետքը կը ժողվեն անոնց սերմը, և կը դնեն առանձին թղթեայ քսակներու մէջ, իւրաքանչիւրին անունը վրան գրելով, և կը կախեն չոր սենեկի մը առաստաղէն։

434. Ուտելի խաւարտներ. — Հոկտեմբերի մէջ ուտելի խաւարտներն են անցեալ ամսոյն խաւարտները, այս ինքն կարոս, վայրի կանգար, եղերդ, պոլտիկ, պատինճան, շոմին, ստեպղին, կաղամբ և գետնախնձոր։

ՆՈՅԵՄԲԵՐ

435. Նոյեմբերի մէջ ընելու աշխատութիւնք. — Այս ամսոյ մէջ պարտիզպանը պէտք է ամբողջ տարւոյն մէջ ընելու գործերը կարգի դնել, խնայութիւն ընել պարարտութիւն գնելու ծախուց մէջ, և ջանալ միշտ բերք ունենալու։

Պէտք է բոյսերուն շատերը պատսպարել ձմերային սառուցէն. ինչպէս կաղամբը խսիրով կամ յարդով, կանկարը աղբախառն հողակոյտով։ Ծնեբեկաստանի մէջ կտրել հողին հաւասար դեղինցած ամէն ծղօտները, ընդգուշանալով որ սերմը գետին չիյնայ. վրան դնել աղբ փտեալ, և աղբին վրայ տարածել քիչ մը աւազ։

Ձմերան մէջ գլխանի և աւօնեան կաղամբները պահելու համար, պէտք է վրայէ վրայ դնել և կոյտ մը կազմել, կոթերնին դէպ ի կեդրոն դարձած և գլուխնին դէպ ի լոյս։

Ցանել պատսպարեալ խոնաւ տեղերու և չոր երկիրներու մէջ սլոռ, բակլայ, ստեպղին։

Այս ամսոյ մէջ կը ժողվեն ճակնդեղը, բողկը, ստեպղինը, սեաւ գայլին, և արեւու մէջ չորցնելէն և վրայի հողը մաքրելէն ետև կը դնեն կարգ կարգ յարդով և աւազով խառն։ Կը ժողվեն նաև ծաղկաբեր կաղամբը, դդումը և կը վաճառեն։

436. Ուտելի խաւարտներ. — Նոյեմբերի մէջ ուտելի խաւարտներն են վայրի կանգար առատութեամբ, կարոս, ստեպղին, պրաս, կաղամբ ծաղկաբեր, եղերդ, ոսկեխնձորոյ և սխի վերջին մնացորդներ։

ԴԵԿՏԵՄԲԵՐ

437. Դեկտեմբերի մէջ ընելու աշխատութիւնք. — Կը շարունակուին այս ամսոյս մէջ Նոյեմբերի ընելու աշխատութիւնները, և մասնաւոր կերպով կը պարապին խաւարտները սառուցէ պահպանելու համար։ Ստեպղինը, եղերդը, հազարը կը պատսպարեն ցրտէն, ծածկելով վրան հողով, նմանապէս և կաղամբը։

Ձմերան մէջ աղցան ունենալու համար՝ պէտք է ընտրել գարնան ցանած եղերդի տունկերը, և դնել խիտ առ խիտ աւազախառն և պարարտ հողոյ վրայ գինետան մէջ կամ ուրիշ չուք տեղ, ուր վախ չըլլայ սառուցի։ Եւ հոն կ'աճին բոյսերը ոչ կանաչ այլ ճերմակ, և այնչափ աւելի փափուկ, որչափ աւելի ըլլայ տեղւոյն տաքութիւնը։ Թէ որ հողը չորնայ, պէտք է քիչ մը ջրել։

Սերմ առնելու համար պէտք է սահմանեալ կաղամբը, ստեպղինը, բողկը, ճակնդեղը պահել հողոյ տակ 60 հարիւրորդամետր խորութեամբ, տերեւները ամբողջ կտրելէն ետքը։ Սերման համար պէտք է ընտրել առողջ և չափաւոր մեծութեամբ եղած տունկերը։

Սոխերը պէտք է կապել և կախել չոր տեղ՝ որոյ տաքութիւնը շատ չըլլայ, և ոչ իջնայ մինչև զրոյ աստիճան։

Պրաս և ընտանի կարոս, որք սահմանեալ են սերման համար, կը թողուին բացօթեայ իրենց տեղ, վասն զի չեն կրեր ամենևին ձմերան ցուրտէն։

Աղէկ օդին և տաք ժամերուն մէջ պէտք է օդ տալ նկուղներուն և սենեակներուն ուր կանաչեղէնք կը պահուին։

Կը սկսին սերմանել սլոռը տաք հողի մէջ։ Եւ երբ հողը ծածկած չէ ձիւնով և ոչ սառած, պէտք է աղբել և պատրաստել փոխատնկութեան և սերման համար։ Այս ամսոյս մէջ կարևոր է երկիրը փորել, մանաւանդ կարծր հողը, որպէս զի մանրի սառուցով։

ՄՇԱԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԳՈՆՍԹԱՆՑԱ
„A R A X"
Uniunea Cult. Armeană
CONSTANȚA
192

ՑԱՆԿ

ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՆԻՒԹՈՑ

Յառաջաբան 5

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՏԻԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ԳԼՈՒԽ Ա. — ԴԻՐՔ ՀՈՂ ԵՒ ՋՈՒՐ

ԷՋ
1. Դիրք պարտիզի 7
2. Հող պարտիզի 7
4. Ջուր պարտիզի 8

ԳԼՈՒԽ Բ. — ՁԵՒ ԵՒ ՉԱՓ ՊԱՐՏԻԶԻ

6. Ձև և չափ պարտիզի 9

ԳԼՈՒԽ Գ. — ԳՈՐԾԻՔ ՊԱՐՏԻԶՊԱՆԻ

11. Կարեւոր գործիք պարտիզպանի. — Բահ, Բրքրիչ կամ Բշտոց, Փոցխ, Քերիչ, Գայլիկոն, Տնկագործի, Յառոց, Գերանդի կամ Մանգաղ. 11

ԳԼՈՒԽ Դ. — ՊԱՐԱՐՏՈՒԹԻՒՆ

13. Պարարտութիւն 14
15. Դասաւորութիւն կանաչեղէնաց՝ նկատմամբ պարարտութեանց 14
16. Շրջան պարարտութեան պարտիզի . . 15
19. Կարեւորութիւն աղբի և զանազան տեսակք նորա. 16
20. Դիտողութիւն աղբի տեսակաց վրայ . . 17

Էջ

21. Ծիրտ հաւու, աղաւնոյ և թռչնոց: Գուանոյ . . . 18
22. Գաճ և Բուսահող 19
23. Ալիւր եղջեր և ոսկեր 19
24. Տիղմ և փոսերու նիւթ 19
25. Հեղուկ պարարտութիւններ 19

ԳԼՈՒԽ Ե. — ՓՈԽԱՑԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՈՒԳԱՑԱՆՈՒԹԻՒՆ

28. Փոխացանութիւն 21
29. Զուգացանութիւն 21
30. Բաժնել պարտէզը մաս մաս 22

ԳԼՈՒԽ Զ. — ՄՇԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՐՏԻԶԻ

32. Մշակութիւն հողոյ 24
35. Հողաշրջում 24
36. Պեղում բահով 25
37. Բրքրում հողոյ 25
38. Քաղհանում 26
39. Տաքութիւն բուսոց համար 26

ԳԼՈՒԽ Է. — ՍԵՐՄԱՆՈՒՄՆ ԵՒ ՓՈԽԱՏՆԿՈՒԹԻՒՆ

44. Սերմ 29
45. Ընտրութիւն սերման 29
46. Աղիւսակ կանաչեղինաց ըստ իրենց բեղնաւորութեան և ծլելոյ կարողութեան 30
47. Սերմանում 34
48. Սերմանում յօդս 34
49. Սերմանում ի տողս 34
50. Սերմանում ի խումբս 35
51. Գործողութիւնք յետ սերմանելոյ 35
53. Ոռոգում ջրով 36
55. Փոխատնկութիւն 36

ԳԼՈՒԽ Ը. — ԶԱԽՈՐԴՈՒԹԻՒՆՔ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ԿԵՆԴԱՆԻՔ ԲԱՆՋԱՐԵՂԻՆԱՑ

58. Զախորդութիւնք 38
59. Վնասակարութիւնք գէշ մշակութենէ առաջ եկած 38
60. Վնասակարութիւնք օդին գէշութենէն . . . 38

Էջ

65. Հիւանդութիւնք. — Դալուկ, փտութիւն, Մանրասունկ, Քաղցկեղ, Գօսութիւն . . 40
71. Վնասակար անասուններ. — Դօդօշ, Աքիս, Նապաստակ, Խլուրդ, Մուկն, Շղոտ, Խխունջ. 41
73. Վնասակար միջատներ. — Ալտիկ, Ջորեակ, Խոյեղջիւր, Բնդեռն բուսոց, Ականջամուտ, Խլրդածղրիթ, Մնինայ կամ Ոջիլ բուսոց, Ցայգամիջատ, Մրջիւն 43

ԳԼՈՒԽ Թ. — ՔԱՂՈՑ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ ԲԵՐՈՑ

82. Քաղոց 48

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԽԱՒԱՐՏՔ ՈՐՈՑ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԿԱՄ ԵԼՈՒՆԴՆԵՐԸ Կ՚ՈՒՏՈՒԻՆ

89. Ա. Բատատ 50
93. Բ. Գետնախնձոր կամ Հողկիթ . . . 53
103. Գ. Գետնատանձ կամ Աստղատակ . . . 60
104. Դ. Խստորակ կամ Խստորուկ . . . 62
107. Ե. Ճակնդեղ կամ Բանջար 65
112. Զ. Գաղի կամ Քօշմորուք 69
116. Է. Սև գաղի կամ Սև քօշմորուք . . . 71
119. Ը. Սկոլիմ 72
120. Թ. Ծիթրայ 72
122. Ժ. Ժախ 74
124. ԺԱ. Սոեպղին 75
129. ԺԲ. Գազար 79
132. ԺԳ. Բողկ մեծ կամ վայրի 81
137. ԺԴ. Բողկ մանր կամ ընտանի . . . 83
142. ԺԵ. Ժախուկ կամ Տարգալախոտ . . . 85
145. ԺԶ. Գոնգեղ կամ Շաղգամ 87
148. ԺԷ. Կարոս 90
155. ԺԸ. Լախուր կամ Նեխուր 95
156. ԺԹ. Կաղամբ և իր զանազան տեսակները . 96
169. „ Հիւանդութիւնք և որդունք կաղամբի . 106
170. Ի. Կոնձեղ կամ Դուն 108
173. ԻԱ. Գետնի պտուղ 109
174. ԻԲ. Գետնի կաղին 110
175. ԻԳ. Դկուղ ելընդային 110

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԽԱՒԱՐՏՔ ՈՐՈՑ ԿՈՃՂԷՋՆԵՐԸ ԿԱՄ ԾՂՕՏՆԵՐԸ Կ'ՈՒՏՈՒԻՆ

		Եշ
176.	Ա. Խստոր կամ Սխտոր	111
181.	Բ. Սոխ և իր զանազան տեսակները	113
189.	,, Սոխի վնասակար ճճիներ	118
190.	Գ. Սոխ ասկաղոնիկ	119
192.	Դ. Սոխ դալար	121
194.	Ե. Պրաս կամ Քուռաթ	122
201.	Զ. Սամիթ (երկտեսակ)	124
205.	Է. Կանգար վայրի	128
211.	Ը. Ծնեբեկ	131
222.	,, Հիւանդութիւնք և որդունք վնասակարք ծնեբեկի	137

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԽԱՒԱՐՏՔ ՈՐՈՑ ՏԵՐԵՒՆԵՐԸ Կ'ՈՒՏՈՒԻՆ

225.	Ա. Հազար	138
227.	Բ. Եղերդ, Եղերդակ կամ Վայրի հազար	141
230.	,, Եղերդ արճոյ	144
234.	Գ. Դառնիճ կամ Եղեգ	147
240.	Դ. Ճարճիր, Ճարճրուկ կամ Կռաբանջար	150
242.	Ե. Ասորեակ կամ Ասորեկ	151
244.	Զ. Անմեռուկ կամ Փրփրեմ և կամ Կոճկորակ	153
246.	Է. Գառնալեզու պասկաձև	154
247.	Ը. Կոտիմ, Կոտեմ	155
251.	Թ. Ջրկոտիմ, Ջրկոտեմ, Ջրախոտ կամ Ջրխոտ	157
253.	Ժ. Վարսամն կամ Սխամբար	158
254.	ԺԱ. Հնդիկ կոտիմ կամ Ախրիզան	159
256.	ԺԲ. Բազուկ	161
258.	ԺԳ. Գաղտիկուր	16[illegible]
260.	ԺԴ. Սպանախ կամ Շամին	16[illegible]
264.	ԺԵ. Հաւադցան	166
266.	ԺԶ. Քեղակարոս	167

		Եշ
268.	ԺԷ. Թաղթ կամ Թայլ	170
269.	ԺԸ. Մոլոշ կամ Բաղրջուկ, Աղճկտակ	171
271.	ԺԹ. Թրթնջուկ	173
274.	Ի. Թթուկիչ	175
275.	ԻԱ. Խաւարծիլ կամ Գաբծիլ, Իշխուռն: — Խաշնդեղ կամ Գաբ	177
278.	ԻԲ. Խմի, Բոխնի	179
281.	ԻԳ. Մանանիխ կամ Մանանեխ	183

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽԱՒԱՐՏՔ ՈՐՈՑ ՊՏՈՒՂԸ ԿԱՄ ՍԵՐՄԸ Կ'ՈՒՏՈՒԻ

284.	Ա. Լուբիա կամ Լոբիա	185
290.	Բ. Դկուղ կամ Սև պորտիկ. Պոլոճիկ	189
291.	Գ. Բակլայ	190
294.	Դ. Ոլոռն կամ Մաշ	193
297.	Ե. Սիսեռն	195
300.	Զ. Ոսպն	197
302.	Է. Վայրի ոլոռն, Կառուիճանկ, Ճուլպան	199
304.	Ը. Արաքիդ կամ Գետնապիստակենի	201
307.	Թ. Ցակոբուկ, Քաքանաճ	203
309.	Ժ. Կապար կամ Կապարցախ, Կօրաք	205
312.	ԺԱ. Բամիա	207
313.	ԺԲ. Դարապղպեղ	208
316.	ԺԳ. Վարնգենի: — Վարունգ	211
321.	ԺԴ. Պատինճան կամ Հատաղ	215
323.	ԺԵ. Ոսկեխնձորի: — Ոսկեխնձոր, Պոլտիկ	218
329.	ԺԶ. Կանկար կամ Արտիճուկ	223
253.	ԺԷ. Անանաս	228
337.	ԺԸ. Ելակենի: — Ելակ	230
345.	ԺԹ. Ձմերուկ կամ Մեղրապոպ	233
350.	Ի. Սեխենի: — Սեխ, Պրեխ	238
356.	ԻԱ. Դդմենի: — Դդում, Մեղրադդում, Բաղկադդում, Կօշ կամ Տոլ	243

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ԽԱՒԱՐՏՔ ՈՐ ԿԸ ԳՈՐԾԱԾՈՒԻՆ ԻԲՐԵՒ ՀԱՄԵՄ

	Եջ
560. Ա. Ռահան կամ Շահասպրամ . . .	248
562. Բ. Անիսոն	250
566. Գ. Գինձ	253
568. Դ. Մարզանոն կամ Մարզանգուշ, որ և ասի Մուսամբար, Անճարակ	255
571 Ե. Անանուխ	257
573. Զ. Արջնդեղ կամ Սոնիճ	260
575. Է. Չաման	262
577. Ը. Չաման Հայոց կամ Ճապուռ . . .	263
579. Թ. Հոռոմ չաման կամ Բլթենի . . .	265
581. Ժ. Կարոս ընտանի, Կարոս Մակեդոնի . .	266
584. ԺԱ. Ծոթոր, Ծոթրին, Ծաթրին, որ և ասի Ուրց, Խաղուր, Սազիր	268
586 „ Զամբուռ, որ և ասի Վայրի ծոթոր, Կաքաւախոտ, Հանի	269
587. ԺԲ. Լիբանոտան կամ Հազրէվարդ; որ և ասի Լուսնատակի ծառ, Խնկունի . . .	270
588. ԺԳ. Զուիրակ կամ Կորնգան, Կատուան, որ և ասի Դաղձն, Թորթ, Մարեմայ խոտ. .	272
589. ԺԴ. Եղեսպակ, որ և ասի Կծմտաշ, Մեղրբեր .	273
591. ԺԵ. Կորդիւն	274
593. ԺԶ. Քրքում	275
596. ԺԷ. Զոպայ կամ Զուփա	277

ՄԱՍՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՍՈՒՆԿ ԵՒ ԳԵՐԵՐԻ

597. Ա. Սունկ. — Ղարիկոն, Ոսկեսունկ, Մորկեղ, Թնջուկ, Թնօպի	278
407. Բ. Գերերի կամ Հողասունկ	284

ՄԱՍՆ ՈՒԹԵՐՈՐԴ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՊԱՐՏԻԶՊԱՆԻ

			Եջ
411. Յունուարի մէջ ընելու աշխատութիւնք . .			287
413. Փետրուարի	»	»	288
415. Մարտի	»	»	289
418. Ապրիլի	»	»	290
421. Մայիսի	»	»	292
424. Յունիսի	»	»	293
426. Յուլիսի	»	»	294
428. Օգոստոսի	»	»	295
430. Սեպտեմբերի	»	»	296
432. Հոկտեմբերի	»	»	297
435. Նոյեմբերի	»	»	298
437. Դեկտեմբերի	»	»	299

ԳԼԽԱՒՈՐ ԲԱՌՔ

ՊԱՐՏԻԶՊԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԵՐՁ ԳԱՂՂԻԱԿԱՆ ԵՒ ԻՏԱԼԱԿԱՆ ԱՆՈՒԱՄԲՔ

Ալտիկ. գղ. Altique. իտ. Altica. 43.
Ախրիզան. տես Կոտիմ հնդիկ:
Ախրիզան մեծ. գղ. Grande capucine. իտ. Astuzia maggiore. 159.
Ախրիզան փոքր. գղ. Petite capucine. իտ. Astuzia minore. 159.
Ականջամուտ. գղ. Forficule. իտ. Forfecchia. 45.
Ագուրայ. գղ. Bouture. իտ. Talea, Barbatella. 233.
Աղջկատակ կամ Աղճկուտակ. տես Մոլոշ:
Անանաս. գղ. Ananas. իտ. Ananasso. 228.
Անանուխ. գղ. Menthe. իտ. Menta. 257.
Անիսոն. գղ. Anis. իտ. Anice, Anacio. 250.
Անճարակ. տես Մարդանոն:
Անմեռուկ, Փրփրեմ. գղ. Pourpier. իտ. Porcellana. 153.
Աղուծախոտ. գղ. Orobranche. իտ. Orobranca. 192.
Ասկաղոն. տես Սոխ Ասկաղոնիկ:
Ասորեակ, Ասորեկ. գղ. Roquette. իտ. Ruca, Ruchetta. 151.
Աստղատակ. տես Գետնատանձ:
Արաքիդ, Գետնապիստակենի. գղ. Arachide, Pistache de terre. իտ. Arachide, Cece կամ Pistacchio կամ Nocciola di terra. 201.
Արջնդեղ, Սոնիճ. գղ. Nigelle. իտ. Nigella. 260.
Աքիս. գղ. Belette. իտ. Donnola. 42.
Աքսար. տես Գետնի պտուղ:
Բաղկադրում. տես Դդում:
Բազուկ. գղ. Bette. իտ. Bietola. 161.
Բակլայ. գղ. Fève. իտ. Fava. 190.
Բահ. գղ. Bèche. իտ. Vanga, Badile. 11.
Բաղրջուկ. տես Մոլոշ:
Բամիա. գղ. Gombo, Ketmie comestible, Bamia. իտ. Gombo, Bamia. 207.
Բանջար. տես Ճակնդեղ:
Բատատ. գղ. Patate. իտ. Batata. 50.
Բլթենի, Բլիթէն } տես Հոռոմ չաման:
Բնդեռն բուսոց. գղ. Mélolonthe, Hanneton. իտ. Melolonta, Maggiolino. 44.
Բոխնի. գղ. Archangélique. իտ. Arcangelica. 179.
Բողբոջ ծնեբեկի. տես Խաւարծի:
Բողբոջ սնկոյ. գղ. Mycelium. իտ. Micelio. 279.
Բողկ մանր կամ ընտանի. գղ. Radis. իտ. Ravanello. 83.
Բողկ մեծ կամ վայրի. գղ. Raifort. իտ. Ramolaccio. 81.
Բուսահող. գղ. Terreau, Humus. իտ. Terraccio. 19.
Գաբ, Գաբծիլ. տես Խաւարծիլ:
Գազար. գղ. Panais. իտ. Pastinaca. 79.
Գաղտիկուր. գղ. Bourrache. իտ. Borrana. 162.
Գաճ. գղ. Plâtre. իտ. Gesso. 19.
Գայլիկոն. գղ. Plantoir. իտ. Piuolo, Foraterra. 13.
Գառնայեղու պսակաձև. գղ. Corne de cerf. իտ. Minutina, Erba stella. 154.
Գետնաթութ. տես Ելակ:
Գետնախնձոր. գղ. Pomme de terre, Patate. իտ. Patata. 53.
Գետնակաղին, Գետնապիստակ. գղ. Pistache de terre. իտ. Pistacchio կամ Nocciola di terra. 201.
Գետնապիստակենի. տես Արաքիդ:
Գետնատանձ. գղ. Topinambour. իտ. Tartufo di canna. 60.
Գետնի կաղին. գղ. Gland de terre. իտ. Ghianda di terra. 110.
Գետնի պտուղ. գղ. Terre noix. իտ. Bulbo castano. 109.
Գերերի, Հողասունկ. գղ. Truffe. իտ. Tartufo. 284.
Գինձ. գղ. Coriandre. իտ. Coriando, Coriandolo. 253.
Գոնգեղ. գղ. Rave. իտ. Rapa. 87.
Գուանոյ. գղ. իտ. Guano. 18.
Գողի, Քօշմորուք. գղ. Salsifis. իտ. Barba di becco bianca. 69.
Գողի սեաւ. գղ. Scorsonère. իտ. Scorzonera. 71.
Գօսութիւն. գղ. Secheresse. իտ. Seccheracio. 41.
Դալուկ. գղ. Chlorose. իտ. Clorosi. 40.
Դաղձն. տես Զուիրակ:
Դառնիճ, Եղէգ. գղ. Chicorée endive, Scarole. իտ. Endivia կամ Indivia. 147.

Գարապղպեղ. գղ. Piment. իտ. Peperone. 208.
Դդմենի, Դդում. Courge, Citrouille. իտ. Zucca. 243.
Դկուղ կամ Պորտիկ. գղ. Dolic. իտ. Fagiolo dell'occhio. 189.
Դկուղ ելընդային. գղ. Dolique bulbeux. իտ. Dolico bulboso. 110.
Դօդօշ. գղ. Crapaud. իտ. Raspo. 42.
Ելակ. գղ. Fraise. իտ. Fragola. 230.
Ելակենի. գղ. Fraisier, իտ. Fragola. 230.
Եղեսպակ. գղ. Sauge. իտ. Salvia. 273.
Եղերդ, Եղերդակ. գղ. Chicorée. իտ. Cicorea, Radicchio. 141.
Եղերդ սրճոյ, գղ. Cicorée à café. իտ. Cicorea a caffè. 144.
Եղէգ. տես Գառնիճ։
Զամբուռ. գղ. Serpolet. իտ. Serpillo, Sermolino. 269.
Զոպա, Զուփա. գղ. Hysope. իտ. Isopo. 277.
Զուգացանութիւն. գղ. Association. իտ. Associazione. 21.
Զուիրակ, Կորնգան. գղ. Origan. իտ. Origano, Regam.o 272.
Թաղթ, Թայլ. գղ. Arroche. իտ. Atrepice. 170.
Թթուկիչ. գղ. Oxalide. իտ. Acetosella. 175.
Թիւմ. տես Ծոթոր։
Թնջուկ. գղ. Bolet. իտ. Boleto. 178.
Թնօպի. գղ. իտ. Amanite. 178.
Թուրթ. տես Զուիրակ։
Թրթնջուկ. գղ. Oseille. իտ. Acetosa. 173.
Ժախ. գղ. Chervi. իտ. Sisaro. 74.
Ժախուկ, Տարգալախոտ. գղ. Raifort sauvage, Cran, Armoracie, Cochlearia. իտ. Barbaforte, Armoracio, Rafano. 85.
Իշխուն. տես Խաւարծիլ։
Լախուր կամ Նեխուր. գղ. Ache. իտ. Appio. 95.
Լիբանոտան կամ Հազրէվարդ. գղ. Romarin. իտ. Rosmarino. 270.
Լողքար. գղ. Cylindre. իտ. Cilindro. 25.
Լորտնուկ. տես Շողոտ։
Լուբիա կամ Լոլիաս. գղ. Haricot. իտ. Fagiolo. 185.
Լուսնատակի ծառ. տես Լիբանոտան։
Խազուր. տես Ծոթոր։
Խաշնդեղ. տես Խաւարծիլ։
Խառնճուկ. տես Անմեռուկ։
Խաւարծի ծնեբեկի. գղ. Turion. իտ. Pollone. 132.
Խաւարծիլ, Գաբծիլ. գղ. Rhubarbe. իտ. Rabarbaro. 177.
Խլուրդ. գղ. Taupe. իտ. Talpa. 42.
Խլրդածղրիթ. գղ. Courtilière. իտ. Grillotalpa. 45.
Խղունջ. գղ. Limaçon. իտ. Lumaca. 43.
Խմի. գղ. Angélique. իտ. Angelica. 179.

Խմորկենի. գղ. Capronier. 231.
Խմորուկ. գղ. Capron. իտ. Fragola grossa. 231.
Խոյեղջիւր. գղ. Criocère. իտ. Criocero. 44.
Խստոր կամ Սխտոր գղ. Ail. իտ. Aglio. 111.
Խստորակ. գղ. Dioscorée, Igname. իտ. Ignamo. 62.
Ծաթրին. տես Ծոթոր։
Ծիթրայ. գղ. Raiponce. իտ. Raperonzolo. 72.
Ծնեբեկ. գղ. Asperge. իտ. Sparago. 131.
Ծնեբեկաստան. գղ. Aspergière. իտ. Asparagiaia. 135.
Ծոթոր, Ծոթրին. գղ. Thym. իտ. Timo. 268.
Ծոթոր վայրի. տես Զամբուռ։
Կալ. գղ. Are. իտ. Ara. 9.
Կաղամբ. գղ. Chou. իտ. Cavolo. 96.
» մեծագլուխ. գղ. Chou quintale. իտ Cavolo quintale. 97.
» գլխանի. գղ. » pommé, cabu. իտ Cavolo cappuccio. 96.
» Միլանու. գղ. » de Milan. իտ. Cavolo verzotto, Verza. 97.
» Բրուսելի. գղ. » de Bruxelles. իտ. Cavolo di Broxelles. 98.
» կանաչ կամ անգլուխ. գղ. Chou vert, non pommé. իտ. Cavolo a penna. 99.
» ծաղկաբեր. գղ. Chou fleur. իտ. Cavolo fiore. 100.
» աւսոնեան կամ Բրոկոլի. գղ. Chou brocoli. իտ. Cavolo broccolo, Brocoli. 100.
» գոնգեղային. գղ. Chou-rave. իտ. Cavolo rapa. 102.
» շաղգամային. գղ. Chou-navet. իտ. Cavolo navone. 102.
Կանգառ կամ Կանկառ. գղ. Artichaut. իտ. Carciofo. 223.
Կանգառ վայրի. գղ. Cardon. իտ. Cardone. 128.
Կապար, Կապարցախ. գղ. Caprier. իտ. Cappero. 205.
Կատաւան. տես Զուիրակ։
Կատուխճանկ. տես Ոլոռն վայրի։
Կարմիրտակ. տես Ճակնդեղ։
Կարոս. գղ. Céleri. իտ. Sedano. 90.
Կարոս գոնգեղային. գղ. Céleri-rave. իտ. Sedano rapa. 93.
Կարոս ընտանի, Կարոս Մակեդոնի. գղ. Persil. իտ. Prezzemolo 266.
Կաքաւախոտ. տես Զամբուռ։
Կճնտաշ. գղ. Sauge sauvage. իտ. Salvia selvatica. 273.
Կողով. գղ. Corbeille. իտ. Corba, Corbello. 13.
Կոճկորակ. տես Անմեռուկ։
Կոնճեղ, Գուն. գղ. Souchet. իտ. Dolcichino. 108.
Կոտիմ, Կոտեմ. գղ. Nasturtium, Cresson alénois. իտ. Agretto. 159.

Կոտիմ հնդիկ· Ախրիզան · գղ. Capucine. իտ· Nasturzio, Asturzia. 159.
Կորդիուն · գղ · Sarriette իտ · Santoreggia. 274.
Կորնգան, Կորնկան · տես Ջուիրակ:
Կռաքանջար · տես Ճարճիր:
Կտրոց պատուաստելոյ· գղ. Greffoir. իտ. Potatojo. 13.
Կօշ, Տոլ· գղ· Calebasse. 246.
Կօրաք · տես Կապար:
Հազար · գղ · Laitue. իտ. Lattuga կամ Cappuccio. 138·
Հազար վայրի· տես Եղերդ:
Հազրէվարդ · տես Լիբանովան:
Հատապ · տես Պատինճան:
Հարիւրակալ · գղ· Hectare. իտ· Ettaro. 9.
Հաւաղցան · գղ · Mâche, Doucette. իտ· Valeriana domestica. Dolcetta. 166.
Հողաշրջում· գղ· Défoncement. իտ . Dissodamento. 24.
Հողկիթ· տես Գետնախնձոր:
Հողմունկ · տես Գերբերի:
Հոնի . տես Ջամբուռ:
Հոռոմ չաման, Բլթենի · գղ· Fenu–grec. իտ· Fieno greco, Trigonella. 265.
Ձմերուկ · գղ· Pastèque, Melon d'eau. իտ · Cocomero, Anguria. 235.
Ղարիկոն · գղ · Agaric. իտ · Agarico. 278·
Ճակնդեղ · գղ· Betterave. իտ· Barbabietola. 65.
Ճակնդեղուկ· տես Ճակնդեղ:
Ճապուռ· տես Չաման Հայոց:
Ճարճիր, Ճարճրուկ· գղ· Pissenlit. իտ· Radichiella. 150.
Ճուլպան· տես Ոլոռն վայրի:
Մակերան· տես Մարզանոն:
Մանանիխ, Մանանեխ· գղ· Moutarde. իտ· Senapa. 183.
Մանգաղ· գղ· Faux. իտ· Falce. 13.
Մանրասունկ · գղ· Oïdium. իտ· Oidio, Critogama. 40.
Մաշ· տես Ոլոռն:
Մարեմայ խոտ· տես Ջուիրակ:
Մարզանոն, Մարզանգոշ · գղ· Marjolaine· իտ· Maggiorana. 255·
Մեղրադդում· իտ. Zucca barucca. 247.
Մեղրապող· տես Ձմերուկ:
Մեղրքեր · տես Եղեսպակ:
Մնինայ, Ոջիլ բուսոց· գղ· Calandre. իտ· Gorgoglione, Afide. 46.
Մոլոշ, Բաղրջուկ· գղ· Mauve. իտ· Malva. 171.

Մորկեղ· գղ· Morille. իտ· Morillo. 278.
Մուկն · գղ· Rat. իտ· Topo. 42.
Մրջիւն· գղ· Fourmi. իտ· Formica. 47.
Մօրուացան· գղ· Barbe de capucin. իտ· Barba di capuccino. 114.
Յակոբուկ· գղ· Alkékenge, Coqueret. իտ· Alkekengi կամ Alchechengi, Chichingero. 203.
Յատոց· գղ· Serpette. իտ· Potatojo. 13.
Նապաստակ· գղ· Lièvre. իտ· Lepre. 42.
Նեխուր· տես Լախուր:
Շահասպրամ· տես Ռեհան:
Շողգամ կամ Շաղգամ, գղ· Navet. իտ· Navone. 87.
Շողոտ· գղ· Limace. իտ· Lambrico. 42.
Շոմին· տես Սպանախ:
Շոնիզ· տես Արջնդեղ:
Ոլոռն, Մաշ· գղ· Pois. իտ· Pisello. 193.
Ոլոռն վայրի, Կատուիճանկ, Ճուլպան· գղ· Gesse. իտ· Cicerchia. 199.
Ոջիլ բուսոց· տես Մնինայ:
Ոսկեխնձոր, Պոլտիկ· գղ· Tomate. իտ· Pomodoro. 218.
Ոսկեսունկ· գղ· Oronge. 278.
Ոսպն· գղ· Lentille. իտ· Lente. 197.
Ուրց· տես Ծոթոր:
Չաման· գղ· Cumin. իտ· Cumino. 262.
Չաման Հայոց, Ճապուռ· գղ· իտ· Carvi. 263.
Չաման հոռոմ· տես Հոռոմ չաման:
Չամանօղի· գղ· Kümmel· 263.
Պաշուլակ· տես Պատինճան:
Պատինճան (բոյսն)· գղ· Aubergine, Melongène. իտ· Petronciano, Melanzano. 215.
Պատինճան (պտուղն)· իտ· Petronciana, Melanzana. 215.
Պեղում քահով· իտ· Vangatura. 25.
Պիսակ· գղ· Mildiou. իտ· Peronospora. 107.
Պոլտիկ· տես Ոսկեխնձոր:
Պոլոճիկ· տես Դկուղ:
Պորտիկ· տես Դկուղ:
Պրաս, Քուռաթ· գղ· Poireau. իտ· Porro. 122.
Պրեխ· տես Սեխ:
Ջորեակ· գղ· Bruche. իտ· Bruca. 43.
Ջրախոտ, Ջրխոտ· տես Ջրկոտիմ:
Ջրկոտեմ, Ջրկոտիմ· գղ· Cresson de fontaine կամ d'eau. իտ· Crescione. 157.

Ռեհան, Շահասպրամ· գղ· Basilic. իտ· Basilico. 248.
Սաղիր· տես Ծոթոր:
Սամիթ· գղ· Fenouil և Aneth. իտ· Finocchio և Aneto. 124, 126.
Սապատ· գղ· Panier. իտ· Cesta. 13.
Սեաւ հնտիկ· տես Արջնդեղ:
Սեաւ պորտիկ· տես Գկուղ:
Սեխենի, Սեխ· գղ· Melon. իտ· Popone կամ Melone. 238.
Սերմանում յօղս· գղ· Semaille à la volée. իտ· Semina a spaglio. 34.
Սիսամբար· տես Վարսամն:
Սիսեռն· գղ· Pois chiche. իտ· Cece. 195.
Սխտոր· տես Խստոր:
Սկոլիմ· գղ· Scolyme. իտ· Scardicione. 72.
Սոխ· գղ· Oignon. իտ· Cipolla. 113.
Սոխ ասկաղոնիկ, Ասկաղոն· գղ· Échalotte. իտ· Scalogno. 119.
Սոխ դալար· գղ· Ciboule, Ciboulette. իտ· Cipoletta, Cipolina. 121.
Սոնիճ· տես Արջնդեղ:
Սունկ· գղ· Champignon. իտ· Fungo. 278.
Սուսամբար· տես Մարզանոն:
Սպանախ, Շոմին· գղ· Épinard. իտ· Spinace. 163.
Ստեպղին· գղ· Carotte. իտ· Carotta. 75.
Վարընդենի· գղ· Concombre· իտ· Cucumero. 211.
Վարունգ· գղ· Concombre. իտ Cucumero. 211.
» փոքր· գղ· Cornichon. իտ· Cetriuolo. 212.
Վարսամն կամ Սիսամբար· լտ· Sisymbrium murale. իտ· Rucola selvatica. 158.
Տարգալախոտ· տես Ճախուկ:
Տնկագործի· գղ· Manette. իտ· Traspiantatojo. 13.
Տոլ· տես Կօշ:
Տօրախ· տես Սամիթ:
Ցայգամիջատ· գղ· Noctue. իտ· Nottola· Cavolaia. 47.
Ցնցուղ· գղ· Arrosoir. իտ· Inaffiatojo. 13.
Փարփար· տես Անմեռուկ:
Փերփերան· տես Անմեռուկ:
Փոխատնկութիւն· գղ· Transplantation· իտ· Trapianto, Trapiantazione. 36.
Փոխացանութիւն· գղ· Assolement. իտ· Avvicendamento. 21.
Փոցխ· գղ· Rateau. իտ. Rastello. 12.
Փտութիւն· գղ· Pourriture. իտ. Marciume. 40.
Փրփրեմ· տես Անմեռուկ:
Քաղհան գործի· գղ· Sarcloir· իտ· Sarchiello. 26.

Քաղհանում· գղ· Sarclage. իտ· Sarchiatura. 26.
Քաղցկեղ· գղ· Gangrène. իտ· Cancrena, Cancro. 41.
Քարաննուխ· տես Անանուխ:
Քաքանաճ· տես Յակոբուկ:
Քեղակարոս· գղ· Cerfeuil. իտ· Cerfoglio. 167.
Քերիչ· գղ· Grattoir. իտ· Rastiatojo, Grametto· 12.
Քչտոց· տես Քրքրիչ:
Քուռաթ· տես Պրաս:
Քրքում· գղ· Safran. իտ· Zafferano. 275.
Քրքրիչ· գղ· Binette. իտ· Zappa. 12.
Քրքրում հողոյ· գղ· Binage. իտ· Zappatura. 25.
Քօշմորուք· տես Գոզի:
Քօշմորուք սեաւ· տես Գոզի սեաւ:

a Tinerimei Armeană * CONSTANȚA

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Երես	16	տող	10.	ուղղել	յետագայ և ոչ հետագայ.
»	111	»	12.	»	սովորական խատորին պես.
»	115	»	12.	»	որոյ և ոչ Որոյ.
»	129	»	1.	»	Կանգար վայրի (վերնագիր).

6320 10r
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0077782